

From The Minutes Of The GB Foreign Ministry Dated 28 December, 1937:

- “Except for the killing of their own people. in their present situation the AYF is unable to do anything in the world, and I do not believe that either we or the Turks should worry about them.

Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության 28 դեկտեմբեր, 1937թ.
արձանագրությունից

- Ազգակիցներին սպանելուց բացի, ուրիշ ոչինչ չեն կարող անել դաշնակցականները՝ աշխարհում իրենց ներկա կացության մեջ, եւ չեն կարծում, թե մենք կամ թուրքերը պետք է մտահոգվենք իրենցով:

ԻՆՉՈ՞Ւ ԳՐԻՉ ՎԵՐՑՐԻ

Երկու պատճառով.

Առաջին. դեռ երբեք մեր ժողովրդի նոր շրջանի պատմությունն այնպես եւ այնքան բարբարոսաբար չի աղավաղվել, որքան ներկայումս: Ով պատմության վերաբերյալ մի գրքույկ է կարդացել, իրեն համարում է պատմաբան: Ով այսօր ինչ-որ հարց է ուզում հիմնավորել, վկայակոչում է պատմական անցյալը՝ վերջինս գլխի վրա շուռ տալով:

Երկրորդ. մենք հակասական մոտեցումներ ենք ունեցել Հայ Հեղափոխական Ղազնակցությանը: Այն, որ խորհրդային շրջանում արգելված էր այդ կուսակցության մասին, բացի հայիոյանքից, այլ կերպ խոսել, մեր մեջ ձեւավորել էր ռոմանտիկ պատկերացումներ դաշնակցության վերաբերյալ, անգամ կարծիք էր ձեւավորվել, թե մեզանում դաշնակցությունը մերժվում էր, որովհետեւ իր էությանը՝ գաղափարախոսությանը ու գործունեությանը, ազգային էր ու անձնվեր:

Երբ դաշնակցությունը վերադարձավ, մենք զգուշացանք ու զարմացանք՝ ո՞ւմն է թողնում Սփյուռքը, իսկ երբ տեսանք, թե ինչպես է վերադառնում եւ իր շարքերն ինչպես եւ ինչ մարդկանցով է համալրում, հիասթափվեցինք: Այդ հիասթափությունը գնալով խորացավ, երբ ակնհայտ դարձավ, որ ՀՀԴ իր պատմությունից որեւէ եզրահանգում չի արել, այն ոչ թե քննադատաբար է ընկալել, այլ անսխալականության շղարշով պատել:

Սկսեցին մերթ ճակատային, մերթ շրջանցիկ, խորամանկ միջոցներով արդարացնել ՀՀԴ անգամ ազգադավ հետեւանքներ ունեցող գործողությունները: Կուսակցական նեղմտությունն ու ինքնասիրահարվածությունը դաշնակցականներին նորից մղեցին դեպի պատմաշինարարություն, կեղծարարություն: Դրա արտահայտություններից մեկը «Հայկական հարցի պատմություն» դասագիրքն է՝ 9-րդ դասարանների համար: Այն գրել է ոչ թե արհեստավարժ պատմաբան, այլ ամերիկահայ Ռ. Փիրումյանը: Նա առաջին անգամը չէ, որ օգտագործվում է կեղծարարություններ արտադրելու համար:

Այդ դասագիրքը Հայկական հարցի պատմությունն է, այլ հայ ժողովրդի պատմությունը ՀՀԴ-ին հարմարեցնելու անձռնի փորձ: Դա աղավաղումների, շաղատրանքի, թույնի շտեմարան է, որում անգամ դաշնակցական անունը կրող

սինլքորը, պատեհապաշտն ու դավաճանը ազգային շարժման կարկառուն դեմքեր են ներկայացված:

Դասագրքում կա լուսանկար, թե բանտից ինչպես է դուրս գալիս Վ. Հովհաննիսյանը: Ի դեպ, ո՞ր դաշնակցականի լուսանկարն ասես չկա որպես ազգային-ազատագրական շարժման գործիչ: Բացակայում է միայն գորավար Անդրանիկի լուսանկարը:

Կարելի է համակրանքներ ու հակակրանքներ ունենալ, բայց այդքան ապաշնորհ ձեռով կեղծիքներ հրամցնել աշակերտությանը, մեղմ ասած, անբարոյականություն է:

«Դրոշակի» 2001թ. ապրիլ-մայիսի համարում կարդում ենք ՀՀԴ ժամանակակից գործիչ Գ. Մանուկյանի դատավճիռը. «Բաթումի դաշնագրով Հայաստանի հողերը թուրքերուն զիջած ըլլալու դասալքութենէն միջեւ Սեւրի դաշնագրի ցնորքին ետքէն վազած եւ խորհրդային իշխանութեան դէմ կողմնորոշուած ըլլալու, 1921-ի փետրվարեան «ավանտուրային» ձեռնարկած ըլլալու, բայց մանաւանդ ՀՀ գանձը իւրացուցած ըլլալու անհիմն ամբաստանութիւնները ուղղակի վանկերգի են վերածվել ՀՀԴ թշնամիների շրջանում»:

Այո, դաշնակցությունն իր պատմությունից դաս չի քաղել: Հետեւաբար այսօր էլ, եթե հնարավորություն ունենա, մեր ժողովրդին առաջնորդելու է նույն կործանարար ճանապարհով, ինչը մի անգամ արդեն արել է:

Եվս մի տասնամյակ, եւ կբոլորի Հայոց մեծ եղեռնի 100 տարին:

Այդ հարյուր տարիների ընթացքում ի՞նչ է փոխվել հայ ժողովրդի ճակատագրում, նրա վիճակում եւ ապագայի ձգտումներում ու հնարավորություններում: Առաջին հայացքից թվում է, թե շատ բան, բայց իրականում՝ գրեթե ոչինչ: Համենայն դեպս, հայն այսօր ավելի քիչ չէ վտանգված, քան էր 1910-ական թվականներին:

Ռուսաստանն, ինչպես դարասկզբին, խաղերի մեջ է: Վերջին տասը տարում Հայաստանը թե գործով եւ թե խոսքով ամենայն որոշակիությամբ հաստատել է, որ ինքը Ռուսաստանի հետ է, իսկ Ադրբեջանը՝ նույնպիսի որոշակիությամբ հակառակն է հաստատել, բայց Ռուսաստանի նախագահն անգամ Երեւանում հայտարարեց, թե Մոսկվան «առանձնահատուկ», այսինքն նույնանման վերաբերմունք ունի թե Հայաստանի եւ թե Ադրբեջանի հանդեպ: Իսկ հայը պատմությունից գիտե, թե այդ «հավասար» հարաբերություններն ինչի են հանգեցնում: Համենայն դեպս, հայ-ադրբեջանական առձակատումներում ռուսական բանակը կռվել է հայերի դեմ: Այն, որ այսօր Հայաստանում տեղակայված են ռուսական զորքեր, իսկ Ադրբեջանում այդպիսիք չկան, շատ բան չի նշանակում: Տարոնի դաշտի հայությունը կոտորվեց ռուսական զորքի «աչքի առաջ»: Երբ ռուսները գրավեցին Կարսի եւ Արդահանի շրջանները, դրանք Հայկական մարզի (հետագայում՝ Երեւանի նահանգ) մեջ չմտցրին, իսկ երբ 1915-16թթ. տիրացան Արեւմտյան Հայաստանի 2/3-ին, եղեռնից մազապուրծ հայությանը թույլ չտվեցին վերադառնալ իրենց բնակավայրերը եւ ձեռնամուխ

եղան Արաքսի եւ Եփրատի կազակության ձեւավորմանը, այսինքն՝ Հայաստանը ռուսաբնակ դարձնելուն:

1918-20թթ. Օսմանյան կայսրությունը քայքայված էր, իսկ քեմալական Թուրքիան՝ թույլ, եւ Հայաստանը ի գորու էր դրանց դեմ կռվել, բայց չկռվեց, իսկ ներկայումս Թուրքիան աշխարհի հզոր պետություններից է՝ վիթխարի բանակով:

Այն տարիներին կովկասյան թաթարները նոր էին ադրբեջանցու վերածվում եւ պետականություն ստեղծում, իսկ ներկայումս Ադրբեջանը տնտեսական եւ ռազմատեխնիկական մեծ հնարավորություններ ունեցող պետություն է: Հայ-վրացական եւ հայ-պարսկական հարաբերություններն անցած տասնամյակներին փոփոխություն գրեթե չեն կրել:

Ուրեմն հայերի համար աշխարհում ի՞նչ է փոխվել, որ մեզ հիմք տա մտածելու, թե ժամանակակից Հայաստանն ավելի քիչ է վտանգված, քան էր 20-րդ դարասկզբին: Բայց սա խնդրի արտաքին-քաղաքական կողմն է, այլ ոչ թե հիմնահարցն ամբողջությամբ վերցրած: Միայն արտաքին գործոններով հայոց ողբերգությունը բացատրելը ոչ միայն միակողմանի է, ոչ միայն ճիշտ չէ, այլեւ վնասակար է:

Այլեւս շարունակել համազգային դժբախտության պատճառները փնտրել միայն թուրքերի եւ այլեւայլ պետությունների քաղաքականության մեջ, ինչը մինչեւ օրս արվում է, չի կարելի: Որովհետեւ հայ պատմագրության մեջ գերիշխող իրողությունը՝ դրսի ուժերի ու պետությունների հայկական քաղաքականության քննադատությամբ բավարարվելը, ունի միայն քարոզչական նշանակություն: Այն ոչ միայն կիսագիտական է, այլեւ ոչնչով չի օգնում մեր ժողովրդին՝ դասեր քաղելու իր ողբերգական անցյալից եւ գործել այնպես, որպեսզի այլեւս երբեք չդառնա ցեղասպանության զոհ:

Պատահական չէ, երբ խոսք է բացվում Հայոց ցեղասպանության գործում նաեւ հայ քաղաքական ուժերի պատասխանատվության մասին, վերջիններս իսկույն անցնում են ահաբեկչության, հրապարակը հեղեղում լուտանքներով՝ ազգադավ, ազգուրաց, թրքական լրտես...

Այն, որ մենք՝ հայերս, մինչեւ օրս լուրջ փորձ չենք կատարել վերլուծելու Մեծ եղեռնի հնարավոր դառնալու գործում նաեւ սեփական սխալներն ու մեղքերը, ակնհայտ վկայությունն է այդ սխալների ու մեղքերի ահռելիության:

Ուռա-հայրենասիրությունն ի վիճակի է սեփական ժողովրդին բերելու միմիայն բարդություններ ու դառնություններ, որովհետեւ այդ աքլորությունը հաշվի չի առնում իրերի իրական վիճակը, գերազնահատում է սեփական ուժերը, թյուրիմացության մեջ զցում եւ չմտածված, վտանգավոր գործողությունների մղում զանգվածների: Ճիշտ է ասված. «Ազգերն ինքնասպան են լինում, այլ ոչ սպանվում»: Սնապարծությունն ուրիշին ատող է, իսկ հայրենասիրությունը՝ սիրող: Խորհրդանշական են Մոնտեսքիոյի խոսքերը. «Եթե ես գիտենայի, թե այսինչ բանը օգտավետ է իմ հայրենիքին, բայց վնասակար Եվրոպայի եւ մարդկային ցեղի համար, ես այն կհամարեի ոճիր»: Կա ժողովրդական իմաստություն. «Մի խուրձ

խոտի համար ուրիշի դեզը մի այրի»։ Սա բարոյականության չափանիշ է ոչ միայն արտաքին առնչությունների, այլև ներքին կյանքում։ Կլինեն մարդիկ, ովքեր ասվածը կհամարեն տերտերականություն։ Ոչ։ Ուժեղ պետք է լինել, այլ ոչ թե ուժեղության մասին հեքիաթներ հորինել։ Հասարակությունը անհատների կացարան չէ, այլ միավորված մարդկանց որոշակի որակ։ Այն չի կարող բնականոն զարգացում ունենալ, եթե առաջնորդվում է խենթություններով։ Խենթությունը ոչ թե կեցություն է, այլ թատրոն։ Ով ազգի առջեւ կանգնած բախտորոշ խնդիրների խելամիտ լուծումը նենգափոխում է շոուներով, պարսավանքից բացի, ուրիշ ոչնչի արժանի չէ։ Զգոն, ուժեղ, շրջահայաց ժողովրդի բախտն է բերում։ Մեր՝ հայերիս դեպքում տեղի ունեցավ տարօրինակ հանգուցալուծում։ Ոչ թե հայության պայքարը, ազատության համար նրա ինքնագոհողությունը, այլ անորոշ կեցվածքն ու պայքարելու կամքի թուլությունը նպաստեցին թուրքերի ցեղասպան քաղաքականության հաջողությանը։

Ինչ վերաբերում է հայ եկեղեցուն, ապա այն ուժեղ է եղել միայն այն ժամանակ, երբ գործել է ազգային անկախ պետականության պայմաններում։ Մնացած ամբողջ ժամանակաշրջանում հայ եկեղեցու, քաղաքական գործունեության իրական արդյունքներն ավելի քան համեստ էին՝ ի հակակշիռ նրա հոգեւոր-ազգային-մշակութային գործունեության։ Դա հասկանալի է, որովհետեւ եկեղեցուց չի կարելի պահանջել այն, ինչ նրա կոչումը չէ։

Հայ քաղաքական կուսակցություններից երկուսը՝ արմենականներն ու հնչակյանները, ազգային շարժման հրապարակում առաջատար դերից շուտ հեռացան՝ 1890-ական թթ. կեսերին. արմենականներին թուրքերը պարզապես ոչնչացրին, իսկ հնչակյան կուսակցության Լոնդոնի համագումարը, փաստորեն, անբավարար գնահատեց կուսակցության գործունեությունը։ Հնչակը պառակտվեց եւ կարճ ժամանակում իր առաջատար դիրքերը զիջեց Հայ հեղափոխական դաշնակցությանը։ Ավելի ճիշտ, ոչ թե հնչակը զիջեց, այլ դաշնակցությանը հաջողվեց օրինավոր ու անօրեն միջոցներով դառնալ «ազգի առաջնորդ»։ Այդ գործընթացը տեւեց մինչեւ 1908թ. երիտթուրքական հեղաշրջումը, որով իթթիհադ-դաշնակցություն եղբայրությունը դաշնակցությանը բացառիկ դեր տվեց հայ կյանքում։

«Կուսակցության, տվյալ դեպքում ՀՀԴ դիկտատուրան» հնարավոր դարձավ, որովհետեւ, նախ՝ Հայաստանն անկախ չէր, այսինքն չունեի ինքնիշխան պետական կառույցներ, եւ հայ ժողովրդին ներկայացնում էին եկեղեցին ու կուսակցությունները, երկրորդ՝ հայությունը ներքաշված էր ժամանակի միջազգային-քաղաքական գործընթացների ոլորտը եւ պարտադրված էր ունենալու «սեփական ազգային փիլիսոփայությունն ու քաղաքականությունը»։

Ասվածից հետեւում է, որ հայության ողբերգության ներքին պատճառները քննարկելն անհնար է առանց հետազոտելու իրեն «ազգի առաջնորդ ու ներկայացուցիչ» համարող կուսակցության գործունեությունը։ Դժբախտաբար, այդ հետազոտությունը բացահայտում է իրադրություններ, որոնք այդ կուսակցության ճակատին խարանում են անպատասխանատու, նեղմիտ, արկածախնդիր բառերը։ Գուցե հենց այդ նկատի ուներ Նժդեհը, երբ ասում էր, թե դաշնակցությանը պետք է դատի տալ։

Տասնամյակներ շարունակ մեզ ընտելացրել են այն մտքին, թե ՀՀ դաշնակցություն եւ հայ ազգային, հայ հայրենասեր լինելը հոմանիշներ են: Դժբախտաբար այդ կուսակցության պատմությունը բավարար հիմքեր չի տալիս նման եզրահանգման համար:

Ցուցանույթությունը մնաց դաշնակցության գործունեության ամենաբնորոշ գիծը: Բազմաթիվ օրինակներից բերենք միայն երկուսը՝ Օսմանյան բանկի գրավումն ու սուլթան Աբդուլ Համիդի վրա կատարված մահափորձը, որոնք մինչեւ օրս էլ դաշնակ ձայնափողները համարում են քաջության, ինքնազոհողության, հմտության համաշխարհային նշանակության գործողություններ: 1896թ. օգոստոսի 26-ին մի խումբ զինված դաշնակցականներ (ժամանակակից ամերիկյան կինոնկարներում դա շատ տարածված ու սովորական դարձած սյուժե է) մտնում են բանկ, զենքի սպառնալիքով աշխատակիցներին փակում են առանձին սենյակներում եւ սպասում «դրսի աշխարհի» արձագանքին: Դա կատարվեց մի ժամանակ, երբ 300 հազ. հայ արդեն մորթված էր, երբ բարենորոգումների պահանջով Կ.Պոլսում ցույցի ելած (Գում Գափուի 1890թ. եւ Բաբը Ալիի 1895թ.) հայերը զանգվածային ջարդի էին ենթարկվել: Օսմանյան բանկի արկածախնդրության մասնակիցներից զոհվեց մեկ հոգի, մյուսներին նալ նստեցրին, եւ նրանք փառահեղ տրամադրությամբ հասան Մարսել: Ուրիշ կուսակցություն կտար քաղաքական գնահատական այդ տղայական հրեշավոր անպատասխանատվությանը եւ կպատժեր մեղավորներին, մի արկածախնդրություն, որը սուլթանը պատրվակ դարձրեց՝ ոչնչացնելու 6000-10000 անմեղ հայերի:

Ընդ որում՝ բանկի գրավումն այնքան բացահայտ էր նախապատրաստվում, որ իշխանությունները մանրամասն տեղեկություններ ունեին հայերի մտադրությունների մասին, բայց որեւէ քայլ չկատարեցին ահաբեկիչներին խանգարելու համար: Դրա փոխարեն թուրք խուժանին բաժանեցին երկաթե մահակներ եւ հանձնարարեցին «Ազդանշան ստանալուն պես 48 ժամ շարունակ սպանել հայերին՝ հաշվի չառնելով տարիքն ու սեռը»:

Հազար անգամ իրավացի էր Ա. Արփիարյանը, երբ գրում էր. «Հեղափոխական շարժման մեջ պետք է, որ շարժումը կազմակերպողները բոլորից ավելի վտանգի ենթարկվեն, իսկ չմասնակցողները, որքան հնարավոր է, քիչ վնասվեն: Մինչդեռ խեղճ ժողովրդի հարյուրից հարյուրը վտանգված է, իսկ բանկը գրավողներից հարյուրից իննսունը ազատվելու հույս ունի»:

Այդպես էր ոչ միայն այս դեպքում, այլեւ դաշնակցության գրեթե բոլոր ձեռնարկումների ժամանակ: Չհաշված հայդուկային մի քանի գործիչների ու զինվորականների՝ հայ ազատագրական կռիվներում դաշնակցական ոչ մի առաջատար գործիչ չի զոհվել: Քր. Միքայելյանը զոհվեց պատահական՝ ռումբ փորձարկելու ժամանակ, Վռամյանն ու Իշխանը սպանվեցին Վանի նահանգապետի հանձնարարությունը կատարելիս, Ակնունին եւ պոլսահայ մի շարք դաշնակցական գործիչներ՝ ապրիլի 24-ի ձերբակալություններից ու արքորից հետո:

1905թ. ՀՀԴ մահափորձ իրականացրեց սուլթան Աբդուլ Համիդի վրա: Ուրբաթ օրը, երբ սուլթանն աղոթքը վերջացնելուց հետո մզկիթից դուրս էր գալիս, նրան է մոտենում շեյխ ուլ իսլամը եւ հետն ինչ-որ հարց քննարկում: Սուլթանը 1-2 րոպե գրուցում է կրոնական առաջնորդի հետ, եւ այդ ժամանակ՝ ուժեղ պայթյուն: Շեյխ ուլ իսլամի հետ գրույցը փրկեց Աբդուլ Համիդին: Այստեղ են ասել. «Փառք Աստծո՛ւ»: Որովհետեւ սուլթանը, նկատի ունենալով, որ 1894-96թթ. ջարդերի եւ Հայկական հարցի շուրջ կրքերը Եվրոպայում դեռեւս չէին խաղաղվել, թույլ չտվեց հայերի հանդեպ նոր բռնարարքներ: Իսկ եթե ահաբեկչությունը հաջողվե՞ր: Հայ-թուրքական վատթար հարաբերությունների պայմաններում, երբ մոլեռանդ մահմեդական խուժանը պատրվակ էր փնտրում գյավուր հայերի արյունը հոսեցնելու, ինչի՞ էր հանգեցնելու օսմանյան սուլթանի եւ մահմեդականների խալիֆի ահաբեկումը:

Հավանաբար 1915 թիվ չէր լինի, արեւմտահայությունը կոչնչացվեր 1905-ին:

Այստեղ են ասել՝ «Ո՞ւմ էիք ծառայում, պարոն դաշնակցականներ»: Արդյոք մնան տղայական, չմտածված, լոկ զգայականով դեկավարվող գործողությունները վայե՞լ էին իրեն ազգի առաջատար համարող կուսակցությանը:

ՀՀԴ իր մենաշնորհն էր համարում հայության մարտավարությանն ու ռազմավարությանն առնչվող բոլոր խնդիրների լուծումը, նա որքան զիջողական ու մեղմ էր իթթիհադի, նույնքան կոպիտ ու դաժան էր հայ քաղաքական ուժերի հանդեպ: Հայ ժողովրդի մասնատվածության, այն համախմբելու անհաջողության պատճառներից մեկն այն էր, որ ՀՀԴ արհամարհում էր հայ մյուս կուսակցություններին:

Կտրված լինելով հայ իրականությունից՝ ՀՀԴ-ին այդպես էլ չհաջողվեց ձեւավորել արեւմտահայության եւ Արեւմտյան Հայաստանի հարցում հստակ սկզբունքներ: Նա հավասարակշիռ մոտեցում չունեց Հայկական հարցին. մերթ հռչակում էր, թե «Հայկական հարցը չի կարող որոշակի ելք» ունենալ առանց Եվրոպական դիվանագիտության, նույն ժամանակ երիտթուրքերի հետ եղբայրության երդում տալիս, հայ բնակչությանը կոչ անում պոկել սրտից եւ մտքից անվստահության նախապաշարմունքները, ձեռք մեկնել արթնացող հարեւանին՝ թուրքերին, ու «պինդ գրկելով համերաշխութեան աւետարանը... հայ-մահմեդական գործակցութիւնը դարձնել շարժման անհրաժեշտ նշանաբանը»:

Այդ անկայունությունը, ծայրահեղությունների գերի լինելը հետեւանք էին ոչ միայն իրավիճակի մակերեսային իմացության, այլեւ գործողությունների սկզբունքների մշակման հանդեպ անփույթ մոտեցման, ինչն, իր հերթին, կուսակցությանը զրկում էր վաղվա օրը կանխագուշակելու կարողությունից: «Դաշնակցութիւնը,- գրում է Անդրանիկը,- զուրկ է հեռատեսութենէն, զոր անպայման պէտք է ունենայ ժողովուրդի մը ճակատագրին հետ խաղացող որեւէ անհատ կամ կազմակերպութիւն»:

ՀՀԴ մշտապես աչքի է ընկել իր տարօրինակ տրամաբանությամբ: 1895թ. կեսերին, երբ սուլթանը ամբողջ կայսրությունով մեկ ոչնչացնում էր հայերին, «Դրոշակը» գրեց. «Արդեն կտրված են հարաբերությունները, եւ այժմ միայն

շարունակվում է կռիվը, որ վաղուց հայտարարված էր: Խնդիրը կը վճռվի միայն երկուսից մեկի ընկճվելով, մահով. կամ պետք է ընկնի, մեռնի, տակն ու վրա լինի, ոչնչանա սուլթանական պոռնիկ կառավարությունը, կամ պետք է ընկնի, մեռնի հայ ժողովուրդը: Խնդրի միակ լուծումը մահն է»: Այսինքն, դաշնակցությունը խնդիր էր դնում մի քանի տասնյակ հայդուկներով տապալել սուլթանական վարչակարգը, գլխի վրա շուռ տալ վիթխարի կայսրության քաղաքական կառույցը կամ պատրաստ էր մահվան ուղարկել ամբողջ հայ ժողովրդին: Թիֆլիսում, Պետերբուրգում, Եվրոպայի քաղաքներում ժամանակ անցկացրած դաշնակցական պարագլուխների համար ժողովուրդը լոկ միջոց, գործիք, զանգված էր կուսակցական շահերն առաջ տանելու համար:

Ոչ թե դաշնակցությունն էր ժողովրդի համար, այլ ժողովուրդն էր ատաղձ՝ այդ կուսակցության փառատենչությունը բավարարելու:

Նույնիսկ 1896թ. հունվարին, երբ բացի Վան քաղաքից, արեւմտահայության զանգվածային ջարդերն արդեն ավարտվել էին, «Դրոշակը» գրեց. «Սասունի կռվով ժողովուրդը հարց դրեց կուսակցության առաջ՝ մահ կամ ազատություն, իսկ կառավարությունը դրա դիմաց որոշեց կոտորած կամ կատարյալ ընկճում... Ո՞վ է հաղթելու»:

Թուրք պատմաբաններն ու քաղաքական գործիչները հակահայ քարոզչության գլխավոր զենք դարձրին ՀՀԴ այս եւ նման «խելոքությունները»: Պարզվում է, որ 1894-96թթ. զանգվածային ջարդերը, որոնք խլեցին 300 հազ. հայի կյանք, ոչ թե սուլթանի կողմից ծրագրված կոտորածներ էին, ցեղասպանություն, այլ «ազատագրվելու», այսինքն Թուրքիայից անջատվելու հայերի ոտնձգությունները խափանելու միջոց:

Եթե հնչակը 1890-ական թթ. երկրորդ կեսին հրապարակավ ու ազնվորեն ընդունեց իր սխալները՝ համարելով նաեւ, որ սեփական խղճին էր լերդացել 300000 հայի արյունը, ապա ՀՀԴ մինչեւ օրս էլ իրեն համարում է անսխալական, նա անգամ Մեծ եղեռնից հետո էլ չբարեհաճեց ըստ ամենայնի քննարկել 1.5 միլիոն հայ մարդու ոչնչացման գործում նաեւ իր մեղքը:

ՀՀԴ մշտապես զբաղվել եւ այսօր առավել եւս, զբաղվում է ոչ թե քաղաքական ինքնագործունեությամբ, այլ պատմաշինարարությամբ: Այդպես է լինում բոլոր այն քաղաքական ուժերի հետ, ովքեր սեփական անսխալականությունը դարձնում են քարոզչական հիմնարար գործոն, ովքեր ժողովրդավարությունը նենգափոխում են կուսակցության դիկտատուրայով: Դաշնակցության իրական պատմության ու դաշնակ հեղինակների կողմից այն ներկայացնելու միջեւ գրեթե ոչինչ ընդհանուր գոյություն չունի: Ոչ միայն դաշնակցության, այլեւ հայ ժողովրդի պատմության այնպիսի տաղանդավոր կեղծարարներ, ինչպիսիք են Ռ. Տեր-Մինասյանը, Մ. Վարանդյանը, Ս. Վրացյանը, գլխի վրա են շուռ տվել պատմական իրադարձությունները:

Պատմաշինարարությունն «էն գլխից» դաշնակցության համար եղել է երկրորդ մասնագիտություն, բնավորություն: Կեղծվում է անգամ երկրորդական նշանակության իրադարձությունների պատմությունը: Դիրքորոշումը մեկն է՝ հայ

իրականության մեջ ՀՀԴ իմաստուններից իմաստունն է, նա երբեք չի սխալվել, որովհետև ամբարել է ոչ միայն հայության, այլև համայն մարդկության քաղաքական փորձը: Այս միտքը հաստատող օրինակները բազմաթիվ են, ավելի շատ, քան այդ կուսակցության պատմությունը ձեւավորող մյուս բոլոր գործոնները միասին վերցրած:

ՀՀԴ շատ է հպարտանում Խանասորի արշավանքով: Այն ներկայացվում է որպես փայլուն հաղթանակ, մարտական գործողությունների ընթացքում հայերի կողմից դրսևորված մարդասիրության հիանալի արտահայտություն:

Ո՞րն է իրականությունը:

Քրդական մագրիկ ցեղի ցեղապետ Շարաֆը պատիժ էր դարձել Վասպուրականի, մասնավորապես Աղբակի հայության համար: Նա մշտապես զբաղված էր հայերի սպանությամբ ու թալանով: Նիկոլ Դումանը պլան է կազմում արյունախում ցեղապետին իր մարտական ջոկատի հետ ոչնչացնելու համար: Դա միանգամայն ճիշտ որոշում էր ոչ միայն հայերին այդ զազաններից ազատելու, այլև քրդական մյուս ցեղերին զսպելու համար: Մագրիկ ցեղի բնակատեղին Խանասորն էր՝ մի ոչ մեծ գոգավորություն՝ շրջապատված բլուրներով: Հարձակումը սկսելուց մի քանի օր առաջ արշավանքի ղեկավարությունը Նիկոլ Դումանից վերցվում ու հանձնվում է Վարդանին: Հայերը շրջապատում են մագրիկի կացարանը եւ կրակ բացում վրանների վրա: Քրդերի բնակավայրը գրավվում է, բայց պարզվում է, որ ցեղապետն իր մարտական ջոկատի հետ կարողացել էր հեռանալ: Այսինքն, արշավանքը չլուծեց իր առջեւ դրված խնդիրը: Այո, հայերի գնդակներից սպանվեցին նաեւ քուրդ կանայք ու երեխաներ, եւ դա մի պարզ պատճառով՝ գիշեր էր եւ անհնար էր ջոկել, թե ում վրա ես կրակում: Թվում էր, թե այս արշավանքը գնահատվելու էր որպես անհաջող մարտական գործողություն, եւ դրանում ոչինչ վարկաբեկիչ չկար: Ռազմական գործողություններում լինում են թե հաղթանակներ եւ թե պարտություններ: Բայց ոչ: ՀՀԴ պարտվել չէր կարող: Եվ Խանասորի արշավանքը հռչակվեց հայ ժողովրդի ազատագրական կռիվների ամենափայլուն էջերից մեկը. Վարդանին շնորհվեց Խանասորի Վարդան կոչումը: Դեռ ավելին, այն համարվեց պատերազմական պայմաններում մարդասիրության դրսևորման խորհրդանիշ: Նույնիսկ երգ հորինեցին, թե ֆիդային կանանց ու երեխաների վրա չի կրակում:

ՀՀԴ պատմության մեջ առանձնակի նշանակություն ունեն Հայաստանի կարգավիճակի խնդրում այդ կուսակցության դիրքորոշումը, դաշնակցություն-իթեհադ փոխհարաբերությունները եւ հայդուկային շարժմանը ՀՀԴ մոտեցումները:

Կուսակցության ձեւավորման առնչությամբ հրապարակված հռչակագրում դաշնակցությունը նպատակ հռչակեց Տաճկահայաստանում քաղաքական եւ տնտեսական ազատության ձեռքբերումը: Հիմնադիր ժողովը կուսակցության պայքարի միակ եղանակը համարեց ապստամբությունը, քանի որ «մինչ այդ օգտագործված միջոցները՝ խնդրանք, բողոք, դիվանագիտություն, դրական արդյունքի չէին հանգեցրել...»:

Այս ժողովին մասնակցում էր նաեւ հնչակյան կուսակցության պատվիրակությունը, որի ազդեցությունը ընդունված որոշումների վրա ակնհայտ է: Սակայն ապստամբության հարցում թե հնչակը եւ թե ՀՀԴ սխալ թույլ տվեցին, որովհետեւ, նախ՝ նրանք ապստամբությունը միայն խոսքով հռչակեցին պայքարի միակ եղանակ եւ երբեք դրա նախապատրաստմամբ ու իրականացմամբ չզբաղվեցին, եւ երկրորդ՝ փորձեցին պայքարի բալկանյան եղանակները մեխանիկաբար պատվաստել Արեւմտյան Հայաստանին, ինչն անհնար էր, հետեւաբար ընդունելի չէր եւ գործնականում հասկացվում էր ոչ այլ ինչ, եթե ոչ կռիվ «թուրք զինվորների, ոստիկանների դեմ, մասնակի հարձակումներ, ինքնապաշտպանական մարտեր» եւ, ամենից առաջ, ահաբեկչություն: Խնդիրը «Դրոշակը» ձեւակերպեց հետեւյալ կերպ. «Երբ վերջապես Եվրոպան տեսնի, որ Տաճկաստանի խաղաղությունը անդառնալի կերպով խախտված է երկու անհաշտ՝ մինչեւ վերջին կաթիլը մաքառել վճռած թշնամիների կռվով, երբ նա տեսնի, որ Տաճկաստանում իր ներդրած գումարները վնասվում են եւ կորչելու վտանգի են ենթարկվում, եւ որ կայծը, բոցավառվելով, կարող է եվրոպական զարհուրելի հրդեհի պատճառ դառնալ, այն ժամանակ ժողովուրդը ձեռք կբերի իր մարդկային իրավունքները»:

Ուշադրություն դարձնենք երկու հանգամանքի վրա՝ արեւմտահայության պայքարը մեկ գերխնդիր պետք է ունենար՝ առաջացնել Եվրոպայի միջամտությունը, եւ դա ոչ թե հանուն Հայաստանի անկախության, այլ «մարդկային իրավունքների»: Նման դիրքորոշումը հանգեցրեց նրան, որ դաշնակցությունը հայ ազգային շարժման մակրոթացությունները կախման մեջ դրեց Թուրքիայի նկատմամբ մեծ տերությունների դիվանագիտական ակտիվությունից: Մեր շարժման նպատակը, գրում է Քր. Միքայելյանը, «եվրոպական միջամտություն առաջ բերելն էր», դրա համար «հարկավոր էր, որ մեր բողոքները տեղի ունենային մեծ պետությունների աչքի առաջ...»: Նման դիրքորոշումը նույնպես դաշնակցությանը մղում էր դեպի ահաբեկչություն, որն ի վերջո դարձավ այդ կուսակցության պայքարի, եթե ոչ միակ, ապա գլխավոր եղանակը: Եվ պատահական չէ, որ ՀՀԴ անգամ ներկուսակցական աշխատառճը հարմարեցված է ահաբեկչական գործողություններ իրականացնելու շահերին: Դա հասկանալի է, քանի որ, եթե չէր դրվում ազգային անկախության հարցը, ապա պայքարի զանգվածային ձեւերը հետին պլան պետք է մղվեին: Իսկ որ դաշնակցությունը ի սկզբանե դեմ էր Արեւմտյան Հայաստանի անկախությանը եւ գնալով Հայաստանի կարգավիճակի խնդրում իր պահանջներն ավելի ու ավելի չափավոր էր դարձնում. սկզբում՝ ինքնավարություն, ապա անորոշ՝ ապակենտրոնացում, իսկ վերջում՝ բարեփոխումներ, այսինքն՝ վերադարձ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածին, այս ամենը հաստատող բազում վկայություններ կան ոչ միայն ՀՀԴ ծրագրերում, պաշտոնական մյուս փաստաթղթերում, այլեւ կուսակցության առաջնորդների աշխատություններում: 1890թ. Քր. Միքայելյանը «Դրոշակի» առաջին համարում տպագրում է «Ներսես (Վարժապետյան) պատրիարքի նախագիծը՝ Տաճկահայաստանի ինքնավարության» խմբագրականը, որտեղ կարդում ենք, որ պատրիարքի նախագծի «գլխավոր կետերը մոտավորապես նույնն են մեր այժմյան պահանջներին»: «Ապակենտրոնացում» հոդվածում Ս. Զավարյանը Թուրքիայի տարածքում «մանր պետությունների՝ անկախությունը» համարում է «պրոբլեմատիկ», որովհետեւ «Քաղաքական հարցերու մէջ անոնք ազատ չեն

կարող ըլլալ, այլ քաշուելու են այս կամ այն դրացի մեծ պետութեան կողմը եւ հետեւապէս էապէս կը վայելեն միայն ներքին ինքնավարութիւն: Բացի ատկէ... ինչքան արիւն կ'արժէ... այդպիսի անկախութիւնը... Ահա թէ ինչու ես այդքան նախանձելի չեմ գտներ Էրզրումի եւ ուրիշ քանի մը վիլայէթներէն կազմուած անկախ Հայաստան մը»:

«Դաշնակցութեան առաջին քաղաքագէտները... հրաժարեցան անկախութեան սկզբունքէն», արձագանքում է Մ. Վարանդյանը:

Բայց անկախության գաղափարից հրաժարվեցին ոչ միայն դաշնակցության «առաջին քաղաքագէտները»: Մինչեւ 1919թ. ՀՀԴ ոչ մի ծրագրում անկախության պահանջ չկա: Օսմանյան սահմանադրության հռչակման կապակցությամբ «Դրոշակն» իր 1908-ի N 7-ում ներկայացրեց դաշնակցության պահանջները՝ նահանգների վարչական ապակենտրոնացում, մշակութային ինքնավարություն:

Ընդունված է ասել, որ սահմանադրության հռչակումով սկսվեց դաշնակցություն-իթթիհադ «եղբայրացման մեղրամիսը», որին առաջինը միտումնաբար ցուցադրականություն, շուք էր հաղորդում:

Սակայն իրականում դա մեղրամիս չէր, այլ «հարազատանալու» տարիներ տւեաժ գործընթացի տրամաբանական ավարտ: «Հարազատեցման» գլխավոր փուլերն էին կայսրության ընդդիմադիր կուսակցությունների 1902-1907թթ. համաժողովների բանաձեւերը, որոնց ընդունման գործում վճռական դեր խաղացին այդ երկու կուսակցությունները:

Դաշնակցություն-իթթիհադ կապակցությունում պետք է փնտրել մի շարք երեւույթների պատճառները, որոնք տեղի էին ունեցել սահմանադրությունից տարիներ առաջ:

Ահա առաջին հայացքից տարօրինակ թվացող մի քանի փաստեր:

Սասունի 1904թ. ինքնապաշտպանական կռիվների սկզբին տեղի ունեցավ լեռնաշխարհի գյուղապետների ու երեւելի անձանց ժողով, որտեղ Անդրանիկը հայտարարեց, թե թշնամու դեմ տալու ենք վերջին վճռական կռիվն ու հեռանալու ենք Սասունից: Եվ իսկապէս, կռիվներից հետո նա հայդուկների նոր ժողով գումարեց եւ հայտարարեց, թե Տարոնի դաշնակցական կոմիտեն, նկատի ունենալով, որ հայդուկների գտնվելը Սասունում վտանգում է ոչ միայն սասունցիների, այլեւ տարոնցիների անվտանգությունը, պահանջում է հեռանալ: Այդ պահանջի դեմ ընդվզեցին տեղաբնակ հայդուկները, ովքեր քաջ գիտեին, որ իրականությունը բոլորովին այլ էր, երբ կար ուժեղ հայդուկություն, թուրքերն ու քրդերն իրենց զուսպ էին պահում, իսկ երբ այն չկար, հայերի հանդեպ թույլ էին տալիս ամենազագրելի արարքներ:

Անդրանիկին հաջողվեց Գեւորգին նույնպէս համոզել հեռանալ Սասունից, իսկ Սպաղանցի Մակարին համոզել չհաջողվեց:

Երբ Անդրանիկի խումբը Աղթամար հասավ, Գեորգը ծանր հոգեկան ապրումներից հետո (թե հեռանալը հավասարազոր էր սասունցիներին դավաճանելուն) մի խումբ հայդուկների հետ վերադարձավ Սասուն: Այստեղ նա համոզվեց, որ լեռնաշխարհից հեռանալը կոպիտ սխալ էր, ինչի մասին մի քանի անգամ գրեց նաեւ Անդրանիկին:

1906թ. Սասունում հայտնվում է Ռուբեն Տեր-Մինասյանը: Իր այդ քայլը Ռուբենը ներկայացնում է հետեւյալ սցենարով, որը մինչեւ օրս էլ ընդունվում է որպես ճշմարտություն: Իբր դաշնակցության Վանի կոմիտեում նրա շուրջը ստեղծվել էր անբարենպաստ մթնոլորտ, հատկապես հարաբերությունները սրված էին Իշխանի հետ: Կոմիտեն այդ հարցը քննում է եւ որոշում, որ Ռուբենը պետք է հեռանա Վանից: Վերջինս ելք չուներ եւ մեկնում է, բայց փոխանակ վերադառնալու Կովկաս, հայտնվում է Սասունում: Ռուբենի գործունեությունը Սասունում ապացուցում է, որ նրա լեռնաշխարհ գնալու գլխավոր պատճառը Իշխանի հետ ընդհարումները չէին, այլ դաշնակցության կենտրոնի հանձնարարությունը՝ հայդուկային խմբերին անվերապահորեն ենթարկել ՀՀԴ-ին, իսկ եթե չհաջողվի, դրանք ցրել:

Այդ ժամանակ Տարոնում եւ Սասունում գործող հայդուկների թիվը հասնում էր 250-ի: Ռուբենին դա դուր չեկավ: Նա առաջարկեց հայդուկների մի մասին ուղարկել Վան, մյուս մասին՝ Կովկաս, իսկ Սասունում թողնել ամենաշատը 20 հայդուկ: Գեորգը դրան դեմ էր, բայց Ռուբենին հաջողվեց 60 հոգու համոզել եւ ուղարկել Վան ու Պարսկաստան: Իր այս գործողություններն արդարացնելու համար նա վարկաբեկիչ լուրեր էր տարածում հայդուկների մասին: Այդ երկերեսանի շողոքորթը գրում է, որ Գեորգը ստիպված էր այդ դժոխքի երկրի մեջ ոչ միայն դիմագրավել թշնամու հալածանքներին, այլ շարունակ տանջվել «Ֆիդայիներու գազանութենէն»:

Ռուբենը խարդավանքների, բանասարկությունների, մարդկանց իրար դեմ լարելու մեծ վարպետ էր: Շատ ժամանակ չանցած՝ նա իրար դեմ հանեց հայդուկային երկու առաջնորդների՝ Գեւորգին ու Մակարին, ավելի ճիշտ՝ Մակարին ըմբոստացրեց Գեւորգի դեմ. գործը հասավ միմյանց ոչնչացնելու գործողության: Սակայն վերջին պահին Մակարը հասկացավ, որ տեղի ունեցածի հետեւում մի սեւ ձեռք կար եւ հետ կանգնեց: Դավադրությունը ձախողվեց:

Թիֆլիսից մեկը մյուսի հետեւից սկսեցին հրամաններ, հորդորանքներ ստացվել, թե «Գեւորգը հոգնել է, նրան հանգիստ է պետք», թող ժամանակավորապես մեկնի Կովկաս: Գեւորգը չհամաձայնվեց: Նրան ընտրեցին ՀՀԴ համագումարի պատվիրակ: Գեւորգը որոշեց մեկնել, բայց Մուշից հետ վերադարձավ՝ ասելով, թե վատ կանխագագցում ունի. եթե մեկնի, այլեւս չի վերադառնա, այսինքն՝ կենդանի չի մնա:

Քիչ անց տեղի է ունենում Սուլուխի ճակատամարտը, որի ընթացքում Գեւորգը ծանր վիրավորվում է ու մեռնում: Ժամանակակիցները, նաեւ ճակատամարտի որոշ մասնակիցներ պնդում էին, որ տանիքում գտնվող Գեւորգի վրա ներքեւից, այսինքն՝ թուրքական զորքի կողմից, կրակելիս գնդակը չէր կարող դիպչել թիկունքի աջ մասին եւ միաժամանակ ջարդել ծունկը: Եթե ենթադրենք, որ

գնդակը սկզբում դիպել էր ծնկին եւ ապա մտել կրծքավանդակը, ապա ծնկի ոսկորները ջախջախված չպետք է լինեին: Այսինքն՝ մինչեւ օրս էլ անպատասխան է մնում, թե ինչպե՞ս եւ ո՞ւմ արձակած գնդակից վիրավորվեց Գեորգը: Ռուբենի վկայությամբ՝ նրա վերքը մահացու չէր, եւ նա կարող էր 1-2 շաբաթից ուրքի կանգնել: Գեորգը մեռավ արյունաքամությունից, այլ խոսքով՝ անուշադրությունից:

Գեորգի դեմ դավադրության մոտիվներն անձնական չէին: ՀՀԴ եւ իթթիհադի հարաբերությունները վերածվել էին դաշինքի՝ ուղղված սուլթանական վարչակարգի դեմ: Տարոնի դաշնակցական եւ իթթիհադական կոմիտեները գործում էին սերտ համագործակցությամբ: Ռուբենը հաճախ էր Մուշ քաղաք իջնում եւ հանդիպումներ ունենում երիտթուրքերի տեղական կոմիտեի ղեկավարների հետ: Գեորգի սպանվելուց հետո հայդուկային խմբերի մեծ մասը ցրվեց, մնացին 10-15 հոգի, որոնք փաստորեն միայն զբաղված էին Ռուբենի անձի անվտանգության ապահովմամբ:

Սասունի հայդուկության եւ դաշնակցության միջեւ հակասությունները նոր չէին ու աստիճանաբար վերածվեցին առձակատման: Տասը տարի Գեորգի եւ ՀՀԴ-ի միջեւ պայքար էր գնում հայդուկային շարժման լինել-չլինելու շուրջը: Այդ պայքարի ընթացքում Գեորգը երկու անգամ արտաքսվեց Սասունից, մի անգամ լեռնաշխարհից հանվեց հայդուկության կորիզը. հայդուկության ու դրա ղեկավարների նկատմամբ կիրառվեցին վարկաբեկելու եւ ահաբեկելու ամենատարբեր եղանակներ: Հայդուկային շարժման վերացումը, դրա վերածելը դաշնակցական կոմիտեներին կից գործող մարտական խմբերի, պայքարի եղանակների առումով Տարոնում Վանի տարբերակի ստեղծումը. դաշնակցության ղեկավարների համար ձեռք բերեց պատվախնդիր նշանակություն, եւ նրանք համառորեն առաջ էին տանում իրենց դիտավորության իրականացումը: Մեկը մյուսի հետեւից Սասուն էին ուղարկվում դաշնակցական գործիչներ՝ Վահան, Վարդգես, Գուրգեն, Քեռի, օգտագործում էին տեղի դաշնակցական գործիչների (Հրայր Դժոխք, Վարդան վարդապետ, Տատրակ) ազդեցությունը, բայց ապարդյուն: Գեորգին ու նրա ընկերներին հաջողվեց հայդուկային շարժմանը հաղորդել նախադեպը չունեցող ծավալներ ու թափ: Արդյունքում շարժումը խզել հարաբերությունները դաշնակցական կոմիտեի հետ: Նրանից հեռացան ՀՀԴ կողմից ուղարկված գործիչները: Վերջինը հեռացավ Կորյունը՝ թողնելով հետեւյալ երկտողը. «Սիրելի Սարհատ (Գեորգ), ես գնացի»: Կարդալով այս խոսքերը՝ Գեորգն ասաց. «Կորյունին վաղուց դուր չէր գալիս իմ գործելակերպը: Նա պահանջում էր հեռու մնալ ինքնապաշտպանական կռիվներից ու սպասել: Սպասել, երբ նույնիսկ աչքիդ առաջ խոշտանգում, թալանում եւ սպանում են հայ գյուղացուն»:

Որո՞նք են հայդուկային շարժման հանդեպ դաշնակցության՝ նման վերաբերմունքի պատճառները: Իհարկե, այդ գործում փոքր դեր չէր խաղում այն, որ Թիֆլիսում կամ Կ.Պոլսում նստած դաշնակ ղեկավարները պատկերացում չունեին Տարոնի ու նրա առանձնահատկությունների մասին եւ աշխատում էին դրանք տեղավորել իրենց գործելակերպի շրջանակների մեջ: Բացի դա, հայդուկային շարժումը չէր տեղավորվում Հայկական հարցի լուծման ՀՀԴ պատկերացումներում: Մեծ տերությունների ուշադրությունը գրավելու համար

ՀՀԴ ձգտում էր Արեւմտյան Հայաստանի մի քանի կետերում ձեւավորել ռազմաքաղաքական հենակետեր, իսկ դաշնակցական բջիջներին կից՝ մարտական ջոկատներ: Հայդուկային խմբերն այս սխեմայի մեջ չէին տեղավորվում:

Բայց ոչ միայն այդ պատճառով:

Հայդուկային շարժման ռիսերին թշնամի էին երիտթուրքերը, որոնք հետեւողական ճնշում էին գործադրում դաշնակցության վրա այդ շարժումը վերացնելու համար:

Թուրքական բուրժուազիայի մեծապետականությունը կրող այդ կուսակցությունը վճռականապես դեմ էր կայսրության ժողովուրդների ազատագրական պայքարին՝ ինչ ձեւով ու բնույթով էլ որ այն դրսևորվեր: Երիտթուրքերի Տարոնի կոմիտեն գտնում էր, որ հայդուկությունը խանգարում էր իր աշխատանքին, որովհետեւ այդ շարժման պատճառով կառավարությունը տարոնում մեծաթիվ զինվորական եւ ժանդարմական ուժեր էր պահում, գործում էր լրտեսական բազմամարդ ցանց, որոնք ահաբեկում էին զանգվածներին ու խոչընդոտում նրանց եռանդը: Բացի այդ, գնալով մեղմանում էին հայդուկների ու քրդերի հարաբերությունները, երկուստեք ձգտում էր առաջանում համատեղ ուժերով պայքարել թուրքական տիրապետության դեմ, ինչից ամենից շատ էին վախենում թե սուլթանը եւ թե երիտթուրքերը:

Սկզբնական շրջանում երիտթուրքերի հետ համագործակցում էին բազմաթիվ կուսակցություններ ու կազմակերպություններ, սակայն կարճ ժամանակ անց, համոզվելով, որ «սոխը սխտորից քաղցր չէ», որ իթթիհադը համիդյան վարչակարգի դիմահարդարված տարբերակն է, հեռացան նրանից: Մինչդեռ ՀՀԴ երկար մնաց երիտթուրքերի կողքին:

Պատճառները մեկից ավելի էին. նախ՝ բացի երիտթուրքերից, թուրք իրականությունում ուրիշ նշանակալի քաղաքական ուժ գոյություն չունեին, իսկ նման պարագայում իթթիհադից խզվելը դաշնակցության համար նշանակում էր անցնել ընդհատակ: Վրացյանն իրեն հատուկ մերկանտիլությամբ նշում է. «Եթե մենք կարող ենք համագործակցել երիտթուրքերի հետ, որոնք, ինչպես երեւում է, ազնվորեն շահագրգռված են հայերի ճակատագրով, ինչո՞ւ այդպիսի փորձ չանել»:

Փորձ, իհարկե, պետք էր անել, բայց ի՞նչ սկզբունքների հիմքի վրա: Որքան ամրանում էին երիտթուրքերի դիրքերը, այնքան կոշտանում էր նրանց վերաբերմունքը ՀՀԴ-ի նկատմամբ, այնքան համեստանում էին վերջինիս պահանջներն ու հավակնությունները: Ջեմալ փաշան, պատմելով իթթիլաֆի եւ ՀՀԴ-ի հետ իթթիհադի բանակցությունների մասին, գրում է, որ իթթիլաֆի ներկայացուցիչը հպատակ ժողովուրդների համար «ավելի լայն արտոնություններ էր պահանջում», քան դաշնակցությունը:

Դաշնակցության ներկայացուցիչները սկսեցին մեկը մյուսի հետեւից հայտարարել, թե այլեւս չպետք է նույնիսկ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի մասին հիշատակվի, պետք է դադարեցվի հակաթուրք քարոզչությունը:

Երիտթուրքերի պահանջով դաշնակցությունը զինաթափեց արեւմտահայությանը՝ հայտարարելով, թե «սուրի դարը անցա՛վ, աշխատեք կրթութիւն տալ ժողովուրդին»:

Ժամանակակիցը գրում է. «... հին գործիչ ընկերներէն շատերը, իրենց արեան գնով ձեռք բերած գէնքերը այլեւս անպէտք նկատելով, սկսան էժան գնով զանոնք ծախել թուրքերուն եւ քուրդերուն եւ անոնց փոխարէն՝ իրենց ունեցած գոմէշներուն, եզներուն, ոչխարներուն վերայ նորեր աւելացնել եւ այդ կողմէն մրցիլ իրարու հետ»:

Իթթիհադին հեշտությամբ հաջողվեց իմանալ դաշնակցության գաղտնի ծրագրերը, կուսակցական կազմակերպությունների կազմն ու կառուցվածքը, ղեկավար կենտրոնները, զենքի պահեստների տեղերը, արխիվները եւ այլն:

Ի դեպ, իթթիհադի պահանջը զենքերը հանձնելու մասին վերաբերում էր կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդներին, սակայն այն կատարեցին միայն հայերը: Դեռ ավելին, քրդերը համիդիե գնդերը վերանվանեցին իթթիհադի զորամիավորումների, որոնցում ընդգրկված էր 30 հազ. մարդ, եւ զինվում էին պետության հաշվին: Պատճա՞ռը: Դաշնակցության անդամներից Գ. Սեյրանյանը գրում է. «Հայերիս «ինտելիգենցիան» Տաճկաստանում ցույց տվեց իր կատարյալ խակությունը, երեխայական միամտությունը», դաշնակ-իթթիհադ բարեկամության հետեւանքն այն եղավ, որ «թուրքերը ծանոթացան մեր բոլոր գաղտնիքներին, չափեցին, կշռեցին մեզ, զննեցին ոտից-գլուխ եւ վերջն ասացին՝ գնացեք, քանզի ձեզ այլեւս պետք չունինք»:

Անդրանիկը գրում է, թե սահմանադրության հռչակման օրերին Բուլղարիայում հանդիպել է դաշնակցական գործիչներ Ակնունուն, Ռ. Ջարգարյանին եւ Վահագնին: «Շատ խնդրեցի իրենց, որ չերթան Պոլիս, ըսի թէ թուրքերը մեծ թակարդ մը կը լարեն... Չլսեցին ու գնացին: Ատկէ ետք սկսաւ կռիւ մը թուրքական խորհրդարանի աթոռները խլելու համար: Քանի մը վարժապետներ, որոնք ամիսը երկու ոսկի առնելով պիտի գոհանային, ստացան 50 ոսկի ամսեկան: Թոքաթյանի կամ կղզիներու մէջ կերուխումներ սարքուեցան «ընկեր» Թալեաթներու եւ «ընկեր» Էնվերներու հետ, որոնց բացին ինչ գաղտնիք որ ունէին...»:

Ինձ թույլ տվեցի զորավարից երկար մեջքերում կատարել երկու պատճառով: Նախ՝ Անդրանիկը, հակադրվելով ՀՀԴ իթթիհադամետ քաղաքականությանը, նշում է արեւմտահայության փրկության միակ հնարավոր ուղին՝ համազգային ինքնապաշտպանություն, համընդհանուր կռիվ գոյության իրավունքի համար: Երկրորդ՝ նշելով դաշնակցականների հավատը իթթիհադի հանդեպ՝ Անդրանիկը նկատում է քաղաքական դեգրադացիայի այն գործընթացը, որ դաշնակցությանը մղեց ծնկի գալու, անգործության մատնվելու եւ օրհասական պահին լքելու արեւմտահայությանը:

Ադանայի ջարդերից հետո Սալոնիկի այն նույն շենքում, որտեղ երիտթուրքական համագումարը հռչակեց Թուրքիան թուրքացնելու, այսինքն կայսրության ոչ թուրք բնակչությանը թուրքացնելու կամ բնաջնջելու քաղաքականությունը, որտեղ ընդունվեց հայերի ոչնչացման ծրագրի առաջին տարբերակը, դաշնակցության եւ իթթիհադի ներկայացուցիչները նոր պայմանագիր ստորագրեցին: ՀՀԴ-ի նման կեցվածքն, իհարկե, «կաշկանդեց հայ ինքնապաշտպանության թեւերը» եւ անպաշտպան ժողովրդին մատնեց աղետների:

Հատկապես հակասական, վտանգավոր էր դաշնակցության դիրքորոշումը ժողովրդին զինելու խնդրում. նա մերթ զինվելու կոչ էր անում, մերթ էլ պահանջում էր գեները հանձնել: Այսպես՝ 1910թ. մայիսին դաշնակցության Տարոնի կազմակերպության ժողովում Գարմենն ու Ս. Կրացյանը արտահայտվեցին հայերի զինման ու ընդդեմ երիտթուրքերի որեւէ գործողության դիմելուն դեմ: Նույն օրերին Քր. Միքայելյանը գրեց. «Պատրաստ լինել ինքնապաշտպանության, դա մեծագույն քաղաքական պարտք է...»:

Հավանաբար հենց այդ տատանողականությունը նկատի ունեւ «Դրոշակը», երբ 1909թ. գրում էր. «Ինչպես տաշեղ են մեզ շարտում ալիքները փոթորիկի ժամանակ, եւ մենք չենք կարող եւ չենք ուզում նրանց ընդդիմանալ: Ալիքներն ավելի ու ավելի ուժեղանում են, իսկ մենք անընդհատ օրորվում ենք նույն տեղում՝ ծույլ ու անպատրաստ, եւ օգնության ենք կանչում... Աստված գիտե, թե դրա համար մենք ինչպես ենք պատժվելու ապագայում, երբ ամբողջ ազգը կնստի հրաբխի վրա»:

Իթթիհադը 1911թ. դաշնակցության հետ նոր պայմանագիր կնքեց, բայց միաժամանակ տեղերին ցուցում տվեց հրահրելու մահմեդական զանգվածի մոլեռանդությունը քրիստոնյաների դեմ, իսկ դաշնակցությունը հայերին կոչ էր անում բոլոր միջոցները տրամադրել թուրք-իտալական պատերազմում Օսմանյան կայսրության հաղթանակի համար: Նույն ժամանակ իթթիհադը բանտից ազատում էր Ադանայի ջարդարարներին՝ «դրանով հասկացնել տալով, որ կարելի է թալանել, սպանել, կործանել...» ու մնալ անպատիժ:

«Նույնիսկ Ադանայի կոտորածը»,- գրում է ՀՀԴ առաջնորդներից Ռ. Դարբինյանը, - որը հայերի սրտերում առաջացրեց առաջին սարսափելի կասկածը երիտթուրքերի իսկական էության վերաբերյալ, չսթափեցրեց հայ քաղաքական ղեկավարներին եւ նրանց ետ չպահեց երիտթուրքերի հետ համագործակցությունից»:

Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների հիմնական մասը դաշնակցական էր, ովքեր գրեթե լուռ մնացին Ադանայի դեպքերի հանդեպ: Եվ երբ «Բյուզանդիոնի» խմբագիր Քեչյանը գրեց, թե հայ պատգամավորները շատ լավ գիտեն, որ «եթե խոսելն արժաթ է, լռելը ոսկի, որ ամեն ամիս տրվում է նրանց պետական գանձարանից իբրեւ ռոճիկ», դաշնակցական տղաները հարձակվեցին նրա վրա եւ ծեծեցին:

Դաշնակցությունը համաձայնվում է երիտթուրքերի պահանջի հետ. «Ադանայի արյունահեղությունը պետք է մոռացության տրվի»: Դաշնակ-իթթիհադ մտերմությունն իրողություն էր, եւ վերջինս դեռեւս պատճառ չունէր իրենից լրիվ «խրտնեցնելու» դաշնակցությանը: 1909թ. հեղաշրջումից հետո իթթիհադի համար ստեղծվել էր «խախտուտ հավասարակշռություն»: Պահպանողական ուժերը հզոր էին, եւ նրանց դեմ պայքարում իթթիհադին դաշնակից էր պետք:

Երիտթուրք ու դաշնակ գործիչների միջեւ ձեւավորվել էին նաեւ անձնական մտերմիկ հարաբերություններ: Այդ հարաբերություններն ավելի սերտացնելու համար դաշնակցությունը սկսեց եռանդուն հակառուսական քարոզչություն: ՀՀԴ կոչերից մեկում ասվում էր. «Սահմանի այս կողմը՝ Օսմանյան հողի վրա, ազատություն կա այսօր, բայց սահմանի մյուս կողմը ցարիզմի խելացնոր կառավարությունն է իշխողը... Սահմանադրական ազատություններ վայելող տաճկահայ ժողովուրդը երբեք չի կարող անտարբեր մնալ ի տես ոստիկանական այն բիրտ ճնշումների, որոնց ենթակա են մեր հարազատները օր ու գիշեր»: ՀՀԴ երիտթուրքերի հետ միասին բողոքի հանրահավաքներ էին կազմակերպում Ռուսաստանի դեմ:

«Կ. Պոլսէն յարձակումի ազդանշան մը տրուեցավ ցարիզմի դէմ,- գրում է Անդրանիկը,- Դաշնակցական թերթերը կը պոռային. «Անկցի Ռուսաստան, կեցցէ ազատ եւ յեղափոխական Թուրքիա»:

«Դաշնակցության կոմիտեն մեր նկատմամբ շատ բարեհամբույր էր,- գրում է Զեմալ փաշան,- եւ ազնվորեն վախենում էր, որ հանկարծ Հայաստանը չընկնի ռուսական լծի տակ»:

Իթթիհադի եւ ՀՀԴ համատեղ մշակած մի փաստաթղթում գրված է. «Օսմանեան նուիրական հայրենիքը անջատումէ եւ բաժանումէ զերծ պահելը՝ երկու կազմակերպութեանց միացեալ գործունեութեան նպատակակէտը ըլլալով, անոնք պիտի աշխատին գործնականապէս ցրել հանրային կարծիքին մէջ բռնակալ ռեժիմէն ժառանգ մնացած այն սուտ գրոյցները, թէ հայերը անկախութեան կը ձգտին»:

«Ազգերու համագործակցութեան ստանձնելիք դերն է,- 1910թ. գրեց դաշնակցական հայտնի գործիչ Ատոմը,- որ պիտի փրկէ ընդհանուր հայրենիքը, պիտի հաստատէ ու ամրապնդէ ռամկավար սահմանադրութիւնը...»:

«Կարող ենք ապահով ըլլալ,- շարունակում է նա,- որ այլեւս ամենաձայրահեղ դժբախտութեան պարագային, գէթ միայնակ կոտորուելու չենք: Կոտորելու եկող հորդաններուն դէմ թուրք եւ հայ, իթթիհատական ու դաշնակցական միասին կանգնած միասին պիտի դիմագրաւեն վտանգը»:

Իհարկէ, այս եւ նման հայտարարությունները հաճախ բխում էին ոչ թէ հայացքների ներդաշնակությունից, այլ քաղաքական շահարկումներ էին՝ կոչված լուծելու գործնական խնդիրներ՝ տվյալ դեպքում պահպանելու դաշնակ-իթթիհադ դաշինքը: Իսկ նման դաշինքը տեւական լինելի չէր կարող, որովհետեւ տվյալ

դեպքում վճռողը երկու կուսակցությունների տրամագծորեն հակառակ շահերն էին:

Իշխանության գլուխ անցնելուց հետո իթթիհադը դավաճանեց իր հռչակած կարգախոսներին: Նա ոտնձգություններ սկսեց քաղաքական կուսակցությունների եւ հալածանք՝ լեզուների դեմ: Ընտրությունների ժամանակ ֆիզիկական բիրտ ուժի զորությամբ խափանում էր ընդդիմադիր հոսանքների թեկնածուների ընտրվելը... Արգելքներ հարուցեցին հայկական դպրոցների դեմ: Երիտթուրքերը մի կողմ թողեցին սահմանադրությունը, որը լոկ պայքարի դրոշ էր ու նրանց հաղթանակ բերեց եւ գործողության մեջ դրեց 147 ժամանակավոր կանոնադրություններ, որոնք խնդիր ունեին հաստատելու իթթիհադի մենիշխանությունը: Նրանք վերացրին հասարակական միությունները, հալածանքի ենթարկեցի քրիստոնյա հոգեւորականությանը:

Իթթիհադի այդ քայլերի տրամաբանական շարունակությունը եղավ անցումը Հայկական հարցի լուծման համիդյան քաղաքականությանը:

Այս պայմաններում ի՞նչ դիրք կարող էին որդեգրել հայերը, նրանց քաղաքական կազմակերպությունները, այդ թվում նաեւ ՀՀԴ: Իհարկե խզվել եւ առձակատման գնալ ջարդարար ծրագրերին: Իսկ ի՞նչ արին նրան:

Ադանայի կոտորածներից հետո ՀՀԴ սկզբում հայտարարեց, թե խզում է հարաբերությունները իթթիհադի հետ: Սակայն նկատի ունենալով «տիրող ժանր կացությունը, հայությանը սպառնացող ընդհանուր ջարդի վտանգը եւ ժամանակ շահելու հրամայականը», որոշեց առայժմ ձեռնպահ մնալ բացարձակ խզումից: Այդ առթիվ Վրացյանն ասաց. «Այսօր մենք, զգացմունքով գործելով, հայ ազգին չարիք պատճառեցինք»:

1911թ. Կ.Պոլսում տեղի ունեցավ ՀՀԴ ընդհանուր ժողովը, որի քննարկման գլխավոր հարցն էր՝ վերաբերմունք երիտթուրքական կուսակցությանը: Համագումարը, նշելով, որ իթթիհադական կառավարությունը «ոչ միայն չի նպաստած այլակրօն եւ այլացեղ ազգերու համերաշխ համակենցադին, այլ ընդհանրապէս տեղի տուեր է անվստահութիւններու արծարծման եւ ազգային իրաւունքներու ճնշումին, որ իթթիհատը միջոցներ ձեռք չառաւ պայքարելու եւ մաքրելու իր կազմը աջակողմեան խայտաբղետ տարրերէ, որոնք հետզհետե բազմանալով՝ կուսակցութեան մէջ գերակշիռ ազդեցութիւն մը ձեռք բերին», որոշում ընդունեց «հայկական պահանջները հետապնդել անկախօրէն», որովհետեւ «հայ ժողովուրդի վերաբերեալ կենսական պէտքերու մասին համաձայնութիւնները անհետեւանք մնացած են, իթթիհատը չէ խորհրդակցած երկրի կացութեան վերաբերեալ հարցերու մէջ դաշնակցութեան հետ եւ անպատիժ կը թողու չարագործները...»:

Գնալով ակնհայտ էր դառնում, որ իթթիհադը որդեգրել էր հայակործան քաղաքականություն: 1911-ին երիտթուրքական կենտրոնը գաղտնի հրահանգներ ուղարկեց իր տեղական ակումբներին՝ աննկատ եւ անուղղակի միջոցներով սահմանափակել հայերի գործունեության շրջանակները ազգային, կրթական եւ

տնտեսական ոլորտներում, վերահսկողություն հաստատել կուսակցությունների վրա:

Երիտթուրքերի քաղաքականության հետետղական կոշտացումը հայկական շրջաններում տարընթացություն առաջացրեց: Մեծ Մուրադը եպարքոսին սպառնաց «նորից լեռ բարձրանալ», իսկ ընդհանուր առմամբ, նկատել է Ս. Թեհլերյանը, «հայ յեղափոխականներու մէջ բարոյալքութիւնը ընդհանուր էր», շատերն իսկապէս սկսեցին քարոզել «բարձրանալու լեռ... թեթեւ սրտով չէր, որ հայ յեղափոխականները մոտենում էին այդ ելքին. բոլոր միջոցները սպառած էին, ուրիշ ելք չկար»: Սակայն այս ամենը լոկ հայտարարություններ էին: Դաշնակցությունը իթթիհադի կցորդի վիճակում մնաց մինչեւ Պոլսի մտավորականության ձերբակալությունը՝ չարագուշակ 1915 թվ.-ի Ապրիլի 24-ը:

Պատմագիտական որոշ աշխատություններում պարզունակ եւ կողմնակալ է ներկայացվում ՀՀԴ այդ շրջանի գործունեությունը: Արդեն ասվեց, թե պլատոնական սերը չէր, որ դաշնակցությանը մերժեցնում էր իթթիհադին, այլ քաղաքական նկատառումները: Կարելի է քննադատել նրա մոտեցումները, քաղաքական իրավիճակի գնահատականները, բայց սխալ է, երբ ձգտում են այս կուսակցության պատմությունը ներկայացնել որպէս դավաճանական բնույթի գործողությունների շարք: Հավանաբար դժբախտությունը ոչ թե կուսակցության կողմնորոշումների, այլ մարտավարության, աշխատանքի ձեւերի ու եղանակների մեջ էր: Թերեւս փոքր դեր չխաղաց նաեւ ավելորդ ինքնավստահությունը, որը ծնեց աղետաբեր անփութություն: Թե դաշնակցությունը եւ թե հնչակյաններն իրականում երիտթուրքերին ոչ միայն չէին վստահում, այլեւ զգում էին այդ կուսակցության վտանգավորությունը: Այդ նկատի ունենալով էր, որ դաշնակցությունը դեպքից դեպք զբաղվում էր նաեւ ժողովրդին զինելու գործով, «պահանջում, որ ամենքը զենք ունենան», սակայն դա այնքան բացահայտ, ձեւական, այնքան անփույթ, ցուցադրական էին անում, որ «իհարկե, թուրքերը տեսնում էին: Ժնեւից «Դրոշակի» խմբագրությունը բեռներով Կ. Պոլիս էր ուղարկում հայդուկային գրականություն եւ նկարներ: Այս «ապրանքը» տարածվում էր մայրաքաղաքում ու գավառներում... Դաշնակցությունը մտել էր ամեն տեղ, տիրացել էր բոլոր ազգային, հասարակական, կրթական հաստատություններին: Ազգային ժողովի մեջ նա էր ուղղություն տվողը... Հաջողություններից ամբարտավանության ծայրը հասած՝ նա երեւակայում էր իրեն ռազմական մեծ կարողության տեր...»:

Կովկասյան դաշնակցության եւ Արեւելյան բյուրոյի արջի ծառայություններն արեւմտահայերին ավելի քան բազմաթիվ էին: Երբ Կովկասում անելիք չէր ունենում կամ գործել չէր կարողանում, Արեւելյան բյուրոն մխրձվում էր արեւմտահայ խնդիրների մեջ եւ, որպէս կանոն, այդ անում էր անպատասխանատու, անլուրջ ձեւով՝ ոչ թե Արաքսի այն ավի հայությանը օգնելու, այլ սեփական եսապաշտությանը հագուրդ տալու մղումով:

Երբ արեւմտահայության ներկայացուցիչներից մեկը Թիֆլիսում դաշնակցության պարագլուխներին խնդրում էր չխառնվել Կիլիկիայում 1895թ. ծավալված իրադարձություններին, որովհետեւ դա կարող է հայ

ազգաբնակչությանը վտանգել, Քր. Միքայելյանը պատասխանում է. «Ինչ ուզում է լինի, մենք այդպիսի առիթը ձեռքից բաց չենք թողնի»:

Արեւելահայ գործիչներն իրենց անվտանգ բներից հոխորտում էին Թուրքիայի հասցեին: ՀՀԴ պաշտոնաթերթ «Հորիզոնը» 1912թ. սեպտեմբերի 7-ին գրեց. «Թող լավ իմանան Տաճկաստանի բախտը ներքուստ տնօրինող թուրք պետական գործիչները, որ ոչ տաճիկ կառավարությունը եւ ոչ էլ տաճիկ պետությունը այլեւս զրոյի արժեք չեն կարող ունենալ հայերի աչքում, եւ նրանք ստիպված են լինելու իրենց գոյությունը պաշտպանելու համար մտածելու ուրիշ ճանապարհների մասին»:

Դաշնակցությունը իթթիհադի հետ հարաբերությունները հաճախ կառուցում էր ոչ թե օբյեկտիվ իրականության թելադրանքների, այլ սուբյեկտիվ զգացմունքայնության վրա:

«Դաշնակցութիւնը Թուրքիոյ սահմանադրական վարչակարգի ամբողջ շրջանին իթթիհատական շարքերէն իր նախընտրութիւնը ըրավ Թալեաթ պեյի վրայ, մասնաւորապէս, եւ զանհկա պատուեց «ընկեր Թալեաթ» եւ «մեր Թալեաթը» պատուանշաններով»:

Ռուս ժուռնալիստ Ա. Տիրկովայի հետ զրույցի ժամանակ Վանի դաշնակցության ղեկավար Վռամյանն ասաց. «Երիտթուրքերի մեջ կան ազնիվ մարդիկ, որոնց կարելի է վստահել: Խորհրդարանի ներկայիս նախագահ Ահմեդ Ռիզան, Հուսեյն Ջավիդը: Վերջապես Թալեաթ բեյը: Նա կրթված մարդ չէ, բայց ոգեշունչ եւ ազնիվ հայրենասեր է: Նա հասկանում է, որ Թուրքիայի փրկությունը բարեփոխումների մեջ է»:

- Իսկ ո՞րն է հայերի փրկությունը,- հարցնում է Տիրկովան:- Չէ՞ որ... երիտթուրքերի օրոք տեղի ունեցավ Ադանայի կոտորածը: Դուք արդյո՞ք ապահովագրված եք, որ դրանք այլեւս չեն կրկնվի...

- Ոչ, ոչ: Դա կրկնվել չի կարող,- հուզված ասաց Վռամյանը:

- Ադանայի կոտորածը հին վարչակարգի մնացուկն էր: Իթթիհադն ինքն էր վրդովված... Այո, թե Վանի եւ թե Մուշի վիլայեթներում մինչեւ օրս սպանություններ տեղի ունենում են: Դրանք կատարում են քրդերը: Ամենագլխավոր ավազակապետերից մեկը՝ Սայիդը, մինչեւ օրս էլ մնում է անպատիժ... Թուրքերը քրդերին համարում են... ամենահուսալի տարրը, իսկ մեզ՝ հայերիս, անհուսալի: Առաջին՝ որովհետեւ մենք քրիստոնյա ենք եւ չենք կարող չձգտել դեպի Ռուսաստան... ապա՝ մենք հեղափոխականների համարում ունենք: Չնայած՝ իրականում մշտապես ճնշումներն ու հալածանքները հայերին դարձրել են արտակարգ համբերատար:

- Այժմ ո՞րն է ձեր քաղաքական մարտավարությունը:

- Գլխավորը՝ դաշինք իթթիհադի հետ: մենք կորցրել ենք բոլոր հույսերը, որ բարենորոգումներ հնարավոր են քրիստոնյա տերությունների օգնությամբ... Մենք գործում ենք՝ հենվելով հիմնականում երիտթուրքերի ձախ թելի վրա... Թալեաթ բեյ, Ջավիդ բեյ, Հալիբ բեյ, Հաջի Ադիլ բեյ, Նազըմ բեյ:

Այս գրույցը 1911-ի դեկտեմբերին էր, իսկ 1912-ի գարնանը Վռամյանը խոստովանեց. «Թվում է, թե մենք սխալվել ենք: Մենք նրանց համարում էինք տգետ, բայց ազնիվ մարդիկ, իսկ նրանք պարզապես ստախոս քաղաքական սրիկաներ են... Եթե այս անգամ էլ նրանք խաբեն... մենք կգործենք այլ ձեռով»:

Տարօրինակ նվիրվածություն՝ թե՞ կապվածություն: Գիտեն, որ սրիկաներ են, բայց նորից չեն խզում կապերը, սպասում են մի անգամ եւս խաբվեն եւ ապա միայն որոշեն քակել «եղբայրության» կապերը, թե ոչ:

Ընդհանրապես ՀՀԴ ձգտում էր հարաբերություններ զարգացնել ոչ թե հայ կուսակցությունների, այլ իթթիհադի հետ, ոչ թե միավորել սեփական ժողովրդի ուժերը իթթիհադի ջարդարար քաղաքականության դեմ, այլ համագործակցել նրա հետ: Բայց ո՞ւմ դեմ: Ճիշտ է գրել «Տաճար» թերթը 1913թ. փետրվարի 2-ին. «...Հայ կուսակցությունները միայն խեղճ ու կրակ ժողովուրդը օվկեան թշւառութիւններէն, կրած անտանելի զուլումներէն ազատելու, ապահովելու, ինքնապաշտպանութեան եւ աներկիւղութեան առաջնորդելու միակ ու միակ պէտք է փարին եղբայրացած ու գործակցած»:

ՀՀԴ այլ կարծիքի էր ու սխալվեց: Նրա ու իթթիհադի հարաբերությունները կայուն չէին նաեւ մարտավարական խնդիրներում: Համառ լուրեր էին տարածվում, թե պատրաստվում էին հայկական նոր ջարդեր: Դաշնակցությունը շարունակեց մնալ իթթիհադի կողքին:

Եվ այսպես, որքան «իթթիհադն ամրապնդում էր իր դիրքերը, որքան իշխանությունը կենտրոնացնելով դառնում էր եզակի կառավարող ու թելադրող ուժ, այնքան իր հետ համագործակցող, իր «կողքին կանգնած» դաշնակցությանը մղում էր հետին պլան եւ անտեսում կամ ուղղակի արհամարհում նրա պահանջները»: Դաշնակցությանը ոչինչ չէր մնում, եթե ոչ հետեւողականորեն խուզել իր հավակնությունները: Ոչ վաղուց նույնիսկ ինքնավարությունը վերապահումով ընդունող ՀՀԴ հարկադրված էր առաջին պլան մղել հանուն «Թուրքիոյ հայոց ազգային սահմանադրութեամբ» նախատեսված ինքնավարության ճանաչումը: Նահանջն ավելի քան բախտորոշ էր: Հայ գործիչները նահանջում էին նաեւ հողային հարցում: «Հողավէճերը լուծել վարչական եղանակով եւ խառն հանձնաժողովների միջոցով՝ հենուելով օսմանեան հողային օրէնքներուն եւ անոնցմէ բխող լրացուցիչ լուսաբանութիւններուն : Վիճելի հողերու եւ ջրերու նկատմամբ սեփականութեան իրաւունք ճանաչել հին վաւերաթղթեր ներկայացնողին...»:

Իսկ ընդամենը մեկ տարի առաջ ՀՀԴ համագումարը որոշել էր «...հայ գիւղերն հեռացնել բոլոր այն բռնակալները, որոնք... 1890 էն ի վեր բնակութիւն հաստատած են հոն»:

Ռ. Տեր-Մինասյանը հարկադրված էր խոստովանել, որ ՀՀԴ դարձել էր երիտթուրքերի «քաղաքականութեան ամենէն հավատարիմ կողմնակիցը»: Խոսքով պահանջելով կայսրության վարչական ու մշակութային ապակենտրոնացում՝ «իրական կեանքի մէջ մենք ձուլուած էինք իթթիհատի հետ...»:

1911թ. օգոստոսի 6-ին Վանում Ռուսաստանի հյուպատոս Օլֆերովը գրում է, որ երիտթուրքերի ու դաշնակցականների հարաբերությունները լրիվ փոխվել են՝ «կրկին հարություն են առել հին հաշիվները, եւ սրությամբ զգացվում է ատելություն գյավուրների հանդեպ»:

«Դրոշակի» 1913թ. ապրիլի «Մահաբեր պատրանք» խմբագրականում նշվում է. «Սահմանադրական» Թուրքիան, Աբդուլ Համիդի չարականությամբ ու դիվական եռանդով գինված, բայց նրանից ավելի նենգորեն եւ ավելի մեթոդիկ, այս չորս տարում հայ ժողովրդի արյունը ծծեց վամպիրի պես, նրա անդարձ կորստյան վիճիւր փորեց, եւ մենք՝ ազնվորեն դյուրահավատներ, պատրանքներով աչքերնիս շլացած, անզգալիորեն, քայլ առ քայլ դեպի այդ ճակատագրական անդունդները դիմեցինք:

Ցրենք վերջապես այդ մահաբեր պատրանքը...

Չխաբենք մեզ եւ չխաբվինք ուրիշներից:

Հայ ժողովրդի լինել-չլինելու խնդիրն է հրապարակի վրա. կամ այսօր նա կապահովի իր ազգային գոյությունը իրական երաշխիքներով, կամ պիտի պատրաստվի որպես քավության նոխազ՝ կործանվող Թուրքիայի ավերակների տակ թաղվելու... Խավարում դարբնվող դժոխային դավը հայ ժողովրդի դեմ այլեւս գաղտնիք չէ, թուրք կառավարությունը՝ երիտթուրքերը, այլեւս կարիք չի զգում քողարկելու, սքողելու նյութվող ոճիրը»:

Երիտթուրքերի կառավարությունը նպատակադրվել էր Հայաստանը հնարավորին չափ շուտ դատարկել հայերից, հայկական գավառները լցնել մուհաջիրներով եւ իսլամական միատարր կուռ պետություն ստեղծել: Դրա համար էլ առեւանգում, սպանում էր հայերին, գրավում նրանց հողերը, զինում էր հրոսակներին եւ հայ բնակչությանը նեղում ապօրինի հարկերով:

ՀՀԴ հրապարակումներին հետեւողն անպայման կհանգի եզրակացության, թե նա հստակ տեսնում էր հայությանը սպառնացող վտանգը: Սակայն միայն տեսնում էր եւ գրեթե ոչինչ չարեց դրա առաջն առնելու կամ այն մեղմելու ուղղությամբ:

Դեռ ավելին, ՀՀԴ իթթիհադասիրությունը վերածվեց անախրոնիզմի: Նույնիսկ մահմեդականներն էին զարմանում դաշնակցության այդ կուրությունից: Շերիֆ

փառանք գրեց. «Քանի~ անգամ ՀՅԴ զգուշացրի իթթիհատի դէմ, որոնց սեւ հոգին կը ճանչնայի: Գոնե Ատանայի ջարդերը, որոնք իթթիհատ կոմիտեի հրամանովը կազմակերպուեցան, պէտք էր, որ դաշնակցականները իրողութիւններու իմաստը հասկանալու մղէին: Ինքզինքնին իթթիհատ վե թերաքքը կոմիտեին հետ համերաշխ հռչակելով՝ փոխանակ իրենց դատը պաշտպանելու՝ ատոր դէմ դաւաճանած եղաւ»:

Ընդունված է համարել, թե ՀՀԴ իթթիհադի հետ կապերը խզեց Բալկանյան պատերազմի եւ երիտթուրքերի կողմից թուրքիզմը պաշտոնական գաղափարախոսութիւն դարձնելու հետեւանքով: Հավանաբար դրանք նույնպէս դեր խաղացել են, բայց ոչ վճռական: Դաշնակցութիւնը իթթիհադի հետ կապերը խզեց Պետերբուրգի թելադրանքով՝ կապված հայկական բարենորոգումների նոր ծրագրի առաջքաշման հետ: Խոսքը պաշտոնական, այլ ոչ իրական խզման մասին է:

1910-11թթ. ակնհայտ էր, որ դաշնակցութիւնը շփոթված, տարընթացութիւնների մեջ էր: Արեւմտյան բյուրոն փաստորեն անգործութեան էր մատնված, եւ նրա պարտականութիւններն իրականացնում էր ինքնապաշտպանութեան մարմինը: Արեւմտյան բյուրոն այդպէս էլ «չկրցավ կամ չէր ուզած կտրուիլ իթթիհատէն եւ ընկած էր ջայլամային քաղաքականութեան մէջ՝ մոտէն չհետեւելով Սելանիկի մէջ անոր (իթթիհադի) առած որոշումներու թաքուն նպատակներուն»:

1912թ. խորհրդարանական ընտրութիւններուն ՀՀԴ եւ իթթիհադը մասնակցեցին ընդհանուր ցուցակով: Այդ առիթով «Կոհակ» թերթը գրեց. «... ՀՅԴ իթթիհատի հետ համաձայնութեան ակտովը ոչ միայն ստուեր ձգեց իւր անցեալի վրայ, այլ ամբողջ հայ յեղափոխութեան, նոյնիսկ հայ ժողովուրդին պատմական ճիգին, ձգտումներուն վրայ դրաւ անեղծելի արատը...»:

ՀՀԴ ամբողջ հոգով ձգտում էր դեպի իթթիհադը, իսկ իթթիհադը կոնֆետի քաղցրութիւնը ճաշակելու հրապուրով գայթակղեցնում եւ, առանց որեւէ զիջման, իր քաղաքականութեան կառքին լծած էր պահում դաշնակցութեանը: Թալեաթը դրա պատճառը համարում էր այն, որ դաշնակ գործիչները, տարվելով անձնական բարեկեցութեան խնդիրների լուծմամբ եւ շահադիտական գործառոյթներով, աչքաթող էին արել իրենց կուսակցական նպատակադրումներն ու դարձել միանգամայն անվտանգ:

Դաշնակցութեան այդ անպատասխանատվութիւնն ավելի քան դատապարտելի էր, քանի որ երիտթուրքերն իրենց հայակործան մտադրութիւններն ու գործողութիւնները չէին քողարկում: Նրանք պարզապէս «իրենց եղբայրների» աչքին թոգ փչեցին ամենաողորմելի զիջումներով՝ «հայկական «գիմնագիւն» բանալու իրաւունք տալ, դատարաններուն հայերին յարգել, գործադրելով արեւելեան կեղծաւորութիւն (այն էլ միայն նահանգային քաղաքներուն)՝ էֆենտի ասել»: Հոհիդան շատ հպարտ էր, որ թուրք կառավարութիւնը «յոյներին» պուլկարներին... ատում էր իբրեւ դեպի անջատումը հակուողների, իսկ մեզ առերես մեծարում, զովաբանում, գլուխներու տակ փափուկ բարձ դնում... Կոմիտեի ահ ու սարսափի տակ ընտրութեան 270 պատգամավորի դիմաց միայն

(9-10) դաշնակցականներ»: Քարն այս անգամ նետված էր ՀՀԴ բանջարանոցը, ոտնահարված էին նրա ղեկավարների բարօրության շահերը: «Այդ ժամանակ մերոնք արթնացան... բայց ավա~ղ փառացս անցաւորի: Այդ ընտրութիւնից յետոյ մերոնք իրենց խաբուած գտան եւ սկսեցին վայնասուն բարձրացնել փոխանակ կարմրելու եւ լռելու ամօթից»: Մեջբերված տողերի հեղինակն ամփոփում է. «Մոտ ապագայում ասելի են պարզուելու մեր կուսակցութեան սխալ դիրքերը, երբ երիտթուրքերն իրենց գէնքերն ուղղեն մեր կուսակցութեան պարագլուխների դէմ...»:

Պատահական չէ, որ դաշնակցության ղեկավարները դեռ 1912-13թթ. գիտեին՝ իթթիհաղը գնում էր դեպի հայության բնաջնջում, բայց ոչինչ չարեցին դրա առաջն առնելու համար:

1913թ. օգոստոսին ՀՀԴ Կարինում անցկացրեց իր 7-րդ ընդհանուր ժողովը, որը որոշեց. «Քաղաքական բարդություններուն ատեն, համախորհուրդ ընկերվարական միւս կուսակցութիւններուն՝ օրինական բոլոր հնարաւոր միջոցներով կանխել գինուած ընդհարումները»:

Ժողովը նաեւ հիմնավորեց երիտթուրքերի հետ անհամաձայնության պատճառները՝ իթթիհաղը շարունակում էր Թուրքիայի ավանդական քաղաքականությունը՝ ճնշել փոքրամասնություններին, մասնավորապես քրիստոնյաներին, ինչը որեւէ երաշխիք չէր թողնում օսմանյան հայության անվտանգության համար:

Տարընթացությունները եւ հակասությունները գնալով խորանում էին նաեւ հենց դաշնակցության ներսում. երիտասարդ ուժերը պահանջում էին արմատական քայլեր, իսկ ավագներն ու երեսփոխանները դրան դեմ էին: Օլֆերովը 1911թ. փետրվարի 20-ին գրեց, որ Վասպուրականի դաշնակցականները, «խզելով իրենց հարաբերությունները տեղական երիտթուրքերի հետ... այժմ ավելի մեծ կրքոտությամբ են քննադատում թուրքական կառավարության միջոցառումները»:

Թվում է՝ Լեոն Ճիշտ էր, երբ գրում էր, թե «նույն կառքին լծված թուրքական եւ հայկական կուսակցությունների կապը գնալով թուլանում էր»: Դաշնակցությունը նետվեց ցարիզմի, իսկ երիտթուրքերը՝ համիդականության գիրկը: «Երկու գրկերն էլ ընդհանուր գերեզման էին թուրքահայերի համար»:

Այս պայմաններում ինքնապաշտպանության խնդիրը բանաձեւերի գրառումներից այն կողմ չանցավ, ինչը կործանարար նշանակություն ունեցավ եղեռնի տարիներին:

ՀՀԴ տեսաբան Հր. Տասնապետյանն արդարացնում է իր կուսակցությանը, թե այդ օրերին ոչ ոք չէր կարող «պատկերացնել այն ահաւոր տարողութիւնը, որ պիտի ունենային թուրք պետութեան կազմակերպած ջարդերը 1915-16-ի հայութեան ամբողջական բնաջնջման իրենց ծրագրուած առաջադրանքով: Ոչ ոք կրնար նախատեսնել ցեղասպանութիւնը... ամենահոռետես ղեկավարներն անգամ ասելի չէին նախատեսեր, քան 1895-96-ի համիտեան ջարդերը յիշեցնող կոտորածները, ու տրամաբանօրեն, թրքահայութիւնը՝ շատ ասելի լաւ

կազմակերպուած եւ աւելի լաւ զինուած, քան 20 տարիներ առաջ, պիտի կարենար, ինքնապաշտպանութեան դիմելով, համեմատաբար աւելի քիչ թուով զոհեր տալով դուրս գալ փոթորիկէն»:

... Վանի դաշնակները Թիֆլիս ուղարկեցին Քաջագունուն, իսկ պատրիարքը՝ Տաղավարյանին: Սակայն նրանց առաքելութիւններն ապարդիւն անցան: Թիֆլիսի դաշնակներին չէր էլ մտահոգում, որ իրենց ցուցամուկութիւնը Արաքսի այն ափին արժենում է բազում հայ կյանքեր: Գործին միջամտեց Ռոստոմը. նա արգելեց Արեւելյան բյուրոյին զբաղվել արեւմտահայութեան խնդիրներով: Բայց Վորոնցով-Դաշկովի սիրալիութիւնը դաշնակներին լրիվ խելքահան էր արել, եւ նրանք արհամարհեցին նույնիսկ իրենց առաջնորդի հանձնարարութիւնը: Արեւմտյան բյուրոյին այլ բան չէր մնում, բացի իր կովկասյան գործընկերների վարքագծի որդեգրելը: Հիմնավորումը հետեւեալն էր. արեւմտահայութեան «գոյութեանը սպառնացող ակնհայտ վտանգը նրան (արեւմտահայութեանը) իրավունք է տալիս օգնութեան կանչել ռուսական մեծ տերութեանը»:

Նման մոտեցման հետեւանքով դաշնակցութեան միջոցով հայ (թե արեւելահայ եւ թե արեւմտահայ) կյանքի փաստացի ղեկավարը դարձավ Վորոնցով-Դաշկովը: Թե կաթողիկոսը եւ թե Կ. Պոլսի պատրիարքը, թե արեւմտահայ Ազգային ժողովը եւ թե արեւելահայ Ազգային բյուրոն դաշնակցութեան կամակատարներն էին, իսկ վերջինս էլ տառ առ տառ, բառ առ բառ փոխանցում էր Վորոնցով-Դաշկովի հանձնարարութիւնները:

Գնալով հայկական բարենորոգումների շուրջ քննարկումներն աշխուժանում էին: 1913թ. սկզբներին այդ հարցով մի քանի հանդիպումներ ունեցան պոլսահայ գործիչներն ու երիտթուրք ղեկավարները: Հանդիպումներից մեկի ժամանակ Թալեաթն ասաց. «Եթե այս անգամ էլ չլսեք մեզ եւ շարունակեք օտար ուժերով ճնշում գործադրել, միեւնոյն է, որեւէ բանի չեք հասնի. չէ՞ որ հազարավոր ուղիներ կան բարենորոգումները վիժեցնելու»:

Բանակցութիւնները որեւէ արդյունք չունեցան. հայերը պարզապէս երիտթուրքերին չէին հավատում եւ դրա համար ավելի քան հիմքեր ունեին: Երիտթուրքերի հանդէպ հայերի անվստահութիւնն ամբողջացավ, երբ բացահայտ դարձավ, որ նրանց քաղաքականութիւնը նպատակ ուներ «բռնութեամբ օսմանացնել բոլոր ոչ թուրք օսմանցիներին» եւ դա անել «կրակով ու սրով»:

Այդ ամենով հանդերձ Հայկական հարցը մի անգամ եւս միջազգայնացվեց դիվանագիտական եւ քաղաքական քննարկումների առումով: 1912-13թթ. հյուպատոսական զեկուցագրերում ու դիվանագիտական այլեայլ փաստաթղթերում գնալով ավելի ու ավելի հաճախակի էին անդրադարձները Արեւմտյան Հայաստանին ու հայերին:

Բարենորոգումների ծրագրերի նախագծերի քննարկման ընթացքն, իհարկէ, ավելի սրեց հայ-թուրքական հարաբերութիւնները, մանավանդ որ հայերն այդպէս էլ չընդառաջեցին թուրք պարագլուխների առաջարկներին ու սպառնալիքներին: Դեռ ավելին, դաշնակցութեան գործիչները թուրքերի սպառնալիքին փոխադարձ

սպառնալիքով պատասխանեցին: Արմեն Գարոյի վկայությամբ՝ իրենք Մ. Շուքրիին եւ Քուչուկ Թալեաթին սպառնացին. «Եթե գաւառներու մէջ որեւէ կոտորածի դէպք պատահի, մենք անմիջապէս պիտի վերսկսենք մեր յեղափոխական գործունեութիւնը Պոլսոյ մէջ, եւ պատասխանատուները չեն ազատիր մեր ձեռքէն»:

Գրիգոր Զոհրապը պատմում է, որ Զեմալը Վարդգեսին սպառնացել էր, թե Եվրոպական միջամտությանը կհետեւի հայերի ջարդը, իսկ Խալիլն էլ իրեն ասել էր. «Թուրքերը նախամեծար կը համարին մեռնիլ, քան թէ հայկական խնդրոյ մէջ որեւէ օտար պետութեան միջամտութիւնը ընդունիլ, նոյնիսկ եթե երկիրն ալ միասին պիտի մեռնի»:

Իթթիհադը բարդ խաղի մեջ էր. մի կողմից խուսանավում էր, խաբոււմ հասարակական կարծիքը, թե բարենորոգումներն անցկացնելու լուրջ մտադրություն ունի, մյուս կողմից՝ հետեւողականորեն խուզում էր հայերի առանց այդ էլ խղճուկ քաղաքական իրավունքները, առաջ տանում նրանց արտամղելու քաղաքականությունը: Իթթիհադի կենտրոնը զեղծարարությունների միջոցով հայերի պատգամավորական տեղերի թիվը կրճատեց երկու անգամ՝ երկու միլիոն հայությունը խորհրդարանում ներկայացված էր միայն 11 պատգամավորով: «Երիտթուրքերը բոլոր միջոցներով ձգտում էին թաղել Հայկական հարցը»՝ պատճառաբանելով, թե հայերին զիջելը «կառաջացնի նման պահանջ նաեւ արաբների կողմից»:

Երիտթուրքերի հակահայ եւ գնալով խստացող քաղաքականությունը հայերին ավելի ու ավելի էր մղում Ռուսաստանի գիրկը: Վորոնցով-Դաշկովը հայտարարեց, թե Ռուսաստանում Հայկական հարց չի եղել եւ չկա: «Այդ հարցը մենք՝ ռուսներս, ստեղծեցինք: Հայերի շրջանում որեւէ անջատողական տրամադրություն գոյություն չունի»:

Հավանաբար այս խոսքերը կոչված էին նաեւ պարտամուրհարկի դեր խաղալ, քանի որ Կ. Պոլսում Գերմանիայի ազդեցությունն օր օրի աճում էր: Բեռլինը լսել անգամ չէր ուզում, թե Թուրքիային առնչվող որեւէ հարց հնարավոր էր լուծել՝ շրջանցելով իրեն:

Հայ գործիչների բացարձակ մեծամասնությունը սխալ էր թույլ տալիս, երբ փորձում էր Հայկական հարցը լուծել առանց Թուրքիայի մասնակցության՝ հույս ունենալով, որ Եվրոպան կիրամայի, եւ Թուրքիան անմռունչ կկատարի այդ հրամանը: Դա վտանգավոր մոտեցում էր:

Գ. Նորատունկյանը մեծ ջանքեր թափեց, եւ այդ գործում նա միակն էր, որ հայերը ոչ թե Եվրոպային դիմեին, այլ թուրքական կառավարության հետ համաձայնության գային, սակայն «ամբոխային դատողությունը» պիտակավորում էր նման ջանքերը՝ «դավաճան, վաճառում է ազգը»: Բռնությամբ հեռացրին այն չորս հայերին, ովքեր կառավարության կողմից հրավիրվել էին բանակցությունների:

Իսկ ՀՀԴ հասել էր «այն անբարտավար մեծամտության, թե ինքը հայոց ազգն է ներկայացնում... հետեւաբար չէր կարող թույլ տալ, որ Հայկական հարցը լուծում ստանար առանց իր եռանդուն մասնակցության»: Նրա հանձնարարությամբ կազմվեց բարենորոգումների նոր ծրագիր. ռուսական դեսպանության հետ պատրիարքարանի բանակցությունների բովանդակությունը նույնպես թելադրում էր ՀՀԴ: Այն ավելի առաջ գնաց, եւ Ջավրիեւը սկսեց ինքնուրույն բանակցություններ Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Գիրսի հետ:

«Իթթիհադը,- գրում է Լեոն,- ՀՀԴ մեղադրեց դավաճանության մեջ, իբր նա էր կազմակերպել ռուսական միջամտությունը: Որպես ապացույց բերվում էր ՀՀԴ Ամերիկայի կենտրոնի հետեւյալ կոչը. «Բալկանյան պատերազմի վերսկսումով քաղաքական շրջանակը կրկին շփոթեցավ, ու Հայկական դատի այժմեությունն կարծես մեղմացավ: Իրականին մեջ, սակայն, այդպես չէ, որովհետեւ որոշ մարդիկ, մարմիններ եւ մեր կուսակցությունը, մասնավորապես, քաղաքական դիմումներով կը ձգտեն հող պատրաստել Հայկական դատը յառաջիկային ամեն գնով դնելու համար դիվանագիտության սեղանի վրա եւ պահանջել անոր նպաստավոր լուծումը»:

1910-ական թթ. Բ. Դուռը, Հայկական հարցում օտար միջամտություն ասելով, հասկանում էր ռուսական միջամտությունը եւ դրա համար հիմքեր ուներ, որովհետեւ այդ հարցի բարձրացման նախաձեռնությունն իր ձեռքն էր վերցրել Պետերբուրգը: Երիտթուրքերը, դաշնակցությանը մեղադրելով դավաճանության մեջ, առաջին հերթին նկատի ունեին օր օրի սերտացող կապերը ռուսական իշխանությունների հետ:

Դրա հետ միասին, երբ կարդում ես դաշնակցության մի քանի պարագլուխների գրածները հայ-ռուսական հարաբերությունների մասին, զարմանում ես նրանց երկդիմության, նաեւ մտածողության ու վարքագծի անբարոյականության վրա: «Ռուսական կողմնորոշման ջատագով» ՀՀԴ ոչ միայն ատում էր ցարիզմն ու նրա քաղաքականությունը, այլեւ այն ամենը, ինչ ռուսական էր: Ձեռքիս է Ռ. Դարբինյանի «Ռուսական վտանգ» հորինվածքը, որը անպատասխանատու մտածողության բացառիկ նմուշ է:

Դաշնակցական այդ գործչի կարծիքով հայի համար ռուսն ու թուրքը նույնն են, երկուսն էլ՝ ոխերիմ թշնամի: Ատելությունն այդ պարագլխին կուրացրել էր մինչեւ այն աստիճանի, որ հայտարարում էր. «Հայ ազգն իր պատմության վերջին շրջանում եղել է երկու մեծ ժողովուրդների՝ ռուսի եւ թուրքի լուծի տակ եւ հզորապես ենթարկվել է նաեւ նրանց մտավոր եւ բարոյական ազդեցությանը»: Հետեւաբար «հայութեան ազատագրական պայքարը պիտի մղուեր այդ երկու ճակատների վրայ»: Սակայն, ավստոսում է նա. հայությունը «կռվել է միայն մեկ ճակատի՝ թուրքական ճակատի վրայ»՝ չնայած ոչ թե թուրքերը, այլ ռուսներն էին բոլոր ջանքերը թափում՝ «տարրալուծելու հայ ազգությունը, ծուլելու այն իւր մէջ...», որի հետեւանքով «հայ ինտելիգենցիան եւ հայ բուրժուազիան յարաճունօրեն ենթարկուում էին այլասերման, օտարացման, բարոյալքման».

Ռուսները «մահացու հարված» էին հասցնում «մեր ազգային ուրոյն կուլտուրայի զարգացմանը, այնքան են «ապագայնացրել նրա վերին խավերին», որ նույնիսկ Առաջին աշխարհամարտի տարիներին հայ կյանքում «առաջ չեկաւ որեւէ

քաղաքական հոսանք ընդդեմ ռուս պետության. մենք կարծես, զրկուել էինք ընդունակութունից զատելու հայ ազգի շահերը»: Իսկ հայերի ռուսական «յախուռն օրիէնտացիան ոչ թե արդիւնք էր ռեալ քաղաքական մտածողութեան կամ հաշիւների, այլ մի անյաղթելի հասարակական պահիսոզ էր...»: Հայերն այդպէս էլ չըմբռնեցին, թե իրենց ինքնորոշման ճանապարհին, հանձինս ռուսների, ինչպիսի «մեծ չարիքից էին ազատվում»:

«... ներկայ պահին չկայ ավելի մեծ թշնամի, քան ռուսն է, եւ նրա դէմ պէտք է ուղղված լինեն մեր բոլոր ուժերը՝ թե՛ ֆիզիկական, թե՛ մտավոր, թե՛ բարոյական, ներշնչուի, որ մենք կարող ենք կռուել, եւ պէտք է կռուել նրա դէմ էլ նոյնքան սեղմ շարքերով ու անվերապահութեամբ, որքան թուրքերի դէմ...», «...մեր կեանքի բոլոր ասպարէզներում արմատախիլ անել այն գերազանցապէս բացասական հետքերը, որ թողել է մէկ դարու ռուսական տիրապետութիւնը»: «Ռուսաստանը... պէտք է մերժուի... ոչ միայն որպէս քաղաքական սիստեմ, այլեւ իբրեւ կուլտուրական ազդեցութիւն...» նոյն այն բանի համար, որ «Ռուսաստանին այսօր սպառնում է Տաճկաստանին վիճակուած բախտը... ռուսական աշխարհակալութիւնը մահուան է դատապարտված, ինչպէս եւ թուրքականը»:

Իհարկէ, Ռուսաստանի դերի գերազնահատուցը վնասակար ու վտանգավոր է, սակայն ռուս ժողովրդին նույնացնելը նրա կառավարող վարչակարգերին եւ կոչ անել մերժել անգամ «ռուսական մշակույթը», պարզապէս անլուրջ ազգայնամոլություն է:

Էրզրումի համագումարը որոշեց անփոփոխ թողնել նախորդ ընդհանուր ժողովի կողմնորոշումը՝ պատերազմի դեպքում յուրաքանչյուրը պարտավոր է կատարել պատկան պետության հանդէպ իր քաղաքացիական պարտականությունները: Համագումարի պատգամավորները դեռ չէին հեռացել քաղաքից, երբ Կարին հասավ թուրքական պատվիրակությունը՝ Նաջի բեյի ղեկավարությամբ, եւ սկսեց բանակցություններ ՀՀԴ ներկայացուցիչներ Ռոստոմի, Վռամյանի եւ Ակնունու հետ:

Քիչ անց նրանց միանում է Էմիլ Հիքմեթը՝ մահմեդական 27 ցեղերի ներկայացուցիչների հետ: Տարածված կարծիք է, թե թուրքական պատվիրակությունը ղեկավարում էր Բեհաէդդին Շաքիրը, որն այդ նպատակով էր Կ. Պոլսից եկել: Իրականում Շաքիրը հունիս ամսից Էրզրումում էր եւ ղեկավարում էր Թեշքիլաթ-ի մախսուսայի (Հատուկ կազմակերպություն) շտաբը: Նա դաշնակցության ղեկավարների հետ ավելի շուտ էր հարաբերությունների մեջ մտել, որովհետեւ վերջինները (մոտ 30 հոգի) ՀՀԴ 8-րդ համագումարի կապակցությամբ հավաքվել էին Էրզրումում: Բ. Շաքիրը համագումարում գործակալ ուներ եւ մանրամասն տեղեկություններ էր ստանում այնտեղ կատարվածների մասին, մանավանդ որ համագումարի մասնակիցները գործում էին անզգույշ՝ նիստերն ավարտվելուց հետո, իբր թաքուն, հավաքվում էին ռուսական հյուպատոսությունում, որտեղ տեղի ունեցած քննարկումների մասին նույնպէս Բ. Շաքիրը մանրամասն տեղեկատվություն ստանում էր:

Երիտթուրքական պատվիրակները հայերին մեծամեծ խոստումներ էին տալիս, անվերապահ ընդունում բարենորոգումների ծրագիրը, հավաստիացնում, որ

«Կովկասի մէջ ստեղծելու են հայ, վրացական, ատրպեճանական եւ հիւսիսային կովկասեան պետութիւններու միութիւն մը՝ Պոլսոյ սուլթանի խնամակալութեան ներքոյ... Ռուսի նախընտրելի էր, որ հայերը ձեռք քաշելով օտար դիւանագիտութեան դասերը ափ առնելու գաղափարէն, միանային Թուրքիոյ եւ Կովկասեան միւս ժողովուրդներուն, կազմէին կամաւորական գունդեր եւ սահմանի երկու կողմերուն վրայ կատարէին թիկունքային աշխատանք՝ կայսրութեան սահմաններէն ներս օգնելով իրօրհատական կառավարութեան եւ Կովկասի մէջ թիկունքէն հարուածելով ռուսական կովկասեան բանակը»:

Պահպանվել է բանակցություններում Բ. Շաքիրի ճառի հետեւյալ հատվածը. «Ռուսաստանը եւ իր դաշնակիցներն ի վիճակի չեն դիմադրելու կենտրոնական կայսրություններին: Ամբողջ մահմեդական աշխարհը՝ Մարոկոյից մինչեւ Բելուջիստան եւ Աֆղանստան, համախմբվել է Թուրքիայի շուրջը՝ ընդդէմ Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Անգլիայի: Կովկասում մեզ կհարեն վրացիներն ու մուսուլմանական ցեղերը, որոնց Թուրքիան կկազմակերպի եւ զենք կմատակարարի: Բայց Կովկասում մեր գործերի հաջողությունը ամբողջովին ձեր (հայերի) ձեռքին է, եւ ձեր կողմից հակառուսական շարժման գլուխ կանգնելու վերաբերյալ համաձայնություն տրվելու դեպքում բավական կլինի Կովկաս շարժել 200-300 հազարանոց մի բանակ, որպեսզի ռուսները հետ շարսվեն Կովկասյան լեռներից այն կողմ: Ռուսներին արտաքսելուց հետո հյուսիս-արեւմուտքում մենք կկազմակերպենք ինքնավար Վրաստան... հյուսիս-արեւելյան մասում կառանձնացնենք ինքնավար մուսուլմանական մի մարզ... եւ, վերջապէս, կենտրոնական մասում կկազմենք ինքնավար Հայաստան...»:

«Երիտթուրքերի ռազմավարական պլանը,- գրում է Լեոն,- Հարավային Կովկասը հեշտ ճանապարհով զավթելու պլան էր եւ, անկասկած, ուներ գերմանական ակունք»:

Դաշնակները պատասխանեցին, որ Ռուսաստանի դէմ պատերազմը համարում են կործանարար, եւ իրենք ամեն ինչ կանեն ռուսների դէմ Թուրքիայի պատերազմը կանխելու, իսկ եթէ այն համենայն դեպս սկսվի, ապա հայերը լրիվ կկատարեն իրենց քաղաքացիական պարտքը թէ Ռուսաստանի եւ թէ Թուրքիայի նկատմամբ, որ իրենք ոչ մի դեպքում Ռուսաստանում խառնակություններ չեն մտցնի:

«Դա դավաճանություն է,- բղավեց Բ. Շաքիրը:- Դուք Ռուսաստանի կողմն եք անցնում մի պահի, որից բախտորոշը չի եղել: Դուք հրաժարվում եք պաշտպանել կառավարությանը: Դուք մոռանում եք, որ օգտվում եք նրա հյուրընկալությունից»:

«ՀԴ 8-րդ համագումարի բանաձեւում կարդում ենք. «Հաշվի առնելով պետական քաղաքականության նեղմտությունն ու էկլեկտիկությունը... որի հետեւանքներն արտահայտվում են բոլոր ոչթուրք ժողովուրդների տնտեսական, լուսավորչական, վարչական կյանքի նկատմամբ ճնշումներում, նկատի ունենալով բարենորոգումները տապալելու կառավարության վարած քաղաքականությունը, ընդհանուր ժողովը եկավ այն եզրակացության, որ կուսակցությունը հանդես կգա իրօրհադի նկատմամբ անկիրթ դատավորի եւ անհաշտ ընդդիմության դերում, կպայքարի նրա վնասակար ազգայնամուլական եւ

հակապետական քաղաքականության դեմ: Ժողովը չի բացառում համագործակցությունը համապետական խնդիրներում...»:

Համագումարի դիրքորոշումը հստակ էր: Յուրաքանչյուր ոչ պետք է մնա «օրինապահ իր ապրած երկրի վերաբերեալ»: «... Արեւմտահայութիւնը չպէտք է ապստամբուի, պատերազմի ընթացքին յստակ ազգային խնդիր չպէտք է յարուցանէ, իր վրայ ընկնող բոլոր քաղաքացիական պարտականութիւնները պէտք է կատարէ բարեխիղճ, համբերող եւ պարտաճանաչ պէտք է լինի Թուրքիոյ եւ թուրքերու հանդէպ»:

Հայերը երիտթուրքերին համոզում էին, որ եթէ անգամ Գերմանիան հաղթեր, Թուրքիային ավելի ուժեղ էր կեղեքելու, քան եթէ հաղթեր Ռուսաստանը, միաժամանակ քաջ գիտեին, որ թուրքերը պատերազմը համարում էին միակ միջոցը, լուծելու «իրենց ազգային խնդիրները», որոնք այլ բան չէին, եթէ ոչ Էնվերի կարգախօսի կենսագործում՝ «Ռուսները պետք է դուրս մղվեն Կովկասից, եւ այն պետք է կցվի Թուրքիային...»:

Թուրքերը առիթը բաց չէին թողնում հայերին հանդիմանելու. «Ռուսներին Անդրկովկաս դուք եք բերել եւ դուք էլ պիտի վռնդեք»:

Հայերը նաեւ լավ գիտեին, որ Էրզրումից հետո իրենք այլ ելք չունեին, բացի Ռուսաստանին ապավինելը: Նման եզրահանգման գալուց հետո թվում է տարօրինակ, որ արեւելահայ գործիչները շարունակեցին արեւմտահայությանը հորդորել՝ ինչ էլ որ լինի անվերապահորեն ենթարկվել թուրքական իշխանությունների ձեռնարկումներին: Թերեւս դա էր պատճառը, որ շուտով արեւմտահայության հետ կապը խզվեց, ՀՀԴ բյուրոն դադարեց ղեկավարելուց Արեւմտյան Հայաստանի իր կազմակերպություններն ու ամբողջովին տարվեց կամավորական շարժման կազմակերպչական աշխատանքներով՝ այն համարելով հայերի միակ իրական ուժը արեւմտահայությանը փրկելու գործում: Դա սխալ եւ ճակատագրական նշանակության կողմնորոշում էր, որի հետեւանքով արեւմտահայության կրավորականությունն ավելի խորացավ, այլեւս նրա համար գլխավորը ոչ թե գոյության համար մաքառումն էր, այլ հույսը «դրսի վրա դնելը», եւ քանի որ դրսի աջակցությունը շոշափելի չէր, ավելի ձիշտ՝ բացակայում էր, արեւմտահայը հուսալքվեց եւ առանց կոլեկտիվ լուրջ դիմադրության, ենթարկվեց յաթաղանի քմահաճույքին:

Ով զբաղվել է դաշնակցության պատմությունով, նկատած կլինի, որ ՀՀԴ գործիչներն ամպագորգոռ ճառեր էին ասում, գովեստներ շռայլում կուսակցության հասցեին, բայց մինչեւ օրս էլ հստակ գնահատական չեն տվել ՀՀԴ պատմության մի շարք հիմնահարցերի եւ իրադարձությունների: Իսկ որոշ իրադարձությունների մասին դաշնակ գործիչները տրամագծորեն հակառակ կարծիքի են: Կամավորական շարժման նկատմամբ վերաբերմունքը դրա արտահայտություններից մեկն է: Կուսակցական մի փաստաթղթում կարդում ենք. «Կամավորական շարժումը տարերային նախաձեռնություն էր... դեպի իրեն տրամադրելով ամբոխի տրամադրությունը: Դաշնակցություն կուսակցությունը ոչ ուղղակի եւ ոչ էլ անուղղակի կապ չի ունեցել դրա ծնունդի հետ: Դեռ ավելին, այն նույնիսկ դեմ էր այդ շարժմանը՝ հավատարիմ մնալով իր բարձրագույն մարմնի

(Էրզրումի համագումարի) որոշմանը: Ճիշտ է, դաշնակցություն կուսակցության հին խմբապետներից շատերը, հրապուրվելով այդ շարժումով, արագ ներքաշվեցին կամավորական շարժման մեջ, բայց դաշնակցություն կուսակցությունը պաշտոնապես շարունակեց ձեռնպահ մնալ»:

Ստ. Շահումյանը հերքում է դաշնակցության չքմեղությունը: Նա գրում է, որ կամավորական շարժումը ձեւավորվեց Վորոնցով-Դաշկովի պալատում եւ «իրականացվեց հայ բուրժուազիայի փողերով, դա քաղաքականություն էր, որ վարում էին դաշնակները՝ ներկա պատերազմը շարունակելու (կամավորական շարժում եւ այլն), որպեսզի հասկացվի հայ մտավորականության «հայրենասիրության գինը», նրա պատմական նշանակությունը»:

Քանի որ իթթիհադի պարագլուխները ՀՀԴ համագումարի որոշումն անվանեցին «դավաճանություն», միջոցներ ձեռնարկեցին հայերի հետ խզումը տրամաբանական վախճանի հասցնելու համար: Շաքիրը հեռագրեց Կ. Պոլիս. «...հայերը տրամադիր չեն մեզ հետ հավաքաբար գործելու: Հետեւաբար, հարկ է նրանցից թաքցնել մեր ձեռնարկած միջոցները»:

Նույն հանձնարարականն էր պարունակում Մ. Շուքրիի հեռագիրը. «... ձեռնարկվող բոլոր միջոցները պետք է գաղտնի պահել հայերից: Պետք է ստեղծել տպավորություն, որ պետությունն ու կառավարությունը փափագում են, որ հայրենակիցները մնան անվտանգ»: Ու. Չերչիլը Էրզրումի համագումարի որոշման մասին գրում է. «Նրանք ընդունեցին ուշադրության արժանի որոշում՝ եթե պատերազմ ծագեր, հայ ժողովրդի թուրքական եւ ռուսական հատվածները պետք է կատարեին իրենց քաղաքացիական պարտականությունը պատկան կառավարության հանդեպ: Նրանք նախընտրելի համարեցին եղբայրասպան կռիվը, քան իրենց գոյության հարցը կապել նրանցից որեւէ մեկի հաղթանակի հետ»:

Հայերի վարքագիծը «վրեժխնդրություն առաջացրեց, ինչն այն ժամանակ կանխամտածված ծրագրի մասն էր կազմում»:

Առնվազն տարօրինակ է, որ Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելը հայ շատ գործիչների հանկարծակիի բերեց:

- Արդար լինելու համար պետք է խոստովանել,- գրում է Ս. Վրացյանը,- որ ես պատերազմի մղձավանջ չէի տեսնում: Եվ մեր շրջապատում ոչ ոք դեռ չէր տեսնում:

Իսկ վիճակը, սկսած Բալկանյան պատերազմի ավարտից, գնալով վատթարանում էր: Ռ. Պինոն գրում է. «... դանդաղ հարստահարութիւն մը սկսաւ: Թալան, սպանութիւն, բռնի կրօնափոխութիւն, առեւանգում շատ եղաւ. բայց ոչ ընդհանուր: Ֆրանսիական եւ անգլիական դիւանագիտութիւններուն կորովի ազդարարութիւնները եւ Ռուսիոյ սպառնական միջամտութիւնը արգիլեցին սպանդի ընդհանրացումը»: Այդպես էր, եւ «երիտթուրքերը նպաստաւոր առիթ մը կը սպասէին իրականացնելու համար իրենց աղէտաւոր մտադրութիւնը»:

Նպաստավոր ոչ միայն առիթ, այլ նաև հնարավորություն կարող էր լինել պատերազմը:

Էրզրունի համագումարի ավարտին Բեհաէդդին Շաքիրը փորձեց համագումարի ամբողջ կազմին ձերբակալել եւ ոչնչացնել, սակայն հայերը ինչ-որ կերպ այդ մասին իմացան եւ կարողացան ժամանակին ցրվել ու թաքնվել: Դրանից հետո, բացի Կ. Պոլսում Վարդգեսի եւ Վանում դաշնակցության կոմիտեի գործունեությունից, դաշնակ մյուս գործիչներն անհետացան:

Մահվան սարսափը շատ հզոր է:

Ի դեպ, Վարդգեսը, զգալով վտանգը, Թալեաթին խնդրեց թույլ տալ մեկնել Բուլղարիա: Վերջինս պատասխանեց. «Վարդգէս, քեզ Բուլղարիա երթալու հրաման չեմ տայ: Գիտեմ՝ օձիքդ ազատել կ'ուզես, բայց ճար չկայ. մենք ինչ որ ըլլանք, դու ալ մեզի հետ պիտի ըլլաս»:

Կարելի է դաշնակ ղեկավարների կողմից արեւմտահայությանը լքելը դավաճանություն անվանել կամ ոչ, միեւնույնն է. թե մեկ եւ թե մյուս պատճառով արհավիրքի հանդեպ վերջինները մնացին առանց ղեկավարների:

Դաշնակցության 8-րդ համագումարը դեռ ընթանում էր, երբ սկսվեց հայոց ցեղասպանությունը: Պարզապես ապշել կարելի է. ունենալով ավելի քան բավարար տեղեկատվություն՝ դաշնակցությունն այդպես էլ «զլխի չընկավ», որ հայերի զանգվածային ջարդերը սկսվել էին: Անգամ ցեղասպանության սկիզբը որոշելու հարցում այդ կուսակցությունը մնաց նույն եսապաշտ կեցվածքում:

Ինչո՞ւ 1915թ. ապրիլի 24: Ո՞ւմն է ձեռնտու այդ տարեթիվը: Միայն թուրքերին ու դաշնակներին: Դաշնակներին, որովհետեւ այդ օրը ձերբակալվեցին մի քանի տասնյակ դաշնակցականներ, եւ թուրքերին, որովհետեւ այդ տարեթիվն ամենահարմարն էր ապացուցելու, որ հայկական ջարդերը ոչ թե ծրագրված էին, այլ անդրադարձ էին նույն այդ հայերի վարքագծի:

1915թ. հունվարին ռուսները Սարիղամիշում գլխովին ջախջախեցին թուրքական 3-րդ բանակը եւ առաջ շարժվեցին դեպի կայսրության խորքերը: Չնայած Դարդանելում հաջողվեց կանգնեցնել Անտանտի առաջխաղացումը, բայց Կ. Պոլիսը շարունակում էր գտնվել վտանգի գոտում: Հեյդար փաշայի կայարանում գնացքակազմերը պատրաստ սպասում էին՝ սուլթանին ու կառավարությանը Կոնիա տեղափոխելու համար: Անգլիացիները գրավել էին Պաղեստինն ու շարժվում էին դեպի Կ. Պոլիս: Այսինքն՝ բոլոր ուղղություններով Թուրքիան վտանգված էր: Այդ պայմաններում հայերը Վանից դուրս քեցին թուրքական իշխանություններին եւ տիրացան քաղաքին, կիլիկահայությունը պատերազմի մեջ էր թուրքական իշխանությունների հետ, վերջիններիս առաջ փակված էին Սասունի դռները եւ այլն:

Նման հանգամանքներում ինչպիսի՞ն պետք է լիներ օսմանյան կառավարության դիրքորոշումը: Իհարկե, առաջին հերթին, վերացնել ներքին վտանգը՝ ջախջախելով հայկական շարժումը: Եվ նա այդ արեց, այլ ոչ թե

իրականացրեց հայերի ծրագրավորված բնաջնջում: Խոստովանենք, որ համոզիչ փաստարկ էր, որի համար հիմք ստեղծեցին նույն իրենք՝ դաշնակցականները: Պոլսահայ էֆենդիները պատրաստ էին զոհաբերել ամբողջ արեւմտահայությանը. միայն թե իրենց շահերին կաչող չլիներ:

Եվ ահա «Յառաջ» թերթի հիմնադիր, դաշնակցական Շ. Միսակյանը իմանում է, որ Պոլսի մտավորականությանը աքսորել են, ու նամակով այդ մասին պատմում է Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդին, որտեղ եւ օգոստոսի 4-ին առաջին անգամ նշվեց եղեռնի զոհերի հիշատակի օրը: Այդ օրը միանգամայն բացահայտ Կ. Պոլսում նշվեց 1919թ, ապրիլի 24-ին: Տարեթիվը խորհրդանշական է, բայց ժամանակի ընթացքում վերածվեց Մեծ եղեռնի սկզբի: Թուրքերը հաճույքով դրա հետ համաձայնվեցին:

Իրականում Մեծ եղեռնը սկսվել էր 1914թ. օգոստոսի 2-ին, երբ Թուրքիան դեռեւս պատերազմի մեջ չէր մտել, նրան ոչ ոք եւ ոչինչ չէր սպառնում: Այդ տարվա հուլիսի 27-ին իրեն «չեզոք» հայտարարած Թուրքիան հայտարարեց զորահավաք, որի ընթացքում զորակոչվեց 300000 հայ, այսինքն զենք կրելու ընդունակ բոլոր արեւմտահայերը, որոնց չնչին մասին միայն զենք ու զինվորական հագուստ տվեցին, իսկ մնացած բոլորին քշեցին աշխատանքային վաշտեր (ամելե թաբուրու) ու ոչնչացրին ամենատարբեր միջոցներով: Զինակոչի հետեւանքով հայությունը զրկվեց կռվող ուժից ու մնաց բացարձակապես անպաշտպան:

Ջորակոչն անցկացվեց այնպիսի խստությամբ ու դաժանությամբ, որն իրեն կարող էր թույլ տալ միայն պատերազմող երկիրը: Խստությունները համատարած չէին, դրանք հիմնականում կիրառվում էին հայերի ու հույների նկատմամբ, եւ դա ոչ թե այն պատճառով, որ այդ երկու ժողովուրդները խուսափում էին զորահավաքից, ոչ էլ թելադրված էին ռազմաճակատի կացությամբ, այլ այն իրողությամբ, որ զորահավաքն այլ բան չէր, եթե ոչ զանգվածային ջարդերի սկիզբ, այսինքն զործողության մեջ էր դրվում ցեղասպանության քաղաքականությունը:

Կ. Սասունին գրում է, թե «երկու զորահավաք էր տեղի ունենում մեկ անուան տակ: Փաստօրեն թիւրք կառավարութիւնը հայ բոլոր տղամարդիկը... իր ավին մէջ կ'ամէր եւ կը կալանաւորէր զինուորական պարտականութիւն կոչուած բանտին մէջ»: Այսինքն, զենք կրող հայերի 90%-ը «հավաքուած եւ շղթայի տակ էր առնուած», որից հետո միայն սկսվեց զանգվածային հարձակումը կռվելու անընդունակ հայ բնակչության վրա: Որ զորահավաքը նշանակում էր բնաջնջում. վկայում է նաեւ այն, որ զորակոչված հայերի միայն փոքր մասին ռազմաճակատ տարան, այն էլ կռվի ամենածանր տեղերում՝ թուրք զինվորների հսկողության տակ:

Օգոստոսի 2-ին կնքվեց թուրք-գերմանական գաղտնի համաձայնագիրը, որը լրացվեց օգոստոսի 6-ին՝ Գերմանիան Թուրքիային խոստացավ Կովկասը:

Նույն օրվա օգոստոսի 2-ի երեկոյան երիտթուրքերի կենտկոմը քննարկեց Թեշքիլաթ-ի մախսուսայի հարցը եւ որոշեց ստեղծել այդ կազմակերպության նոր կառույցներ՝ «ներքին կարիքների», այսինքն հայերին բնաջնջելու համար:

Որոշ ժամանակ անց սկսվեց հայերի զինաթափումն ու նրանց ունեցվածքի կողոպուտը: Հայը մնաց առանց անգամ խոհանոցի դանակի եւ ունեցվածքի:

1914թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ոչնչացրին մոտ 200000 հայ: Սա արդեն ցեղասպանություն էր: Բանակ զորակոչվածների հետ միասին խոսքը 0.5 միլիոն հայի մասին էր:

Օգոստոսի 2-ին կնքվեց թուրք-գերմանական գաղտնի համաձայնագիրը, որը լրացվեց օգոստոսի 6-ին՝ Գերմանիան Թուրքիային խոստացավ Կովկասը:

Նույն օրվա՝ օգոստոսի 2-ի երեկոյան երիտթուրքերի կենտկոմը քննարկեց Թեշքիլաթ-ի մախսուսայի հարցը եւ որոշեց ստեղծել այդ կազմակերպության նոր կառույցներ՝ «ներքին կարիքների», այսինքն հայերին բնաջնջելու համար:

Որոշ ժամանակ անց սկսվեց հայերի զինաթափումն ու նրանց ունեցվածքի կողոպուտը: Հայը մնաց առանց անգամ խոհանոցի դանակի եւ ունեցվածքի:

1914թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ոչնչացվեց մոտ 200000 հայ:

Սա արդեն ցեղասպանություն էր: Բանակ զորակոչվածների հետ միասին խոսքը 0.5 միլիոն հայի մասին էր:

Բ. Դուռն ու երիտթուրքերի կենտրոնը տեղական իշխանություններին հանձնարարեցին ամենատարբեր միջոցներով հետապնդել հայերին, նրանց դուրս քշել պետական ծառայությունից, մշտական հսկողության տակ պահել հայկական քաղաքական կազմակերպություններին, սահմանել լրտեսություն հայ գործիչների վրա, գրգռել մահմեդական խուժանի մոլեռանդությունը հայերի դեմ, էլ ավելի սրել հայ-քրդական հարաբերությունները:

Այդ ամիսներին Տարոնում հայերի կացության մասին մանրամասն տեղեկություններ կան Մշո առաջնորդական փոխանորդ Ե. Պարսամյանի հուշագրություններում: «Մեկ կողմէ երիտասարդները,- գրում է նա,- մահու սպառնալիքին տակ գունդագունդ կ'երթային զինուորագրուելու, միւս կողմէն նախապէս կազմուած ցուցակի մը համաձայն պարտադրուեցավ իւրաքանչիւր տուն՝ կառավարութեանը յանձնել որոշ թուով ծիւր, հոգ չէ, թէ տան մէջ ծի չունենայ,- պէտք է գնէ եւ յանձնէ... Հայերուն թալանելու վայրկեանը հնչած էր:

... Կառավարութեան կողմէ կարգուած մասնաւոր պաշտօնեաներու միջոցաւ խանութներէն կը սկսին գրաւումները: Կը տանին ինչ որ կը գտնեն եւ ինչ որ կը փափաքին... քանի մը օրուան մէջ քաղաքին (Մուշ) շուկայի խանութները մերկացան իրենց զարդերէն ու հրապոյրէն... Գյուղերում դրությունն ավելի ծանր էր: «Տաւարներն ու ոչխարները արդէն կառավարութեանն էին...

Օրե օր զօրահանութիւնը կը սաստկանայ, պոլսական հրամանները մեկը միւսէն աւելի սասանեցնող կը հասնին ու կը ծանուցուին ժողովուրդին... օրը մի քանի անգամ թմբուկը փողոցները կ'այցելէ զարհուրանքի մէջ պահելու համար սարսափահար ժողովուրդը...

Ու ահա ամբողջ Տարոնը զօրանոց դարձավ: Տարապարհակ աշխատանքը զօրահաւաքէն աւելի աղէտալի երեւոյթ մըն էր... Հայ կիներ, աղջիկներ եւ 10 տարեկան տղաներէն սկսած... յատկացուեցան շալակով փոխադրութեան: Բանակին պէտքերը պէտք է տարուէին մինչեւ Քոփրիվ Քեոյ եւ մինչեւ Հասան Կալե. 10 օրուան ճանապարհ, կոնակով, անբաւական սնունդով, ծեծի ու չարչարանքի տակ: Պէտք էր քալել ու արագ քալել, վազել նոյնիսկ ժանտարմաներու ձիերուն հետ մէկտեղ, այլապէս մտրակն ու փայտը կը գործէին անողորմաբար... Ու խարազանը կը շաչէ, ու տղան կ'իյնայ անկանգնելի, կիներ կը վիժէ ու կը մեռնի, ծերը կը փռուի գետինը, իսկ ինկնողի բեռը իյնալիքները կը վերցնեն ու կ'անցնին, իբր թե ոչինչ պատահած ըլլար...»:

Հայ շալակավորներից մեկը պատմում է, որ Հասան Կալեի «ճանապարհին փռուած էին դիակներ, բոլորն ալ հայերու դիակներ էին... Թուրքերն ըսին, որ վիրաւոր զինուորներ են, որ գիշերը դուրս մնալով` մեռած էին»:

«Իւրաքանչիւր երթ ու դարձին 30 առ հարիւրը կը մեռնէին ծեծի տակ ճանապարհին, դիակները ձգուած ճամբուն եզերքը...», իսկ կենդանի մնացածների մեծ մասը վերադառնալուց հետո էր մահանում հիվանդություններից եւ հյուծվածության հետեւանքով:

Բեռ տեղափոխող անասունների միայն 30%-ն էր վերադարձվում: Հայ բնակչությունը լրիվ թալանվեց, սովը համատարած էր:

«Կառավարութիւնը բացե ի բաց ջարդ մը կ'ուզէր ստեղծել եւ պատճառներ կը փնտրէր, բայց կը զգուշանային... Սարսափն ու զարհուրանքը նիւթականացուած էր ամէն տան մեջ»:

Տարօրինակ երեւոյթ եւս: Թուրքական իշխանությունները թե զօրահավաքը, թե բեռների տեղափոխությունը եւ բանակի համար բռնագրավումները մեծ մասամբ իրականացնում էին դաշնակցության կոմիտեի միջոցով: Անգամ Վանում Ա. Մանուկյանը նվազախումբը հետեւը զգած շրջում էր քաղաքի թաղամասերն ու հայերին կոչ անում զինվորագրվել: Տարոնում շալակավորների միջոցով պատերազմական բեռների տեղափոխումը կազմակերպում էր տեղի դաշնակցության ղեկավար Կոտոյան Հաջիի գլխավորությամբ գործող խումբը, իսկ բռնագրավումների հանձնաժողովի նախագահը ՀՅԴ բյուրոյի անդամ Փ. Փափագյանն էր:

Հայ քաղաքական կուսակցությունների, պատրիարքարանի վարած քաղաքականությունը ճշմարտացի գնահատելու համար հարկ է նկատի ունենալ հետեւյալ հիմնարար նշանակության հանգամանքները.

- Արեւմտահայության բնաջնջումը օսմանյան պետական քաղաքականություն էր, այն զանազան դրսեւորումներով իրականացվել էր շուրջ 30-35 տարի, եւ բացարձակ ակնհայտ էր, որ երիտթուրքերն օգտագործելու էին պատերազմական իրավիճակը՝ բնաջնջման քաղաքականությունը իր տրամաբանական վախճանին հասցնելու:

- Մեծ տերությունների համար հայերի ողբերգական վիճակը դարձել էր մանր դրամ իրենց ոչ միայն ռազմավարական, այլ նաեւ մարտավարական առօրյա խնդիրների լուծման գործում:

- Ոչնչացման դատապարտված հայն անելանելի վիճակում էր՝ շրջափակված մահմեդական ազգաբնակչությամբ, գրեթե զրկված կազմակերպվելու եւ գոյության իրավունքի համար համազգային պայքարի բարձրանալու հնարավորությունից:

Այս իրողություններով էին պայմանավորված հայ քաղաքական գործիչների մեծ մասի վարքագծի էկլեկտիկությունը, մի ծայրահեղությունից մյուսն ընկնելու հակումը, հետեւողական գծի բացակայությունը, ինչը արեւմտահայությանը հնարավորություն չտվեց կազմակերպվելու, մարտական նշանակալի ուժեր ձեւավորելու, յաթաղանի դեմ համազգային ընդվզման ելնելու՝ չնայած պատմության թուրք կեղծարարները պնդում էին եւ շարունակում են պնդել, որ հպատակ ժողովուրդները, մասնավորապես հայերը, «մահացու վտանգ էին» կայսրության համար, եւ Բ. Դուռը պարտադրված էր նրանց անպայման վերացնել:

Թուրքիայում հակահայ տրամադրությունների նոր ալիք առաջացրեց պատերազմը սկսելու կապակցությամբ Նիկոլայ 2-րդի նամակը Թիֆլիսի հայ վերնախավին. «Հինգ դար տեւած գերության եւ բռնապետական լծից հետո, որի ընթացքում ձեզնից ինչքան հոգիներ ընկճվեցին եւ որքանն էլ դեռ ենթակա են ամենազգվելի նախատինքների, վերջապես հասել է ազատության ժամը: ...Հայեր, միացե՛ք ձեր արյունակից եղբայրներին: Ցարական մականի տակ վերջապես կվայելեք ազատության եւ արդարության բարիքները»:

Երիտթուրքական «Թանին» թերթը այդ նամակի կապակցությամբ 1914թ. հոկտեմբերի 9-ին գրեց. «Զգիտենք, թե ցարի ներկայացուցչի կողմից այս հայտարարությունը կարդալու ընթացքում հայ մեծամեծները իրենց ականջները փակեցի՞ն, թե ոչ... Սակայն մենք վստահ ենք՝ հայերը, որ հինգ դարից ավելի բնակվում են Օսմանյան կայսրությունում եւ պահել են իրենց ազգությունը, լեզուն եւ կրոնը, երկրում գրավել են կարեւորագույն պաշտոններ, մեծապես կզարմանան ազատության եւ անկախության այս սիրուց, որը հանկարծ համակել է ռուսներին: Նույնքան էլ վստահ ենք. այս հայտարարությունը, որ հրապարակվեց հատկապես կովկասյան սահմանի այս կողմում լսվելու համար, ոչ մի ազդեցություն չի ունենա մեր հայրենակիցների վրա, որոնց օսմանցիությանը հարելն ու հավատարմությունը մնացել են անխախտ՝ հակառակ տարիներ ի վեր այս ուղղությամբ կատարված ամեն տեսակի գրգռումների եւ ջանքերի»:

Գավառների հայ բնակչությունը զգում էր գալիք արհավիրքի արյան հոտը եւ հայ կուսակցություններին խնդրում աղետը կասեցնելու քայլերի դիմել: Սակայն,

ինչպես գրեց դաշնակցության պաշտոնաթերթը 1915թ. փետրվարի 2-ին. «Պոլսոյ մէջ Ղաշնակցութեան հանդէպ կառավարութեան ունեցած անվստահութիւնը այնքան մեծ է, որ անոր հետ կացութեան մասին խօսիլը գրեթէ անկարելի է»:

Երիտթուրքերն իրենց մտադրության մասին սկսեցին խոսել երկինաստ, բայց բարձրաձայն: 1914թ. դեկտեմբերին «Թասվիրի էֆքիարը» գրեց. «Օսմանեան կառավարութիւնը պարզօրէն օգտուելով ռուսական յարձակողականին ստեղծած առիթէն՝ իր բոլոր ճիգերն ի գործ պիտի դնէ իր թշնամիները ճգմելու եւ ծունգի բերելու համար եւ այս պայքարին մէջ անպայման պիտի ունենայ ազգին եւ մահմետական աշխարհին ամէնէն անկեղծ եւ լաւագոյն օգնութիւնը: Եվ ի վերջոյ, Ալլահի օգնութիւնով, պիտի յաղթական դուրս գայ»:

Ռուսաստանը, նախապատրաստվելով պատերազմի Թուրքիայի դեմ, չէր բավարարվում հայերի միայն բարոյական աջակցությամբ, այլ ձգտում ու պարտադրում էր, որպեսզի նրանք թուրքական բանակի թիկունքում քայքայիչ գործողություններ ու պարտիզանական կռիվներ ծավալեին: ՀՀԴ անմիջապես արծազանքեց. սկսեց զինել արեւմտահայությանը, արտասահմանից զենքեր ներկրել, Երզնկայում ռումբեր պատրաստել, վերահավաքել իր իսկ կողմից ցրված հայդուկային խմբերը: Այդ ամենը կատարվում էր գաղտնիության պահանջների կոպիտ խախտումներով, եւ պատահական չէ, որ իշխանություններն անմիջապես խուզարկություններ սկսեցին ու բռնագրավեցին կուտակված ռազմամթերքը:

Հայ կամավորական եւ դիվերսիոն շարժումը միայն ռուսական ակունքներ չունէր: «Հայրենիք» օրաթերթի 1912թ. օգոստոսի 5-ի եւ 6-ի համարներում Մալխասը պատմում է հետեւյալը: Պատերազմը դեռ նոր էր սկսվել, երբ Ֆրանսիայի վարչապետ Դումերկը հարցնում է Վ. Բելարին, թե հայերը պատերազմում ում կողմում են լինելու, եւ հանձնարարում հորդորել դաշնակցության բյուրոյին, որպեսզի հայերը կռվեն Անտանտի կողմում: Վարչապետը հայերին խոստանում է «նվազագոյնը դքսություն» Արեւմտյան Հայաստանում:

Արեւմտյան բյուրոն սկզբունքորէն դեմ չէր կամավորական շարժմանը, եթէ այն ծավալվէր Կովկասում: Արմեն Գարոն Արեւմտյան բյուրոյի անունից Մալխասին հանձնարարում է Արեւելյան բյուրոյին տեղյակ պահել, որ խոսքը 30000 հոգանոց կամավորական բանակի մասին է, որը պատերազմը սկսվելուն պէս մտնելու է Երկիր՝ որպէս ռուսական բանակի առաջապահ:

Արեւելյան բյուրոն խանդավառությամբ ընդունեց այդ առաջարկությունը՝ չնայած ոչ քիչ թվով դաշնակցական գործիչներ դեմ էին կամավորական շարժմանը: Վ. Փափազյանի վկայությամբ՝ Արամ Մանուկյանը «թրքահայ ժողովրդի համար կորստաբեր կը համարէր կամավորական շարժումներու կազմակերպութիւնը եւ մանաւանդ գործուն մասնակցութիւնը՝ ենթարկուելով ռուսական բանակին»: Վ. Պոլսի հայ գործիչներին ահաբեկեցին այն ցուցադրական աղմկոտ միջոցառումները, որոնք անկացվում էին՝ կապված կամավորական գնդերի կազմակերպման հետ, նրանք լուր ուղարկեցին Կովկաս հրաժարվելու «ցուցական գործունեութենէ, եւ գաղտնի գործելու: Բայց կովկասահայութեան ոգեւորութեան ալիքը իր գագաթնակէտին հասած էր...»:

ՀՀ 8-րդ համագումարը նույնպես զգոնության կոչ արեց, բայց, ինչպես նշում է Ա. Խատիսյանը, Կովկաս վերադառնալով՝ համագումարի պատվիրակները «չկարողացան դիմադրել ընդհանուր տրամադրություններուն եւ անցան կամաւորական բանակներու կազմակերպման գործին գլուխը»:

Ի դեպ, Խատիսյանը նաեւ նշում է, որ պատրաստվում էին ահաբեկիչներ իթիհադի պարագլուխներին հաշվեհարդարի ենթարկելու համար:

Այդ խմբերը որեւէ գործ չարեցին, բայց դրանց մասին լուրերը գազազեցրին երիտթուրք պարագլուխներին, նպաստեցին, որպեսզի «ընկեր Թալեաթը» եւ մյուսները հայերի հանդեպ համակվեին նաեւ անձնական ատելությամբ:

Այսինքն՝ ահաբեկչության հնչակ եւ դաշնակ կողմնակիցները հաշվի չառան մի ակնհայտ իրողություն, որ հայերի բնաջնջումը ոչ թե այս կամ այն թուրքի ծրագիր էր, այլ թուրքերի ազգային-պետական քաղաքականություն, եւ ահաբեկչությունը ոչ թե մեղմելու, այլ խստացնելու էր այդ քաղաքականությունը:

Կամավորական գնդերի կազմավորումը միայն արտաքուստ էր կամավոր: Դրանց իսկական նախաձեռնողն ու իրականացնողը ցարական իշխանություններն էին: 1915թ. ռուսական բանակում ծառայում էր 120000 հայ, որից 80000-ը կռվում էր եվրոպական ռազմաճակատում: Հայերը ծառայում էին նաեւ Անտանտի մյուս երկրների բանակներում: Ընդհանուր առմամբ Առաջին աշխարհամարտին զորակոչված էր 600000 հայ: Ամենատարբեր ռազմաճակատներում իրար դեմ կռվում էին մեծ թվով հայեր, ովքեր միմյանց ոչնչացնում էին հանուն սեփական ժողովրդին խորթ, ոչ քիչ դեպքերում՝ վնասակար շահերի:

Եթե դաշնակցությունը, մյուս կուսակցություններն ու քաղաքական ուժերը միմյանց դեմ գծուծ պայքարի փոխարեն համախմբվեին եւ «լեռ բարձրացնեին» այդ 600000-ից 70-100000 մարդ, հայերի զանգվածային բնաջնջումը կվերածվեր ինքնապաշտպանական համազգային կռիվների, եւ արեւմտահայության հիմնական մասը կփրկվեր: Ինքնապաշտպանական կռիվների փոխարեն կամավորական շարժման ծավալումը բախտորոշ սխալ էր՝ թելադրված ոչ թե հայ ժողովրդի, այլ ռուսական կայսրության շահերից եւ Թիֆլիսի դաշնակցական ջոջերի ցուցամոլությունից:

Փոխարքայի ծրագրով ստեղծվելու էր չորս գունդ, յուրաքանչյուրը՝ 400 հոգուց: Այդ գնդերի գլխավոր խնդիրն էր լինելու հետախուզությունը, ռուսական բանակին առաջնորդելը, այսինքն, առաջապահ զորքի դերում լինելը:

Իշխանությունները թույլատրեցին բոլոր փախստական հայերին վերադառնալ Կովկաս, խոստացան աքսորից ազատել հին հայրուկներին ու խմբապետներին, ընդհանուր ներում շնորհել:

Իրողությունն այն էր, որ ցարիզմը որոշել էր օգտագործել հայերի մարդկային եւ նյութական հնարավորությունները Թուրքիայի դեմ պատերազմում:

Ա. Թերզիպաշյանը գրում է, թե ո՛չ «Արեւելյան պիւրոն, ո՛չ ալ Էջմիածնի Կաթողիկոսը, եթէ ուզէին ալ, պիտի չկրնային այլեւս կասեցնել տարերային շարժումը, գոր ցարական Ռուսիան՝ շնորհիվ հենց Կաթողիկոսին եւ Պիւրոյին, ավելի ճիշդը, Թիֆլիսի պուրժուազիային, որուն ձեռքին մէջ պարզ խամաճիկներ էին թե՛ մէկը եւ թե՛ միւսը, յառաջ բերած էր արդէն: Շարժումին մէջ Գեւորգ Կաթողիկոսն իր անմահութիւնը կը փնտռէր, Դաշնակցութիւնն՝ իրենը»:

Դ. Անունին կամավորական շարժում ծավալելու ցարական իշխանությունների ձգտումը բացատրում է հետեւյալ կերպ. «Պէտք էր օգտագործել թուրքահայերի կենդանի ոյժը եւ հրահանգուում էր կամաւորներ ընդունել առաւելապէս թուրքահայերից: Դա արւում էր երկու նպատակով. առաջինը՝ մի չնախատեսված ոյժ էր օգտագործուում, երկրորդ՝ դա մի այնպիսի գայթակղիչ ոյժ էր, որ սահմանից այն կողմը բիրապատիկ շահ էր ընծեռնում...»:

Գլխավորն այս երկրորդն էր արեւմտահայության լայն զանգվածներին մղել ծառայելու Ռուսաստանի նվաճողական քաղաքականությանը:

Երբ պարզ դարձավ, որ Կովկասում հայ կամավորական գնդեր են կազմակերպվելու, թուրքերն արեւմտահայերին առաջարկեցին ազդել արեւելահայերի վրա՝ դադարեցնելու այդ գնդերի ստեղծումը: Չնայած հայերը պատասխանեցին, թե իրենք պատասխանատվություն չեն կրում արեւելահայերի գործունեության համար, բայց նաեւ զգուշացան ու անհանգստացան, մանավանդ որ կամավորական շարժման մասին Թուրքիա էին հասնում չափազանցեցված լուրեր՝ թե իբր միայն Անդրանիկի ջոկատում կար 12 հզ. մարդ: Երիտթուրքերին հատկապէս կատաղեցրել էր այն, որ կամավորների շարքերում էին մեծ թվով արեւմտահայեր, Օսմանյան կայսրության քաղաքացիներ, անգամ օսմանյան խորհրդարանի անդամ Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարո): Նրանք այդ որակավորեցին, թե հայ ժողովուրդը պատերազմ է հայտարարել թուրքերին: Իսկ իրականում կամավորական գնդերը Վորոնցով-Դաշկովի «հայասեր» ջանքերով էին ձեւավորվում:

Ազգային բյուրոն տարերքի մեջ էր: Դաշնակցությունը ստեղծեց կամավորական գնդերի կարգադրիչ մարմին, որի մեջ մտան Ռոստոմը, Ջավրիելը, Գյուլխանդանյանը, Արմեն Գարոն, Վրացյանը, Արղությանը եւ Աղբալյանը:

Կամավորական ուժերի գլուխ կանգնեցին Անդրանիկը, Վարդանը, Քեռին, Համազասպը, Դրոն, Դաշնակցական Խեչոն, Արղությանը, Արմեն Գարոն:

Այսինքն այդ շարժումը, ծնվելով ռուսական արքունական աշխատասենյակներում, շուտով վերածվեց հայության համազգային վարքագծի դրսեւորման միջոցի:

Սակայն չպետք է անտեսել նաեւ այն, որ եթե ռուսական հրամանատարությունը կամավորական գնդերը համարում էր լրացուցիչ ռազմական ուժ, ապա հայ գործիչները՝ կոտորածի վտանգի մեջ գտնվող հայերին օգնության հասնելու հնարավորություն: Այս էլ դարձավ գլխավոր պատճառը, որ կամավորների ու ռուս

հրամանատարության միջեւ առաջացան հակասություններ: Եթե սկզբում ռուսները հայերին մեծամեծ խոստումներ էին տալիս՝ «ինքնավարութիւն 8 վիլայեթների եւ նրանց անբաժան մաս Կիլիկիայի՝ Ռուսաստանի հզոր հովանավորության տակ», ապա որոշ ժամանակ անց այդ կարգախոսն օգտագործելն իսկ պարսավանքի պատճառ էր դառնում: Թույլ չտրվեց Անդրանիկին ու Դրոյին, որոնք հասել էին Բիթլիս, օգնության գնալ Մշո դաշտի եւ Սասունի ժողովրդին, նրանց փրկել կոտորածից:

Քաղաքական անկազմակերպվածության, ՀՀԴ անզոր վայրիվերումների հետեւանքով հայերը ինքնապաշտպանության էին կանգնում միայն վերջին պահին, երբ յաթաղանն արդեն դրված էր նրանց կոկորդին:

Կովկասահայ մամուլը հարձակման անցավ թուրքերի դեմ՝ պահանջելով Հայաստանը անջատել Թուրքիայից: Արտասահմանյան հայությունը գտնում էր, որ ազատագրության պատմական պահը հասել էր եւ զգուշություն չէր դրսևորում՝ մոռացած օսմանահայերի անվտանգության խնդիրը: Թուրքերի համար ոչ օսմանահպատակ հայերի վարքագիծը պատրվակ էր օսմանահպատակ հայերին բնաջնջելու համար:

Այսպես հայերը լրիվ աչքաթող արեցին ինքնապաշտպանության գործը:

Հայկական ազգային համագումարում (Թիֆլիս, 1915թ. փետրվար) դաշնակցության ներկայացուցիչը հայտարարեց. «Ինչպես հայտնի է, ռուսական կառավարությունը պատերազմի սկզբին տրամադրել է 242 900 ռուբլի նախնական ծախսերի համար, որպեսզի զինենք ու նախապատրաստենք թուրքահայերին, պատերազմի ժամանակ Թուրքիայում ապստամբություն կազմակերպենք: Մեր կամավորական ջոկատները պետք է ճեղքեին անցնեին թուրքական բանակի շղթան եւ միավորվելով ապստամբների հետ՝ թիկունքում ու ռազմաձակատում ստեղծեին անիշխանություն... եւ դրանով ապահովեին ռուսական զորքերի առաջխաղացումն ու Թուրքահայաստանի գրավումը:

Մենք մինչեւ պատերազմ հայտարարելը հավաստիացրել էինք ռուսական կառավարությանը, թե ղեկավարվում էինք թուրքահայերի ցանկությամբ, եւ կառավարությունը դրանում համոզված էր, իսկ իրականությունն այլ է: Թուրքահայերը դեմ են մեր գործունեությանը, գործողությունների եղանակներին ու ձեւերին՝ դրանք համարելով վտանգավոր եւ կործանարար իրենց շահերի համար: Նրանք ազնվաբար աշխատում են որպես Թուրքիայի հպատակներ: Ռուսական կառավարության առաջարկները կատարելու մեր բոլոր ջանքերը ապարդյուն անցան:

Թուրքահայերը միշտ դեմ են եղել մեր գործունեությանը, եւ ռուսական կառավարությունը այդ գիտի, հավանաբար նաեւ գիտի, որ մենք ծրագրում ենք ինքնավար Հայաստան Թուրքիայի սուվերենության ներքո: Բնականաբար, այս ամենը հանգեցնում է նրան, ինչն ինձ թաքուն ասաց գեներալ Օգանովսկին, որ «այժմ հայերը ռուսական կառավարության համար հանդիսանում են անբարեհույս տարրեր, քանի որ նրանք խաբել են, կեղծել են իրերի իսկական վիճակը՝ Թուրքահայաստանում... Մենք հետապնդում ենք հետեւյալ նպատակը՝

պատերազմից հետո հնարավորություն ունենալ արագ եւ անմիջապես զինաթափել հայերին, քանի որ վտանգ կա, թե խաղաղության համաժողովում նրանք կարող են ոտի կանգնել, եւ համաժողովը հարկադրված կլինի նրանց հետ հաշվի նստել, ինչը կհակասի Ռուսաստանի արմատական շահերին: Ռուսական կառավարությունը... հետամուտ է իր պետական շահերին, այլ ոչ թե Հայաստանի ինքնավարության՝ հայերի նվիրական ցանկություններին: Ռուսական կառավարության համար ցանկալի է, որ հայերը փոքր տոկոս կազմեն թուրքահայաստանում»:

Կամավորական շարժման առիթով երիտթուրք գործիչներն անցան հայերի բացահայտ ահաբեկման: Նրանցից է. Նաջին Վանում հայտարարեց. «... եթե հայերը Ռուսիոյ կողմը բռնեն, մենք զանոնք պիտի ջարդենք: Պիտի ջարդենք անխնայօրէն, առանց նկատողութիւններու, առանց աջ ու ձախ նայելու...»:

Հայերի ջարդերը սկսվել էին մինչեւ կամավորական զնդերի՝ պատերազմի մեջ մտնելը: Եվ վերջապես ինչ էին այդ զնդերը՝ համեմատած 600 հազ. հայերի հետ, որոնց կեսը կռվում էր ռուսական, իսկ մյուս կեսը՝ թուրքական եւ այլ երկրների (50 հազ) բանակների կազմում:

Բայց որ կամավորական շարժման ծավալումը նպաստեց ջարդերին անմիջապես համընդհանուր բնույթ հաղորդելուն, անվիճելի է:

Պ. Մակինցյանը գրում է. «Հենց որ սկսվեց պատերազմը թուրքիայի հետ. հայերը, ինչպես նախկիններում, հանդես եկան դարավոր ճնշողների դեմ: Ռուսաստանում ծավալված կամավորական շարժումը արձագանք գտավ ամենուրեք, որտեղ հայ էր բնակվում: Մի շարք դրուժինաներում ընդունվեցին հեռավոր Ամերիկայից եկած մարդիկ: Եվ ահա ջոկատները, որոնց կազմում թուրքահպատակ հայերի զանգվածներ էին, Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ բացահայտ ձեռով հանդես էին գալիս թուրքիայի դեմ՝ հանուն հայրենիքի ազատագրման»:

Կամավորական շարժումը Ազգային բյուրոյի միջոցով ղեկավարում էր դաշնակցությունը, որի գործակալները լինում էին աշխարհի տարբեր մասերում, կազմակերպում կամավորների հավաքագրումը: 1914թ. սեպտեմբերին ՀՀԴ Կովկասյան շրջանային ժողովը քննության առավ կամավորական շարժման հարցը: Նշվեց, որ փոխարքայությունն իր վրա է վերցնում կամավորների հանդերձավորումն ու պարենավորումը, իսկ կազմակերպչական աշխատանքը, մասնավորապես նրանց ուսուցումը, կազմակերպելու է դաշնակցությունը:

Դաշնակցության Արեւելյան բյուրոն գտնում էր. «Կամավորների կազմակերպումով նպատակ ունենք մեր մասնակցությունը բերելու այս պատերազմին, որով ընդհանուր հաշվեհարդարի միջոցին ավելի մեծ իրավունքով պահանջել, որ գումարվելիք վեհաժողովը լուծի մեր հարցն էլ», հույսով, որ Անտանտի հաղթանակի շնորհիվ Արեւմտյան Հայաստանը կստանա ինքնավարություն:

Դաշնակցությունը կլանվեց կամավորական շարժման կողմից: Տասնամյակներ շարունակ իր անելիքները, գլխավոր խնդիրը որոշել չկարողացած կուսակցության համար կամավորական շարժումը քաղաքական անձկությունից դուրս գալու, հասարակությանը լրջմիտ, գործողության հստակ պլան ունեցող կուսակցություն ներկայանալու հիանալի հնարավորություն էր:

1914թ. աշնանը Կովկասի ժանդարմական վարչությունը հայտնեց. «Դաշնակցություն կուսակցությունը վերջին ժամանակները ոչ մի հեղափոխական գործունեություն հանդես չի բերում եւ միայն զբաղված է մարտական ջոկատների կազմակերպմամբ, ուսուցմամբ եւ Թուրքիա ուղարկելով՝ թուրքական կառավարության դեմ պայքարելու»:

Երիտթուրքերը չէին հապաղում հայերի ռուսամետ քայլերը օգտագործել եւ արագացրին բնաջնջման աշխատանքը, այլ ոչ թե «ընդհանուր հայութիւնը բնաջնջելու սկզբնական ծրագիր մը մշակեցին», ինչպես գրում է Լ. Վարդանը, քանի որ այդ «սկզբնական ծրագիրը» պատրաստ էր շատ վաղուց:

Օսմանյան 3-րդ բանակը տեղադրվեց Արեւմտյան Հայաստանի սահմանի երկայնքով. դրանով կտրվեց հաղորդակցությունը կայսրության զանազան մասերի միջեւ:

Պահպանվել է Հալեպի փոխկուսակալ Ղալիպի հեռագիրը. «Չորրորդ բանակի հրամանատարության 1915թ. օգոստոսի 12-ի հեռագրի ու կարգադրության համաձայն՝ ոչ մի հայի, անկախ նրա տարիքից ու սեռից, չպետք է թույլատրվի երկրից դուրս գալ»:

Միաժամանակ կազմվեցին քաղաքների ու գյուղերի ազդեցիկ հայերի, հասարակական գործիչների ու մտավորականների ցուցակները:

1914թ. օգոստոսի 5-ին Էնվերը հրամայեց պանթուրքիզմի նպատակներին հասնելու համար ստեղծել հատուկ զորամասեր, որոնք կոչվեցին «իսլամական հեղափոխական բանակ»:

Փակվեցին հայկական պարբերականները: Գրաքննության ծայրահեղությունները հասցվեցին բացարձակ անմտությունների: Նամակները փոստ պետք է հանձնվեին ոչ միայն բաց, այլեւ մի թերթի վրա՝ առաջին էջին՝ տեքստը, իսկ երկրորդին՝ հասցեն:

Բանակ զորակոչվեցին 14-60 տարեկան մինչ այդ չզորակոչված թուրքերը: Նրանց զինեցին ու նախապատրաստեցին ոչ թե ռազմաճակատի, այլ ջարդերին մասնակցելու համար:

Ստեղծվեց գաղտնապահության կատարյալ համակարգ. Կ. Պոլիսը պահանջում էր տեղերում ստացված բոլոր հեռագրերը հետ ուղարկել:

Սսի Սահակ կաթողիկոսը գրեց. «Մեզ մեծ դժբախտություն է սպասվում»:

Արհավիրքի հանդեպ մնալով անօգնական՝ հայերը շփոթվեցին: Օգոստոսի 29-ին Կ. Պոլսի ազգային հոգեւոր խորհուրդը որոշեց իշխանությունների հանդեպ զգույշ եւ հաշտ վերաբերմունք որդեգրել:

Հուսալքված ու բարոյալքված էին նաեւ կուսակցությունները: Նրանք նույնպես հաշտվողական դիրք գրավեցին եւ ժողովրդին կոչ արեցին զենքերը հանձնել:

Արեւմտահայության շփոթմունքը նկատի ունենալով՝ Գ. Ջոհրապը 1914թ. օգոստոսի 18-ին գրեց. «... ո՞ր է մեր ազգը, ամենուրեք փնտրում եւ չեմ կարողանում գտնել. հյուլեացած, ցրված, անկապակից ազգ. ամեն մարմին ներքին ձգողության ուժով է կազմվում, մեր ազգը կարծես ներքին վանողության գորությամբ գոյություն ունի: Ազգ, որ ոչ գլուխ ունի, ոչ ձեռք եւ ոտք, ոչ ուղեղ ունի, ոչ զգայնություն, միաբջիջ կակղամորթ արարածների նման ինքնաշարժ կծկումներ ունի միայն ամեն ինչի հետ շըփվելիս»:

Ասում են, թե հետին թվով հեշտ է խելոք լինել: Դա այդպես է: Բայց այդ չի նշանակում, թե ոչ ոք իրավունք չունի, այո, հետին թվով, վերլուծելու անցյալը: Վերջին հաշվով պատմագրություն կոչվող գիտության խնդիրը հենց այդ է:

Անցյալի ինքնաքննադատական վերլուծությունն առանձնակի կարեւորություն ունի մեզ՝ հայերիս համար: Հարյուրամյակներ շարունակ զրկված լինելով ինքնուրույն քաղաքական կյանքից՝ ընտելացել ենք մի իրողության, երբ մեր պատմությունը ընկալում ենք ոչ թե որպես սեփական գործունեության արդյունք, այլ օտարների կողմից ձեւավորված եւ հայությանը պարտադրված իրողություն: Դրանում, իհարկե, ճշմարտություն կա, բայց միանգամայն ակնհայտ է, որ ժողովուրդը անկախ է թե օտարի լծի տակ, իր պատմությունն ինքն է կերտում, տիրապետողը թելադրում է որոշակի սկզբունքներ, որոնք ոչինչ են, եթե բացակայում է ենթակա ժողովրդի ինքնագործունեությունը: Հետեւաբար սխալ ու վնասակար է, երբ մենք հաճախ տարերայնորեն, հաճախ էլ գիտակցաբար մեր ժողովրդին տեսնում ենք միայն որպես պատմության օբյեկտ, նրա ձեռքբերումները, իսկ ավելի հաճախ ձախողումները վերագրում ենք օտարներին, դրսի ուժերին: Նման մոտեցումը, անկախ մեր ցանկությունից, ձեւավորում է սեփական քաղաքական կյանքի հանդեպ անպատասխանատվության բավականին մեծ չափաբաժին:

Հետեւաբար շատ կարեւոր է, որպեսզի պատմական յուրաքանչյուր անհաջողության մեջ առաջին հերթին տեսնենք մեր սխալը, մեր թերացումը: Ինքնաքննադատության խստությունից երբեք վնասները մեծ չեն լինում: Մեծ են ու կործանարար լինում են իրենց «ժողովրդի բարեկամ» համարող, նրա հասցեին աջ ու ձախ շաղակրատանքներ հնչեցնող, նրա թերություններն իսկ փառաբանող կեղծ հայրենասերների շաղակրատանքների հետեւանքները:

Պատմությունն արդիականության ուսուցիչն է: Պատմությունն այդպիսին է ոչ թե իրեն կրկնօրինակելու պարտադրանքով, այլ օբյեկտիվ, անաչառ, բանիմաց վերլուծությամբ, կարողությամբ անցյալից լավը վերցնելու, իսկ վատը, վնասակարը մերժելու:

Դժբախտաբար Հայաստանի առաջին հանրապետության դասերը մեզ համար շատ ավելի էական նշանակություն ունեն ոչ թե հաջողությունների, այլ թերությունների, սխալների, պետականության, համապետական գիտակցության խեղճության առումով:

Այդ իրողությունն ունե՞ր օբյեկտիվ պատճառներ: Անպայման: Եվ դրանցից առաջինը ինքնուրույն պետականություն չունենալու հետեւանքով ոչ միայն կառավարման փորձի բացակայությունն էր, այլև համազգային շահերին գերակայություն տալու հոգեբանության խեղվածությունը:

Փորձենք մի քանի հարցեր առաջադրել, ինչպես ասում են, ճակատային եղանակով:

Ինչո՞ւ Հայ ազգային խորհուրդը մտավ Սեյմի եւ, ընդհանրապես, անկախ Անդրկովկասի կազմի մեջ: Ովքե՞ր էին դրա հետեւում կանգնած: Չէ՞ որ հայ-ադրբեջանական հարաբերությունները երբեք բարեկամական չեն եղել, երկու ժողովուրդները միշտ տարածքային լուրջ խնդիրներ են ունեցել:

Արտաքուստ բարեկամական, բայց իրականում այդպիսին չէին նաեւ հայ-վրացական հարաբերությունները: Կրոնակից լինելն անգոր էր հաղթահարելու այն հակասությունները, որոնք երկու ժողովուրդների, ավելի ճիշտ՝ նրանց վերնախավերի միջեւ գոյություն են ունեցել վաղ ժամանակներից:

Հայաստանը մշտապես Կրաստանի համար հանդիսացել է պաշտպանական վահան: Օտար նվաճողների արշավանքների թափը պարավել է Հայաստանում, եւ Կրաստանը փրկվել է ավերմունքից ու թալանից:

Կովկասի կառավարման կենտրոնացումը, մասնավորապես փոխարքայության ստեղծումը եւ դրա նստատեղին Թբիլիսին դարձնելը, վրաց ազնվականությանն ու մտավորականությանը հնարավորություն տվեցին ավելի արագ ու ավելի խորը ինտեգրվել ռուսական կառավարական կառույցներում, քան հայերին ու ադրբեջանցիներին: Դրա հետեւանքով վրացին աստիճանաբար իրեն զգաց արտոնյալ ժողովուրդ: Կրաստանի քաղաքագետների համար միշտ էլ ձեռնտու է եղել որպես հարեւան ունենալ թույլ Հայաստան: Այդ ախտով վարակված էին նաեւ Կրաստանի առաջատար դեմքերը՝ սկսած Ա. Շերեթելուց մինչեւ Գեգեչկորին, Ստալինը եւ Բերիան: Վրաց մենչեիկները, որոնք այդ քաղաքականությունը կրող կուսակցությունն էին, իրենց ավելի լավ էին զգում մուսավաթականների հետ, եւ Սեյմում ընդհանուր ճակատ կազմեցին հայերի դեմ, ինչը աղետալի հետեւանքներ ունեցավ Հայկական հարցի եւ, ընդհանրապես, հայության համար:

Սեյմի քաղաքականության սուր սլաքը գրեթե մշտապես ուղղված է եղել Հայաստանի դեմ: Այդ թշնամությունը փոքր դեր չխաղաց Արեւմտյան Հայաստանի լայնածավալ տարածքները Թուրքիային տալու գործում: Սեյմի կառավարության արտաքին գործերի նախարար Չխենկելին, բանակի գլխավոր հրամանատար Օդիշելիձեն եւ այլք հակահայ գործարքների մեջ էին թուրքերի հետ:

Արամ Մանուկյանը Հայաստանի Հանրապետության հռչակումից վեց ամիս առաջ փաստորեն ձեւավորել էր անկախ Հայաստանի կառույցը, ինքն էլ համարվում էր նրա դիկտատորը: Բացի դա, Ազգային խորհրդին հաջողվել էր զորահավաքի միջոցով բանակը համալրել 30 հզ. հոգով, եւ այն դնել Նազարբեկովի հրամանատարության տակ: Հայկական բանակը՝ Հայկական կորպուսը, ընդգրկում էր առաջին դիվիզիան՝ հրամանատար Արեշյան, երկրորդ դիվիզիան՝ հրամանատար Սիլիկյան, արեւմտահայ դիվիզիան՝ հրամանատար Անդրանիկ, հեծելազոր՝ հրամանատար Ղորղանյան, մի քանի այլ զորամիավորումներ:

Այդ պայմաններում ավելի ճիշտ չէ՞ր լինի, եթե հայ քաղաքական ուժերը, Թիֆլիսի փողոցները չափելու փոխարեն, կենտրոնանային Երեւանում, Հայաստանն անկախ հայտարարեին, այլ ոչ թե մոլորված անտեղյակի նման սպասեին մինչեւ իրենց թիկունքում կանկախանային Կրաստանն ու Ադրբեջանը, նոր միայն քնից արթնանային ու տեր դառնային իրերի բերումով անկախություն պարտադրված Հայաստանին:

Բացարձակապես դիպուկ է ասված. կար ազգ, կար բնաջնջման իրական վտանգ, կար ինքնապաշտպանության բնագոյ, բայց չկար այն ղեկավար, կազմակերպող ուժը, որը փրկվելու կինետիկական վերածեր ինքնապաշտպանության ձեւավորված շարժման:

Նկատի ունենալով ստեղծված իրավիճակը՝ Ա. Մանուկյանը գրեց, որ հայ ժողովուրդը «քաղաքական բացառիկ պայմաններում հրաշքի արժանի գործողություններ է անում: Մի բան, որ աչքի է զարնում, դա կազմակերպող ու ղեկավարող ուժերի բացակայությունն է: Երկիրը իր ծոցից մարդիկ չի տալիս, իսկ հեղափոխական շկուլա չի ստեղծվում այդ բացը լրացնելու համար... ժողովուրդը մնում է երեսի վրա: Սրանից հետո ինչ պահանջել այս ժողովրդից...»

Մյուս կողմից էլ հեղափոխական դրոշի տակ առաջ է եկել հացկատակների ահագին կուսակցություն... այդ պատճառով է, որ անցյալում եւ մասամբ ներկայումս հեղափոխականի վարկը բավական ընկած է քաղաքի ազդեցիկ դասակարգի եւ մտավորական կոչված մասի մեջ»:

Սեպտեմբերի 29-ին դաշնակցության պաշտոնաթերթ «Ազատամարտը» հայերին հանոգում էր, թե ջարդերի որեւէ վտանգ չկա, եթե հայերը բարեխղճությամբ կատարեն օսմանյան հպատակի իրենց պարտականությունները: Իսկ հայերի վրա հարձակումներն անվանեցին «լրագրողների զրպարտություն»:

Դաշնակցության բյուրոն հոկտեմբերի 10-ին կոչ արեց. «Այժմ, ավելի քան երբեւէ, անհրաժեշտ է լարել բոլոր ուժերը ժողովրդին դժբախտությունից զերծ պահելու համար: Պետք է խուսափել միջադեպերից եւ քաղաքական թյուրիմացություններից»:

Պատրիարքի կեցվածքը չնայած պարզունակ, բայց հստակ էր: Եթե Ռուսաստանը Հայկական հարցը չի լուծելու, թող արեւմտահայության գործերին

չխառնվի: Նա նաեւ դեմ էր արեւելահայության միջամտությանը: Իսկ արեւելահայերը շարունակում էին իրենցը համարել արեւմտահայության ազատագրության հարցը եւ ձգտում էին այդ անել Ռուսաստանի միջոցով:

Պատրիարքը 1914թ. հոկտեմբերի 20-ին հրավիրեց հայ գրեթե բոլոր քաղաքական ուժերի ներկայացուցիչներին՝ Վ. Արք. Մանկունի, Հ. Պոյաճյան, Դիմաքսյան, Պ. Հալաճյան, Տ. Քելեկյան, Հ. Շահրիկյան, Դ. Տեր-Մովսիսյան, Մ. Մուրադյան եւ ուրիշներ, ստեղծված կացությունը քննարկելու համար: Խորհրդակցությունը համամիտ էր պատրիարքի կարծիքին եւ հանձնարարեց բարվոք հարաբերություններ որդեգրել երիտթուրք կառավարության հետ եւ «շրջաբերական հրահանգ մը դրկել անմիջապէս բոլոր գաւառները եւ հրաւիրել ժողովուրդին կատարելու իւր պարտականութիւնը»:

Վերը նշված ժողովի որոշման հիման վրա տեղերն ուղարկվեց շրջաբերական. «Շրջահայաց ըլլալ, ամէն կերպով օժանդակել եւ դիւրութիւններ տալ օսմանյան կառավարութեան, ամէն գոհողութիւն եւ անձնուիրութիւն յանձն առնել յօգուտ հայրենիքի գերագոյն շահերուն, լավ դրացիութիւն եւ յարաբերութիւններ մշակել այլազգիներու հետ, նիւթական օժանդակութիւններէ գատ յորդորել ժողովուրդը, որ որքան ալ անվարժ գինուորական կեանքին, չխնայէ մինչեւ իսկ կեանքը, եթէ հայրենիքը պէտք ունի անոր: Ազգային շէնքերու եւ ժողովուրդին տուններուն մէջ պատասպարել հիւանդ կամ վիրաւոր գինուորները»:

Նոյեմբերի 20-ին պատրիարքը նոր շրջաբերական ուղարկեց. «Մեր երկիրն այսօր քանի մը պետութեանց հետ պատերազմական վիճակի մէջ կը գտնուի: Հայ ազգը, որ դարերէ ի վեր բնատուր հաւատարմութիւն եւ անձնուիրութիւն ցոյց տուած է, ներկայ պատերազմի ընթացքին եւս պիտի փութայ իր հայրենասիրական անհրաժեշտ պարտականութիւնները կատարելու: Ասիկա ստոյգ ըլլալով հանդերձ, կարելոյութեամբ կը յանձնարարուի եւ կազդարարուի կրկին անգամ յորդոր կարդալ ժողովուրդին, որպէսզի ետ չկենայ ամէն կարգի գոհողութենէ՝ փառք ու պատիւին բարձրացմանը համար օսմանեան գահին, որուն յարած է տոկուն հաւատարմութեամբ եւ մեր նուիրական հայրենիքին պահպանութեան եւ պաշտպանութեան համար»:

Պատրիարքը մերթ գտնում էր, թե աշխարհամարտը փոթորիկ էր, որից հայերը հազիվ թե անվնաս դուրս գային, եւ շրջահայեցության էր կոչում, մերթ էլ հորդորում էր հայությանը «կատարել իր պարտքը», կանգ չառնել գոհողությունների առաջ: Նույն ձեւով հանդես եկան նաեւ շատ հայ գործիչներ, մտավորականներ, գրեթե բոլոր հայկական պարբերականները: «Հայ ժողովուրդը չպետք է որեւէ օտար կառավարության առուծախի կամ սպեկուլացիայի առարկա դառնա: Հայ զինվորը անձնագոհ պիտի կռվի կայսրության սահմանների անձեռնմխելիության համար»:

Տեղերում հավանություն տվեցին այս դիրքորոշմանը եւ համապատասխան հեռագրեր հղեցին պատրիարքին: Եկեղեցիներում ծեսեր կատարվեցին՝ նվիրված օսմանյան զենքի հաղթանակին: Կիլիկեցիները 10 հզ. գուլպա նվիրեցին բանակին:

Պատրիարքը նաեւ «բազմաթիվ թաղրիրներով» շարունակում էր Բ. դռան ուշադրությունը հրավիրել Էրզրումի, Վանի, Բիթլիսի նահանգներում տեղի ունեցած ջարդերի, հողերի հափշտակությունների ավարառությունների վրա:

Տարվա վերջերին, երբ դեպքերը սկսեցին ստանալ զանգվածային բնույթ եւ տեղի ունեցան Բողաս Քեսենի, Բելուի, Բաշկալեի, Հարազանի, Սաթմանիսի, Արշամի, Հասան Թամրանի, Տաշ Օղլուի, Կարա Ձորիկի եւ այլ գյուղերի հայերի կոտորածներն ու ավարառությունները, պատրիարքը ջանք չխնայեց, որպեսզի գալիք մեծ պատուհասները կարողանա կանխել եւ կանխել միայն օրինական միջոցներով:

Բարենորոգումների ծրագրի ընդունումը հայերի տրամադրությունը վտանգավորության աստիճանի բարձրացրել էր: Դրա համար էլ նորընտիր պատրիարք Ջավեն Եղիայանի առաջին կոնդակը խոհեմության եւ զգոնության կոչ էր. «Բարոյական եւ նիւթական ոյժերը չվատնել, որովհետեւ ատոնց պէտք ունի հայ քրիստոնէութիւնդ, օսմանեան հայ քաղաքացիութիւնդ»:

Որքան տեղին էր պատրիարքի այս զգուշացումը, նույնքան էլ անտեղի, վնասակար ու վտանգավոր էր նրա, ազգային մարմինների եւ կուսակցությունների հորդորների հեղեղը՝ հասցեագրված ժողովրդին՝ կատարել քաղաքացիական պարտականությունները պետության հանդեպ, «կառավարութեան եւ թուրքերուն որեւէ դժգոհութիւն եւ վիրաւորանք պատճառելու առիթ չստեղծել, զօրակոչին պատասխանել առանց տրտունջի, նիւթապէս օգնել բանակին...»:

Հնազանդության կոչերը հեղվում էին առատության եղջյուրից, մինչդեռ գործելու, կազմակերպելու, ինքնապաշտպանության նախապատրաստվելու հանձնարարականները գնալով պակասում էին, իսկ 1914թ. վերջերին իսպառ անհետացան: Արեւմտահայությունն իր ջոջերից այդպես էլ չստացավ գլխավոր հարցի պատասխանը՝ ի՞նչ անել, եթե թուրքերը գործողության մեջ դնեն ամբողջական բնաջնջման քաղաքականությունը: Իսկ որ այդ քաղաքականությունը սարերի հետեւում չէր, բոլորին էր հայտնի: Դեռ 1914թ. հունիսին Հրանդը Ս. Վրացյանին ասել էր. «Պիտի տեսնես, որ 95-ի սարսափները պիտի կրկնվին աւելի մեծ չափով, եթէ պատերազմ լինի...»:

Պատրիարքը հոկտեմբերի 25-ին այցելեց արդարադատության նախարարին ու հավաստիացրեց, թե հայ ազգը հավատարիմ է օսմանյան հայրենիքին եւ պատրաստ է իր ուժերը դնել կառավարության տրամադրության տակ:

Նա կրկնեց իր պատրաստակամությունը, որ եթե կառավարությունը հարկադրված լինի տեղափոխվելու Կոնիա, ինքն էլ կգնա Կոնիա: Երիտթուրքերի ղեկավարները շնորհակալություն հայտնեցին «հայրենիքի հանդէպ ունեցած սիրոյն եւ տէրութեան հանդէպ հաւատարմութեան համար»: Պատրիարքը Բերիայի հայկական հիվանդանոցում 150 մահճակալ հատկացրեց վիրավոր զինվորներին, մասնավորապէս Դարդանելի ճակատում վիրավորվածներին բուժելուն: Նման հատկացումներ կատարվեցին նաեւ Ջմյուռնիայում եւ մի քանի այլ քաղաքներում: Շատ հայ աղջիկներ ու կանայք դարձան գթության քույրեր եւ

խնամում էին վիրավոր զինվորներին: Պատրիարքարանը բացեց բուժքույրերի դասընթաց, որտեղ թրքուհիները գիտելիքներ էին ստանում զինվորական հիվանդանոցներում աշխատելու համար:

Պատվիրակություն ուղարկվեց Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմի մոտ՝ խնդրելու Բեռլինի բարյացակամությունը հայերի հանդեպ: Դեսպանը պատասխանեց, թե քանի դեռ Գերմանիան ու Թուրքիան դաշնակիցներ են, «... բոլորովին ոչ մեկ հայու քիթը պիտի արիւնի ոչ հոս եւ ոչ գաւառներու մէջ»: Նման մի պատվիրակություն այցելեց նաեւ Թալեաթին: «Կոտորած չի կրնար ըլլալ գաւառներու մէջ,- պատասխանեց հրեշը,- որովհետեւ կառավարութիւնը համամիտ չէ»: Կոտորածները կանխելու խնդրանքով ապրիլի 8-ին Թալեաթին այցելեց ինքը՝ պատրիարքը: «Հայոց դեմ որեւէ մասնավոր քաղաքականություն» կառավարությունը չունի, եղավ ՆԳ նախարարի պատասխանը:

Հավանաբար այս խոստումները դեր խաղացին, որ պատրիարքը չէր հավատում, թե թուրքերը հայերի բնաջնջման ծրագիր ունեին: Կիլիկիայի Սահակ կաթողիկոսը մարդ է ուղարկում՝ պատրիարքին հայտնելու ահագնացող աղետի մասին: 1915թ. մարտի 8-ին կարդալով Սահակ կաթողիկոսի նամակը՝ պատրիարքը բացականչեց. «Կիլիկիոյ կաթողիկոսը այս որքան հոռետես անձ է եղեր...»: Երկու օր անց նա նամակագրին ասում է, թե Վանգենհայմն իր «կառավարության անունից վստահեցնում է, որ կոտորած չի լինելու, եւ ոչ էլ հայերը տեղահանվելու են», թե ՆԳ նախարար «Թալեաթ փաշան նույնպէս մեզ հավաստիացրեց, որ հայ ժողովրդին իր բնակատեղերում թողնելու համար կարվի ամեն ինչ: Հավաքվելու են միայն կառավարության համար կասկածելի անձինք եւ հանցագործները»:

Պատրիարքը կիլիկիահայությանը պատվիրեց «պաշտոնատարերի հետ լավ վարվեն եւ զգուշանան գրգռիչ քայլերից, միայն ամօրյա գործերով զբաղվեն եւ հնազանդ լինեն պետական հրամաններին ու հրահանգներին»:

Դժվար է հաստատապէս ասել՝ սա պատրիարքի համոզմունքն էր, թե պարտադրված կարծիք: Եթե մինչեւ երիտթուրքական հեղաշրջումը պատրիարքարանը կատարում էր պոլսահայ վերնախավի քաղաքական կամքը, ապա, ինչպէս արդեն նշվեց, հեղաշրջումից հետո՝ դաշնակցության: Եկեղեցական կառույցները վերելից ներքեւ ենթարկված էին քաղաքական կառույցներին, առաջին հերթին՝ ՀՀԴ-ին: Հոգեւորականները վերածվել էին կուսակցական ակտիվիստների ու գործակալների, կատարում էին այն, ինչ ՀՀԴ թելադրում էր:

Դաշնակցական բյուրոն դեպքից դեպք հայությանը կոչ էր անում ամեն կերպ աջակցել Անտանտի տերությունների բանակների մարտական գործողություններին:

ՀՀԴ պաշտոնաթերթերից «Հորիզոնը» գրեց. «Հասել է ժամը վերջ տալու այն արինալից պատմութեանը, որ յայտնի է «թուրքահայի մարտիրոսութիւն» անունով... Հայութիւնը, առանց երկարացնելու, առանց ամենաչնչին տատանման, իր օգնութիւնը տալիս է Եռյակ համաձայնութեանը եւ իր բոլոր ուժերը տրամադրում է Ռուսաստանին»:

Սակայն դաշնակցությունը միասնական կարծիք չուներ: Եթե Արեւելյան բյուրոն շարունակեց բացահայտ հակաթուրք եւ ռուսամետ քաղաքականությունը, ապա Արեւմտյան բյուրոն մինչ զանգվածային ջարդերը ձգտում էր համագործակցել իթթիհադիի հետ եւ արեւմտահայությանը հորդորում էր հնազանդ մնալ:

Պոլսահայ վերնախավին այդպես էլ չհաջողվեց ձերբազատվել կրավորական դիրքորոշումից: Նա գնաց դեպի մահ՝ այն «միամիտ հաւատն ունենալով, թէ անմէղն ու թուրքի անկեղծ բարեկամը չի կարող կոտորուել նոյն թուրքից... եթէ հաւատարմութեան (այդ) շղթան չկաշկանդէր հայութեան ձեռքերը, թուրքին յաթաղանը այնքան հեշտ չէր իջնէր անոր գլխին»:

Նույն միտքն է հաստատում Կ. Սասունին. «Կոտորածների ահռելի վտանգի դիմաց... հայութիւնը անպատրաստ էր», դրան գումարվեց հայ ղեկավարների «հնազանդութեան քարոզը... խիզախութիւնը, անհատական եւ խմբական ըմբոստութիւնը արգելուած էին...»:

Երիտթուրքերը հայերի հանդէպ իրենց կոշտ դիրքը բացատրում էին նրանով, որ վերջինները նորից դիմումներ էին հղում մեծ պետություններին՝ հայկական նահանգներում բարենորոգումներ մտցնելու խնդրանքով: Ջեմալ փաշան Վարդգեսին սպառնաց. «Եթէ դուք պնդեք եվրոպական վերահսկողության վրա, մենք ստիպված ենք լինելու ընդունել: Բայց դրա հետեւանքն այն է լինելու, որ այդ վեց վիլայեթներում իսլամ բնակչությունը ոտի կելնի, եւ 300-400 հազար հայ կոտորվելու է»: Պարզից էլ պարզ էր, որ հայերի բնաջնջման ծրագրողն ու նախապատրաստողը իթթիհադիի գաղտնի կենտրոնն էր:

Պատրիարքը կաթողիկոսին գրեց, որ երիտթուրքերը «սպառնում են երկրի երեսից իսպառ վերացնել հայ ժողովրդին...»:

Մի հարց եւս. արեւմտահայերից շատերը, մասնավորապէս դաշնակները, մերձավոր հարաբերությունների մեջ էին թուրքական իշխանությունների, կառավարության անդամների ու ղեկավարների հետ, տեղյակ էին տեղաշարժերին, տրամադրություններին, սակայն տարօրինակ է, որ չընկալեցին սպասվող վտանգը, ավելի ճիշտ, գործնական լուրջ քայլ չարեցին դրա դեմ:

Նրանցից ոմանք նույնիսկ կարծում էին, թէ պատերազմում Օսմանյան կայսրությունը կկործանվի, եւ Հայկական հարցն ինքնաբերաբար կլուծվի հոգուտ հայերի: Հետեւաբար գլխավոր խնդիրը պատերազմից նվազագույն կորուստներով դուրս գալն էր: Թուրքերը դա հասկանում էին, իսկ կայսրությանը բարեխիղճ ծառայելու կոչերն ընդունում էին որպէս պատերազմական պայմաններում հայերի զուշավորության արտահայտություն, այլ ոչ թէ իրենց հանդէպ համակրանք: Մանավանդ որ հայերը միանգամայն այլ կեցվածք ունեին:

Պարզապէս անհավատալի է թվում, որ օսմանյան կառավարությունը շարժման մեջ էր դրել բնաջնջման մեքենան, իսկ հայ գործիչները համառորեն չէին ուզում նկատել այդ:

Հոկտեմբերի 12-ին ՀՀԴ Արեւմտյան բյուրոն արձանագրեց, որ գավառներում հայերի դեմ կիրառվող խստությունները ոչ թե կենտրոնական կառավարության, այլ տեղական իշխանությունների ցուցումով են կատարվում: Այն մերթ գրում էր. «Ցավալի է, որ Ապտիլ Համիտեան այդ ձեւը մուտք է գործած սահմանադրական կառավարութեան գործելակերպէն ալ ներս, բան մը, որ կրնայ շատ գէշ արդիւնք ունենալ», բյուրոն տեղական կազմակերպություններին ցուցում տվեց. «... ուշադրութիւն հրաւիրել կայսրութեան ծանրակշիռ վիճակին վրայ, որուն մէջ կը գտնուի մեր հայրենիքը ընդհանուր պատերազմի պատճառով: Մեր կողմէ կարգ ու կանոնի եւ ընդհանուր ապահովութեան պահպանումին մասնակցելով՝ պէտք է խուսափիլ ամէն առիթէ. որ կարող է պատահարներու կամ ժողովուրդի զանազան հատուածներուն միջեւ անհասկացողութիւններու դուռ բանալ»:

Շրջաբերական ուղարկվեց, թե «իրար անցնելու հարկ չկայ: Բալկանեան պատերազմի հետեւանքով թուրքերու խզումները ժամանակաւոր են եւ կանցնեն... Ծանր խնդիրներ ստեղծելու պատճառ չլինէք, գործակցէք տեղի իթթիհատի կուսակցութեան հետ եւ հաշտ ապրէք թուրքերու հետ»:

Սակայն արդեն 1914թ. վերջին ամիսներին տագնապը համակել էր ոչ միայն հայ մարդուն, որտեղ էլ նա բնակվեր, այլ նաեւ քաղաքական ուժերին: Դրա վկայությունն են նաեւ հետեւյալ կոչերը, որոնցից առաջինի հեղինակը՝ Երիտասարդ դաշնակցականների Բաքվի կազմակերպությունն էր, իսկ մյուսինը՝ ՀՀԴ բալկանյան կոմիտեն:

Առաջին կոչում ասված է. «Անչափ իրավագուրկ եւ անչափ դժբախտ Տաճկահայաստանում՝ անասելի բռնության եւ համատարած ժողովրդական աղքատության այդ երկրում, հնարավոր է միայն մի կռիվ՝ բոլոր դասերի ժողովրդավարական կռիվ քաղաքական ազատության համար»:

Հանձարեղ է ասված, ժողովրդին բնաջնջում են, իսկ դաշնակցությունը շարունակում է մտահոգվել քաղաքական ազատությունների իրականացմամբ:

Երկրորդ կոչում, որը թվագրված է 1914թ. դեկտեմբերի 21-ին, ասվում է. «Աղետն այս անգամ ո՛չ արհեստականորեն հալածված Հայկական հարցի հետեւանք է եւ ո՛չ էլ ազգային հավակնությունների կամ անխոհեմների սխալ գործունեության չար ծնունդը, այլ համամարդկային ծով աղետի մի մասն է, որը ճակատագրականորեն եկավ լափելու մարտիրոս ժողովրդի երեկվա արհավիրքներից դեռ չվերանորոգված բույնը, ցանուցիր անելու մեր աշխատավոր գյուղացիությանը, քանդելու շինականի գոմն ու հյուղակը, սարսափահար փախցնելու երեխաներին, կանանց ու ծերերին՝ սրբելով կրակով ու սրով կայք ու կենդանի ամեն ինչ, որ կարող է պահել աշխատավոր հայ մարդու գոյությունը»:

Ո՛չ կենտրոնական Եվրոպայում մղվող ճակատամարտերին եւ ո՛չ էլ այլուր կատարվող թշնամական ընդհարումների միջոցին չեք հանդիպի այնպիսի զարհուրելի տեսարանների, քանդման ու բնաջնջման զազանային բնագոյների, որպիսին մենք՝ հայերս, ապրում ենք Մերձավոր Ասիայի այսօրվա ռազմաբեմի վրա: Երկրագնդի այդ վայրերը, որտեղ նույնիսկ խաղաղ ժամանակներում

քաղաքակրթական ալիքները շարունակ ետ էին մղված, այսօր... գալիս են ուլտրավայրենության վերջին խոսքն ասելու ժամանակակից մարդկությանը:

Հյուսիսային Հայաստանը, սկսած Արածանիի ակունքներից մինչև Ճորոխի ափերը, Հայկական բարձրավանդակից մինչև Ծաղկոտնի սարերը, դատարկվեց հայությունից... Ո՞ւր փախան նրանք Հայաստանի ամեհի ձմռան ձեռքից... այդ չգիտենք... Մեր անհյուրասեր սարերը, Բասենի եւ Ալաշկերտի միապաղաղ ձյունածածկ հանդերը անկարելից, սառը վկաներ եղան նրանց ծով տառապանքից թռչող հուսահատ հառաչանքի... փայտացած դիակների:

Կովկասյան լրագրերը գուժում են, որ փախստական հայերի դիակները անտեր սփռված են ամբողջ Արածանիի հովտից մինչև ռուսական հողը, իսկ ազատվողների քարավանները՝ կիսամեռ, ցրտից կարկամած եւ թշվառությունից այլանդակված, տասնյակ հազարներով թափառում են Հարավային Կովկասում՝ Կարս, Ալեքսանդրապոլ, Երեւան եւ այլն...»:

Այս ամենը տեղի էին ունեցել ոչ թե 1915 թվին, այլ 1914թ. աշնանն ու ձմռանը:

Հայերին մի քանի ամիս ջարդելուց հետո Բ. դուռը շուռ եկավ նաեւ նրանց առաջնորդներին եւ այդ արեց ինքնավստահ, քանի որ գիտեր՝ գործ ուներ անձարակ ինտելիգենտիկների հետ:

Դաշնակցությունն իր երեկվա «եղբայրներին» այլեւս հարկադրված էր դիմել հեռակա: Թալեաթի նախկին մերձավոր ընկերները նրան հեռագրեցին, թե դաշնակցությունը, որն իր ջանքերը միավորել էր կառավարության ջանքերի հետ ի բարօրություն կայսրության, այժմ գտնվում է այնքան տարօրինակ ու անհասկանալի դրության մեջ, ինչն ամոթալի է: Կառավարությունը պիտի հաշվի առնի, որ հայ ժողովրդի ներկայացուցիչների հանդեպ այսպիսի վերաբերմունքը չի կարող չփչացնել երկու ազգերի հարաբերությունները եւ չօտարացնել նրանց:

Ահագնացող վտանգը, իհարկե, ինչ-որ գործողությունների մղում էր հայ քաղաքական ուժերին:

Գ. Պալաքյանը, որ այդ տարիներին Կ. Պոլսի հայ կյանքի շարքային դեմքերից չէր, միանգամայն սեւ գույնով է ներկայացնում պոլսահայ գործիչների վարքագիծը: Նա գրում է. «Անհասկանալի լավատեսությամբ էին տրամադրված հայ քաղաքական կուսակցությունների որոշ ղեկավարներ»: Պոլսի գործիչներն այդպես էլ չփորձեցին խորանալ կացության մեջ, չփորձեցին կռահել, թե իրադարձությունները դեպի ուր են տանում: Հայկական շրջաններում տարածված էր կարծիք, թե քանի դեռ իրական իշխանությունը հայերի սիրելի Թալեաթի ձեռքին է, վախենալու հիմք չկա:

Թուրքիան մտավ պատերազմի մեջ, հայերը չեզոք դիրք գրավեցին, նրանք վստահում էին երիտթուրք պարագլուխներին, համարում պարկեշտ մարդիկ: Երբ ոստիկանությունը Ակնունուն տանում էր բանտ, նա ապշահար հարցնում է՝ իսկ Թալեաթը գիտե՞: Ոստիկանը ցույց է տալիս Թալեաթի ստորագրությունը կրող ձեռքակալման հրամանը, Ակնունին ապշահար բացականչում է, թե ինքը քիչ

առաջ Թալեաթի հետ ճաշում էր, ինչո՞ւ նա ձերբակալության մասին ոչինչ չասաց: Եվ դա այն Թալեաթը, որ 1909թ. մարտի 31-ի հեղաշրջման օրերին թաքնվել էր Ակնունու տանը: Երբ Ակնունուն սպանելու էին տանում, ընկերներին ասաց. «Չեմ ցավում մահվանս համար..., այլ միայն ցավում եմ, որ այս թուրք սրիկաներից խաբվեցինք»:

Դաշնակցությունը, չնայած դեմ էր պատերազմի մեջ Թուրքիայի մտնելուն, բայց չկարողացավ ընկալել դրա հնարավոր աղետալի հետեւանքները հայերի համար: Մի շարք հեռավոր վայրերում, այդ թվում նաեւ Վանում, պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու լուրը դաշնակցությունը դիմավորեց դիուլ-գուռնայով, շքաքայլքով, ցուցադրվում էր նվիրվածությունը իթթիհադին, ու նաեւ արտահայտությունն էր նույն թաքուն հույսի, թե պատերազմը հայերի համար վերածվելու է երկնքից թափվող մանանայի:

«Պարզապէս շշմած էի ազգային վարիչ շրջանակներու անփութութեան,- գրում է Գ. Պալաքյանը,- տեսակ մը ճակատագրապաշտ համակերպութեան, քաղաքական անորակելի բարեմտութեան եւ անհեռատեսութեան վրայ»: Թե դաշնակցությունը եւ թե կրոնական առաջնորդները, հավաստի տեղեկություններ ունենալով նախապատրաստվող նախճիրի մասին, մնացին անհաղորդ: Պոլսից աքսորված գործիչների մեծ մասը կարծում էր, թե իրենց հանդեպ կատարվածը թյուրիմացություն էր, նույնիսկ Իվ. Տերնունն է զարմանում: «Կարո՞ղ եք պատկերացնել,- գրում է նա,- մեկ օրում Կ. Պոլսի 150 հազ. հայ բնակչությունից թուրքերը ձեռք գցեցին հայ մտավորականության գլուխներին... շուրջ 270 հոգու...»:

Դա հնարավոր եղավ, որովհետեւ հայ կուսակցությունների անգամ կենտրոնական մարմիններում, պատրիարքարանում. ամենուրեք վխտում էին օսմանյան իշխանությունների, այդ թվում Թալեաթի հայ լրտեսները, որոնց շարքերում կային նաեւ կուսակցական ակտիվիստներ: Այդ նրանք կազմեցին աքսորի ենթակաների ցուցակները:

Նման անփութություն էր տիրում ոչ միայն Կ. Պոլսում, այլ գրեթե ամենուրեք: ՀՀԴ չկարողացավ կուսակցական մարտական բջիջներ ստեղծել հայկական բնակավայրերի ճնշող մեծամասնությունում, անհոգություն հանդես բերեց կադրերի, մանավանդ մարտական խմբերի ղեկավարների ընտրության գործում: ՀՀԴ բյուրոյի լիազոր ներկայացուցիչների ճնշող մեծամասնությունը գործին անտեղյակ, թուլամորթ եւ եսապաշտ անձինք էին: Իսկ ինչ վերաբերում է դաշնակ այնպիսի պարագլուխների, ինչպիսիք են Ռուբեն Տեր-Մինասյանցն ու Վ. Փափազյանը, ապա նրանց վարքագիծը 1914-15թթ. այլ բան չէր, եթե ոչ անպարկեշտություն, ստորություն եւ դավաճանություն:

Հետաքրքիր շրջապատ ունեին դաշնակցության ղեկավար գործիչները. Ակնունու մերձավոր ընկերը Թալեաթն էր, իսկ Վ. Փափազյանինը՝ Տարոնի կրոնական առաջնորդներից իթթիհադական Իլյասը, որը օսմանյան խորհրդարանի անդամ էր: Նրա մայրը հայ էր, բայց ինքը՝ արյունախումբ հայաստյաց: Հանրահայտ է նրա գրույցը Դիարբեքիից պատգամավոր Ֆեյզիի հետ: Վերջինս պարծենում է, որ ինքը քուրդ ավագակ, մարդասպան Ամրոյի

միջոցով ոչնչացրել էր այդ վիլայեթի 700 մտավորականի: Իլյասը, արհամարհական ժպիտ պարզելելով գրուցակցին ասում է. «700-ն ինչ է, ես ոչնչացրի Տարոնի ամբողջ հայ բնակչությունը»: Հ. Փափազյանը 1914թ. սեպտեմբերին Վանից Մուշ գնաց, որպեսզի Իլյասի ընկերակցությամբ Կ. Պոլիս մեկնի խորհրդարանի հերթական նստաշրջանին մասնակցելու համար: Սակայն Թուրքիան պատերազմի մեջ մտավ, եւ խափանվեց նրանց Պոլիս գնալը: Վ. Փափազյանը մնաց Մուշում եւ իր վրա վերցրեց Տարոնի դաշնակցության ղեկավարությունը: Նա համագործակցում էր Սասունում գործող Ռուբենի հետ:

1915թ. գարնանը, երբ թուրքերը սկսեցին կոտորել տարոնահայությանը, Ռուբենն ու Փափազյանը հրավիրեցին տեղի դաշնակցության գործիչներին եւ հայտարարեցին, թե Մուշը պաշտպանելն անհնար է: Հետեւաբար, անհրաժեշտ է Տարոնի մարտական ուժերին տեղափոխել Սասուն եւ այնտեղ կռիվ տալ թուրք եւ քուրդ ջարդարարների դեմ: Մշո մի քանի գործիչներ` Կոտոյան Հակոբի ղեկավարությամբ, հանդես եկան այդ առաջարկի դեմ եւ հեռացան ժողովից:

Ռուբենին ու Վ. Փափազյանին հաջողվեց Մուշ քաղաքի եւ Տարոնի մի շարք գյուղերի կռվող ուժերին հանել Սասուն: Քաղաքում մնացած հայ մարտիկները Հ. Կոտոյանի հրամանատարությամբ հերոսական դիմադրություն ցույց տվեցին թուրքական զորքերին, սակայն ուժերի անհավասարությունն ի վերջո խնդիրը լուծեց: Մուշի հայ բնակչությունը ոչնչացվեց:

Վ. Փափազյանը Տարոնի ինքնապաշտպանությունը խորտակելուց հետո ոչ թե բարձրացավ Սասուն` այնտեղ թուրքերի դեմ կռվելու, այլ երկու տասնյակ զինյալների հետ թաքնվեց Քանա (Մեւ) սարի անտառներում: Նա որեւէ մարտի չմասնակցեց, թշնամու վրա մի գնդակ իսկ չարձակեց, այլ տեղից տեղ էր անցնում: Նա Ռուբենի հետ նախապես պայմանավորվել էր, որ կռվի որոշակի պահին լքելու էին հայ բնակչությանը եւ գնալու էին Կովկաս:

Երբ թշնամին առաջ շարժվեց եւ օղակեց Անդոկի գագաթը, Ռուբենն իր մերձավոր զինակիցների հետ գաղտագողի հեռացավ Անդոկից: Քանա սարում նրանց միացավ Վ. Փափազյանը` մի քանի հոգու հետ (մյուսներին նա մերժեց, որովհետեւ խմբի մեծանալը կարող էր փախչողներին վտանգել):

Հաջորդ օրը առավոտյան, երբ Անդոկում կուտակված հայերը, հիմնականում` կանայք ու երեխաներ, իմացան այդ դավաճանական արարքի մասին, խուճապի մատնվեցին: Սկսեցին փախչել դես ու դեն` յաթաղանից փրկվելու համար: Սակայն չփրկվեցին եւ ոչնչացվեցին անտառներում, կիրճերում ու լեռներում:

Մի թվաբանություն. 1894թ. Սասունը, ունենալով ընդամենը 20 հզ. բնակիչ, թուրքական 20 հզ. զորքին եւ 40 հզ. քրդերին դիմադրեց մի քանի ամիս` չհաշված 1892-93թթ. կռիվները, 1904թ. սասունցիները գրեթե նույնքան թուրքերին ու քրդերին դիմադրեցին մեկ ամսից ավելի: Իսկ 1915թ. 15 000 թուրքի եւ 30 000 քրդի դիմադրեցին միայն չորս օր: Ինչո՞ւ: Իհարկե, Ռուբենը մարտական գործողությունների փորձ չուներ, իր անձի համար դողացող, անընդունակ վճռական պահին անձնական օրինակով ոգեւորելու իր ենթականերին: Նա չուներ ոչ Հ. Պոյաճյանի (Մեծ Մուրադի) շիտակությունը, անմնացորդ նվիրումը, ոչ Հրայր

Դժոխքի կազմակերպական վիթխարի կարողությունն ու իմաստունությունը, ոչ Անդրանիկի զորավարական տաղանդն ու կանխագուշակելու կարողությունը, ոչ Գեւորգի խելահեղ քաջությունն ու պարտիզանական կռիվներ վարելու վարպետությունը: Սակայն միայն այդ չէր պատճառը, այլև՝ մարդկանց հանդեպ արհամարհական վերաբերմունքը, վերջինների շահերն ու անվտանգությունը սեփական շահերին, իր անվտանգությանը անվերապահ ենթարկելը: Ռուբենը մարդկանց հանդեպ շիտակ չէր, անընդհատ զբաղված էր նրանց իրար դեմ լարելով եւ այլեւայլ խարդախություններով:

Յուրաքանչյուր ժողովուրդ, առավել եւս յուրաքանչյուր քիչ թե շատ բարոյական կռվանների վրա հենվող քաղաքական ուժ նման դավաճանության եւ ստորության համար Ռուբենին ու Փափագյանին կհեռացներ իր շարքերից եւ դատի կտար: Բայց երբ նրանք տեղ հասան, դաշնակ ջոջերը, ի պատիվ այդ դասալիքների, խնջույք կազմակերպեցին, նրանց հասցեին փառաբանական խոսքեր ասացին. միայն Ռոստոմը, դիմելով Ռուբենին, ասաց. «Դու ինչպե՞ս կարողացար ժողովրդին լքել ու գալ»:

Ռուբենի վարքագիծը սասունցիների շրջանում բուռն զայրույթ առաջացրեց, սկսեցին հետապնդել նրան հաշվեհարդարի ենթարկելու համար: Բյուրոն հարկադրված եղավ Ռուբենին մի քանի տարի պահել Թիֆլիսում: Ապա լուրեր տարածեցին, թե Ռուբենը ծրագրել է Հայաստանի տարածքը գոտեւորող տարածքներից, սկսած Վեդիից մինչեւ Սպիտակ, մահմեդականությանը դուրս քշել: Իրականում այդ ծրագիրը հղացել էր Արամ Մանուկյանը եւ ոչ միայն հղացել, այլև՝ իրականացրել էր ամենաբարդ հատվածի՝ Վեդիբասարի մասնակի թաթարաթափումը:

Ռուբենը Հայաստանում իր պաշտոնավարության ընթացքում միայն մի «երեւելի» գործ է կատարել՝ թուրքի դաժանությանը հեղել է մայիսյան (1920թ.) ապստամբության մասնակիցների արյունը:

Ռուբենը գրել գիտեր: Նա հեղինակել է մի շարք աշխատություններ, որոնց շարքում առանձնակի տեղ է զբաղում «Հայ յեղափոխականի մը յիշատակները» 8-հատորյակը, որը հրատարակելու համար նույնիսկ հատուկ տպարան ստեղծվեց: Այն որքան փաստագրական ու համոզիչ է, նույնքան էլ կեղծարարության մի մեծ պահեստ է, որում պատմական իրադարձությունները գլխիվայր են շուռ տված մի նպատակով. դաշնակցության (տվյալ դեպքում՝ սեփական անձի) վրայից դեն նետել կոպիտ սխալների, բարոյականությունից զուրկ, նեղկուսակցական, արկածախնդրական գործողությունների պատասխանատվությունը:

1914թ. կեսերից արդեն ակնհայտ դարձավ, որ արեւմտահայությունը բացարձակապես անպատրաստ էր արհավիրքին, որ նա լքված էր բոլորի ու ամենքի կողմից: Հնչակյան մի քանի գործիչների խիզախ կեցվածքը եւ այդ կուսակցության Կոստանցայի համագումարի ընդունած նույնքան խիզախ որոշումները դրությունը փրկել չէին կարող, նախ՝ այդ կուսակցության ազդեցությունը մեծ չէր, երկրորդ՝ թուրքական իշխանությունները պարզապես ահաբեկչության ենթարկեցին հնչակին: Սուլթան Բայազետի հրապարակի 20 կախաղաններին հետեւեցին իթբիհաղական «փողկապները» կայսրության

տարածքի ամենատարբեր մասերում, մասնավորապես Փոքր Հայքում եւ Կիլիկիայում:

Հայությունը թուրք ջարդարարներին դիմադրություն ցույց տվեց մի քանի վայրերում եւ հիմնականում ինքնաբերաբար (Մուսա լեռ, Ջեյթուն, Ուրֆա): Միայն Վանում էր, որ դաշնակցության տեղական կոմիտեն, որը միշտ էլ աչքի էր ընկել իր եռանդուն գործունեությամբ, Ա. Մանուկյանի եւ այլոց ղեկավարությամբ կարողացավ հմտորեն հաշվի առնել վիլայեթի աշխարհագրական դիրքի ընձեռած հնարավորությունը եւ այն, որ քաղաքում հայերը բացարձակ մեծամասնություն էին, կազմակերպեցին ու ղեկավարեցին Վանի 1915թ. ապրիլյան հերոսական ինքնապաշտպանությունը եւ տեղի հայությանը փրկեցին ջարդերից:

Ընդհանրապես փրկվեցին այն վայրերի հայերը, ովքեր գենքով հաստատեցին իրենց ապրելու իրավունքը: Դեռ ավելին: Ֆահրի փաշան, տեսնելով մուսալեռցիների հերոսական դիմադրությունը, իր 6000 հոգանոց զորքին գոչեց. «Ի՞նչ պիտի ըլլար Թուրքիան, եթե... հայերը կազմակերպուած ըլլային բազմաթիվ Մուսա տաղերով եւ Ուրֆաներով»:

Մինչդեռ հայ կուսակցությունները, մասնավորապես դաշնակցությունը, անհաղորդ մնացին կռվով մեռնելու բարոյականությանը: «Հայ կյանքի արմատական հարցում,- 1915թ. հունվարի 1-ին գրեց «ԽՈՉՍՈՅՐՍՏԿ ՐՍՏՉՏ» թերթը,- հիասթափությունը հաջորդում էր հիասթափությանը: Դա խորանում էր նաեւ այն բանով, որ տերությունները, չնայած հայկական բարենորոգումները հիմնովին տապալվել էին, շարունակում էին անպարկեշտ խաղը դրա շուրջ: Նույն հունվարյան օրերին Սազոնովը հայտարարեց, թե Ռուսաստանն աներեր է բարենորոգումների անցկացման հարցում, իսկ երկու ամիս անց ասաց. «Թուրքահայաստանի ապագա կարգավիճակի հարցում իր նախարարությունը դեռեւս վերջնական որոշման չի հանգել»:

Երբ բռնագաղթն արդեն ընթացքի մեջ էր, Հ. Ջավրիեւը Լոնդոնի եւ Փարիզի ռուսական դեսպաններին մի տեղեկագիր ներկայացրեց, որում «ռուսահայերի անունից» առաջարկվում էր «... պատերազմի ավարտին» նորից առաջ քաշել ու լուծել Հայկական հարցը, որ Պետրոգրադը պարտավոր էր երաշխավորել «Թուրքահայաստանի տարածքային ամբողջականությունը եւ ինքնավարությունը Ռուսաստանի հովանու տակ»: Նման պահանջի համար հիմք էր հանդիսանում այն, որ 1914թ. նոյեմբերին ցարը կաթողիկոսին խոստացել էր Հայաստանին շնորհել ինքնավարություն:

Դրա հետ միասին ռուսական շատ պաշտոնատարներ, լրագրեր շարունակում էին թուրքերին ավելի ու ավելի գրգռել հայերի դեմ: «ԻՈՐ՝»-ն գրեց. «Ամբողջ Թուրքահայաստանը բռնկված է ապստամբությունների հրդեհով, եւ բոլոր մարզերում նրա ժողովուրդը պայքարում է թուրք եւ քուրդ հորդաների դեմ՝ հույսով օր առաջ իր վրա տեսնելու երկալխանի արծվի հզոր ստվերը»:

Մ. Կովալովսկին հայտարարեց, թե Գերմանիան խափանում է Հայկական հարցի լուծումը, քանի որ «նրա հղացած երկաթգիծն անցնում է Փոքր Ասիայի այն մասերով, որոնց վրա ռազմավարական առումով գերիշխում է Հայկական

բարձրավանդակը», իսկ Ֆրանսիան եւ Անգլիան «հետ կանգնեցին գործնական ներկայացուցչությունից՝ չցանկանալով դժգոհություն առաջացնել իրենց գաղութների մահմեդականների շրջանում»:

Արեւմտահայությունն արդեն լողում է սեփական արյան մեջ, իսկ հայ կազմակերպություններն ու գործիչները եռանդուն քննարկումներ էին սկսել պատերազմի ու Հայկական հարցի շուրջ: Փոխադարձ մեղադրանքները շաղ էին տրվում գարնան անձրեւի պես, կայցվում էին պիտակներ, որոնք չէին տեղավորվում բանականության ու բարոյականության շրջանակներում, մեկը մյուսի անպատասխանատվության վրա հարձակում էր գործում նույն այդ անպատասխանատվության դիրքերից: Լեոն դաշնակցության հասցեին բազում իրավացի քննադատությունների հետ միասին օգտագործում է արտահայտություններ, որոնք պարզապես չարախնդություններ են: Ահա դրանցից մեկը. «Պատերազմ է ուզում, ահա եւ պատերազմ... դաշնակցական մաուզերներն իրանք իրանց պայթում են»:

Բայց որ դաշնակցությունն իր կողմնորոշմամբ ելնում էր ոչ այնքան արեւմտահայության, որքան իր կուսակցական նեղ շահերից, ակնհայտ էր: Այդ մթնոլորտում ցարը հայերին խաբում էր, եւ հայերը հաճույքով խաբվում էին:

Լեոն նկարագրում է Ազգային բյուրոյի նիստերից մեկը, որում քննարկվում էր կամավորական գնդերի հանդերձավորման հարցը, եւ ստեղծվեց կամավոր գնդերի խնդրով զբաղվող գործադիր կոմիտե: Սա լեզալ մարմին էր, բայց նաեւ ուներ անլեզալ կառույց՝ կազմված դաշնակցական գործիչներից: Վերջինիս նիստերից մեկում, երբ Քաջագունին ասաց, թե Վանի գործիչները դեմ են կամավորական շարժմանը, Ա. Ջամալյանը պատասխանեց, թե Վանի ընկերները սխալ են հասկացել էրզրումի համագումարի որոշումները:

Այդ ընթացքում ռուսական բանակի շարքերում ծառայող հայերի շրջանում ծայր առավ դասալքությունը: Վորոնցով-Դաշկովը դիմեց Ազգային բյուրոյի օգնությանը դասալքության առաջն առնելու համար, իսկ 4-րդ բանակի հրամանատար Օզանովսկին խորհուրդ տվեց հայ կամավորականների թիվը հասցնել 10-12 հզ., որպեսզի պատերազմից հետո հնարավոր լիներ «պաշտպանել ազգային ինքնուրույնությունը»: Բյուրոն անմիջապես որոշում ընդունեց հայ կամավորների թիվը հասցնել 10 հզ.: Փոխարքան համաձայնվեց՝ պայմանով, որ հայերը ձեռք բերեին պահանջված քանակի զենքեր, ինչը Ազգային բյուրոյի ուժերից վեր էր:

Դաշնակցության, ինչպես նաեւ հայ շատ նշանավոր գործիչների ռուսասիրությունն այդպես էլ մնաց անորոշ: Ջավրիեւի հետ հանդիպումից հետո (1916թ. սկզբներ) Լեփսիուսը գրեց. «Չնայած հայերի հանդեպ թուրքերի կատարած բոլոր գազանություններին՝ պրն Ջավրիեւը ռուսներից ավելի շատ է վախենում, քան թուրքերից»: Այդ վերաբերմունքը հիմք ընդունելով՝ գերմանական արքունական պատվիրակության անդամ Յակոբինը գրեց կանցլերին. «Հայկական շրջաններում... նորից առաջ է քաշվում հայկական ինքնավարության հարցը: Եթե դրան հասնել չհաջողվի, հարկ է նախընտրել ոչ թե ռուսական, այլ թուրքական լավ կառավարումը»:

Պետական դումայի անդամ Աջեմովը «կաՅՐՏՀՐՈՊՐՍՈՒ ՍցՐՖաՐ»-ում գրեց. «Պատերազմից հետո պետք չէ, որ Թուրքիան դադարի գոյություն ունենալուց... Հայերն իրենց ազգային խնդրի համար շահ ունեն թուրքական վեհապետության պահպանման մեջ»:

ՀՀԴ դիրքորոշման կապակցությամբ Պ. Միլոկովն ասաց. «Հայերի եւ ռուսների ձգտումների միջեւ որեւէ համաձայնություն գոյություն չուներ: Դաշնակցականների ազգային ծրագիրը նախատեսում է Թուրքիայի պահպանում սուլթանի գերիշխանության տակ... այդ ծրագիրն ամենից առաջ փակում էր Ռուսաստանի տարածման ճանապարհը»:

1916-ին Ռուսաստանը գրավել էր Արեւմտյան Հայաստանի մեծ մասը, սակայն գրավել էր մի տարածք, որտեղ այլեւս հայ գրեթե չէր բնակվում: Իսկ Ջավրիեւը Եվրոպայում մայրաքաղաքից մայրաքաղաք էր անցնում, սադրիչ հայտարարություններով հանդես գալիս:

Փարիզում Ռուսաստանի դեսպան Իզվոլսկին տեղեկագրում է, որ Ջավրիեւը 1915թ. դեկտեմբերի 11-ին հայտնել է, թե Ջեմալ փաշայի ու Բ. դեան միջեւ հակասություններ են առաջացել, որը հույս է ներշնչում, թե «կարող է հաջողվի Ջեմալին մղելու հանդես գալու Պոլսի դեմ, եթե տերությունները համաձայնվեն նրան տալու Ասիական Թուրքիան... թե հայերն ունեն միջոցներ Ջեմալի վրա ազդելու համար»:

Սազոնովը գրեց. «Կ. Պոլսի հայկական շրջաններից հայտնում են, թե իբր հույս կա Ջեմալին մղելու բացահայտ ապստամբության Կ. Պոլսի կառավարության եւ գերմանացիների դեմ, եթե տերությունները.

\

1. Երաշխավորեն Ասիական Թուրքիայի անկախությունն ու անձեռնմխելիությունը, այն պետք է լինի սուլթանի իշխանության տակ եւ իր մեջ ներառի Սիրիան, Պաղեստինը, Միջագետքը, Արաբիան, Հայաստանը, Կիլիկիան, Քրդստանը
2. Սուլթան հռչակեն Ջեմալ փաշային
3. Ջեմալ փաշան պարտավորվում է պատերազմ հայտարարել գերմանիային, արշավել Կ. Պոլսի վրա եւ տապալել Բ. դեան կառավարությունն ու սուլթանին
4. Պետությունները Ջեմալին գենքով, ռազմամթերքով եւ ֆինանսներով օգնեն թե պատերազմի ժամանակ եւ թե դրանից հետո
5. Ջեմալը համաձայնում է կորցնել Կ. Պոլիսն ու Նեղուցները, ինչպես նաեւ փրկել հայերին եւ նրանց մատակարարել մինչեւ աշխարհամարտի ավարտը»:

Ռուսական կառավարությանը նման դիրքորոշումը ձեռնտու էր ոչ թե դրա իրականացման հնարավորության, այլ, ինչպես գրում է Սազոնովը,

«Յուրաքանչյուր ներքին բարդություն ի գորու է թուլացնել Թուրքիային եւ ծառայել մեր օգտին: Այդ նկատի ունենալով՝ գտնում եմ, որ անհրաժեշտ է մեզ հավատարիմ հայերի միջոցով գաղտնի բանակցությունների մեջ մտնել Ջեմալի հետ»: Ջավրիեւին ընդունեց նաեւ Բրիանը, բայց խուսափողական պատասխաններ տվեց՝ վկայակոչելով «Ջեմալի վիճակի մասին տեղեկատվության անորոշությունն ու նշված դերի համար նրա ընդունակ լինելը»: Բայց իրականությունը դա չէր, այլ այն, որ «Ջեմալի ծրագիրը» հակասում էր Կիլիկիային, Փոքր Հայքին եւ Հյուսիսային Սիրիային տիրանալու Փարիզի մտադրությանը:

Հայերն անմիջապես համաձայնվում են Ջեմալի առաջարկության հետ, եւ Ջավրիեւը գրում է, թե «եթե պահանջվի, ապա հայերը պատրաստ են իրենց վրա վերցնել բանակցությունները եւ երկու հավատարիմ անձանց անմիջապես ուղարկել Եգիպտոս Ջեմալի հետ կապերը վերականգնելու համար»:

Բայց իզուր: Չմտածված էր նաեւ ՀՀԴ գործիչների այս վարքագիծը՝ կարգավորելու պետությունների հարաբերությունները, իբր, որպեսզի դրանից քաղաքական կապիտալ շահեր արեւմտահայության համար: Թալեաթ-էնվերի իշխանության փոխարեն Ջեմալի սուլթանության հաստատումը հայության համար ոչ միայն ձեռնտու չէր, այլեւ հավերժացնելու էր Հայաստանի մնալը Թուրքիայի տիրապետության տակ եւ այն էլ առանց հայերի, որովհետեւ կորցնելով Նեղուցներն ու Կ. Պոլիսը՝ թուրքական ազգային պետականության ուշադրությունն ամբողջովին բեւեռվելու էր Արեւմտյան Հայաստանի վրա: Դա նույն այն քաղաքականությունն էր, ինչը փայլուն հաջողությամբ մի քանի տարի անց իրագործեց Մ. Քեմալը՝ իր ձեռքում պահելով թե Արեւմտյան Հայաստանը եւ թե Կ. Պոլիսն ու Նեղուցները:

ՀՀԴ-ի նշված ծրագիրը դուր չեկավ նաեւ ցարին: Նա այդ առաջարկին պատասխանեց. «Թուրքիայի հարցը պետք է լուծել: Համենայն դեպս նա Եվրոպայում այլեւս տեղ չունի: Դրա համար էլ ընդդիմության հետ հարաբերությունների մեջ մտնելու կարիք չկա»: Դա արդեն 1916թ. օգոստոսի 20-ն էր, այսինքն երբ Օսմանյան կայսրությունը (բացի Կ. Պոլսից ու Ջնյուռնիայից) «մաքրված էր» հայերից, այսինքն հայն այլեւս գործոն չէր ցարիզմի թուրքական քաղաքականությունում: Եվ Սազոնովը հրահանգեց. «... հայերի քաղաքական նշանակությունն իջեցնել մինչեւ զրոյի եւ նրանց տեղը դնել մահմեդականներին»: Հետեւաբար անընդունելի էր դառնում նաեւ հայերին ինքնավարություն տալը, պատճառաբանությամբ, թե նրանք կազմում էին բնակչության չնչին մասը, եւ այդ «պայմաններում հայկական ինքնավարությունը կհանգեցներ փոքրամասնության կողմից մեծամասնության անարդար հարստահարման»: Արեւմտահայության հարցի տապալմանը հետեւեց շրջադարձը նաեւ արեւելահայության խնդրում: Սազոնովը բացորոշ հայտարարեց, թե «Ռուսական կայսրության սահմաններում Հայկական հարց ամենեւին գոյություն չունի, եւ անգամ թույլ չպիտի տրվի դրա մասին հիշատակվի»:

Ֆրանսիան եւ Անգլիան նույնպես գտնում էին, թե քանի որ արջը սպանված է, ապա մորթին պիտի բաժանվի հաշտ ու խաղաղ. դա առաջին հերթին վերաբերում էր հայաթափ Հայաստանի տարածքների բաժանմանը:

Այդպես էր, դաշնակցությունը չկարողացավ վերագնահատել իրավիճակը, հասկանալ, որ արեւմտահայության բնաջնջումը էապես փոխում է Հայկական հարցի հանդեպ տերությունների վերաբերմունքը, վերածվեց խաղալիքի նրանց ձեռքին Հայաստանը դարձնելու մանր դրամ ռազմավարական խոշոր խնդիրներ լուծելու գործընթացներում: Հայկական հարցը դարձավ «լրացուցիչ» հարց, որը հրապարակ էր հանվում կշռաթաթերը հավասար մակարդակի բերելու համար:

Պարզապես անհնար է պատկերացնել, թե ՀՀԴ որոշ պարագլուխներ ինչպիսի թեթեւամիտ անտարբերությամբ էին վերաբերվում հայերի զանգվածային ջարդերին: Արեւմտյան Հայաստանը վերածվել էր հայության արյան ծովի, իսկ այդ նույն ժամանակ Ջավրիեւը դռնից դուռ ընկած Միացյալ եւ Անկախ Հայաստան էր ձեւավորում քարտեզի վրա: Իսկ Վրացյանը թուրքին վայել ցինիկությամբ գրեց. «Սխալվե՞լ ենք: Այո, սխալվել ենք: Տուժե՞լ ենք: Այո, տուժել ենք: Բայց սխալվել ու տուժել են բոլոր ժողովուրդները»:

«Հորիզոնը» իր 1916թ. հունվարի 1-ի համարում, ամփոփելով 1915 թվականը, գրում է. «Ամենահուսադրողը դա այն բուռն ազիտացիան է, որ սկսվել է Եվրոպայում հայերի օգտին...»:

1918 թվի սկզբներից սկսվեց խնորվել Հայկական հարցի լուծման երկու տեսակետ. առաջինը դաշնակցության տեսակետն էր՝ համախմբել ազգը՝ թուրքական վտանգի առաջն առնելու, երկրորդը կոմունիստներինը՝ կանգնել ռուսական հեղափոխության դրոշի տակ եւ հեղափոխական Ռուսաստանի օգնությամբ լուծել այն: Եթե դաշնակցության տեսակետը տվյալ պահին ավելի իրատեսական էր, քան բոլշեիկներինը, ապա իրականացման եղանակների, մարտավարության առումով թե մեկը եւ թե մյուսը անորոշ էին եւ ռազմաքաղաքական ապահովվածությունից զուրկ:

Որ Վրաստանն ու Ադրբեջանը հեռանում էին Ռուսաստանից՝ անկախ այնտեղ գոյություն ունեցող հասարակարգի բնույթից, հասկանալի էր, մեկը նետվում էր Գերմանիայի, իսկ մյուսը՝ Թուրքիայի գիրկը, իսկ որ Հայաստանն էր հեռանում Ռուսաստանից (նորից անկախ հասարակարգից) ոչ միայն լուրջ չէր, այլեւ բացարձակ անպատասխանատվություն էր սեփական ժողովրդի ճակատագրի հանդեպ: 1918-1921թթ. իրադարձություններն ավելի քան ապացուցեցին այդ քաղաքականության հակազգային լինելը:

Ռուսական բանակը հեռանում էր գրեթե «մերկ ձեռքերով», ամբողջ ունեցվածքը՝ զորանոցներ, զենքեր, զինամթերք, սննդամթերք, մնում էր տեղում: Թվում էր, թե հայերը կտիրանան դրանց եւ կօգտագործեն երկիրը պաշտպանելու համար: Բայց ոչ: Ընդհանուր անկազմակերպվածության, գործողության հստակ ծրագրի բացակայության հետեւանքով ռուսական բանակի ունեցվածքը ցաք ու ցրիվ եղավ: Որոշ անձինք, այդ թվում նաեւ դաշնակցության գործիչներ, ռուսական բանակի թողածը վերածեցին անձնական հարստացման միջոցի:

Հոկտեմբերյան հեղափոխությունն ու ռուսների հեռանալը երիտթուրքերի համար դարձան վերածնման աղբյուր: Նրանք, իրենց առջեւ տեսնելով ոչ ոքի

կողմից չպաշտպանվող տարածքներ, անմիջապես գործողության մեջ դրեցին համաթուրանական ծրագիրը: Բրեստ-Լիտովսկում կնքված պայմանագրով վերականգնվելու էր 1914թ. ռուս-թուրքական սահմանը, մինչդեռ Էնվերը հարձակման անցավ ամբողջ Կովկասին տիրանալու համար:

Սկսվեց թուրքական խարդախությունների շարանը: Արեւելյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշան Երզնկայում բանակցություններ վարեց Պրժեւալսկու հետ. հայերին մեղադրանք ներկայացվեց, թե նրանք ռուսական զորքերի զբաղեցրած տարածքներում նահմեղականների նկատմամբ բռնություններ էին գործադրել:

Հենց այդ օրերին էր, որ դիվիզիայի (երզրումի ռազմաճակատի) հրամանատարությունն ստանձնեց Անդրանիկը:

Հայ զինվորները բարոյալքված էին, հրաժարվում էին ենթարկվել հրամանատարությանը, հայրենի բնակավայրեր պաշտպանելու պատրվակով լքում էին դիրքերն ու վերադառնում տուն: Անգամ փորձ արվեց Անդրանիկին սպանելու:

Բարոյալքության գործընթաց էր: Երբ Անդրանիկն Էրզրում էր մեկնում, մի օր կանգ առավ Կարսում: Մեծ բազմություն հավաքվեց նրա իջեւանած տան բակում: Անդրանիկը դիմեց նրանց, թե գնում է հայրենիքը պաշտպանելու: «Ձեզմէ ո՞վ կմիանա ինձի»: Վահան Թորթվենցը պատմում է, որ բազմության միջից դուրս եկավ մոտ 2000 մարդ: Բայց երբ Անդրանիկը փորձեց նրանց զորանոց ուղարկել, մնաց... 25 հոգի:

Սարիղամիշում Անդրանիկն ականատես եղավ, թե Հայ զինվորների (սպաների) միությունը ռուսական բանակի ունեցվածքի համար ինչպիսի ստոր պայքար էր ծավալել Պանդուխտի դեմ, որը Էրզրումում զգալի թվով մարդիկ էր հավաքագրել, հանդերձավորել, զինել էր եւ պահանջում էր ռազմամթերք՝ նրանց ռազմաճակատ ուղարկելու համար: Սպաների միությունը միտումնաբար ձախողում էր ռազմամթերքի տրամադրումը:

Այդ ընթացքում Սեբաստացի Մուրադը Մամախաթունից նահանջում էր՝ իր հետ ունենալով մեծ թվով փախստականներ: Անդրանիկը հեռագրում է Էրզրում ու հրամայում, որ ռուսահայ կորպուսի 1-ին եւ 4-րդ գնդերը օգնության հասնեն Մուրադին, բայց այդ գնդերն արհամարհեցին նրա հրամանը:

Անդրկովկասյան զորքերի հրամանատար Օդիշելիձեն Թորգոմին, որի ջոկատը հերոսական մարտերով նահանջում էր՝ փրկելով մեծ թվով արեւմտահայերի, հեռացնում է պահակազնդի հրամանատարի պաշտոնից՝ նրան անվանելով «ապստամբ»:

Իրական պատճառն այն էր, որ Թորգոմը լսել էր Օդիշելիձեի հեռախոսային զրույցը Վեհիբ փաշայի հետ եւ դիմել էր Սպաների միության տեղական կոմիտեի օգնությանը՝ Օդիշելիձեի դավաճանությունը մերկացնելու համար: Սակայն նրան մերժեցին: Թորգոմը Օդիշելիձեի երեսին շարտեց. «Քո դավաճանությանը տեղյակ

եմ եւ ընդունակ եմ մահապատժի ենթարկել հայրենիքի դավաճանին»:
Սարսափած վրացին փորձում է գիշերը փախչել՝ հինգ միլիոն ռուբլի թալանած:
Թորգոմն այդ մասին իմանալով՝ դարան է պատրաստում նրան բռնելու համար եւ
միամտաբար դրա մասին հայտնում է Սպաների միությանը, որն անմիջապես
տեղյակ է պահում դավաճանին: Թորգոմին հետապնդում են ոչնչացնելու
նպատակով, սակայն Անդրանիկը նրան իր պաշտպանության տակ է առնում եւ
թույլ չի տալիս:

Անդրանիկը նոր էր երգում հասել, երբ Ազգային խորհուրդը անսկզբունքային
պայքար սկսեց անվտանգության մարմինների հետ: Հայ էսեռներն ու
մենչեիկները պահանջում էին ռազմաձակատային գիծը սեղմել եւ հետ քաշվել
1914թ. սահմանագլուխը: Ազգային խորհրդի դաշնակ մեծամասնությունը
համամիտ էր այս առաջարկին, եւ այն ընդունվեց:

Ի դեպ, Անդրանիկին երգում ճանապարհեցին մեծ շուքով: Եղան փառաբանող
ձառեր: Դաշնակցությունը նրան հորդորում էր փրկել Արեւմտյան Հայաստանը:
Բայց նա դեռ նոր էր երգում հասել, երբ այդ նույն դաշնակցականների
համաձայնությամբ որոշում ընդունվեց քաղաքը հանձնել թշնամուն:

Ի՞նչ անուն տալ նման վերաբերմունքին. թեթեւամտությո՞ւն, թե՞
բանասարկություն:

Ռազմավարական առումով 1914թ. սահմաններին վերադառնալը կարող էր
ընդունելի համարվել, եթե վստահություն լիներ, որ թուրքերը չեն խախտի Բրեստի
պայմանագիրը: Սակայն նման վստահությունն իսպառ բացակայում էր,
մանավանդ որ Գերմանիան արհամարհելով իր հեղինակած պայմանագիրը
շարունակում էր առաջանալ դեպի Պետրոգրադ: Բացի դա, երգումում եւ
գրավված մյուս տարածքներում կուտակված էր մեծ թվով գաղթականություն,
որոնց անհնար էր Կովկաս տեղափոխել, որովհետեւ այնտեղ սով էր, իսկ
գրավված տարածքներում սննդամթերքի պաշարներ կային:

Սակայն Ազգային խորհուրդը խայծն արդեն նետել էր, զորամասերում
խմորումները, 1914թ. սահմանը վերադառնալու տրամադրությունները գնալով
ուժեղանում էին: Դրանք տիրապետող էին արեւելահայ զինվորականության
շրջանում: Տեղի ունեցավ զինվորական կարգապահության շեշտակի անկում:
Սպայությունը սկսեց կամակորություններ թույլ տալ, հրաժարվել իր
հրամանատարության տակ գտնվող զինվորականության վարքագծի համար
պատասխանատու լինելուց:

Դրան գումարվեց նաեւ դաշնակցության կամակորությունը, որը դեմ էր
զինվորական կարգապահությանը եւ պահանջում էր վերացական,
բովանդակությունից զուրկ «հեղափոխական դեմոկրատական դիսցիպլինա»:

Հայերի շրջանում այդ խմորումների ու վիճաբանությունների ժամանակ՝
փետրվար ամսին, թուրքերը սկսեցին հարձակումը:

Անդրանիկը խնդրեց կորպուսի հրամանատարությանը սպաներ տրամադրել երկրապահ զորամասին: Մերժեցին: Նույն այդ օրերին Թիֆլիսի փողոցները եւ «Չաշկա չայա»-ները, Ազգային խորհրդի աչքի առաջ, լեցուն էին դասալիք հայ սպաներով:

Երզրունում բացարձակ անհշխանություն էր, քաղաքի տերերը մի քանի թալանչի կլաններն էին: Մաֆիաներն իրենց ճանկերի մեջ էին առել քաղաքի ամբողջ կյանքը, իսկ այդ մաֆիաների ղեկավարը դաշնակցական գործիչ Տիգրան Աղամալյանն էր: Վերջինիս տրամադրության տակ էր նաեւ զորամասերի մեծ մասը, այդ թվում՝ դավաճանության կեցվածք որդեգրած 1-ին եւ 4-րդ գնդերը, որոնց կազմում կար 4500 զինվոր:

Աղամալյանը միաժամանակ Սպաների միության նախագահն էր: Նա նաեւ Կարինի Ազգային խորհրդի ղեկավարն էր, ռազմական պահեստների եւ ունեցվածքի ընդհանուր կառավարիչը:

Տ. Աղամալյանը 1914թ. սահմաններին վերադառնալու ամենաջերմեռանդ կողմնակիցն էր, բայց ոչ թե ռազմավարական նպատակահարմարության նկատառումներով, այլ խառնաշփոթ իրավիճակը, խուճապը նրան անհրաժեշտ էին ռուսների թողած ունեցվածքն իրենը դարձնելու համար:

Անդրանիկի երեւալը Կարինում փոքր-ինչ կասեցրեց դասալքությունը, եռանդուն պայքար ծավալվեց լրտեսության դեմ:

Բայց իրավիճակը շարունակում էր մնալ աղետալի: Բերդի դիրքերն ավերված էին, ռուսներն անխնամ թափված էին ամբողջ տարածքով մեկ: Ամրոցների վերակազմության գործի պատասխանատու գնդապետ Ջանփոլադյանը հազվադեպ էր բերդում լինում:

Երբ Սպաների միության անդամ Ֆարաշյանը հեռախոսով հարցնում է Տ. Աղամալյանին. «Անդրանիկը եկավ, ի՞նչ դիրք պիտի բռնենք», դաշնակ գործիչը պատասխանում է. «Շատ կարեւորություն չտաք»:

Անդրանիկի հարցին, թե որքան սննդամթերք կա, նա պատասխանում է. «Մթերք չունինք», մինչդեռ նա նույն օրերին Թորոսյան ազգանունով դաշնակցական սպային 400 փութ շաքար էր տվել: Եվ ոչ միայն նրան: Այդ ավազակները ամբողջ գնացքակազմերով շաքար եւ այլ սննդամթերք էին տեղափոխում Կովկաս ու վաճառում:

«Ազգասեր» սրիկաների ավազակախումբը եղեռնի նահատակների Կարինի եկեղեցիներում պահված գույքը վաճառում էր թուրքերին:

Երզրունում թուրքական լրտեսական ցանցի ղեկավարը Բաքվից եկած իսլամական բարեգործական միության ներկայացուցիչ Սեփդովն էր: Հաջողվեց հայտնաբերել այդ ցանցը եւ ձերբակալել մեծ թվով լրտեսների: Փրկվեց միայն Սեփդովը. նրան դաշնակ պարագլուխներից Ջավրիեւն իր հովանավորության տակ վերցրեց եւ ուղարկեց Թիֆլիս՝ «Սեյմի աշխատանքներին մասնակցելու»:

Երբ Վեհիբ փաշայի զորքերն առաջ շարժվեցին, 1-ին եւ 4-րդ գնդերը, առանց դիմադրության, լքեցին իրենց դիրքերը, որի հետեւանքով Սեպուհն իր ուժերով մնաց ռազմաձակատի թուրքական կողմում: Զորքին հարձակման տանելու Անդրանիկի բոլոր ջանքերը հաջողություն չունեցան: Նա հարկադրված եղավ զինվորներին տեղավորել քաղաքը շրջափակող փշալարերի երկայնքով փորված խրամատներում եւ խնդրեց երկու օր այդտեղ մնալ (անգամ առանց հրացան արձակելու) մինչեւ տեղ հասնեին նրանց փոխարինելու եկող երկրապահ զորամասերը:

Սակայն Անդրանիկի բոլոր հեռագրերն Ազգային խորհրդի նախագահ Վ. Փափագյանին (նորից Վահան Փափագյան) մնում էին անպատասխան: Իսկ Զավրիեւը համախորհուրդ կասկածելի վարկի տեր հրամանատարների հետ՝ Անդրանիկից պահանջում էր Էրզրումը թողնել թշնամուն:

Ի վերջո այդ խմբին հաջողվեց զինվորներին հանել դիրքերից եւ առանց Անդրանիկին տեղյակ պահելու՝ նահանջել:

Գրեթե նույն ժամանակ ծավալվեցին դեպքերը Ղարաբաղում, իսկ քիչ անց՝ նաեւ Լոռիում: Անգլիայի բիրտ ջանքերով այդ երեք տարածքների հարցերը լուծվեցին ի վնաս հայերի՝ հօգուտ աղրբեջանցիների, վրացիների եւ թուրքերի:

Հայ պատմաբանները գրեթե միահամուռ են Էրզրումի անկման գնահատականի հարցում: Թուրքյանի կարծիքով՝ եթե մինչեւ Էրզրումի անկումը դաշնակցականներն անդրկովկասյան հակահեղափոխության իրարամերժ դաշինքում «ոչ միայն մեղսակից, այլեւ խաբված կողմ էին, ապա Էրզրումի անկումից հետո նրանք հանցավոր կողմ էին միայն»: «Էրզրումի անկումը,- գրում է նա,- դաշնակցության սնանկության ապացույցներից ամենավճռականն էր»:

Անդրանիկը դառնացած գրում է. «... Կարին մտնելեն մինչեւ ելնելն տեւած է միայն վեց օր: Այս ձակատին առջեւ, Վասպուրականեն մինչեւ Երզնկայ եւ Բաբերդ, կատարուած չարիքին պատճառները պետք է փնտրել Թիֆլիսի աղջկանց գիմնագիտնի մեջ կազմուած կորպուսի եւ Ազգային խորհուրդի մոտ»:

Անդրանիկի հանդեպ դաշնակցության պարագլուխների, Ազգային խորհրդի կողմից ապերախտ վերաբերմունքի օրինակները քիչ չեն: Տպավորությունն այնպիսին է, որ կարծես Անդրանիկի հանդեպ համազգային սերը դաշնակցությանը հանգիստ չէր տալիս, եւ ամեն ինչ արվում էր նրան վարկաբեկելու համար:

Մեղրեցիների խնդրանքով Անդրանիկը (երբ Զանգեզուրում էր) նրանց օգնության է հասնում մի քանի հայկական գյուղերը կոտորածից փրկելու համար: Նա թուրքերին ջախջախիչ հարված է հասցնում եւ հարկադրում ամբողջ գյուղերով հեռանալ Պարսկաստան: Նրա մոտ է գալիս Նախիջեւանի Ազգային խորհրդի պատվիրակությունը՝ հայտնելու, որ այնտեղի հայությունը եւս կոտորածների սպառնալիքի տակ է: Նույն այդ օրերին խուլերան բառի բուն իմաստով հնձում էր Անդրանիկի մարտիկներին, այն խլեց 1500 կյանք:

Նախիջեւանցիները խոստացան 10 օրվա ընթացքում Անդրանիկին տրամադրել 15000 կռվող եւ իրենց վրա վերցնել նրանց մատակարարումը:

Անդրանիկը շարժվեց Նախիջեւան՝ թույլ չտալու, որ թուրքական բանակը ներխուժի ու խժոժություններ կատարի:

Նա իր խոստումը կատարեց, իսկ Ազգային խորհուրդը մոռացավ, ինչը Անդրանիկի գործերին ու մեծաթիվ արեւմտահայ գաղթականների կանգնեցրեց ոչնչացման վտանգի առաջ:

Չպարզաբանված, մութ է մնում Անդրանիկի եւ Դրոյի միջեւ գոյություն ունեցած լարված հարաբերությունների դրդապատճառը: Ջորավարական տաղանդների փոխադարձ հակակրանքը տվյալ դեպքում գլխավոր պատճառ լինել չէր կարող: Ավելի հավանականը իշխանության լծակներին Անդրանիկի մոտենալը Դրոյի միջոցով խափանելն էր:

Բրեստի պայմանագրի 4-րդ հոդվածը պահանջում էր, որ ռուսական զորքերը հեռանային Արդահանի, Կարսի եւ Բաթումի մարզերից, եւ տեղական բնակչությունը հանրաքվեի միջոցով որոշեր դրանց կարգավիճակը՝ այն համաձայնեցնելով հարեւան պետությունների, մասնավորաբար Թուրքիայի հետ: Ռուսաստանում եւ Անդրկովկասում տիրող վիճակը Թուրքիային հնարավորություն տվեց դառնալ այդ շրջանների ճակատագրի որոշողը, եւ նա այդ արեց հօգուտ իրեն:

Թուրքերը, մի կողմից կոչ էին անում հավատարիմ լինել Բրեստի պայմանագրի տառին ու ոգուն, իսկ մյուս կողմից առաջ էին շարժվում: Փետրվար-մարտ ամիսներին նրանք գրավեցին Մամախաթունը, Տրապիզոնը, վտանգվեց նաեւ Սարիղամիշը: Գեգեչկորին թուրքերին առաջարկեց Էրզրումը, պայմանով, որ նրանք դադարեցնեին առաջխաղացումը: Թուրքերն այդ առաջարկությունն անպատասխան թողեցին ու շարունակելով առաջանալ՝ մարտի վերջերին դուրս եկան 1914թ. սահմանը:

Տրապիզոն մեկնեց Սեյմի պատվիրակությունը՝ թուրքերի հետ բանակցելու համար: Քննարկվող հարցերի ճնշող մեծամասնությունը վերբերում էր Հայաստանին, բայց ահա թե ինչպիսին էր Սեյմի պատվիրակության կազմը՝ չորս վրացի, այդ թվում պատվիրակության ղեկավարը՝ Ա. Չխենկելին, հինգ ադրբեջանցի եւ միայն երկու հայ:

Թուրքական պատվիրակության ղեկավար վարչապետ Ռեուֆն առաջարկեց Օսմանյան կայսրությանը զիջել Էրզրումը, Կարսը, Բաթումը: Ա. Խատիսյան. «Նման պայմանագիր մենք չենք ստորագրի»: Չխենկելի. «Ոչ մի դեպքում»: Ռեուֆ. «Տվեք Արդահանը եւ Բաթումը կամ Կարսն ու Ալեքսանդրապոլն իրենց գավառներով»: Չխենկելի. «Կարսին ու Ալեքսանդրապոլին համաձայն եմ, բայց Բաթումին՝ ոչ»: Խատիսյան. «Բաթումը կարելի է տալ, բայց Կարսն ու Ալեքսանդրապոլը՝ ոչ մի դեպքում»: Ադրբեջանի ներկայացուցիչ Խան Մահմեդովը կողմ էր թուրքական թե մեկ եւ թե մյուս պահանջին:

Բանակցությունները փակուղի մտան, եւ Սեյմը իր պատվիրակությանը հետ կանչեց:

Դրան հետեւեց Օդիշելիձեի հրամանը Նազարբեկովին՝ դադարեցնել ռազմական գործողությունները: Ակնհայտ էր թուրք-վրացական գործարքը Հայաստանի դեմ:

Թուրքերն իրենց դիտավորությունները չէին քողարկում: Դրանք հայտնի էին նաեւ դաշնակցականներին: Նրանց ներկայացուցիչ Հարությունյանը հայտարարեց, թե թուրքերը «մտադրվել են հասնել Բաքու... հայերը դատապարտված են»:

Տեղյակ էին, հայտարարություններ անում էին, սակայն գրեթե ոչինչ չէին անում ոչ միայն թուրքերի առաջխաղացումը կասեցնելու, այլեւ թույլ չտալու, որ նրանց ձեռքն անցնեին վիթխարի քանակությամբ ռազմամթերք ու պարեն:

Թուրքերը մոտենում էին Կարսին, իսկ տեղի իշխանություններն ու զինվորական հրամանատարությունը մտահոգության նշան իսկ չէին դրսեւորում: Նրանք հույսը դրել էին Կարսի բերդի անառիկության վրա: Իսկապես այդ բերդը աշխարհատարածքի ամենաանմատչելի բերդերից էր, որը հնարավորություն ուներ հրետանային շրջանաձեւ համազարկերի միջոցով թշնամուն թույլ չտալ մոտենալ: Ընդ որում՝ 1918թ. Կարսն ապահովված էր պաշտպանության՝ ռազմավարական, դիրքային, ռազմամթերքի, պարենի, խմելու ջրի անհրաժեշտ պաշարներով:

Բնութագրական մի փաստ. հայերի հարցին, թե ինչու Կրաստանը անջատ պայմանագիր է կնքում Գերմանիայի հետ, Ն. Ժորդանիան պատասխանեց. «Հայ ազգը ջարդի ու սպանդի սովոր է: Իսկ մենք պարտավոր ենք փրկել մեր ազգը, նա դրան սովոր չէ»: Ռամիշվիլին բացահայտ ասում էր, որ թուրքերին կտան Արդահանը եւ Կարսը՝ Բաթումին փրկելու համար: Թուրքերի ու վրացիների միջեւ սկսվեց առեւտուր հայերի հաշվին: Այդ առեւտուրն ավարտվեց նրանով, որ թուրքերը պահանջեցին հայկական հրամանատարությունից. «Դուք պետք է հետ քաշվեք մինչեւ Կարսի ամրոցներից երկու վերստ հեռավորության վրա: Դուք չպետք է կրակ բացեք մեր զորքերի վրա, եթե նրանք առաջ շարժվեն, հակառակ դեպքում կդիմենք ուժի»:

Թուրքերը պահանջում էին հանձնել Կարսը, վրացիները համաձայնվեցին, իսկ հայերը մնացին խուլ-համր: Սեյմը միջոցներ էր ձեռնարկում ոչ թե Կարսը փրկելու, այլ քաղաքի հանձնման ժամկետները մի քանի օրով ձգձգելու համար:

Ահա այս վրացական սողացող դավաճանությունը եւ դրա հանդեպ դաշնակ ջոջերի անհասկանալի լռությունը կազմալուծեցին Կարսի պաշտպանությունը: Քաղաքը հանձնվելու էր մեկ թե մի քանի օրից, տարբերությունը մեծ է՞ր: Սկսվեց խուճապը ոչ միայն ազգաբնակչության, այլեւ զինվորության շրջանում, մանավանդ որ հրամանատարական կազմի, ինչպես նաեւ տեղի դաշնակցության ղեկավարները շտապում էին իրենց ընտանիքները քաղաքից հանել: Նրանցից ոմանք իրենք էլ հեռացան: Եվ տասնամյակներ անց սեփական

անպարկեշտությունը բոլշեիկների «քայքայիչ գործունեությամբ» արդարացնելը քառակի անպարկեշտ է:

«ՀԴ որքան անպագորգոռ էր, տիրակալ հայ իրականության մեջ, նույնքան ողորմելի ու հեզ էր Վրաստանի մայրաքաղաքի պաշտոնատեղերում:

Զնայած վրացիների դավաճանական խարդավանքներին եւ դրանց հանդեպ դաշնակների անորոշ վերաբերմունքին՝ Կարսի բերդի ոչ միայն հայ, այլեւ ռուս պաշտպանները լի էին վճռականությամբ՝ թշնամուն հակահարված տալու: Բերդի կայազորի տրամադրությունն այնքան մարտական էր, եւ ամրոցն առանց դիմադրության հանձնելն այնքան հրեշավոր ու անսպասելի, որ անհնար էր հավատալ դրան: Որոշ տեղերում բերդապահները հրաժարվեցին կատարել դիրքերը թողնելու հրամանները: Տեղի դաշնակցության գլխավոր անելիքը դարձավ դիրքից դիրք անցնելն ու զինվորներին համոզելը հեռանալ, դիրքերը թողնել թուրքերին:

Իսկապես, ամրոցը հանձնելու հրամանն այնքան անսպասելի էր, եւ դրա հետ առնչվող իրադարձություններն այնքան խճճված, որ ոչ միայն շարքային զինվորները, այլեւ հրամանատարները չէին կարողանում ըմբռնել, թե ինչ է կատարվում: Զինվորները բացեիբաց հրամանատարների երեսին շարտում էին. «Դուք մեզ ծախեցիք, դավաճանեցիք»: Կասկածի նշույլ իսկ չկա, որ բերդը հանձնելու վերաբերյալ համաձայնագիրը ընդհանուր ոչինչ չուներ ոչ ուժերի իրական փոխհարաբերության եւ ոչ էլ Կարսի պաշտպանների տրամադրվածության, մարտական ոգու հետ:

Այդ է վկայում նաեւ Նազարբեկյանի հեռագիրը Սեյմի բանակի գլխավոր հրամանատարին. «Այն, որ կառավարությունը համաձայնվել է կատարել թուրքերի բոլոր պահանջները, հուսալքել է զինվորներին: Եթե սովորական պայմաններում Կարսի ամրոցը կպաշտպանվեր առնվազն մեկ ամիս, այժմ դա անհնար է դարձել: Լուրերը, թե պատերազմին վերջ է տրված, լրիվ կազմալուծեցին զորամասերը»:

Կարսը հանձնվեց առանց թնդանոթային համազարկի, չնայած հայերը հնարավորություն ունեին Կարսում ճակատամարտ տալու եւ հաղթելու, բայց այդ չարեցին: Կարսի փոխարեն նրանք հարկադրված եղան, իրենց համար շատ ավելի անբարենպաստ պայմաններում, ճակատամարտեր տալ Սարդարապատում, Ղարաքիլիսայում եւ Բաշ Ապարանում, որոնք, սակայն, Արեւելյան Հայաստանի հայությանը փրկելով հանդերձ ջարդերից, չկարողացան այնպիսի իրավիճակ ստեղծել, որ ամբողջ հայությունը դուրս գար փրկության մայրուղի:

«Հ կառավարությունը հարկադրված էր կուլ տալ դաշնակցության պարզունակ, ոչ ձկուն քաղաքականության պտուղները: Սկսվեց դիմումների հեղեղը՝ հասցեագրված ամենատարբեր կառավարությունների: Ազգային բյուրոյի հիմնադիր-նախագահ Մեսրոպ Եպիսկոպոսը Երեւանից թաքուն անցավ Թիֆլիս՝ խնդրելու գերմանական առաքելության ղեկավար ֆոն Կրեսսի աջակցությունը: Նա ասաց, թե մոտ կես միլիոն հայ սովամահ կլինի, եթե նրանց չթույլատրվի

հավաքել Սարդարապատի, Իգդիրի եւ Դավալուի գավառների հացահատիկի բերքը: «Եպիսկոպոսի նկարագրածը ցնցող է,- տեղեկագրեց Կրեստը,- թուրքերի մտադրությունն է ամբողջ հայ ազգին քաղցի մատնել»: «Էսսադը աննշան պատրվակով մերժեց իմ խնդրանքը՝ թույլատրելու հայ փախստականներին եւ Հայկական ազգային խորհրդին վերադառնալու հայրենիք...»:

Թուրքական թալանն ու գաղթականության հոծ զանգվածի առկայությունը Հայաստանին կանգնեցրին համազգային աղետի առաջ: ՀՀԴ այդ աղետալի պայմաններում արկածախնդրական քայլեր էր կատարում, որոնք ավելի էին վատթարացնում երկրի արտաքին, որի հետեւանքով՝ նաեւ ներքին կացությունը: 1919թ. մայիսի 28-ին, այսինքն ՀՀ հռչակման տարելիցի օրը, ընդառաջելով Ազգային պատվիրակության առաջարկին, խորհրդարանը որոշում ընդունեց գոյություն ունեցող դաշնակցական կառավարությունը հայտարարել Միացյալ Հայաստանի, այսինքն նաեւ Արեւմտյան Հայաստանի, Կարսի մարզի, Դարաբաղի, Բորչալուի կառավարություն՝ քաջ գիտակցելով, որ մասամբ հանգամանքների բերումով, մասամբ էլ սեփական ապիկար քաղաքականության հետեւանքով պատմական Հայաստանի տարածքի 9/10-րդը կորցված էր: Իր այդ անմիտ, գրգռիչ քայլին համահայկական բնույթ տալու նպատակով խորհրդարանի կազմը համալրվեց 12 արեւմտահայերով՝ հիմնականում դաշնակցականներով:

ՀՀ ուներ կառավարման բոլոր կառույցները, բայց տառապում էր անիշխանության, բռնությունների, ահաբեկչության ճիրաններում: Շիրակի աշխատավորության «Բողոք Հայաստանի Հանրապետության կառավարության դեմ» անունը կրող հանրագրում նշվում է, որ կառավարման օղակները «լցված են միայն դաշնակցականներով», որոնք զբաղված են կամայականություններով, ֆինանսները նույնպես ամբողջովին հանձնված է «կուսակցամոլներին», որոնք վատնում են «ժողովրդի կոպեկները»:

ՀՀ կառավարությունը վարում էր խտրական, նեղ խմբակային քաղաքականություն, ինչը խոստովանեց անգամ ՀՀԴ Արեւելյան բյուրոն՝ նշելով, թե «արեւմտահայր կառավարության մեջ ոչ մի մասնակցություն չունի»:

Կառավարությունը բողոք բողոքի հետեւից էր ստանում, թե «կաշառքները, սոսկալի ծեծն ու ճնշումը, մարդկանց ահաբեկելը» սովորական երեւույթներ են դարձել:

«Մեր պաշտոնության 90%-ը,- գրում է «Հայաստանի աշխատավորը»,- զեղծարար է: Զեղծում ու կեղծում են ամենքը, ավան-թալան են անում բոլորը... որովհետեւ որքան շատ են զեղծում ու հափշտակում՝ այնքան բարձրանում են նոցա աստիճանն ու պատիվը»:

Դաշնակցությունն իր թուրք կուսակիցներից փոխ էր առել նաեւ հարկահավաքության եղանակները: Եղվարդի գյուղացիների հացահատիկը իբր հարկ բռնագրավելու համար հարկահանի հետ գյուղ էր գնացել «մի զորախումբ պուլեմյոտով»: Խուզարկում էին բոլոր տներն ու զավթում հացահատիկի ամբողջ պաշարը:

Ունեցվածքի ու անձի անվտանգության իսպառ բացակայության պատճառով անգամ կովկասահայ կապիտալիստները Հայաստանի տնտեսության մեջ ներդրումներ չէին կատարում:

Դաշնակցական մաուզերիստներն անպատիժ թալանում, բռնաբարում, սպանում էին:

Հայաստանի տնտեսական կյանքը կատարելապես փլուզված էր: 1913թ. համեմատությամբ ցանքատարածությունները կրճատվեցին մոտ չորս անգամ: Դրամի արժեզրկումը կատարյալ էր. այն կազմեց 50 անգամ: Արդյունաբերության համախառն արտադրանքը նվազեց 12 անգամ: Սով էր, մահացությունը գերազանցում էր ծնունդին: Ինչ վերաբերում է գաղթական արեւմտահայերին, ապա մոտ 300 հազ. հոգի կազմող այդ խավը բացարձակ անուշադրության էր մատնված. ոչ օթեւան ուներ, ոչ սնունդ, ոչ աշխատանք: Մահացությունները սահմռկեցուցիչ ծավալներ ընդունեցին. մեռնում էին քաղցից, հիվանդություններից, ցրտից: Երեւանում գործում էին ուղերթային սայլեր, որոնք ամեն առավոտ քաղաքի փողոցներից դիակներ էին հավաքում:

Ս. Վրացյանը խոստովանում է. «Վեց ամսուայ ընթացքում սովից եւ հիւանդութիւններից Հայաստանում մեռաւ մոտ 180 000 մարդ»: 1918-19թթ. քաղցին, ցրտին, հիվանդություններին եւ համաճարակներին զոհ գնաց 240 000 մարդ:

Իշխանության մարմինները գրեթե ոչինչ չէին անում այս ինքնացեղասպանության առաջն առնելու համար: Դա առանձնապէս նրանց չէր էլ անհանգստացնում: «Որքան էլ ծանր լինի իրավիճակը,- գրում է նույն Վրացյանը,- արդեն սովն ու հիվանդությունները չէին գլխավոր ցավը, որ մտահոգում էր հայ ժողովրդին: Կառավարության առջեւ կանգնած էին մի շարք պետական եւ ազգային խնդիրներ, որոնց մեջ առաջին տեղում էր սահմանների ընդլայնումը եւ ներգաղթը»:

Հայի արյունը ջուր էր ոչ միայն թուրքերի, այլեւ դաշնակցության ղեկավարների համար: Բոնապարտիկ դաշնակցական առաջնորդների համար ծովը ծնկներից էր, նրանք ի զորու էին անելու ամեն ինչ, նրանց հաղթանակները կասեցնող ուժ ոչ կար եւ ոչ էլ եղել էր: Նրանց կարծիքով ՀՀ սահմանների ընդարձակումը, Արեւմտյան Հայաստանի անկախացումը, Ծովից ծով Հայաստանի ստեղծումը «մի քանի օրվա հարց էր»:

Դաշնակցական Հայաստանում հայությունը հալվում էր, մաշվում, նվազում: Եվ դա մի ժամանակ, երբ Մուդրոսի զինադադարով Հայաստանի տարածքը հասցվեց 50 հզ. քառ կմ-ի, նրան անցան ռազմավարական եւ տնտեսական բացառիկ նշանակություն ունեցող նահանգներ:

Դաշնակցության ձախողումների պատճառներից մեկը կուսակցության գաղափարախոսության հրահեղուկությունն էր: Ինչպիսին էր այդ կուսակցության բնույթը, այն դասակարգային ի՞նչ պատկանելություն ուներ, ի՞նչ էր իրենից ներկայացնում ՀՀՂ սոցիալիզմը, ի՞նչ կապ կա այդ կուսակցության ծրագրի եւ

գործունեության միջուկ: Հարցերի այս շարքը կարելի է երկար շարունակել՝ չստանալով դրանց մեծ մասի պատասխանը: Թերեւս դա է պատճառը, որ ՀՀԴ «ոչ մի անգամ չկարողացավ կարողություն դրսեւորել ճիշտ ընկալելու պատմական պահը եւ հասկանալու դրա իսկական բովանդակությունը»:

Կուսակցության աշխատանքների մասին նրա նախկին անդամներից մեկը գրում է, թե դաշնակցության համար «լուրջ գործունեությունը նշանակություն չունի, տիրապետողը ցուցամոլությունն է, ավագակությունը»՝ նպատակ ունենալով աղմուկ բարձրացնել: Բացակայում է այնպիսի մտածված աշխատանքը, որն ի վիճակի լիներ հասկանալու արեւմտահայերի իսկական վիճակն ու գործելու ըստ այդմ:

Խոսելով դաշնակցության կոպիտ սխալների մասին՝ անարդար կլինի չնշել այն արտակարգ ծանր ու բարդ պայմանները, որում գործել ու գործում էին այդ եւ մյուս հայ քաղաքական ուժերը:

Ստ. Շահումյանը դիպուկ է նկատել. «Բախտի քնահաճույքով հայ ժողովուրդը ապրում էր ահավոր դեսպոտների՝ արյունարբու ցարի եւ սուլթանի իշխանության տակ: Նա շրջապատված էր իրենից ավելի մեծաթիվ հետամնաց ու դժբախտ թուրք եւ քուրդ ժողովուրդների կողմից՝ Թուրքիայում, եւ թաթար ու վրացի ժողովուրդների կողմից՝ Ռուսաստանում: Հետեւաբար անհրաժեշտ է քաղաքականության նավն այնպես վարել, որպեսզի այն չջարդվի այդ երկու գիշատիչների արանքում»:

Իսկ դաշնակցությունը անզգույշ էր, պայքարում՝ անփույթ, ոչ քիչ դեպքերում՝ նաեւ անպատասխանատու: Օսմանյան բանկի արկածախնդրությունից հետո, երբ կոտորվեց 6000 հայ, «Դրոշակը» հրձվանքի մեջ էր՝ «այժմ սուլթանը զգաց հայերի ուժը»:

Մ. Սերոբյանը գրում է. «Երբ ՀՀ դաշնակցություն կուսակցությունը իշխանության գլուխ անցավ, չկարողացավ զգալ, որ դա իր տեղը չէ... նախարարի դերը տարբերվում էր կուսակցական հայդուկի դերից: Եվ քանի որ նախարարների մեջ բացակայում էր պետական գործչին հատուկ գիտակցությունն ու քարոզչությունը, չկարողացավ դառնալ ոչ նախարար եւ ոչ էլ հայդուկ»:

Արշ. Մելքոնյանը, որը ՀՀ խորհրդարանի անդամ էր, գրում է. «Առանց չափազանցության կարելի է պնդել, որ հայկական հանրապետությունը իր ծագման օրից կառավարություն չի ունեցել»:

Դաշնակցությունն այդպես էլ չկարողացավ ձեւավորել պետականության շահերին ենթարկված կառավարման մեխանիզմ: Առաջին հանրապետության պետական կառույցներն այլ բան չէին, եթե ոչ կուսակցական մարմինների մասնաճյուղեր, բայց քանի որ ինքը՝ կուսակցությունը, ոչ կառավարման փորձ ուներ եւ ոչ էլ հակված էր ենթարկվելու օրենքներին եւ օրինականությանը, այդ կառույցները վերածվեցին խաղալիքների կուսակցության՝ անգամ նրա առանձին գործիչների ձեռքում: Սինքլորների, չտեսների, մինչ այդ երբեք կառուցողական գործունեությամբ, կառավարմամբ չզբաղված մարդկանց զանգվածը խուժեց

պետական հիմնարկները՝ մեծ թե փոքր պաշտոններում հաստատելու իր անձի դիկտատուրան՝ գտնելով, որ օրենքը բոլորի համար է, բացի իրենից, որ ոչ ոք թալանելու, գռվելու իրավունք չունի, բացի իրենից: Խորհրդարան էին լցվել մարդիկ, որոնք իրենց կյանքում ոչինչ չէին ստեղծել, շատերը կապված էին քրեական տարրերի հետ:

Իշխանության ողջ համակարգը տոգորված էր բռնություններով ու կամայականություններով, ինչը եւ ծնել էր համընդհանուր ինքնագլխություն: Օրենքն ու օրինականությունը փախսի նման շարտված էին պաշտոնատների մուտքերի առաջ, որպեսզի ներս մտնողները ոտները սրբեն եւ մոռանան, որ դրանցում օրինականություն, անաչառություն կգտնեն:

Ավագակախմբերը, որոնց զգալի մասի ղեկավարները դաշնակցական խմբապետներ էին, իրենց տրամադրության տակ առան բոլորին եւ ամեն ինչ:

Ծանր էր նաեւ ՀՀ արտաքին քաղաքական վիճակը: Հայաստանի կառավարողների անձարակությունը, վախկոտությունը, Թուրքիայի հանդեպ անասնական սարսափը մեր երկիրը վերածեցին Արեւմուտքի ձեռքի խաղալիքի: Ամերիկյան գեներալներին, դրանք լինեն Հասել թե Հարբորդ, այնպիսի դիմավորում էին կազմակերպում, որ կարծես եկողը ոչ թե սովորական չինովնիկ էր, այլ երկրի ղեկավար: Մեր ձեռքի տակ է ՀՀ վարչապետ Հ. Քաջազնունու եւ անգլիական գնդապետ Ֆ. Ուոքերի զրույցի սղագրությունը: Ողորմելի պաշտոն զբաղեցնող այդ անգլիացին անկախ Հայաստանի վարչապետի հետ ոչ թե զրուցում, այլ «դաս էր տալիս», անգամ ահաբեկում: Ինչ վերաբերում էր գեներալ Թոմսոնին, ապա նրա ցանկացած հանձնարարական կատարվում էր առանց առարկության:

Դաշնակ քարոզիչներն ինչ լուտանք ասես, որ չէին թափում Խորհրդային Ռուսաստանի անդրկովկասյան քաղաքականության վրա: Ժողովուրդն ասում է. «Ասողին լսող է պետք»: Կարախանը Բաքվի ղեկավարներին գրում էր, խորհուրդ տալիս, համառորեն պահանջում, որ անգլիացիներին օգնության կանչելը «միայն սադրանք կլինի թուրքերի հետագա հարձակման համար»: Այդպես էլ եղավ:

Առաջին հանրապետության դիվանագիտական առաջին խոշոր պարտությունը Բաթումի պայմանագիրն էր: Ճիշտ է՝ Բաթումում բանակցությունները սկսվեցին ՀՀ-ի համար արտակարգ ծանր պայմաններում, երբ թուրքական զորքերը մի քանի ուղղություններով ներխուժել էին Հայաստան եւ տեղի մահմեդականների հետ միասին ձեռնամուխ եղել արեւելահայության բնաջնջմանը: Բայց պայմանագրի կնքման օրերին արդեն տեղի էին ունեցել Սարդարապատի, Ղարաքիլիսայի եւ Բաշ Ապարանի ճակատամարտերը, այսինքն Հայաստանն այդ պահին այլեւս պարտված երկիր չէր: Այն պատճառաբանությունը, թե բանակցություններ վարող հայկական պատվիրակությունը այդ ճակատամարտերի մասին ոչինչ չէր լսել, թվում է քիչ հավանական: Հագիվ թե Հայաստանի ղեկավարը մի ամբողջ շաբաթ որեւէ լուր չունենար, թե ինչ էր տեղի ունեցել իր երկրում: Այժմ արդեն հաստատվում է, որ Բաթումի մեկնելու նախօրեին Թիֆլիսում հեռագիր ստացվել էր Սարդարապատի հաղթանակի մասին:

Բաթունում թուրքերը ոչ թե բանակցում, այլ պահանջում էին: Նրանց այլևս չէր բավարարում Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Թուրք պատվիրակությունը թելադրեց, իսկ հայերը ամաչկոտ աշակերտի նման փնթփնթացին, բայց «պատրոնի» ցանկությունը չմերժեցին:

Դաշնակցական քարոզչությունը տասնամյակներ շարունակ, եւ այսօր նույնպես, ինչ լուտանքներ ասես, որ չի թափել կոմունիստների հասցեին, թե նրանք Հայաստանի տարածքները բաժանեցին հարեւաններին:

Բայց ո՞րն է իրականությունը: Դաշնակցական կառավարությունն իր 2.5 տարվա գոյության ընթացքում հայոց տարածքների վերաբերյալ երկու պայմանագիր է կնքել՝ Բաթունի՝ 1918թ., եւ Ալեքսանդրապոլի՝ 1920թ.: Առաջին պայմանագրով Հայաստանին մնում էր 10 հզ., իսկ երկրորդով՝ 9.5 հզ. քառ. կմ: Հայաստանը կորցնում էր ամեն ինչ եւ կծկվում էր Սեւանա լճի ու Էջմիածնի արանքում: Բաթունի պայմանագրով Հայաստանը փաստորեն վերածվում էր Թուրքիայի հովանավորության տակ գտնվող երկրի: Թուրքիան ազատ էր իր զորքերը փոխադրելու Հայաստանի տարածքով ու հայկական երկաթուղով, Հայաստանին փաստորեն արգելվեց բանակ պահել եւ այլն:

Բաթունի բանակցությունների ու պայմանագրի մասին շատ է գրվել, եւ դա հասկանալի է, քանի որ դրանք ճակատագրական նշանակության իրադարձություններ էին: Նախ Բաթունում թուրքերը Սեյմին հարկադրեցին Անդրկովկասը անկախ հայտարարել: Բաթունի պայմանագիրը փաստորեն չեղյալ հայտարարեց Բրեստի դաշնագիրը, հաստատվեց, թե այդ դաշնագրի միայն այն կետերն էին գործածելի, որոնք չէին հակասում Բաթունի պայմանագրին: Բաթունի բանակցությունների օրերին թուրքերը հարձակման անցան եւ առանց դիմադրության հանդիպելու, գրավեցին Ալեքսանդրապոլը:

Ու նաեւ ոչ առանց թուրքերի ջանքերի Սեյմը ինքնալուծարման ենթարկվեց, եւ մայիսի 26-28-ը ստեղծվեցին անկախ Վրաստանը, Ադրբեջանը եւ Հայաստանը: Բաթունի պայմանագրով թե Երեւանը եւ թե Ալեքսանդրապոլը վերածվում էին սահմանամերձ քաղաքների՝ սահմանն անցնում էր Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղու կողքով, որը փաստորեն թուրքերի տրամադրության տակ էր: Թուրքերին իրավունք էր վերապահվում միջամտել ՀՀ ներքին գործերին, այդ թվում նաեւ ռազմական միջամտություն ցույց տալ «երկրում կարգ ու կանոն ապահովելու համար»: Պայմանագիրը պարտավորեցնում էր ՀՀ կառավարությանը «եռանդով դիմադրել հրոսակախմբերի կազմակերպմանը», զինաթափել ու ցրել բոլոր այն հրոսակախմբերը, որոնք կգան Հայաստան: Այսինքն, պայմանագիրը Հայաստանի կառավարությանը ներքաշում էր բոլշեիկների դեմ պայքարի մեջ, միաժամանակ նրան հարկադրում էր կռվել հայդուկության եւ արեւմտահայերի մարտական ջոկատների դեմ:

1916թ. երիտթուրքական կառավարությունը օսմանյան կայսրությունում վերացրեց միլիտեթների, այսինքն հպատակ ժողովուրդներին կրոնական-համայնքային որոշ ինքնավարություն տվող համակարգը, իսկ Բաթունի պայմանագրով Հայաստանում նման համակարգի առկայությունը պարտադիր

համարեցին հոգուտ մահմեդականների: Հայաստանի եւ օսմանյան Թուրքիայի միջեւ «կայուն խաղաղության եւ հարատեւ բարեկամության» այդ պայմանագիրը «ծաղր է հարյուր հազարավոր զոհերի թափած արյան»:

ՀՀԴ պարագլուխները, ճիշտ է, տխուր էին երկրի տարածքի 4/5-ը կորցնելու համար, բայց նաեւ երջանիկ էին, որ «թուրքերը ստեղծեցին անկախ Հայաստան»: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունն այն ստորագրեց տոնական պայմաններում, տոնական արդուզարդի մեջ, իսկ ապա գնաց Կ. Պոլիս, որտեղ համբուրեց սուլթանի՝ հայերի արյան մեջ թաթախված ձեռքը եւ ստացավ նաեւ կշտամբանքը՝ «Հը, խելոքացա՞ք»:

Ա. Ահարոնյանն այնքան ոգեւորված էր Բաթումի պայմանագրով եւ Կ. Պոլսում հայկական պատվիրակությանը ցույց տրված ընդունելությունից, որ հայտարարեց. «Մեր նպատակն է ազատել եւ փրկել Կովկասի հայությանը, ինչը կախված է միմիայն Թուրքիայից, որին մենք խոստովանեցինք մեր գործած սխալները եւ վստահ ենք նրա ներողամտության եւ բարեկամության վրա»:

Քծնել չի կարելի, երբ անգամ քո անձն ես ներկայացնում, բայց քծնել ժողովրդի անունից, Թուրքիայից ներողություն խնդրել, որ նրան սպանել է, որ նա զոհ է դարձել այդ նույն Թուրքիայի ցեղասպան քաղաքականությանը, պարզապես ստորություն է:

Բաթումի պայմանագրի տարօրինակությունը, սակայն, առաջին հերթին այն էր, որ այդ պայմանագիրը Հայաստանի համար խայտառակ պարտություն էր, իսկ Թուրքիայի համար՝ մեծ հաղթանակ, եւ դա մի պահի, երբ, ինչպես արդեն ասվեց, ռազմաձակատում՝ Սարդարապատում, հայերը հաղթել էին, իսկ թուրքերը՝ պարտվել:

Բաթումում թուրքերը, վրացիներն ու ադրբեջանցիները հայկական պատվիրակությանը մատների վրա խաղացրին: Հայերի քթի տակ վրացիները գերմանացիների հետ բանակցում էին՝ Վրաստանը Գերմանիայի հովանավորության տակ առնելու, մուսավաթականները թուրքերին հրավիրում էին Ադրբեջան, իսկ հայկական պատվիրակությունն այլ բան հնարել չկարողացավ եւ գերմանացիներին խնդրեց «օկուպացնել Կովկասի հայկական շրջանները»:

Միամիտ պետք էր լինել՝ հույս ունենալու, որ Գերմանիան հավատալու էր երեկվա անտանտասեր հայերին եւ հանուն նրանց լարելու էր հարաբերությունները Թուրքիայի, Վրաստանի ու Ադրբեջանի հետ:

Հասկանալի է, որ հայկական պատվիրակության այդ քայլը այլ նպատակ չուներ, եթե ոչ խույս տալ պատմության դատաստանից ճիշտ այնպես, ինչպես հայտարարությունը, թե Սարդարապատի ձակատամարտի մասին լուր չուներ:

Մի տարօրինակություն եւս. հայկական պատվիրակությունը պայմանագիրը ստորագրեց, բայց դեռ թանաքը չէր չորացել, դաշնակցական կառավարությունը սկսեց եվրոպական մայրաքաղաքների դռները թակել՝ օգնեք վերանայելու այդ չարաղետ պայմանագիրը:

Լսելով Բաթումի պայմանագրի մասին՝ Անդրանիկը հեռագրեց Նագարբեկյանին. «Վեց հարյուր տարվա ստրկության շղթան դարձյալ ձեր վիզն ու ոտքը կանցնեք ձեր ձեռքով: Չեմ կրնար այս պայմանները հանդուրժել՝ մոռանալով մեր երեսուն տարվա զոհերը եւ մեկ միլիոն նահատակները»:

Ի դեպ, դաշնակցությունը պետական հարաբերություններում հուսալի գործընկեր չէր: Դաշնակցության առաջնորդներից Ռ. Դարբինյանը գրում է. «Երբ պարզվեց, որ խորհրդային Ռուսաստանն ի վիճակի չէ բավականաչափ օգնություն հասցնել Բաքվի տեղական ուժերին՝ հետ մղելու համար թուրք-տաճկական գրոհը, ՀՀ դաշնակցությունը ամենայն դյուրությամբ տապալեց բոլշեւիկյան իշխանությունը Բաքվում եւ զինաթափ արեց զուտ բոլշեւիկյան ուժերը»:

Հայաստանում գնալով սրվում էր ներքաղաքական պայքարը՝ չնայած 1920թ. երկրում աստիճանաբար հաղթահարվում էին սովն ու համաճարակները, դանդաղ, բայց սկսում էր լուծվել գաղթականության հարցը:

Այն, որ 1920թ. մայիսին ՀՀ ձգնաժամ ապրեց, հետեւանք էր ոչ այնքան ներքին դժվարությունների, որքան Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատման:

Այս խնդրում իրար էին բախվում տրամագծորեն հակադիր երկու մոտեցումներ: Դաշնակցությունը գտնում է, որ մի քանի հարյուր տարվա ընդմիջումից հետո հայ ժողովուրդը վերջապես ստեղծել է իր անկախ պետականությունը եւ ամեն ինչ պետք է ենթարկի այն պահպանելու հրամայականին, իսկ հայ կոմունիստները գտնում էին, որ Ադրբեջանի խորհրդայնացումից, այսինքն Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո Հայաստանի անկախությունը կարող է տեսել միայն ամիսներ, եւ դավաճանություն է, որ դաշնակցությունը, հանուն իշխանության գլուխ եւս մի քանի ամիս մնալու, ճակատագրական նոր աղետների ու վտանգների դուռ է բացում հայության համար:

Կոմունիստներն իրավացի էին: Իշխանության գլուխ ՀՀ-ի եւս մի քանի ամիս մնալը, ի վերջո, հանգեցրեց Հայաստանի տարածքի կեսի կորստին: Այո, եթե 1920թ. մայիսին Հայաստանը հռչակվեր խորհրդային, մենք, ամենայն հավանականությամբ, չէինք կորցնի շուրջ 30-34 հզ. քառ. կմ:

Սակայն բոլշեւիկները բացարձակապես սխալ էին, երբ փորձեցին հարցը լուծել բռնի միջոցներով: Չնայած ընդունված է մայիսյան իրադարձությունները կոչել ապստամբություն՝ իրականում այն այդպիսին չէր եւ շատ ավելի նման էր պետական հեղաշրջմանը միտված արկածախնդրության, որն արագ ճնշվեց, որովհետեւ, բացի մի քանի կետերից, պաշտպանություն չգտավ լայն զանգվածների շրջանում:

ՀՀ վայրագ միջոցներով ճնշեց բոլշեւիկյան ապստամբության այդ փորձը: Դա դաշնակցական կառավարության առաջին եւ վերջին ռազմական հաղթանակն էր, եւ նա այն տարավ ոչ թե թուրքերի կամ ադրբեջանցիների, այլ իր ցեղակիցների դեմ: ՀՀ կառավարության համար մայիսյան իրադարձությունները նաեւ

պատրվակ էին «ժողովրդին դաս տալու»: Պատժիչ ջոկատներն արյուն էին հեղում երկրի ամենատարբեր մասերում: Դաշնակ մաուզերիստները եւ «կամավորները» զբաղված էին զանգվածային ահաբեկչությամբ: Երեւանում սպանվեց շուրջ 100 մարդ, հազարավոր մարդիկ լցվեցին բանտերը: Կարսի դաշտային դատարանները մեծ թվով կոմունիստների մահվան դատապարտեցին: Տեղի լճի հատակից հանվեց 30 դիակ: Ալեքսանդրապոլի փողոցներում արյան լճակներ առաջացան՝ չնայած ապստամբները քաղաքն առանց դիմադրության հանձնեցին: Սակայն դա պյուրոսյան հաղթանակ էր, որովհետեւ այն միաժամանակ նշանավորեց դաշնակցական վարչակարգի անկման սկիզբը: Այդ վարչակարգին չփրկեցին նաեւ երկրում կուսակցական դիկտատուրայի հաստատումն ու ժողովրդավարության անգամ չնչին մնացուկների վերացումը:

Դաշնակ պարագլուխները վայելել էին իշխանության համը, խենթացել նրա բուրմունքից եւ ոչնչի առաջ կանգ չէին առնում այն ձեռքից բաց չթողնելու համար: Եթե ՀՀ առաջին կառավարությունը ոչ միայն միակուսակցական չէր, այլեւ իր կազմում ուներ այնպիսի խոշոր, ազգանվեր գործիչներ, ինչպիսիք էին Հ. Քաջազնունին, Ա. Մանուկյանը, ապա հաջորդ հինգ կառավարություններում գնալով ավելի ու ավելի առաջին պլան դուրս եկան պաշտոնամուլները: Գործն ավարտվեց նրանով, որ վարչապետ դարձավ Ս. Վրացյանը՝ մի թարախակալած հակառուս:

Նորից անդրադառնանք Կարսը թուրքերին հանձնելուն, որովհետեւ այդ խնդրի շուրջ հաճախ են կրքեր բորբոքվում:

Հայերը Կարսի մարզը երկու անգամ հանձնեցին թուրքերին: Երկու անգամն էլ ոչ թե պաշտպանվել չէին կարող, այլ, ինչպես արդեն ասվեց, զոհ դարձան սեփական եւ օտար քաղաքագետների խարդավանքներին: Կարսի այդ հանձնումները հայ ժողովրդի եւ, առաջին հերթին, նրա ղեկավար քաղաքական ուժի բարոյական, քաղաքական խայտառակ պարտություններն էին:

Կարսի առաջին հանձնման մասին Ստ. Շահումյանը գրեց, թե զինաթափվել թուրքերի առաջ, երբ «միայն հայկական ուժերը բավարար էին» նրանց հաշիվը մաքրելու համար, ոչ միայն բացարձակ անմտություն էր, այլեւ թեթեւսովիկ անբանություն:

Քաղաքի երկրորդ հանձնումը դաշնակները պատճառաբանում են կոմունիստների քայքայիչ գործունեությամբ: Որ կոմունիստները հակակառավարական գործունեություն ծավալում էին, կասկածից վեր է: Բայց որ այդ գործունեությունը էական ազդեցություն է ունեցել, ոչ միայն կասկածելի է, այլեւ սխալ: Ինչո՞ւ: Նախ՝ կոմունիստները Հայաստանում մեծ ազդեցություն չունեին, դա վկայեց նաեւ մայիսյան ապստամբությունը: Երկրորդ՝ անհնար է, որ ժողովուրդը, հանուն ինչ-որ գաղափարախոսության կամ կուսակցության, հրաժարվի պաշտպանելու իր հայրենիքը: Այդպես կարող է վարվել միայն հիվանդ, հայրենիքի հանդեպ բթացած զգացումներ ունեցող, նրա ամբողջական հասկացությունը չընկալող ժողովուրդը:

Դաշնակցությունն իրեն դրսևորեց վախկոտ, իսկ թուրքերի առաջ, անկախ իր ունեցած կարողություններից, ծնկի իջնող կառույց: Այն պատճառաբանությունը, թե Կարսում համապատասխան ուժեր չկային քաղաքը պաշտպանելու համար, կեղծիք է: Կարսում կային 27 վաշտ, մեծ թվով դաշտային ու բերդային հրետանի, սակրավորների գումարտակ, հեծյալ գունդ եւ այլն, եւ այլն:

Նազարբեկյանը պատրաստակամ էր քաղաքի պաշտպաններին տրամադրել լրացուցիչ ուժեր: Նա գտնում էր, որ եթե թուրքերը շատ մեծ ուժերով հարձակվեն, գուցե եւ հայերը քիչ լինեին, սակայն «հաշվի առնելով թուրքական զորքերի փոքրաթիվությունը եւ մեր զորքերի ամբողջականությունը, թուրքերի առջեւ ծառայած խնդիրն այնքան էլ հեշտ չէր»: Նազարբեկյանի կարծիքով եղած ուժերը բավարար էին ոչ միայն դիմադրության, այլեւ թշնամու հանդեպ հաջողության հասնելու համար:

Դրան գումարած Կարսի բերդի ընծեռած բացառիկ հնարավորությունները՝ ռելիեֆը, ամրոցները եւ պատկառելի քանակությամբ հրետանին ու բացառիկ տեղադրությունը:

«Կարսը պաշտպանող հայկական զորամասերի զործողությունների վրա ճակատագրական ազդեցություն են ունեցել երկրամասի քաղաքական-վարչական կենտրոնից տրվող հակառուսական, որոշ դեպքերում բացարձակ դավաճանական կարգադրությունները...»:

Միանգամայն իրավացի դիտարկում է, քանի որ թուրքերը Կարսի վրա հարձակվում էին 10 800 կանոնավոր զորքով, 3000-4000 քրդերով, 36 թնդանոթով եւ 108 գնդացրով: Իսկ Կարսի բերդում տեղակայված էին զործող 110 թնդանոթ եւ 70 գնդացիր: Բերդում կար եւս 700 թնդանոթ, որ չէր օգտագործվում: Գեներալ Դիելի խոսքերով՝ «բերդի ինժեներական պատրաստությունը պետք է համարել միանգամայն բավարար, հանդերձանքի եւ մթերային պաշարները բավական էին մի քանի ամսվա համար: Բերդը սանիտարական միջոցների տեսակետից ապահովված էր»:

Երբ ծանոթանում ես Կարսը առանց դիմադրության թուրքերին հանձնելու վերաբերյալ վավերագրերին, ապրում ես դառնության ու ամոթի զգացում, դառնության՝ սեփական ժողովրդի դժբախտ պատմական բախտի, եւ ամոթի՝ հայ այն զործիչների վարքագծի համար, ովքեր իրենց վրա էին վերցրել երկրի եւ ժողովրդի բախտի պատասխանատվությունը՝ չունենալով դրա համար անհրաժեշտ ունակությունների մինիմումը:

Ապրիլի 12-ին Չխենկելին հրավիրեց Սեյմի նիստ, որին մասնակցում էին նաեւ Ա. Սահակյանը, Հ. Քաջագունին եւ Ա. Խատիսյանը: Խատիսյանը պատմում է, որ Չխենկելին հայտարարեց, թե Անդրկովկասյան սեյմը ցրելու առնչությամբ ինքը մի քանի նախնական քայլեր է ձեռնարկել. «Հայտնեցի Վեհիբ փաշային, որ Սեյմը կընդունի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը՝ հաղորդելով նրան, որ Կարսի պարպումին համար արդեն տված էի անհրաժեշտ հրամանները»... Երբ Չխենկելին վերջացուց իր խոսքը, մենք նոր հասկցանք, որ Կարսն արդեն հանձնված է տաճիկներուն»:

Երեք գործիչները զայրացած մերժում են ստանձնել իրենց առաջարկված նախարարական պաշտոնները՝ արտաքուստ որպես բողոքի նշան, իսկ իրականում՝ պատասխանատվությունից խույս տալու եղանակ, քանի որ առանց հրաժարականի էլ Սեյմը ցրվում էր, եւ նրանց զբաղեցրած պաշտոնները վերանում էին: Բայց դաշնակցական խմբակցությունն այդ քայլն էլ «շատ արմատական» համարեց եւ նրանց հանձնարարեց հաշտվել կատարված դավաճանության հետ եւ մնալ Չխենկելու կառավարության կազմում:

Ճիշտ է ասված. «Սա ոչ թե քաղաքական գործիչների վարքագիծ է, այլ անորոշության եւ քաոսի մեջ դեգերող, պատասխանատվությունից զուրկ մարդկանց պարտք: Յուրաքանչյուրին էր հասկանալի, որ Կարսի նման ամբողջի եւ հանգույցի անկումը հավասարազոր էր պատերազմական գործողությունների փոխադրմանը Ալեքսանդրապոլի մատույցները»:

Իսկ թե այդ հանձնման բարոյահոգեբանական ազդեցությունն ինչպիսին էր, պատմում է Կարսի նահանգի կոմիսար Ծամոյանը, որը նույնպես միայն սեփական անձի անվտանգության մասին հոգացող բախտախնդիրներից էր. «Անակնկալ եւ արտակարգորեն արագ հանձնման հետեւանքով, որ տեղի ունեցաւ Թիֆլիսէն եկած հրամանով, Անդրկովկասի այս մեծագոյն ամրութիւնը պաշտպանելու պատրաստուած բնակչութիւնը հարկադրուեցաւ լքել ամէն ինչ եւ ձգել Կարսը ապրիլի 25-ին, երեկոյան ժամը 5-ին՝ թողնելով Կարսը համատարած հրդեհի մէջ... Բնակչութեան նահանջի պատկերը աննկարագրելի էր»:

Ինչո՞ւ հայերը լսեցին Թիֆլիսի հրամանը եւ քաղաքը առանց դիմադրության հանձնեցին թուրքերին: Չէ՞ որ Կարսի համար կռվողների մեջ ոչ մի վրացի չկար եւ ոչ էլ ադրբեջանցի: Բոլոր կռվողները հայեր էին ու ռուսական բանակի մի քանի տասնյակ սպաներ: Ճակատի հրամանատարը նույնպես հայ էր՝ Նազարբեկյանը: Ինչո՞ւ հայ ժողովրդի բախտն իրենց ձեռքը վերցրած գործիչներն այդքան ողորմելի եւ թուլական գտնվեցին: Ինչո՞ւ տեղի իշխանություններն իրենք առաջինը գլխապատառ ճողոպրեցին քաղաքից, ինչո՞ւ չգտնվեց մի պաշտոնատար, որը գոնե զբաղվեր նահանջի կազմակերպմամբ: Պատճառներից գլխավորի մասին որոշ ժամանակ անց տեղեկագրեց Կարսի նահանգապետ Ս. Ղորղանյանը: Պաշտոնատարները «վարակված են թալանելու, ապահովվելու եւ ապա հեռանալու տենչով... ոճիրը պարունակում է իր մեջ քաղաքական, տնտեսական եւ իրավական բացատրություններ, եւ այդ բարդ ու խճճված պայմաններում է մեր օրերի քրեական տրամադրությունների գաղտնիքը...»

Չգիտեմ՝ ինչ է մտածում այդ մասին կենտրոնական կառավարությունը, ես երկրի դրությունը կատաստրոֆիկ եմ համարում»:

Թուրքերը Կարսը հիմնովին ավերեցին, ամեն ինչ, անգամ տանիքների թիթեղները թալանեցին:

Նրանք առաջ շարժվեցին. առանց դիմադրության ընկավ նաեւ Ալեքսանդրապոլը՝ չնայած Հայկական կորպուսը հնարավորություն ուներ

քաղաքի մատույցներում թուրքերին հակահարված տալ, իսկ գյումրեցիներն էլ պարտադրված չէին լինի գլուխ ծռել ասկյարների առաջ:

Բարոյական ընդհանուր փլուզում էր:

Դրությունն ավելի ծանրացավ մայիսյան ապստամբության եւ դրան հաջորդած անսանձ ահաբեկչության պատճառով:

Սակայն 1920թ. նաեւ դրական տեղաշարժեր նկատվեցին: Մայիսին Մոսկվայում բանակցություններ սկսվեցին Ռուսաստանի հետ, խորհրդային կառավարությունը համաձայնվեց ճանաչել Հայաստանի անկախությունը, նրան միացնել Արեւմտյան Հայաստանի, Էրզրումի, Բիթլիսի նահանգների մի մասը, Վանի նահանգը եւ հանդես գալ միջնորդի դերում Հայաստանի ու Քեմալի միջեւ:

Ռուսաստանը միաժամանակ բանակցություններ էր վարում Քեմալի հետ: Հայ-թուրքական սահմանները որոշակիացնելու համար առաջ քաշվեց էթնիկական սկզբունքը, սակայն համաձայնություն չկայացվեց, եւ բանակցությունները ձգձգվեցին: Օգոստոսի 10-ին կնքվեց Սեւրի պայմանագիրը, ինչը բացասական լուրջ ազդեցություն ունեցավ հայ-ռուսական հարաբերությունների վրա (Սեւրը հենց այդ առաքելությունն ուներ):

Նոր յուրօրինակություն: Մոսկվան 1918թ. նոյեմբերին չեղյալ հայտարարեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, իսկ Բաթումի պայմանագիրը դեռեւս վավերացված չէր: Ռուսաստանը Հայաստանի կառավարությանը մղում էր տիրանալու մինչպատերազմյան ամբողջ տարածքին: Դաշնակցական կառավարությունը մերժեց, թե Թուրքիայի սահմանները որոշելու են դաշնակիցները, այսինքն Հայաստանի սահմանների հարցի լուծումը ամբողջովին վերապահեց արեւմտյան պետություններին (Անտանտին):

Երեւանի այս երկատված, անորոշ կեցվածքը նրան գրկեց դաշնակից ունենալու հնարավորությունից, եւ երբ 1920թ. սեպտեմբերին սկսվեց հայ-թուրքական պատերազմը, ակնհայտ դարձավ, որ Հայաստանը լրիվ մեկուսացված էր:

Բնութագրական մի փաստ եւս: Դեռ հուլիսի 19-ին Չիչերինը Հայաստանի կառավարությանը զգուշացնում էր, որ Թուրքիան գործողություններ է նախապատրաստում Հայաստանի դեմ: Սակայն Երեւանն արհամարհեց ու անուշադրության մատնեց այդ զգուշացումը եւ շարունակեց գործել Անտանտի ներկայացուցիչների հանձնարարականներով: Դժբախտաբար ստեղծվեց այնպիսի կացություն, երբ թե Անտանտի պետությունները եւ թե Ռուսաստանը Հայաստանի դիրքորոշումները դիտարկում էին քեմալականության հանդեպ վերաբերմունքի դիրքերից: Հայաստանի կառավարության չմտածված գործողությունները նրան դրեցին աքցանի մեջ. ռուսների հետ հարաբերությունների զարգացումը Անտանտը դիտում էր որպես քաղաքականություն հոգուտ քեմալականների, իսկ Անտանտի հետ հարաբերությունների զարգացումը Ռուսաստանը համարում էր գործողություն ուղղված քեմալականների դեմ: Երկու աշխարհների առձակատման կիզակետում

Հայաստանը «ոտի տակ ընկավ» այդ առճակատման մեջ չունենալով որեւէ շահ, որեւէ նպատակադրում:

Ճշմարտությունն այն է, որ Սեւրը ապակողմնորոշեց ՀՀ կառավարությանը, նրան նետեց Ռուսաստանի գլխավոր թշնամիների գիրկը: Այդ իրողությունը, 1920թ. մայիսյան քաղաքական ճգնաժամը, կոմունիստներին զանգվածաբար ահաբեկչության ենթարկելը, խորհրդային կարգերին վճռական «ոչ» ասելը շրջադարձ առաջացրեց Մոսկվայի հայկական քաղաքականության մեջ: Նա այլեւս Հայաստանին ոչ թե պաշտպանում էր, այլ ընդհակառակը՝ երբեմն թուրքերին ու ադրբեջանցիներին գրգռում էր նրա դեմ: Առաջին հերթին այդ, այլ ոչ թե քեմալական շարժումը Արեւմուտքի դեմ օգտագործելը գլխավոր դերը խաղաց հայոց նոր ողբերգության իրողություն դառնալու գործում:

Ջրապտույտը երեւանյան դիվանագետներին այնքան պատից պատ խփեց, որ ի վերջո ուշաթափ եղան եւ դադարեցին մտածելուց ու գործելուց: Նրանք այդպէս էլ չհասկացան, որ Ռուսաստանի հետ պայմանագրի բացակայությունը ազատություն է տալիս Քեմալի ձեռքերին: Երբ Մոսկվան Երեւանին զգուշացնում էր, որ քեմալականները հարձակում էին նախապատրաստում, որ Հայաստանի սահմանի վրա կուտակվում է 50 հազ. թուրքական բանակ, Երեւանը ձեւացնում էր, թե Ռուսաստանը նպատակ ուներ ահաբեկելու եւ իր կամքը թելադրելու Հայաստանին:

Դրությունը հեշտ չէր նաեւ Ռուսաստանի համար. նա անվերապահ պաշտպանում էր քեմալականներին արեւմտյան պետությունների դեմ, բայց նաեւ դեմ էր նրանց ծրագրերին ու ոտնձգություններին Կովկասում, մանավանդ որ Քեմալի հայացքը հառված էր Բաքվին: Այս էր պատճառը, որ Մոսկվան վերապահությամբ էր վերաբերվում Հայաստանի հանդեպ Քեմալի ոտնձգություններին: Չիչերինը Լեզրանին հանձնարարում էր. «Դաշնակցության հետ ունեցած Ձեր հարաբերություններում նրանց վճռականորեն պատասխանեք, որ մենք ամենեւին չենք ցանկանում, որպէսզի Հայաստանին որեւէ վնաս հասցվի: Եթե դաշնակցականները ցանկանում են, մենք պատրաստ ենք հանդես գալ որպէս միջնորդ»: Վերջիններս այդ ցանկանալ չէին կարող, որովհետեւ ոտով ու ձեռքով շղթայված էին. միաժամանակ բանակցություններ, այն էլ ծանր բանակցություններ էին վարում աշխարհի հզորների՝ Ռուսաստանի, Անտանտի հետ եւ այդ ընթացքում պատերազմում քեմալականների դեմ:

Դաշնակցական դիվանագիտությունը Հայաստանին ոչ միայն օգտակար ոչինչ անել չկարողացավ, այլեւ նրան կանգնեցրեց փակուղու առաջ: Անգլիան հեշտությամբ օգտագործում էր Կովկասի ազգայնամոլական կառավարությունների հակառուսական կողմնորոշումները, նրանց ծանր կացությունը, որպէսզի կարողանար ձեւավորել հակառուսական նպատակաուղղվածություն ունեցող անդրկովկասյան նոր համադաշնություն: ՀՀ կառավարությունը թույլատրեց, որ այդ համադաշնության ստեղծման շուրջ բանակցությունները Ստոքքը վարեր Երեւանում, որտեղ հավաքվել էին Վրաստանի արտաքին գործոց նախարարը, Ֆրանսիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի ներկայացուցիչները:

Նույն օրերին Երեւան է այցելում Լեգրանի միսիան: Այս պայմաններում ՀՀ կառավարությունը հարկադրված էր շարունակելու «մկան քաղաքականություն» այս կողմը քչփորել, այն կողմը անցք բաց անել, որոշակիություն չունենալ եւ աննկատ մնալ:

Սակայն Լեգրանը համառ էր: Նա դաշնակ քաղաքագետների օժիքից բռնեց ու հարկադրեց կնքել նախնական պայմանագիր: Դա հոկտեմբերի 28-ին էր:

Որ Հայաստանի հետ Խորհրդային Ռուսաստանի հարաբերությունները հակաթուրքական բնույթ ունեին, վկայում է նաեւ այդ պայմանագիրը, որում ասվում է. «ՌԽԴՍՀ-ը արդարացի է համարում Թուրքահայաստանի մարզերի միացումը Հայաստանի Հանրապետությանը եւ պատրաստակամություն է հայտնում ցուցադրել իր բարեկամական ազդեցությունը... նշված մարզերը կամ նրանց մի մասը Հայաստանին միացնելու նպատակով»:

Ռուսաստանը Հայաստանին տրամադրում է օգնություն 2.5 մլն ռուբլի ոսկով, ինչպես նաեւ նավթ, վագոններ, սարքավորումներ:

Նորից ճակատային հարց. եթե դաշնակցական կառավարությունը Ռուսաստանի հետ այդ պայմանագիրը կնքելու էր, ապա ինչո՞ւ այնքան ձգձգեց, որ Քենալը Հայաստանի դեմ պատերազմ սկսեց եւ հայությանը նոր աղետներ բերեց:

Դա զավեշտային իրողություն էր՝ ուժեղի ոչ միայն անկախության կորստի, այլեւ բնաջնջման իրական վտանգ թույլի համար: Դա դժոխային կացություն էր:

Ադրբեջանին վտանգ չէր սպառնում, բայց նա գերադասեց իրեն ապահովել հիմնավորապես եւ թուրքերից բացի, «եղբայրացավ» նաեւ ռուսների հետ, Վրաստանն իր անվտանգությունն ապահովեց Արեւմուտքի հովանավորությամբ եւ Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու միջոցով: Իսկ Հայաստանը վտանգված էր բոլոր ուղղություններից ու նաեւ գժտված բոլորի հետ՝ Ռուսաստան, Վրաստան, Թուրքիա, Ադրբեջան, առանց անվտանգության որեւէ երաշխիքի ու հովանավորի: Հավանաբար այդ նույնպես դեր խաղաց, որ Հայաստանը հայ-թուրքական պատերազմում հոգեբանորեն պարտվեր մինչեւ մարտական գործողությունների սկսվելը:

Ներքին գործընթացները, հասարակությանը բզկտող խմբակային պայքարն ու հոգեբանությունը, քաղաքական կողմնորոշումների բազմակիությունը, երբ հայրն ու որդին, եղբայրները թշնամանում էին, որովհետեւ տարբեր «օրիենտացիա» ունեին ու նաեւ երկրի տնտեսական ծանր վիճակը, գաղթականությունը եւ այլն հայ հասարակությանը բարոյալքել էին, զրկել մարտունակությունից:

1920թ. հայ-թուրքական պատերազմի սկսելն ամեղձվածի վերածելը պատահական չէր՝ այն ՀՀ բյուրոյական կառավարության ամենաամնիտ, ամենաանպատասխանատու արկածախնդրություններից մեկն էր, որ չի տեղավորվում առողջ բանականության շրջանակներում եւ, իսկապես, ծնունդ էր հիվանդ երեւակայության:

Ահա թե ինչ է գրում Խ. Թութունջյանը. «Ստանձնելով պատերազմական եւ ներքին գործոց նախարարութիւնները միաժամանակ, (Ռուբէնը) իր ձեռքերուն մէջ կենտրոնացրած էր ողջ իշխանութիւնը: Բարձր էր Ռուբէնի հմայքը ամէնուրեք, բոլշեւիկեան ապստամբութեանը զսպումէն ետք կը բացուէր հեռանկարը երկրի ընդարձակման: Բոլորին հայացքը ուղղուած էր Բարգոզեան լեռներէն անդին, դեպի այրիացած Տաճկաստան, Վան-Մուշ-Էրզրում, որոնց ազատագրումը մոտ ժամանակի խնդիր կը նկատուէր: Արդէն իսկ նախատեսուած էին կողմերը եւ նշանակուած էին նահանգապետները, որոնք կոչուած էին ստանձնելու իշխանութիւնը, անմիջապէս որ գրաւուէին թրքապատկան հայ հողերը եւ հանրապետութեան կցուէին: Ռուբէն կը նկատուէր հայ զանգուածներուն աչքին՝ զիրենք Ավետեաց երկիր առաջնորդողը, որպէս վերին տերը հայկական բանակի»:

Սեփական սրբությունը փառաբանելուց հետո սկսվում է լուտանքը ուրիշների հասցեին, որ «երկնքից իջած այդ հրաշքին» թույլ չտվեցին հայ ժողովրդին նվիրել Ավետյաց երկիրը:

Մի՞թե արկածախնդրություն, եթե ոչ դավաճանություն չէ, երբ ՀՀ փաստորեն պատերազմական դրության մեջ էր Ադրբեջանի, Վրաստանի, Խորհրդային Ռուսաստանի հետ, երբ թուրքերը ՀՀ սահմանին կենտրոնացրել էին 50000-ոց բանակ, երբ Հայաստանի ներսում գրեթե բացահայտ գործում էին մահմեդականների գործակալներն ու զինված հրոսակախմբերը, երբ երկիրը նոր էր դուրս եկել քաղաքական ճգնաժամից եւ, վերջապէս, իմանալով, որ Մ. Քեմալը նորանոր ուժեր է բերում Հայաստանի վրա հարձակվելու համար, խախտել սահմանը եւ առիթ տալ պատերազմի, որին Հայաստանը ոչ մի առումով պատրաստ չէր: Ինչո՞ւ: Արդյոք Երեւանում դա չէի՞ն հասկանում: Իհարկէ, հասկանում էին: Այդ արկածախնդրությունը հեռավոր եւ դալուկ հույս ուներ վերածնել ՀՀ՞ որպէս քաղաքական ուժ՝ այսինքն հաղթահարել նրա վարկազրկվածությունը: Չհաջողվեց եւ չէր էլ կարող հաջողվել: Ու սկսվեց կոկորդիլոսի արցունքաթափությունը, թե ռուսների մեղքով հայկական «բանակը փոխանակ յաջողելու իր արշաւը ուղղելու դէպի Էրզրում, ծանրագոյն հարուածներ կրեց Կարս բերդաքաղաքի առջեւ, եւ Շիրակն ու Արարատեան դաշտը դարձան թշնամի նուաճողական բանակին ոտքի կոխան»:

Պատմությանը հայտնի՞ է մի երկրորդ բանակ, որը թշնամու սահմանը ոտ դնելուց հետո այլեւս հետ փախչի եւ թշնամուն տա իր երկրի 3/4-ը: Եվ այս քաղաքականության հեղինակներին, փոխանակ պատմության աղբարկղը նետելու, շարունակում են փառաբանել: Մի պահ ընդունենք, որ բոլշեւիկները հայկական բանակում լայն քարոզչություն էին ծավալել, բայց կարո՞ղ էր այդ քարոզչությունը վճռական ազդեցություն ունենալ, եթե հայ զինվորը համոզված լինէր, որ այդ պատերազմը կենսական էր Հայաստանի համար, եւ հավատար այն կառավարությանը, որն իրեն կռվի էր տանում: Եվ, վերջապէս, այդ ի՞նչ կառավարություն էր, ինչ փառաբանված ռազմական նախարար, որոնք մահու-կենաց պատերազմ են սկսում, առանց իրենց նեղություն տալու իմանալու սեփական բանակում իշխող տրամադրությունները: ՀՀ դաշնակցության անպատասխանատվությունն ու անազնվությունը ծնեցին Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Հարկ է նշել, որ Օլթիի շրջանում հայկական գործերը Մազմանյանի հրամանատարությամբ հաջող կռիվներ մղեցին թուրքական թվապես գերազանց ուժերի դեմ, եւ որ նրանք, ի վերջո, հարկադրված եղան նահանջել, ոչ թե իրենց, այլ կառավարության մեղքն էր, որն այդպես էլ չկարողացավ անհրաժեշտ համալրում ապահովել՝ Սարիղամիշի ուղղությամբ ուժեր կենտրոնացնել եւ թույլ չտալ, որ թշնամին կտրեր Մազմանովի թիկունքը: Եվ այդ այն պայմաններում, երբ Հայաստանի կառավարության տրամադրության տակ կար 40000-ոց լավ զինված, պատերազմների բովով անցած բանակ: Ընկան նաեւ Արդահանը եւ Սարիղամիշը: Դասալքությունը զանգվածային բնույթ ստացավ: Այդ ծանր պահին բոլշեւիկների գործունեությունը քաղաքում անթույլատրելի բնույթ ընդունեց: Սեփական կառավարության հանդեպ հավատ ու վստահություն չունեցող զանգվածին մոլորեցնելը դժվար գործ չէր: Դաշնակցության հանդեպ բոլշեւիկների ատելությունը, որ բացահայտ առձակատման վերածվեց մայիսյան օրերին, բացասական դեր խաղաց հայ-թուրքական պատերազմում:

Ռազմական գործողությունների կազմակերպման գործում եղած աղաղակող թերությունների, ապաշնորհության հետեւանքով հայերը տվեցին խաղաղ բնակչության վիթխարի կորուստներ: Գաղթականությունը լցվեց Կարս, հուսալքությունը տիրապետող դարձավ:

Այդ ընթացքում դաշնակ պարագլուխների գլխավոր հոգսը ոչ թե թուրքերի հարձակմանը հակահարված տալն էր, այլ «բոլշեւիկյան վտանգի» վերացնելը: Նրանք այդ վտանգով ահաբեկում էին նաեւ վրաց մենշեւիկներին: Ռուբեն փաշան Թիֆլիսի մենշեւիկներին ասում էր, թե հայ-թուրքական պատերազմը մի շաբաթից ավելի չի տեւի, իսկ եթե «դուք մեզ չօգնեք, մնալով մենակ, ստիպված կլինեք դիմելու բոլշեւիկներին, որից հետո դուք՝ վրացիներդ եք մնալու մենակ»:

Անհասկանալի բան կատարվեց: Արդեն նշվեց, որ Կարսը ռազմագիտական չափանիշներով լրիվ պատրաստ էր թշնամուն հակահարված տալու: Այստեղ էր հավաքվել հայ ռազմական գործիչների ընտրանին՝ Արարատյանը, Բեկ-Փիրումյանը, Նազարբեկյանը, Հովսեփյանը, Սիլիկյանը, Ղորղանյանը եւ ուրիշներ:

Ի պատիվ նրանց՝ հարկ է նշել, որ մարտական պատրաստության էին բերված բոլոր ամրությունները, մի քանի հարյուր հրետանի, կար բավարար քանակությամբ ռազմամթերք, տազնապալի չէր նաեւ սննդամթերքի վիճակը: Կարս էին բերվում ռազմական նոր ուժեր, գալիս էին կամավորներ, քաղաքի բնակչությանը զենք բաժանվեց, դաժան պայքար ծավալվեց դասալքության դեմ, մի քանի դասալիքներ կախաղան հանվեցին քաղաքի մարդաշատ մասերում: Կարս հասան Մազմանյանի, Ջուրաբյանի գնդերը եւ այլն, եւ այլն: Սակայն հոկտեմբերի 28-ին տեղի ունեցած ռազմական խորհրդի նիստում որոշվեց քաղաքը հանձնել թշնամուն: Դեմ արտահայտվեց միայն Մազմանյանը, որը եւ նույն գիշերն ինքնասպան եղավ: Դաշնակների պնդումը, թե Մազմանյանը ինքնասպան եղավ, երբ «Կարսի մօտերը իր զինուորները մերժեցին կռիւր շարունակել», ճիշտ չէ, նա ինքնասպանություն գործեց Կարս քաղաքում:

Երկու օր անց Կարսը թշնամուն հանձնվեց նորից առանց որեւէ դիմադրության: Սկսվեց փախեփախն ու խուճապը, Ախուրյանի ձորը վերածվեց եղեռնադաշտի, այնտեղ խռնված բնակչությունը կոտորվում էր գնդացրային կրակահերթերից:

«Ձորը լցված էր անգեն եւ անպաշտպան ժողովրդով,- գրում է ականատեսը: - Ասես քաղաքով ահռելի փոթորիկ էր անցել, հավաքել, քշել կին, երեխա, տղամարդ ու ձորն էր լցրել... գետը բերում էր դիակներ... Հարազատներին կորցրածները ողբում էին ու բարձր կանչում նրանց... Թուրքերը փակել էին ձորից Ալեքսանդրապոլ տանող միակ ճանապարհը, գրավել էին Մազրա գյուղը, երկաթգծի կայարանը, ձորի կամուրջները»:

Ազգերի պատմության մեջ դժվար է գտնել նման խայտառակ, աղետաբեր վարքագիծ: Ո՞վ էր մեղավորը, ի՞նչն էր պատճառը. կառավարությունը, բոլշևիկների քարոզչությունը, ժողովրդի հուսալքությունը, հայրենասիրության պակասը, թուրքերի ուժերի թերագնահատո՞ւմը, թե՞ նրանց հանդեպ անզսպելի վախը: Ո՞վ կարող էր երեւակայել, որ ընդամենը երկու ժամում դաշտից հարձակվող թուրքերը կհասնեին լեռնաշղթայի բարձունքը եւ գրեթե առանց կռվի կտիրանային Կարսի նման բերդին: Բավական էր, որ գործեին միայն Ղարադաղում տեղակայված թնդանոթները, եւ ոչ միայն քաղաքը պաշտպանված կլիներ, այլև թուրքերը չէին կարողանա մոտենալ բերդին:

Բայց հայ հրետանավորներն ու զորքը լքել էին դիրքերն ու անհետացել:

Այդ օրերին Գարեգին Հովսեփյանը մեկնում է Կարս՝ հայ զինվորներին քաջալերելու առաքելությամբ: Նա պատմում է, որ կայարանում տեղի ունեցավ ռազմաճակատ մեկնողների հավաք: «Ձորքի արտաքինը լավ էր, մաքուր հագնված եւ հրացաններով... մեր զորքերը թվական առավելություն ունեին, բայց չկռվեցին: Մեղավորը 5-րդ գնդի երկու վաշտերն էին..., որոնք առանց հրամանատարներին լսելու հետ էին քաշվել՝ շփոթություն առաջ բերելով»: Զինվորական հրամանատար Փիրումյանի եւ նահանգապետ Ղորղանյանի հարաբերությունները խիստ լարված էին. առաջինը «կամենում էր իր ձեռքի մեջ ամփոփել ամբողջ իշխանությունը»:

Մի քանի օր անց քաղաքում հայեր գրեթե չէին մնացել՝ ոչնչացվել կամ փախել էին: Կամավոր թշնամուն հանձնվեց հայոց բանակի գրեթե ողջ հրամանատարությունը, որոնց տեղափոխեցին Թուրքիա: Հետագայում հաջողվեց նրանց մեծ մասին ազատել թուրքերի ճանկերից ու վերադարձնել:

Կարսի անկումը Հայաստանի մեկուսացումը վերածեց քաղաքական եւ տնտեսական շրջափակման: Ղաշնակցական կառավարությունը դիմում դիմումի հետեւից էր ուղարկում ամենատարբեր կառավարությունների, Ա. Սիարոնյանը Եվրոպայում դռներ էր բախում, օգնություն աղաչում, բայց ապարդյուն: Այդ առնչությամբ հատկանշական է Ստոքսի պատասխանը, թե Եվրոպան կամ չի կարող, կամ էլ չի ցանկանում օգնել Հայաստանին: «Երկու դեպքում էլ ձեզ համար հետեւանքը նույնն է: Քանի որ այդ այդպես է, ուրեմն դուք ազատ եք անելու այն ամենը, ինչ որ հարկ կհամարեք ձեր ժողովրդին փրկելու համար»:

Դաշնակցությունը մինչեւ օրս էլ չի ընդունում, որ հայ-թուրքական պատերազմում Հայաստանի պարտության գլխավոր պատճառը ոչ թե մարդկային եւ նյութական հնարավորությունների պակասն էր (Կարաբեքիրի բանակը ոչ թվապես եւ ոչ էլ նյութական ապահովությամբ հայկականին չէր գերազանցում), այլ բարոյական եւ կազմակերպչական քառսը՝ չնայած այն բանի, որ հայերը թուրքերի հանդեպ ունեին մի մեծ առավելություն՝ նրանք պաշտպանում էին իրենց հայրենիքը: Հ. Տասնապետյանն ու ՀՀԴ ողջ քարոզչությունը ուրիշ կարծիքի էին: «Հակառակ հայ բանակային կարգ մը միաւորներու ցուցաբերած յամառ ու հերոսական դիմադրութեան՝ հայթուրքական պատերազմը պիտի վերջանար Հայաստանի պարտութեամբ»:

Ինչո՞ւ: Կրկնում եմ՝ ամբողջությամբ վերցրած՝ թուրքական բանակը հայերի հանդեպ առավելություն չուներ:

Եվ ապա, եթե հայկական բանակը լավ կռվում ու հերոսական դիմադրություն էր ցույց տալիս, ապա ինչի՞ համար էր մեղադրանքը, թե բոլշեւիկյան քարոզչությունը «վարակած էր նաեւ բանակային միաւորներ, որոնք կը մերժէին կռուիլը»:

Կարսի օրինակին հետեւեց Ալեքսանդրապոլը, որը թուրքերին դիմավորեց աղուհացով: Այստեղ թուրքերի օկուպացման 37 օրը Շիրակի պատմության ամենադժբախտ շրջանն էր: Ալեքսանդրապոլի գավառային կոմիտեն 1920թ, դեկտեմբերի 24-ին տեղեկացրեց. «Չտեսնված ու չլսված ոճրագործություններ են տեղի ունենում գավառում: Բոլոր գյուղերը թալանված են: Ոչ անասուն կա, ոչ հացահատիկ եւ ոչ էլ շորեղեն ու վառելիք: Գյուղերի փողոցները լիքն են դիակներով: Ասքյարները ստիպում են ծնողներին իրենց տալու 8 տարեկան աղջիկներին, 20-25 տարեկան տղաներին: Առաջիններին բռնաբարում են, իսկ երկրորդներին գազանաբար սպանում ծնողների ներկայությամբ: Մինչեւ 40 տարեկան աղջիկներին ու կանանց տարել անհետացրել են, իսկ մինչեւ 45 տարեկան տղամարդկանց սպանել: Գյուղերում մարդ չկա... Ալեքսանդրապոլում հանեցին բոլոր հեռագրական սարքավորումները, քաղաքը կտրեցին արտաքին աշխարհից եւ սկսեցին ոչնչացնել ազգաբնակչությանը: Քաղաքից գյուղ, գյուղից քաղաք տանող բոլոր ճանապարհները փակ են: Ոչ գյուղում սննդամթերք մնաց, ոչ քաղաքում: Դա դիտավորյալ արվեց, որպեսզի բնակչությունը սովամահ լինի: Թուրքերը զոհ են՝ դիակներն այնքան շատ են, որ հնարավոր չի հավաքել»: Գրեթե բոլոր ջրհորերը լցված էին դիակներով, Ջաջուռի թունելը մաքրելու պատրվակով հայ երիտասարդությանը հավաքում էին, սպանում կամ տաժանակիր աշխատանքի ուղարկում Թուրքիա:

Հայաստանի վարչակարգը, նրա կառավարությունը ատելի էին դարձել ժողովրդին, նրանք այլեւս տարբեր լեզուներով էին խոսում եւ իրար չէին հասկանում:

Անկասկած, այս գործում դեր խաղացին նաեւ հայ-ռուսական օրեցօր լարվող հարաբերությունները եւ ըստ այդմ էլ ուժեղացող բոլշեւիկյան քարոզչությունը, սակայն գլխավոր պատճառն այդ չէր, այլ դաշնակցական կառավարության բաշիբոզուկ, հիմնախնդրից զուրկ տարափոխիկ քաղաքականությունը: Այդ

կառավարությունը փողոցային կնոջ նման տրվում էր բոլորին ու ամենքին, միայն թե մնար իշխանության ղեկին:

Ահա թե իս. Թութունջյանը ինչ գնահատական է տալիս այդ պարտության N 1 մեղավորին՝ պաշտպանության նախարար Ռուբենին. «Ղուրանի (Տարոնի) մէջ Ռուբէն նշած էր յաջողող Սերոբի եւ Գուրգէնի, Հրայրի եւ Անդրանիկի, որոնց իւրաքանչիւրէն ժառանգած է բնաւորութեան որոշ գիծեր: Շրջապատին վրայ տիրելու իր անգիջելի բնական շնորհքով առավելապէս կը յիշեցնէր Անդրանիկն ու Արամը... Ռուբէնը կը վայելէր ոչ նուազ վստահութիւնը իր ժողովրդին... իր մտաւոր պատրաստութեամբ եւ Հայաստանը ու անոր դրացի երկրներն ու ժողովուրդները ճանաչելու տեսակէտը ան կը գերազանցէր իր ժամանակի հայ բոլոր գործիչները»: Եվ ապա «իր քաջ հայդուկապետի համբավը Ռուբէնը շահեցավ 1907-ի մայիս ամսուն Սուլուխի կռուին, երբ կողք Գեւորգ Չաուշին, ան կը դիմադրէր թուրք զինուորական Քեոսե Պինպաշին եւ կը յաջողէր ետ մղել թշնամին: Ժողովրդական երգը սոյն դէպքէն անմիջապէս ետք պիտի պանծացնէր երկու հայդուկապետերուն խիզախ խոյանքները»: «Ու ինչպէս Արամին Վասպուրականի մէջ, Ռուբէնին վիճակուած էր Տարոնի մէջ դառնալու 1915-ի եղեռնի շրջանի հայութեան ազատարարը»: «Արդարեւ, 1919-1920 շրջանին Հայաստանի Հանրապետութեան ամէնէն ազդեցիկ եւ տիրական կուսակցական դէմքն էր ան, որ ժողովրդին ամենամեծ յոյսեր կը ներշնչէր...»:

Ուռնա~, դաշնակցություն: Գոնե ինքդ քեզ խղճա:

Իսկ ահա թե ինչ է գրում Լեոն այն պահին, երբ ինքը Երեւանում էր, եւ Ռուբենը նշանակվել էր նախարար. «Բոլշեւիկյան ապստամբությունից հետո Հայաստանում հաստատվեց ռազմական նախարար Ռուբեն փաշայի դիկտատուրան», որի ընտանիքը հարուստ էր: «Կատարելապես անհավատալի պատմություններ էին անում այդ մարդու կատարած հափշտակությունների մասին: Սենատորական (խորհրդարանային) քննություն նշանակվեց, որ շեֆերի եւ նախարարների մեծամեծ զեղծումներն ու յուրացումներն էր բաց անում: Եվ ահա մաուզերիստները սկսում են սպառնալից նամակներ ուղարկել քննիչներին, որ նրանք չհամարձակվեն մեղադրել իրենց ընկերներին»:

Վերադառնանք ՀՀ քաղաքական վիճակին:

Ծնվում է դաշնակցության սուրբ սրբոցը: Ստոքսի հետ հանդիպումից հետո ՀՀ կառավարության ներկայացուցիչը Թիֆլիսից հեռագրեց. «...Եվրոպան կամ չի ուզում, կամ չի կարող մեզ օգնել, եւ մենք պիտի մեր գլխի ճարը տեսնենք... Եթե ուժ ունենք, պիտի կռվենք ու հաղթենք, եթե ոչ՝ մնում է միջոցներ ձեռնարկել որեւէ համաձայնության գալու թուրքերի հետ, որն ըստ երեւույթին դուք որոշել եք...»:

Դաշնակցական կառավարությունը վերջնական ընտրությունը կատարել էր՝ բոլորի, անգամ թուրքերի հետ՝ ընդդեմ Ռուսաստանի: Նման կողմնորոշումը դուռ բացեց կառավարությունում վրացյանականության հաղթանակին, եւ Ս. Վրացյանը դարձավ վարչապետ: Ահա այս չարադետ գործչի կառավարությանը նկատի ունենալով Անգլիայի գործակալ Կորտը, երբ Ստոքսին գրում էր, թե այդ կառավարության ղեկավար անդամների կարծիքով «...իրենց եւ Մ. Քեմալ փաշայի

միջուկ կնքված հաշտությունը դաշնակիցների միջնորդությամբ կարող է մշտական լինել...»:

Նրանք հայտարարեցին, որ ոչ մի կասկած չպետք է լինի իրենց հակաբոլշեիկյան զգացմունքների նկատմամբ: Ընդհակառակը, նրանք պատրաստ են օգնելու նույնիսկ թուրքերին, եթե վերջինները մտադիր են կռվելու բոլշեիկների դեմ»:

Սա լուր հայտարարություն չէր, այլ գործունեության նպատակադրում: Դաշնակցական կառավարությունն իր դիվանագիտական ներկայացուցիչներին ցուցում տվեց հիմքեր ստեղծել՝ համաձայնեցնելու Հայաստանի, քենալականների եւ անգլիական շահերը, միջոցներ գտնել կապեր հաստատելու քենալականների հետ եւ վստահություն ներշնչել, որ Հայաստանը պատրաստ է համագործակցելու նրանց հետ:

«Յառաջ» թերթը 1920թ. նոյեմբերի 30-ին գրում է. «Իր փրկության համար Հայաստանն ունի մի ճանապարհ՝ գտնել անմիջական կետերով մի ընդհանուր լեզու իր հարեւանի՝ թուրքի հետ: Եթե հայ ժողովուրդը կամենում է ապրել ու ապահովել իր պետական եւ ֆիզիկական գոյությունը հարատեւորեն, նա պետք է ունենա ոչ թե ռուսական, այլ թուրքական օրինակագրություն»:

Հանուն այդ «օրինակագրության»՝ Վրացյանի կառավարությունը գնաց պատմությանն անհայտ ստորության՝ մի կողմից պայմանագիր կնքեց՝ իշխանությունը կոմունիստներին հանձնելու, իսկ մյուս կողմից՝ թուրքերին նվիրեց ներկա Հայաստանի տարածքի 2/3-ը: Ըստ կնքված համաձայնագրի՝ Նախիջեւանում եւ Շարուրում հանրաքվեի միջոցով պետք է հաստատվեր առանձին վարչություն, ինչը նշանակում էր այդ տարածքների փաստացի անցում Ադրբեջանին: Հայաստանը զինաթափվելու էր, նա զրկվում էր բանակ ունենալու իրավունքից: Հայաստանը նաեւ զրկվում էր դիվանագիտական ներկայացուցչություններ պահելու ինքնիշխանությունից: Չեղյալ էր հռչակվում Սեւրի դաշնագիրը: Թուրքիային իրավունք էր վերապահվում ռազմական գործողություններ վարելու Հայաստանի տարածքում, նրա վերահսկողության տակ էին դրվում Հայաստանի երկաթուղին եւ տրանսպորտի մյուս միջոցները:

Դաշնակցությունը Հայաստանին հարկադրեց ծանր, շատ ծանր գին վճարել այն բանի համար, որ վերջապես համաձայնվում էր հեռանալ իշխանությունից:

Տարօրինակը նաեւ այն է, որ մերօրյա ՀՀ-ի որոշ քաղաքական ուժերի մեղադրում է նույն մեղքերի համար, որոնց հիմնադիրն ու ճաշակի ձեւավորողը եղել է ինքը:

Դեռեւս ոչ մի հայ քաղաքական ուժ ժողովրդի, հայրենիքի շահերն այնքան բացարձակ, այնքան անբարոյական եղանակով չի ենթարկել իր կուսակցական շահերին, այնքան մեծ վնաս չի հասցրել սեփական ժողովրդին, որքան ազգային, ազգի միակ առաջնորդ հորջորջված դաշնակցությունը:

Թվում էր, թե հայ կոմունիստներն ու դաշնակցությունը գտել էին քաղաքակիրթ եղանակ իշխանությունը փոխանցելու համար: Իհարկե, այս գործում վճական դերը խաղաց Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը՝ հանձինս արտաքին գործերի նախարար Գ. Չիչերինի եւ ռուսական կառավարության ներկայացուցիչ Բ. Լեգրանի: Վերջինիս լիազոր-ներկայացուցիչ նշանակվելու կապակցությամբ Չիչերինը ՀՀ կառավարությանը գրեց, որ նրա խնդիրն է Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ «բարիդրացիական հարաբերությունների հաստատումը, բոլոր վիճելի հարցերի կարգավորումը, եղած հակամարտությունների վերացումը եւ երկու հանրապետությունների միջեւ վերջնական խաղաղության ամրապնդումը»:

Հայաստանի կառավարությունը համաձայնվեց հայ-ռուսական Մոսկովյան բանակցությունները տեղափոխել Երեւան, չնայած լավ գիտեր Մոսկվայի այդ առաջարկության իսկական շարժառիթը՝ բանակցությունները քեմալականների հետ: Երեւանում հասկանում էին, որ Թուրքիա-Հայաստան երկրնտրանքում Մոսկվան առավելությունը տվել է Թուրքիային, սակայն նաեւ չի հրաժարվում Հայաստանից, որովհետեւ այն շատ կարեւոր ռազմավարական նշանակություն ուներ ոչ միայն Թուրքիա-թուրանական ցեղերի միջեւ տարածքային կապ թույլ չտալու, այլեւ հիմք էր Կովկասը հնազանդության մեջ պահելու համար:

Բանակցությունները Երեւան տեղափոխելու մյուս պատճառը հայկական պատվիրակության կեցվածքն էր: Ալ. Մյասնիկյանի խոսքերով՝ Լեւոն Շանթը երդվյալ հակառուս էր, ինչը բանակցությունները մտցրին փակուղի: Մոսկվայում մտածում էին, թե դա գալիս է ԱՄՆ-ից, եւ որոշեցին բանակցությունները շարունակել անմիջական կառավարության հետ: Բայց պարզվեց, որ ձգձգումների պատճառը հենց այդ նույն կառավարությունը չի, որը Լեգրանին երկու ամիս թույլ չտվեց մտնել ՀՀ:

Սկզբունքորեն դեմ չլինելով բանակցությունները Երեւան տեղափոխելուն՝ ՀՀ կառավարությունը միաժամանակ հասկանում էր, թե այդ քայլն ինչպիսի արձագանք կունենա Արեւմուտքում: Նույնիսկ կային կարծիքներ, որ ռուսներին պետք է պատասխանել «վճռական ու խրոխտ», ժամանակ շահել Անգլիայից ռազմամթերք ստանալու համար: Վրաստանում Հայաստանի ներկայացուցիչ Տ. Բեգզադյանը նույնիսկ կոչ էր անում պատրաստ լինել դիմադրելու ռուսական զորքին, որի հարձակումը Հայաստանի վրա սպասվում էր Ադրբեջանից՝ Ղազախի կողմից:

Բանակցությունները ձգձգվում էին: Լեգրանը սկսեց անցնել նաեւ սպառնալիքների, թե հետագա քաշքշելը «կարող է միանգամայն անցանկալի բարդություններ առաջացնել երկու հանրապետությունների ժողովուրդների հարաբերություններում, եւ այդ դեպքում կատարվածի համար պատասխանատվությունը կընկնի Հայաստանի կառավարության վրա»: Դրան հաջորդեցին 11-րդ կարմիր բանակի գործողությունները Ադրբեջանին սահմանակից հայկական շրջաններում:

ՀՀ գործունեությունը, դրա հետեւանքով նաեւ ՀՀ կառավարության գործունեությունը 1920 թվի երկրորդ կեսին իրենց հետեւանքներով բացարձակ անլուրջ, անպատասխանատու, արկածախնդիր եւ ազգադավ էին: Չունենալով

պատերազմելու ոչ իրական հնարավորություն, անհրաժեշտ ռազմատնտեսական հնարավորություն՝ Երեւանը աջ ու ձախ առձակատումների էր գնում:

Նա անվերապահ մերժեց Ադրբեջանի վերջնագիրը՝ իր զորքերը հետ քաշելու Ղարաբաղից ու Ջանգեզուրից: Ճիշտ վարվեց, բայց նաեւ չմտածեց դրա հետեւեանքները չեզոքացնելու մասին: Երբ ռուսական զորքերը հարձակման անցան, հայկական բանակը որեւէ դիմադրություն ցույց չտվեց: Երեւանը խնդրեց զինադադար եւ օգոստոսի 10-ին Ա. Ջամալյանն ու Լեզրանը ստորագրեցին համաձայնագիր, որով կարմիր բանակը ժամանակավորապէս գրավեց Ղարաբաղը, Ջանգեզուրը եւ Նախիջեւանը՝ որպէս «վիճելի շրջաններ»: Երեւանը անգամ կհասկանար, որ Ռուսաստանը դրանով շրջափակում էր Հայաստանը եւ հասկացնում, թէ փրկության ելքը մեկն է՝ խորհրդայնացում: Բայց ՀՀԴ կառավարությունը չուզեց հասկանալ, որովհետեւ Երեւանում Անգլիայի ներկայացուցիչ մի ոմն հարյուրապետ Կրեյսի ՀՀ վարչապետ Հ. Օհանջանյանին ասաց, թէ ռուս-հայկական համաձայնագիրը Լոնդոնում հօգուտ Հայաստանի չի ընդունվում: Անգլիական մի ուրիշ ներկայացուցիչ՝ Լյուկը, այդ համաձայնագիրն անվանեց Հայաստանի կողմից դավաճանություն Անգլիային եւ նենգություն:

Տխրահռչակ Քերզոնը հայտարարեց, թէ այդ համաձայնագիրը «պետք է համարվի վստահության (Անգլիայի) նկատմամբ դավաճանություն... այն գրեթէ հավասար է Մեծ Բրիտանիայի հանդէպ դավաճանության... եւ դա արվեց մի պահի, երբ Հայաստանը դեռ նոր էր Բրիտանիայից ստացել մեծաքանակ ռազմամթերք»:

Հ. Օհանջանյանը հասկանում էր, որ ոչ թէ Հայաստանն էր դավաճանել Անգլիային, այլ Անգլիան՝ Հայաստանին, որը Ղարաբաղը կորցրեց, որովհետեւ Անգլիան Անդրանիկին թույլ չտվեց այն գրավել: Անգլիան Հայաստանի համար ծանրագույն պահին զենք խոստացավ, բայց այդ զենքը ժամանակին չստացվեց, ինչը, Թ. Նազարբեկյանի խոսքերով, դարձավ Հայաստանի պարտության պատճառը: Անգլիան խոստացավ Հայաստանին օգնել նաեւ տնտեսապէս, բայց այդպէս էլ վարկ չտվեց, ինչը մեծ չափով խթանեց երկրի տնտեսական փլուզումը: Անգլիան Հայաստանին նաեւ դիվանագիտական օգնություն ցույց չտվեց եւ օգնեց նրա մեկուսացմանը: Անտանտի մյուս երկրները մկան անգամ չշարժեցին ցույց տալու, թէ շահագրգռված էին Սեւրի պայմանագրի Հայաստանին վերաբերող հոդվածների կատարմամբ: Անգլիան ստապատիր խոստումներով Հայաստանին թույլ չտվեց հարաբերությունները կարգավորել Ռուսաստանի հետ, իսկ երբ արդեն ակնհայտ էր նրա աղետի ենթարկվելը, ՀՀ-ին պարզապէս լքեց:

Հայաստանը բացարձակ մեկուսացման մեջ էր. Անտանտը նրան դավաճանել էր, ինքը մերժում էր մերձենալ Ռուսաստանին, Թուրքիան եւ Ադրբեջանը ատամ էին կրճտացնում, Վրաստանը՝ նույնպէս: Ահա այդ ծանրագույն ու Հայաստանի համար առավել քան վտանգավոր պահին ՀՀԴ որոշում է զենքի ուժով ի կատար ածել Սեւրի դաշնագիրը, որ դեռ վավերացված չէր, եւ հայկական բանակը 1920թ. հունիսին սահմանն անցավ Օլթիի ածխահանքերը գրավելու եւ շահագործելու համար: Սեպտեմբերին Կարաբեքիրի չորս վաշտերը հարձակման անցան, կարողացան շատ արագ հաղթահարել հայկական բանակի դիմադրությունը եւ տոնական շքաքայլով կարճ ժամանակում հասան Ալեքսանդրապոլ: Օգտվելով

թուրքական հարձակումից՝ գլուխ բարձրացրին նաեւ Հայաստանում բնակվող մահմեդականները: Ի պատասխան ՀՀ կառավարության օգնության կանչին՝ Հասկելը հեռագրեց Լոնդոն, որ Հայաստանն «անապատ է եւ նրա ժողովուրդն էլ՝ պարզապէս մուրացկան: Երկիրը ցուրկ է քաղաքական եւ վարչական կարողությունից, զարգանալու համար ոչ դրամ ունի եւ ոչ էլ բնական հարստություններ»:

Հայաստանին դժբախտության դուռը քարշ տված Լոնդոնը Երեւանի օգնության խնդրանքին պատասխանեց. «Նորին վեհափառության կառավարությունը բարեգործական կազմակերպություն չէ, եւ փոխանակ արտաքին աշխարհի գութի եւ օգնության մասին անընդհատ կոչերին, ցանկալի կլինէր Հայաստանում տեսնել ինքնավստահության եւ քաղաքական կարողության ապացույց՝ թե իբրեւ ինքնավար պետություն Հայաստանի հետագա գոյությունը կախված է իր՝ Հայաստանի ճիգերից ու կարողությունից, եւ նա այլեւս չի կարող հենվել օտար բանակների եւ օտար դրամի վրա»:

Ա. Ահարոնյանի մուրացկան դեմքին շարտեցին, թե Հայաստանի հարցը «ամբողջությամբ դուրս է» Անգլիայի «ուշադրությունից», թե «որեւէ ձեւի, որեւէ ռազմական օգնություն ուղարկելու, հովանավորություն (մանդատ) ընդունելու կամ օգնություն ցույց տալու համար որեւէ բան անելը, նույնիսկ զենքերի առաքումը ներկայումս բացառվում է...»: «...Մտադիր ենք Հայաստանի համար կատարել հնարավորին չափ քիչ»: Հայաստանին նաեւ մերժեցին դառնալու Ազգերի լիգայի անդամ: Լոնդոնը հրաժարվեց հանդես գալ անգամ միջնորդի դերում՝ «Մեծ Բրիտանիայի համար ցանկալի չէ... հանձնառել միջնորդությունը»:

Ահա պատրոնների վերաբերմունքը, շառաչուն ապտակը, որ դաշնակ գործիչների մեղքով բաժին հասավ Հայաստանին:

Անգլո-հայկական կոմիտեին հասցեագրված նամակում Գ. Չիչերինը գրում է, որ Հայաստանը «ավելի չափավոր կեցվածք որդեգրեց Խորհրդային Ռուսաստանի հանդեպ, անգամ դադարեցին սննդամթերք ուղարկել Հայաստան, երբ նա սկսեց բանակցություններ Մոսկվայի հետ», այդ պատճառով «Հայաստանը մերժեց Ռուսաստանի միջնորդությունը՝ որոշելու իր, մասնավորապէս «Թուրքահայաստանի» սահմանները», որովհետեւ Քերզոնը խնդիր էր դրել «Որքան հնարավոր է Հայաստանին հեռու պահել Խորհրդային կառավարության ազդեցությունից»:

Իսկ Ռուսաստանը Հայաստանին առաջարկում էր, որ եթե չեղյալ համարի Սեւրի դաշնագիրը եւ չենթարկվի Անտանտի թելադրանքներին, ինքը կկանգնեցնի թուրքերի առաջխաղացումը, անգամ կօգնի Հայաստանի հետ միավորելու Թուրքիայի որոշ տարածքներ՝ Վան, Մուշ, Էրզրում: Երեւանը մերժեց Ռուսաստանի բոլոր նման առաջարկները, դեռ ավելին, Ռուսաստանի հետ բանակցությունները ձգձգելու կամ փակուղի մտցնելու դիտավորությամբ Ռուբենը Լեզրանին առաջարկեց, որ Ռուսաստանը պետք է Հայաստանին կցի նաեւ Տրապիզոնը, Երզնկան եւ Խարբերդը: Լեզրանը մերժեց այդ առաջարկի քննարկումը, իսկ ՀՀ կառավարությունն անմիջապէս Անգլիայի ներկայացուցչին հանգստացրեց՝ թե ոչ մի դեպքում «մտադիր չէ համաձայնության գալ Լեզրանի

հետ», եւ սպասում է Վրաստանի համաձայնությանը «բուլշեիկների դեմ երկու պետությունների զինակցություն ձեւավորելու վերաբերյալ»:

Ահա այդ կեցվածքի պատճառով էր, որ Հայաստանը 20 օրում կորցրեց ամեն ինչ եւ հարկադրված հաշտություն խնդրեց: Հայաստանի կողմից բանակցություններ վարող Ա. Խատիսյանը նույնիսկ այդ պայմաններում Ստոքսին հավաստիացրեց, թե «թուրքերի հետ հաշտություն կնքելն ավելի նախընտրելի է», քան բուլշեիկյան Ռուսաստանի հետ: Թե ինքը բանակցություններում այսպիսի կեցված է ընտրել, որ արժանանա Բրիտանիայի «հավանությանը»:

Ակնհայտ է, որ դաշնակցական Հայաստանը համառորեն գլորվում էր հակառուսական ճահիճը, եւ աղետոն անխուսափելի էր: Լեգրանը ՀՀ կառավարությանն առաջարկեց թույլ տալ, որ կարմիր բանակի երկու զորամաս մտնի Հայաստան, որպեսզի վերջինս «թուրքերի հետ խոսելու ավելի իրական ուժ ունենար»: Պատասխանը բացասական էր: Դաշնակցությունը մերժեց Ռուսաստանի տված երաշխիքը՝ Հայաստանին ապահովել 1914թ. սահմանները, բայց Ալեքսանդրապոլում համաձայնվեց թուրքերի պահանջին՝ կորցնելու իր տարածքի 4/5-ը:

ՀՀ գործիչները տարածքների հանդեպ իրենց կուսակցությանը հատուկ, բայց տրամաբանությամբ յուրօրինակ մոտեցում ունեին: Ն. Աղբալյանը 1924թ. մայիսին Եգիպտոսում արտասանած մի ճառում հայտարարեց. «Մենք կարող ենք հայկական պետություն ստեղծել առանց տարածքի, միայն հարկավոր է եռանդուն կաշէլ գործին: Մենք կարող են հայ փախստականներին նախապատրաստել այն պահի համար, երբ հայրենիքը կազատվի բուլշեիկների ոտնձգություններից»:

Օգոստոսի 10-ին համաձայնագիրը փաստորեն նշանակեց Հայաստանի կապի խզում Արեւմուտքի հետ՝ չնայած հենց նույն օրը ստորագրվեց Սեւրի պայմանագիրը: Հայաստանի կառավարությունը հայտնվեց ծանր կացության մեջ, որի պատճառներից մեկը նրա երկդեմ արտաքին քաղաքականությունն էր: Դաշնակցական կառավարությունը սկսեց Ռուսաստանի դեմ մանր սադրանքներով Արեւմուտքին ցուցադրել, թե Հայաստանը նրա կողմն է, որ Ռուսաստանի հետ կնքված համաձայնագիրն ավելին չէր, եթե ոչ ժամանակ շահելու հնարավորություն:

Իսկ Ռուսաստանն ուժեղացնում էր ճնշումը Երեւանի վրա. դիվանագետների փոխարեն ռազմաքաղաքական վարքագիծ սկսեց թելադրել բանակի ռազմահեղափոխական խորհուրդը:

Հայաստանի կառավարության կեցվածքի անորոշությունը հանգեցրեց հանրապետության արտաքին քաղաքական, դիվանագիտական եւ տնտեսական մեկուսացման, ինչը եւ կանխորոշեց հայ-թուրքական պատերազմի ելքը:

Քաղաքական անորոշությունը սրեց հարաբերությունները նաեւ երկրի ներսում: Գնալով ահագնանում էր հակազդեցությունը պաշտոնական քաղաքականությանը: Խմորումներ սկսվեցին նաեւ կուսակցության ներսում: ՀՀ 2-րդ անդամներ պարզորոշ գիտակցում էին, որ դաշնակցությունը

հայրենասիրական կարգախոսներից ու ահաբեկումներից զատ, որել է բանի ընդունակ չէ, նա չունի գործնական նշանակության ծրագրեր, չի կարողանում ձեւավորել կոլեկտիվ միտք՝ պետական քաղաքականության ռազմավարությունն ու մարտավարությունը նշակելու համար: Դաշնակցական կառավարության քաղաքականության հանդեպ համազգային հիասթափությունը իշխանության գլուխ բերեց կոմունիստներին, այլ ոչ թե հեղափոխական գործողությունները կամ կարմիր բանակի ցուցադրական ելույթները: Մոսկվան ուժ ցուցադրեց, երբ դաշնակցությունն արդեն համաձայնվել էր իշխանությունը հանձնել կոմունիստներին: Դրո-Լեզրան համաձայնագիրը դաշնակցական կառավարության, կուսակցության կողմից արժանապատիվ քայլ էր՝ չնայած այն կատարվեց հանգամանքների հարկադրանքով: Հավանաբար լուրջ ու պարկեշտ չէին Հայաստանի հեղկոմի հռչակագրի հետեւյալ խոսքերը. «...իշխանությունը արդեն խլված է դաշնակցությունից ապստամբ ժողովրդի կամքով ու ցանկությամբ...»:

Հեղկոմը, գնալով առձակատուները սրելու ուղղությամբ, խախտեց դաշնակցական կառավարության հետ կնքված պայմանագիրը: Հակառակ այդ պայմանագրի պահանջի՝ հեղկոմի կազմի մեջ ձախ դաշնակցական ներկայացուցիչներ չնտցվեցին, պաշտոնազրկվեց Դրոն, լիազորություններից զրկվեցին դաշնակցական կառավարության դիվանագիտական ներկայացուցիչությունները: Բայց ամենամանրույլատրելին հայ սպայության, դաշնակցության գործիչների եւ մտավորականության հանդեպ կիրառված բռնարարքներն էին, նրանց մի մասի աքսորումը Ռուսաստան:

Իհարկե, հեղկոմի ձախությունները, բռնի միջոցների նկատմամբ նրա հակվածությունն առաջացրին դժգոհություններ եւ հիասթափություններ: Սակայն ստում են նրանք, ովքեր փետրվարյան արկածախնդրության գլխավոր պատճառը դա են համարում: Դաշնակցությունը (ես չէի ասի՝ ամբողջ կուսակցությունը, այլ նրա թուրքամետ-փառատենչ մասը) պարզապես օգտագործեց հեղկոմի կոպիտ սխալները՝ իշխանության վերադառնալու համար: Իզուր են դաշնակցության այդ գործողությունների մեջ համազգային, այն էլ փրկարար նպատակադրումներ փնտրում: Այդպիսիք չկային:

Հեղկոմի վարքագիծը շատ ավելի պատրվակ էր: Դատեցեք ինքներդ: Ս. Վրացյանը հրաժարական տվեց դեկտեմբերի 1-ին: Հեղկոմը Երեւան հասավ դեկտեմբերի 4-ին, 11-րդ կարմիր բանակը՝ դեկտեմբերի 6-ին, եւ նույն օրը Ս. Վրացյանը ստեղծեց «Հայաստանի փրկության կոմիտեն», որպեսզի ումի՞ց փրկի Հայաստանը, երբ հեղկոմը դեռ չէր հասցրել գործել:

Նախ՝ ով էր այդ արկածախնդրության ղեկավարն ու կազմակերպիչը. Ս. Վրացյանը՝ Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքման ամենամախանձախնդիր կողմնակիցը: Այդ չար բնագղնեղով ղեկավարվող գործչի համար Հայաստանի, հայրենիքի շահ հասկացությունները տեղ ունեին միայն պատմագիտական կեղծարարություններում, իրականում նա պատրաստ էր Հայաստանը թուրքերին տալ, կործանել, միայն թե այն չանցներ Ռուսաստանին: Ի դեպ, այդ խնդիրն էր հետապնդում նաեւ Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագիրը՝ բոլշեիկներին փոխանցել այնպիսի Հայաստան, որն ինքնուրույն գոյատեւել չկարողանար:

Լեռնի խոսքերով՝ Ալեքսանդրապոլի պայմանագիրը դարձավ «դաշնակցություն կուսակցության հավերժական խայտառակությունը»: Դաշնակցության պարագլուխներն այդ լավ էին հասկանում եւ ճգնում էին փաստերը խեղաթյուրել, լայն հասարակությանը թյուրիմացության մեջ գցել: ՀՀԴ բյուրոյի նախագահ Վ. Նավասարդյանը գրում է, թե Ալեքսանդրապոլում «դաշնակցական բանագնացները պայմանագիրը ստորագրեցին արդեն խորհրդայնացված Հայաստանի խառը իշխանության ցուցումով, Հայաստանի, որի իսկական տերերն արդեն բոլշեիկներն էին»: Եվ ապա. «Եթե Ռուսաստանը ցանկանար, ուներ թե ուժ եւ թե իրավական հիմք, որպեսզի Ալեքսանդրապոլի պայմանագիրը չլիներ»: Եվ ապա. արդեն խորհրդայնացված Հայաստանի «կոմունիստական իշխանությունների դեկտեմբերի 2-ի ցուցումով իրավասություններ չունեցող դաշնակ պատվիրակները դեկտեմբերի 3-ին Ալեքսանդրապոլում ստորագրեցին թուրք-հայկական պայմանագիրը»:

Իսկ Վրացյանը, որ այդ ժամանակ վարչապետ էր, վկայում է, որ բանակցությունները դեռ ընթացքի մեջ էին, երբ խորհրդային կառավարության ներկայացուցիչ Բ. Լեգրանն իրենից պահանջեց Ալեքսանդրապոլից հետ կանչել խատիսյանի պատվիրակությանը՝ հավաստիացնելով, թե խորհրդային կառավարությունը թույլ չի տա, որ Հայաստանին պարտադրվի նվաստացուցիչ պայմանագիր: Ս. Վրացյանը չլսեց եւ հեռախոսով պատվիրակությանը հանձնարարեց «գործել սեփական հայեցողությամբ»: Իսկ խատիսյանը վկայում է, որ Երեւանը պահանջեց կնքել պայմանագիրը:

Անպայման իրավացին խատիսյանն էր, որովհետեւ Վրացյանը հետագայում գրեց, որ իրենց կողմից այդ պայմանագիրը. «...մտածված, կշռադատված քաղաքական քայլ» էր:

Դեռ ավելին, դաշնակ որոշ գործիչներ Ալեքսանդրապոլի պայմանագիրը համարում էին իրենց փառավոր հաղթանակը, որովհետեւ, ըստ Ջարեվանդի, այդ պայմանագիրը Հայաստանի անկախության վկայությունն էր, վկայությունն այն բանի, որ նա «իրավասու է դիվանագիտական հարաբերություններ ունենալ ուրիշ տերությունների հետ իրավահավասարության սկզբունքով»:

Եվ զարմանալի չէ, որ Ս. Վրացյանը փետրվարին Անկարայի ներկայացուցիչ Բեհաէդդինից օգնություն խնդրելու ժամանակ նրան հիշեցրեց Հայաստանի եւ Թուրքիայի բարեկամության մասին, որի հիմքերը դրվել էին Ալեքսանդրապոլում: Անկարայի կառավարությանը հասցեագրված նամակում նա գրում է. «Հայաստանի պայքարը բոլշեիկների դեմ հանուն իր ազատության եւ անկախության ծառայում է ոչ միայն Հայաստանին, այլեւ Առաջավոր Ասիայի բոլոր ազգություններին: Դրա համար էլ Հայաստանը հույս ունի, որ իր պայքարի ընթացքում ինքը օգնություն կստանա իր հարեւաններից, եւ առաջին հերթին թուրք ժողովրդի կենսական շահերը պահանջում են Հայաստանի հաղթանակը այս պատերազմում ու նրա անկախության պահպանումը...»

Այս հայտարարությունն անելով՝ Հայաստանի կառավարությունը հիմնվում է այն բարեկամական հարաբերությունների վրա, որոնց հիմքերը զգվել են

Ալեքսանդրապոլի պայմանագրով, եւ որոնք խանգարվել են բուլշեիկների իշխանության ժամանակ»:

Խուսափում եմ նման վարքագծին ու «բարոյականությանը» գնահատական տալ եւ թողնում եմ, որ այդ անի ընթերցողը:

Թե չէ ինչո՞վ բացատրել, որ իշխանությունից հեռացող կառավարությունը պայմանագիր է կնքում, որն անփառունակության նոր ակտ էր իր համար: Մնան դեպքերում, եթե կառավարությունը հետին նպատակներ չունի, գերադասում է ամոթալի, ստորացուցիչ պայմանագրի կնքումը թողնել իր հաջորդներին: Ս. Վրացյանը հակառակ կարծիքին էր, նա վրեժ ուներ լուծելու հայ բուլշեիկներից ու նրանց միջոցով՝ հայ ժողովրդից, եւ հարկադրեց Ա. Խատիսյանին ստորագրել պայմանագիրը:

Այդ պարագլուխների անպարկեշտությունը սահմաններ չէր ճանաչում: Հենց ստորագրեցին Ալեքսանդրապոլի պայմանագիրը, սկսեցին աղմուկ բարձրացնել, թե բուլշեիկները չեղյալ չեն հայտարարում այն: «... Ոչ Ղարաբաղը, ոչ ալ Նախիջեւանը ենթարկուեցան Հայաստանին: Հայաստանը Թուրքիայէն բաժանող սահմանագիծը... Մնաց այն, ինչ որ կը տրամադրէր Ալեքսանդրապոլի դաշնագիրը, դաշնագիր, զոր չեղեալ նկատելու ամէն տուեալ ունէին պոլշեիկները, քանի որ ան ստորագրուած էր Հայաստանի անկախ Հանրապետութեան ներկայացուցիչներու կողմէ եւ խորհրդայնացման ակտէն ետք»:

Ըստ Տասնապետյանի, Ալեքսանդրապոլի դաշնագիրը Ս. Վրացյանի կառավարությունն իրավունք չուներ կնքելու, բայց կնքեց: Ինչո՞ւ: Որովհետեւ այդպես ձեռնտու էր թուրքերին: Տասնապետյանը լրիվ չափն անցկացնում է, երբ ասում է, «թե սահմանները գրեթե անփոփոխ մնացին», որովհետեւ բուլշեիկյան կառավարությունը Հայաստանի տարածքը 9.5 հզ քառ. կմ-ից հասցրեց 29 հզ. քառ. կմ-ի: Տասնապետյանի երեւակայության թռիչքն աներեւակայելի է: Նա գրում է. «Հայաստանի խորհրդայնացումը քաղաքացիական կռուի բովէն անցնելու տրամադրութիւնը երեւան կու գայ օրուան պոլշեիկ վարիչներու զանազան արտահայտութիւններուն մեջ»:

Այսինքն փետրվարյան արկածախնդրության հեղինակը ոչ թե դաշնակցականներն էին, այլ հայ բուլշեիկները:

Ալեքսանդրապոլի պայմանագիրը եւ դրան նախորդող իրադարձությունները՝ կայծակնային արագությամբ Հայաստանի տարածքի 2/3-ը թուրքերին հանձնելը, հայ ժողովրդի պատմությանը հայտնի ամենախայտառակ դավաճանությունն էր, եւ դրա գլխավոր հեղինակն էր Ս. Վրացյանը: Ի դեպ, այս խնդրում «դաշնակցություն» բառի ամբողջական օգտագործումը սխալ է, որովհետեւ մեծ թվով դաշնակցականներ, այդ թվում՝ ղեկավար գործիչներ, տեղյակ չեն եղել եւ որեւէ մասնակցություն չեն ունեցել, այլ ընդհակառակն՝ ընդվզել են այդ դավաճանական գործողությունների դեմ:

Փոքր դեր չխաղաց Ս. Վրացյանի փառամոլությունը. նա իր կյանքը չէր պատկերացնում «շարքայինի» վիճակում, նա ծնվել էր կառավարելու, իշխելու համար: «Հայրենիքի փրկության կոմիտե» կոչվածն այլ բան չէր, եթե ոչ պետական հեղաշրջում կատարելուն, վարչակարգը խորտակելուն կոչված դավադրական մարմին, որն օգտագործելով ժողովրդի ծանր վիճակը (ինչի հեղինակները, ի դեպ, ոչ թե կոմունիստներն էին, այլ իրենք՝ դաշնակցականները)՝ հասնելու իրենց իշխանատենչ ձգտումներին, Հայաստանը պոկելու Խորհրդային Ռուսաստանից եւ մտցնելու Թուրքիայի հովանավորության տակ: Ս. Վրացյանի հոգն է՞ր, թե թուրքերի կողմից հոշոտված 1.5 մլն հայերի արյունը դեռ տաք էր, եւ նրանից բարձրացող գոլորշին դեռ թուխալի նման կախված էր հայության գլխին: Որ Ս. Վրացյանի գործողություններն ազգադավ էին (համենայն դեպս դրանց հետեւանքներին այլ անուն տալն անհնար է), վկայում է նաեւ այն, որ նա արկածախնդրությանը, այսինքն Հայաստանում խորհրդային իշխանության տապալմանը ձեռնամուխ եղավ այն պահին, երբ Մոսկվայում վերջնազօհն էին մոտենում ռուս-թուրքական բանակցությունները: Ո՞վ էր կանգնած ժամանակի՝ նման ընտրության հետեւում: Ցանկանում են դաշնակցականները, թե ոչ, վրացյանական արկածախնդրությունը նաեւ խնդիր ուներ ճնշում գործադրել Մոսկվայի վրա՝ թուրքերին առավելագույն զիջումներ կատարելու համար: Այս առումով արկածախնդրությունն իր առջեւ դրված խնդիրը հաջողությամբ կատարեց: Կրկնում եմ, եթե այդ չէր Վրացյանի նպատակը, ապա ինչու նա Խորհրդային Ռուսաստանի դեմ ապստամբություն բարձրացրեց այն պահին, երբ Մոսկվայում լուծվում էին Կարսի մարզի, Ղարաբաղի եւ Նախիջեւանի հարցերը: Նման իրավիճակում ռուսներն ո՞ւմ էին տալու այդ տարածքները, իրենց մերձավոր դաշնակից-քեմալական Թուրքիայի՞ն, թե՞ իրենց դեմ ապստամբած Հայաստանին:

Վրացյանի Փրկության կոմիտեի պաշտոնաթերթ «Ազատ Հայաստանը» 1921թ. մարտի 15-ին գրում է. «Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատության իրական պաշտպանը կարող է դառնալ միայն Տաճկաստանը: Որովհետեւ Տաճկաստանն է այն միակ իրական մերձավորագույն քաղաքական ուժը, որն անմիջապես եւ կենսապես շահագրգռված է Անդրկովկասի ժողովուրդների կատարյալ ազատագրմամբ»:

Նման կողմնորոշումն էր Ս. Վրացյանին հիմք տալիս դիմել Թուրքիայի Ազգային մեծ ժողովին՝ ռազմական օգնության խնդրանքով: Վրացյանի դավաճանությունը հասավ այնտեղ, որ անգամ նպատակահարմար համարեց անհրաժեշտության դեպքում Հայաստան մտցնել թուրքական զորքեր: Նա իրեն դրեց Թուրքիայի տրամադրության տակ, ստանձնեց հլու կամակատարի դեր:

Խորհրդային պատմագրության մեջ դաշնակցության հասցեին ինչ պիտակներ ասես, որ չեն օգտագործվել՝ իմպերիալիզմի գործակալներ, պնակալեզներ, դավաճաններ, հայրենիքի թշնամիներ եւ այլն, եւ այլն: Նորից ու նորից վճռականաբար դեմ եմ նման պիտակավորումներին: Դաշնակցությունը ոչ լրտես է եւ ոչ էլ դավաճան, այլ բան է, որ առանձին դեպքերում նրա վարքագիծն օբյեկտիվորեն հանգեցրել է ազգադավության:

Բայց փետրվարյան արկածախնդրությունն ու դաշնակ գործիչների կողմից դրան տրված գնահատականները չեն տեղավորվում բարոյականության ու պարկեշտության որեւէ տարատեսակի մեջ: Փետրվարը դաշնակցության բարոյական հոգեվարքն էր: Կուսակցություն, որն իշխանությանը վերատիրանալու համար կարող է հեղել սեփական ժողովրդի արյունը, բարեկամության ձեռք մեկնել նրա դահիճներին, ապագա չունի, եթե չի անցել սեփական խղճի քավարանով:

Իսկ այնպիսիք, ինչպիսին էր Ս. Վրացյանը, նման էին հաշիշամուլի, որոնք ընդունակ էին ամեն տեսակի ստորության:

Երեւանը գրավելուց հետո նա հեռագրում է Լենինին, թե «հեղաշրջումը Հայաստանում ուղղված չէ Խորհրդային Ռուսաստանի դեմ... ընդհակառակը, ազատագրված Հայաստանը ցանկանում է մնալ բարեկամ եւ հույս ունի օգտվել Խորհրդային Ռուսաստանի բարեկամությունից»: Նույն օրը նա Ա. Ահարոնյանին գրում է. «Այսօր Հայաստանի անկախ պետությունը եւ հայ ժողովուրդը չունեն ավելի մեծ թշնամի, քան ռուսական բոլշեիկները»:

Պատահական չէ, որ Ս. Վրացյանին առաջինը ջերմորեն շնորհավորեց Բեհաէդդին բեյը»:

Մոսկվայի պայմանագրով քեմալականներին արված տարածքային մեծ զիջումները բացատրել միայն Հայաստանի փետրվարյան իրադարձություններով եւ Մոսկվայի հանդեպ դաշնակցության թշնամական կեցվածքով, ճիշտ չի լինի: Պատճառներից մեկը քեմալականներին բազմակողմանի օգնության կազմակերպումը՝ «Թուրքիայի միջազգային դիրքերի ամրապնդումն էր»:

Պատահական չէ, որ Ֆրունզեն Անկարայում հայտարարեց. «Թուրքիայի հետ բարեկամությունը մենք համարում ենք մեր քաղաքականության անկյունաքարերից մեկը: Սա ընկեր Լենինի գիծն է»: Իրողությունն այդ է, որի համայնապատկերի վրա ավելի անմիտ ու անպատասխանատու տեսք ունի Ռուսաստանի հանդեպ վրացյանական քաղաքականությունը, որն ավելի քան հիմնավոր պատրվակներ էր ստեղծում Թուրքիային ռուսների զիջումների համար եւ ուներ հայ ժողովրդի շահերի դեմ սադրանքի բնույթ:

Նրանք, ովքեր այսօր էլ փառաբանում են 1921թ. փետրվարը, այն համարում ազգային-ազատագրական պայքարի փայլուն էջ, խնկարկում արկածախնդրության մասնակիցների գերեզմաններին (չնայած այդ մարդիկ ոչ այնքան մեղավոր էին, որքան խաբված), իրենց հաշիվ տալի՞ս են, թե Հայաստանի համար ի՞նչ ավարտ կլիներ, եթե վրացյանական ապստամբությունը չճնշվեր: Ինչպե՞ս կարելի է լուտանքներ թափել թուրք դահիճների հասցեին եւ միաժամանակ փառաբանել Ս. Վրացյանի թուրքամետ քարոզչությունը:

Մի՞թե դաշնակցության սթափ մասը չի հասկանում, որ 1921թ. փետրվարը այդ կուսակցության (եթե այն շարունակում է իրենը համարել) պատմության ամենասեւ էջն է:

Մի՞թե դժվար է հասկանալ, որ այդ փետրվարը ճակատագրական ազդեցություն ունեցավ Խորհրդային Հայաստան-դաշնակցություն հարաբերությունների վրա: Չէ՞ որ հեղկոմի ձախ արկածախնդիրներից հետո իշխանության գլուխ եկան Ալ. Մյասնիկյանը, Ս. Լուկաշինը եւ ուրիշներ, որոնց համար դասակարգայնությունը ամեն ինչ չէր, այլ լուր կողմնորոշում, որոնց համար Հայաստանի եւ հայ ժողովրդի շահերը վեր էին ամեն ինչից:

Այդ Փետրվարը ինչ-որ անվստահություն մտցրեց նաեւ Խորհրդային Հայաստան-Սփյուռք հարաբերություններում եւ, ինչու չէ, նաեւ Հայաստանի հանդեպ Մոսկվայի վերաբերմունքում:

Ի դեպ՝ փետրվարյան արկածախնդրության գնահատականի հարցում միասնական վերաբերմունք չկար նաեւ դաշնակցությունում: ՀՀԴ գաղափարախոս Մ. Վարանդյանն այն անվանում է «ավելորդ արկածախնդրություն»: Կուսակցության Վիեննայի խորհրդաժողովն այն բնութագրեց որպես «համաժողովրդական տարերային պոռթկում, որուն չէին կրնար կանոնավորել, ձեւ եւ ընթացք չտալ Հայաստանի մարմիններն ու ընկերները»: Նման հակադիր գնահատականները հետեւանք են այն բանի, որ, ի տարբերություն Բուխարեստի համաժողովի, նշված խորհրդաժողովի դիրիժորական փայտիկը Ս. Վրացյանի ու Ռուբենի ձեռքերում էր: Հատկանշական է նաեւ այն, որ 1923-24թթ. դաշնակցությունը Հայաստանում գործում էր լեգալ, ուներ իր կազմակերպությունները, անցկացնում էր ժողովներ ու համաժողովներ:

Ինչ-որ կերպ Վրացյանին հասկանալ կարելի է. նա հեռու է եղել Թուրքիայից, չի ճաշակել յաթաղանի «հմայքները», բայց նրանք, որոնց ծնողները, պապերն ու տատերն անցել են թուրքերի հեղինակած հայկական արյան ծովի միջով եւ Ռուսաստան թե Թուրքիա երկրներում առավելությունը տալիս են Թուրքիային, այդպիսիներին հասկանալը պարզապես անհնար է: Ոչ, այնքան էլ անհնար չէ: Նմանները ոչ թե Թուրքիայի օգտին են, այլ Ռուսաստանի դեմ: Բայց դա արդեն լուրջ չէ: Անձը չի կարողանում հարեւան ընտրել, ուր մնաց թե ժողովուրդը: Ռուսաստանը մեր աշխարհատարածքի միակ իրական ուժը եղել եւ այսօր էլ այդպիսին մնում է, այն երաշխիք է հարատեւման, ազգային-մշակութային զարգացման: Մինչդեռ Թուրքիան ոչնչացրել է հայերին եւ չի հապաղի այդ անել, եթե հնարավորություններ ստեղծվեն:

Ուրեմն կողմնորոշվեք, պարոնայք հայեր:

Դժբախտաբար ՀՀԴ այդպես էլ չկարողացավ ազատվել Խորհրդային Ռուսաստանի հանդեպ ատելությունից եւ այն մեխանիկորեն տարածեց նաեւ Խորհրդային Հայաստանի, ասել է թե՛ Հայաստանի վրա:

Սփյուռքում դաշնակցությունը ազգային-մշակութային նշանակալի աշխատանք ծավալեց, բայց նա գրեթե միակ քաղաքական ուժն էր, որ եթե չասենք թշնամի, ապա խորթ մնաց իր հայրենիքին: Պատճառը նույնն է՝ դաշնակցության համար կուսակցական շահերն անհամեմատ ավելի բարձր են, քան հայրենիքի շահերը:

Բերենք օրինակներ: Արտասահմանում ստեղծված էր Հայաստանի օգնության կոմիտե (ՀՕԿ), որը մեծ աշխատանք ծավալեց Խորհրդային Հայաստանին աջակցելու համար: Բայց քանի որ այդ կազմակերպությունը ՀՀԴ հովանու տակ մտնել չէր ուզում եւ օգնում էր ոչ թե Հայաստանին, այլ Խորհրդային Հայաստանին, ՀՀԴ, մեղմ ասած, վերապահ վերաբերմունք էր հանդես բերում դրան: Երբ Բեռլինում 1924թ. փորձում են ստեղծել ՀՕԿ-ի բաժանմունք, դաշնակցականները Ա. Ջամալյանի ղեկավարությամբ այն տապալում են: Դեռ ավելին, դաշնակցների մատնությունների հետեւանքով արգելվեցին այդ կոմիտեի բաժանմունքները Բեյրութում, Կահիրեում, Ալեքսանդրիայում, Ալժիրում:

Ընդ որում` ՀՀԴ խորհրդային գործոնն օգտագործում էր Սփյուռքի իր հակառակորդներին, ավելի ճիշտ` իրեն չենթարկվողներին շարքից հանելու համար: Օրինակ` «Հայաստանի կոչնակը» (Նյու Յորք) Սիրիայում արգելվելու համար դաշնակցները կառավարությանը հավատացնում էին, թե այդ թերթը «... ծառայում է խորհրդային իշխանության քարոզչությանը»: Դաշնակցությունը ՀՕԿ-ի դեմ պայքարում քարոզչությամբ չէր բավարարվում, այլ գործի էր դնում իր գլխավոր զենքը` ահաբեկչությունը: Դաշնակցականների ահաբեկչական գործողություններն այնպիսի ծավալներ ընդունեցին, որ 1933-ին Փարիզում հիմնադրվեց «Դաշնակ ահաբեկչության զոհերի պաշտպանության» կազմակերպություն: Դաշնակ ահաբեկիչներն առանձին դեպքերում հաշվեհարդարի էին ենթարկում անգամ մարդկանց, ովքեր Խորհրդային Հայաստանի մասին դրական էին արտահայտվում:

Քիչ չէին դեպքերը, երբ դաշնակցությունը հանդես էր գալիս նաեւ հայրենադարձության դեմ:

Ջարմանք ասեն, թե զայրույթ է առաջացնում դաշնակ գործիչների համագործակցությունը ֆաշիստների հետ: Ռ. Դարբինյանը, հիացմունքից խենթացած, գրում էր, որ ֆաշիստները վերջապես կջախջախեն խորհուրդներին: Ա. Ջամալյանը մասնակցեց նացիոնալսոցիալիստների կուսակցության Նյուրնբերգի համագումարին, Ս. Խատիսյանը նամակագրության մեջ էր ֆաշիստական նախարար Ռոզենբերգի հետ, որի օգնությամբ 1942թ. Բեռլինում ստեղծվեց «Հայկական ազգային խորհուրդ»: Դաշնակ գործիչները ֆաշիստների հետ համագործակցում էին Ռումինիայում, Ֆրանսիայում, Հունաստանում, Բուլղարիայում: Նրանք չխորշեցին համագործակցել անգամ գեստապոյի հետ, ստեղծեցին Հայաստանի ապագա կառավարություն, հայկական ազգային լեգեոն, որոնք Նժդեհի ու Դրոյի ղեկավարությամբ հասան մինչեւ Կովկաս, եւ նորից առաջացրին մի վիճակ, երբ հայերը ռազմաճակատի երկու կողմերում կռվում էին միմյանց դեմ: Այն հեքիաթը, թե այդ արվում էր Հայաստանը Թուրքիայի հնարավոր վտանգից զերծ պահելու համար, հնարված է անտեղյակների ու միամիտների համար:

Գերմանիան միշտ հայերի հանդեպ ունեցել է ոչ բարեկամական վերաբերմունք: Պետք չէ մոռանալ, որ արեւմտահայության բռնազաղթի գաղափարի հեղինակը Բեռլինն էր, գերմանացիների աչքի առաջ ու նրանց մասնակցությամբ կոտորվեց Բաքվի հայությունը: Ոչ Նժդեհի եւ ոչ էլ մեկ ուրիշի ջանքերի կարիքը չկար, Հիտլերը պատերազմից շատ առաջ մերժել էր Թուրքիային` տալու Կովկասը եւ

դա հասկանալի էր, քանի որ Ռուսաստանի վրա Գերմանիայի հարձակման գլխավոր նպատակներից մեկը Բաքվի նավթին տիրանալն էր: Վերջապես, եթե Նժդեհը գերմանական լրտեսական ծառայության մեջ մտնելով՝ ձգտում էր մեղմել ֆաշիստների վերաբերմունքը հայերի հանդեպ, ապա ինչո՞ւ նա չէր մտածում, որ այդ եւ նման քայլերով հայերի դեմ էր լարում ռուսներին: Միանգամայն ցնորամիտ է Արեւմտյան Հայաստանի ազատագրության խնդիրը, որը ոչ Երկրորդ աշխարհամարտից առաջ, ոչ դրա ընթացքում եւ ոչ էլ պատերազմից հետո չի դրվել: Խոսքը եղել է միայն Կարսի ու Արդահանի մասին, որոնք Արեւմտյան Հայաստան չեն:

Էլ չեն ասում վկայակոչումները, թե Նժդեհը շատ էր զայրացած, որ գերմանացիները հայերին արիացի չէին համարում: Հայերն իսկապես արիացի չեն: Նրանք աշխարհ են եկել շատ ավելի վաղ, քան արիական ցեղերը:

Ինձ տարօրինակ է թվում Նժդեհի վարքագիծը Ջանգեզուրում 1921թ. սկզբներին: Լեռնահայաստանի կազմավորման ակունքների մասին երկու կարծիք կա:

Առաջին. Ջանգեզուրը պահվում էր որպես միջանցք Հայաստանից հեռանալու համար: Դաշնակ գործիչները իշխանությունը կոմունիստներին հանձնելուց հետո Ջանգեզուրով անցան արտասահման: Դեռ ավելին, իշխանությունն «ինքնակամ» բուլշևիկներին հանձնելու հետ միասին, նրանք չկարողացան դիմանալ գայթակղությանը՝ իրենց ոխերին թշնամուն երկիրը հանձնել ոչ միայն հնարավորին չափ փոքրացած, այլեւ ավերված: Դաշնակցական քարոզչության հետեւանքով ավելի քան 10 հզ. հիմնականում երեւանցի մտավորականներ, իսկ Երեւանը լավ մտավորականություն ուներ, երբ Կարմիր բանակը դեռ Դիլիջան չէր հասել, լքեցին իրենց հայրենիքն ու անցան Պարսկաստան: Ալ. Մյասնիկյանի կառավարությունը մեծ ջանքեր թափեց նրանց ետ բերելու համար, սակայն հաջողվեց տուն դարձնել ոչ մեծ թվով մարդկանց, մյուսները ցրվեցին աշխարհով մեկ, շատերը ժամանակի ընթացքում դադարեցին հայ լինելուց:

Ջանգեզուրով Ս. Վրացյանը արտասահման տարավ Հայաստանի կառավարության ունեցած վերջին կոպեկները:

Մի զավեշտական իրողություն: Նիկոլ Աղբալյանը դաշնակցական գործիչներից մեկի միջոցով Ս. Վրացյանին տեղյակ է պահում, թե նյութապես ծանր վիճակում է, երեխաներն ուտելու բան չունեն եւ խնդրում է Հայաստանից փախցրած այդ գումարներից ինչ-որ բան տալ ընտանիքի գոյությունը քարշ տալու համար: Պատասխանը լինում է. «Կտամ, եթե համաձայնվի հետս Ամերիկա գնալ»:

Լեռնահայաստանի ստեղծման մասին երկրորդ կարծիքն այն է, որ Նժդեհը փրկում էր հարավային Հայաստանը, որպեսզի այն չանցնի Ադրբեջանին: Ըստ իս՝ այս երկրորդ պատճառը եղել է գլխավորը: Միայն անհասկանալի է մնում, թե Նժդեհը 1921թ. սկզբին ինչո՞ւ իջավ Վրացյանի մակարդակին, հարձակվեց Խորհրդային Հայաստանի վրա ու գրավեց Դարալագյազը: Եվ ինչու է ստեղծվել հեքիաթ, թե նա Լեռնահայաստանը Խորհրդային Հայաստանին հանձնեց ինքնակամ, առանց «զենք արծակելու»: Չէ որ գնացին մարտեր, Նժդեհի ուժերն

անգոր գտնվեցին կանգնեցնելու Կարմիր բանակի հարձակումը, եւ նա հարկադրված եղավ հեռանալ:

Ինչո՞ւ են խեղաթյուրվում պատմական փաստերը, պատմությունը վերածում առանձին հասարակական ուժերի ցանկություններով ձեւավորված հեքիաթի:

Նժդեհը մարտնչող հակակոմունիստ էր, նա բազմիցս այդ մասին գրել է եւ իր գործունեությամբ, վարքագծով հաստատել:

Դա գործչի համոզմունք, կեցվածքն էր, եւ ոչ ոք իրավունք չունի այն խմբագրել, աղձատել: Մանավանդ որ խոսքը ամենահետաքրքիր գործիչներից մեկի մասին է:

Ժամանակակից դաշնակ քաղաքագետները ծաղրում են, միայն անհասկանալի է՝ իրենց, թե ուրիշներին: Ըստ Տասնապետյանի՝ բոլշեիկները ցանկանում էին Ջանգեզուրը վերամիավորել Հայաստանի հետ, քանի որ նրա «անկախ դրութիւնը պատուար մըն էր իրենց եւ Նախիջեւանի թիւրքերուն միջեւ»: Տիպիկ վրացյանական տրամաբանություն ու վարքագիծ:

Տասնապետյանը մի հայտնագործություն էլ է կատարում: Նա գրում է, որ 1921թ. ապրիլի վերջերին, այսինքն փետրվարյան արկածախնդրության պարտությունից հետո, Լեռնահայաստանի 2-րդ համագումարը որոշեց «պոլշեիկներու դէմ պայքարը շարունակել՝ մինչեւ Հայաստանի ամբողջական ազատագրումը»: Նման դեպքերում են ասել՝ «Արկածախնդրությունն էլ ինչպե՞ս է լինում»:

1917թ. մայիսին Երեւանում տեղի ունեցան արեւմտահայերի, իսկ սեպտեմբեր-հոկտեմբերին Թիֆլիսում՝ Հայ ազգային համագումարները: Անդրանիկը կոչ արեց մի կողմ թողնել կուսակցական նեղ շահերն ու գործել հոգուտ «հայ ժողովրդի անհետաձգելի պահանջմունքների բավարարմանը»:

Միանգամայն այլ կեցվածք ընդունեց Ռուսահայ սպաների միությունը, որը տնօրինում էր ռազմամթերքն ու սննդամթերքը: Նրանց արձագանքեց «Մշակը»՝ «Մենք՝ ռուսահայերս, Ռուսաստանի սահմանները կպաշտպանենք, իսկ թուրքահայը թող Թուրքահայաստանի սահմանները պաշտպանէ...»:

Անդրանիկը ծառացավ այս ազգադավ հոգեբանության դեմ: Նա հայտարարեց. «...Առանց Թուրքահայաստանի վտանգուած է Ռուսահայաստանը... Պէտք է վերացուի ռուսահայ եւ թուրքահայ հարցը... միացած պէտք է դիմել թշնամիի դէմ եւ այսպէս կռուիլ...»: Հիասթափված կուսակցությունների խարդավանքներից՝ նա հրացանը զցեց ուսին ու դիմեց ռուսական բանակի հրամանատարին՝ իրեն ուղարկելու ռազմաձակատ: «Ուշանալը դավաճանություն է», - բղավեց նա:

Հետագայում դաշնակցությունը 1917-20թթ. խայտառակ պարտությունների ամբողջ մեղքը բարդում էր մերթ ռուսների, մերթ բոլշեիկների վրա, չքմեղանում, հասարակությունից թաքցնում այն իրողությունը, որ այդ թվականներին հայկական ողբերգության զլխավոր պատճառներից մեկը ներազգային մասնատվածությունն էր, կուսակցական առձակատումները, հասարակության այլեւայլ խմբերի շահերի գերակայությունը համազգային շահերի հանդեպ: Հայ սպայության զգալի մասը

բարոյալքված էր, երեկվա քաջարի հայդուկներից ու հայդուկապետներից ոչ քչերը վերածվել էին քրեական տարրերի ու մաուզերիստների, հայ զինվորը կորցրել էր հայրենիքի հանդեպ իր գլխավոր պարտականության գիտակցումը՝ չէր ուզում կռվել հայրենիքի համար:

Էրզրումում Անդրանիկի հորդորներին՝ պաշտպանել քաղաքը, չդասալքել, զինվորները պատասխանեցին. «Չենք կռուիր... մենք Ռուսահայաստան շատ հող ունինք, թող թրքահայ կռուի»:

Հայ կուսակցությունների հանցանքն այն էր, որ տարվելով ճղճիմ խնդիրներով, ձեռքից բաց թողեցին պատմական պահը՝ հայության միասնության, նրա համագգային ոգու ձեւավորման միջոցով լուծելու Հայկական հարցը:

Ասվածը զգացմունքային սայթաքում չէ, այլ այն իրողությունից բխող եզրակացություն, որ երբեք Հայկական հարցի լուծման համար այնպիսի բարենպաստ իրավիճակ չէր ստեղծվել, ինչպես 1917-1918թթ.: Օսմանյան կայսրությունը հոգեվարքի մեջ էր, նրա բանակը՝ քայքայված: Աշխարհամարտն իր գագաթնակետում էր եւ կլանել էր տերությունների թե ուժերը եւ թե ուշադրությունը:

Եթե հայ քաղաքական ուժերը լրջմիտ, հեռատես լինեին, հնարավորություն ունեին համաձայնության գալ Կերենսկու կառավարության հետ՝ Կովկասյան ռազմաճակատային գիծը կարճացնելու, եւ միասնական ուժերով աշխատեին միավորել հայ ժողովրդի բոլոր հատվածների ուժերը թուրքերի դեմ:

Թե 1917թ. եւ թե 1918 եւ 1920թթ. Հայաստանն ի գորու էր կռվելու, անգամ հարթելու Թուրքիային, նրա ռազմական ուժերը եթե չէին գերազանցում ռուսական ճակատում Թուրքիայի ունեցած կամ քեմալականների զինված ուժերին, ապա նրանց չէին զիջում, բացակայում էր բարոյահոգեբանական գործոնը՝ ինքնագոհողությունը հանուն հայրենիքի ազատագրության:

Հայ պատմաբաններից ոմանք այն միտքն են արտահայտել, որ սփյուռքում դաշնակցությունը ծառայում էր միջազգային ինպերիալիզմին: Դժվարանում են այս միտքը հասկանալ, քանի որ առանց շահի ոչ ոք ոչ ոքի չի ծառայում: Ըստ իսկ՝ դաշնակցությունը ոչ ոքի էլ չէր ծառայում, նրա նպատակների նպատակը վերադարձն էր Հայաստան: Բայց քանի դեռ Հայաստանում իշխանության տերը կոմունիստներն էին, նրանց վերադարձը գործնականում անհնար էր: Ահա թե ինչու դաշնակցությունը համագործակցում էր բոլոր այն ուժերի հետ, որ երկրում էլ դրանք լինեին եւ քաղաքական ինչ կողմնորոշում էլ ունենային, ովքեր պայքարում էին ԽՍՀՄ-ի դեմ: Այդ փնտրտուքների ընթացքում նա նաեւ օգտագործվեց առանձին երկրների, մասնավորապես ԱՄՆ-ի համապատասխան ծառայությունների կողմից:

Դաշնակցությունը նման է պառաված օրիորդի, որը ժամանակին արտաքին հմայք ունեցել է, բայց այն կորցնելուց հետո էլ շարունակում է կարծել, թե ինքն աշխարհում ամենահմայիչն ու ամենագեղեցիկն է եւ զայրանում, իրեն կորցնում է,

երբ ասում են, որ դու այլևս ոչ գեղեցիկ ես եւ ոչ էլ հմայիչ, դու տգեղ պառավ ես՝ մեծամեծ հավակնություններով:

Հայտնի է, որ առաջներում դաշնակցության շարքերում են եղել հայ մտավորականության ստվար զանգվածները: Ժամանակի ընթացքում նրանց ճնշող մեծամասնությունը ամենատարբեր պատճառներով, գլխավորապես հիասթափվելու հետեւանքով հեռացավ ՀՀ-ից, բայց վերջինս մինչ օրս էլ նրանցից հանրաճանաչներին համարում է դաշնակցական:

Նախկին դաշնակցականներից մեկը գրում է. «...դաշնակցությունում տարօրինակ խառնաշփոթ է... ով աշխատանք ունի, մարդկանց վերաբերվում է ինչպես խաղալիքների... իսկ եթե խաղալիք ես, չէիր կարող պաշտպանել իրավունքներդ»:

Ձեռքիս տակ է Նժդեհի «Բանտային գրառումներ» գրքույկը, որը լույս է տեսել Երեւանում 1993թ.: Գրքի սկզբում գետեղված է ոմն Տ.Գ.-ի «Երկու խոսքը», որում դաշնակ նշանավոր գործիչների շարքում նշվում է նաեւ Գեւորգը: Ինչո՞ւ: Գեւորգին հայդուկության բերեցին հնչակյանները: Նա արդեն հայդուկապետ էր, երբ Սասուն խուժեցին դաշնակցականները ու գրեթե բոլոր հայդուկներին անդամատոմսեր բաժանեցին եւ համարեցին դաշնակցական: Որոշ ժամանակ անց տոմս ստացածների մեծ մասը, այդ թվում նաեւ Գեւորգը, այդ անդամատոմսերը շարտեցին, իսկ Ռուբենի Սասուն գնալուց հետո Գեւորգի ու դաշնակցության հարաբերություններն ավելի քան լարվեցին:

Դաշնակցությունից հեռացավ նաեւ Նժդեհը, բայց ահա թե ինչ է գրում Խ.Տ.Գ.-ն. «Նրա (Նժդեհի) ռազմագիտական եւ մտավոր արժանիքներն անուրանալի են: Սակայն մեծ չափով մեղանչած կլինենք իրականությանը, եթե Գարեգին Նժդեհի արժանիքները վերագրենք միայն նրա բնատուր կարողություններին... Փորձում են դաշնակցական հերոսների ուսերից դեն շարտել ՀՀ դաշնակցության գաղափարական ծիրանին» (էջ 3): Ստացվում է զավեշտ. դաշնակցությունը ձեւավորեց Նժդեհի տաղանդը, հայացքները, որպեսզի վերջինս հիասթափված հեռանար այդ նույն դաշնակցությունից: Դաշնակ քարոզիչների համար նման վերաբերմունքը նորություն չէր: Նույն կերպ էր արտահայտվում Ա. Ահարոնյանը Անդրանիկի մասին, իսկ Ն. Աղբալյանը հանձին Անդրանիկի տեսնում էր երկու Անդրանիկ՝ դաշնակցական ուժեղ Անդրանիկ եւ դաշնակցությունից հեռացած թույլ Անդրանիկ:

Այս խնդրին մեկից ավելի անգամ անդրադարձել է նաեւ Անդրանիկը: Նա գրում է. «Ձեմ կրնար հասկանալ, թե կուսակցութիւնները ո՞ր աստիճանի իրավունք ունին սեփականացնելու իր անցեալի հետեւանքները... Ուրախալի կըլլար հարկավ, որ դաշնակցութիւնը ունեցած ըլլար յայտնի եւ անյայտ հերոսներ, որոնց դաստիարակը իրեն պատկանող ինտելեգենցիան եղած ըլլար: Իմ այն բոլոր անգուգական ընկերներս, որոնք չկան այսօր եւ զորս դաշնակցութիւնը կը կարծէ սնուցած ըլլալ իր ծոցին մէջ եւ որոնց անունով այս կուսակցութիւնը ուզած է միշտ հիւսել իր գործունեութեան դափնեպսակը...»

Տասնեակ տարիներ զիս եւ ինձ նման զինուորները սնուցած են իրենց ծոցին մէջ Սասունցին, Մշեցին, Ախլաթացին ու առհասարակ հայ ժողովուրդը, որուն միայն զինուորներն էինք եւ ոչ թե դաշնակցութեան եւ կամ որեւէ կուսակցութեան:

Հայ ժողովուրդի ծոցը սնած այս հարազատ զինուորները, երբ կը կռուէին մայր երկրի վրայ... դաշնակցութիւնը իր արտասահմանի մամուլին մէջ կուսակցական պայքար կը մղէր՝ շահագործելով կռուող անզուգական ընկերներու անունները: Կարելի չէ հասկանալ ուրեմն, թե մենք կռուողներն եղած ենք դաշնակցութիւնը սնուցողներն ու շփացողները, թե ան զմեզ»:

Խոստովանեք, պարոններ, նման կեցվածքը ախտանշան է, որ մերօրյա դաշնակցութիւնում առաջացել է անձի, անհատականութեան, էլ չսասած իսկական քաղաքական գործչի սով:

Դաշնակցականները 1921թ. ապրիլին Բուխարեստում խորհրդաժողով են գումարում եւ գտնում, թե դաշնակցական կառավարության ձախողման հիմնական պատճառներից մեկն այն էր, որ կուսակցության համապատասխան մարմինները «չեն կրցած տանել կազմակերպական բաւարար աշխատանք», որ ՀՀԴ Բյուրոն «կանգնած չէ եղած պատմական ծանր վայրկեանի բարձրութեան վրայ», որ անկախությունը հռչակելուց հետո «անմիջապէս չէ հրաժարած իշխանութենէն»:

Հետաքրքիր է նաեւ ժողովի հետեւյալ որոշումը. «Երկրէն դուրս կապի մէջ մտնել Սովետական Ռուսաստանի հետ՝ նպատակ ունենալով օգտագործել անոր քաղաքական կշիռը»:

Արդեն նշվել է, որ այս ժողովին ներկա չէին ոչ Վրացյանը եւ ոչ էլ նրա համակիրները, դրության տերը կուսակցության այն թեւն էր, որի կարծիքով դաշնակցութիւնն արմատական վերակառուցման կարիք ուներ, որ նրա գործունեության մեջ Ռուսաստանի հետ հարաբերությունների զարգացումը պետք է գերակայություն ունենար: Ի կատարումն այդ կողմնորոշման՝ 1921թ. հուլիսի 7-ին դաշնակցության պատվիրակությունը (Ա. Ջամայան, Վ. Նավասարդյան, Վ. Փափագյան) Ռիգայում բանակցություններ վարեց բոլշեւիկների պատվիրակության (Իոֆֆե, Տեր-Վահանյան, Ս. Տեր-Գաբրիելյան) հետ: Նույնիսկ համաձայնագիր ստորագրվեց, որով ՀՀԴ պարտավորվում էր հայությանը համախմբել Խորհրդային Հայաստանի կառավարության շուրջը, դադարեցնել Լեռնահայաստանի կռիվները, հավատարիմ մնալ Խորհրդային Ռուսաստանի հետ բարեկամությանը:

Բուխարեստի համաժողովը ՀՀԴ առողջ մասի ինքնաբուխ ձգտումն էր ինքնաքննադատական հայացք նետելու իր գործունեությանը:

Բայց համաժողովը դեռ աշխատանքը չէր ավարտել, երբ սկսվեց հարձակումը նրա վրա, այն ապօրինի համարվեց, եւ Վիեննայում գումարվեց նոր համաժողով:

Վիեննայի (1923թ.) վեհաժողովը նույնպէս խնդիր դրեց հնարավոր բոլոր միջոցներով աջակցել Հայաստանի վերաշինության գործին, արտահայտվեց հարեւան ժողովուրդների հետ համերաշխության օգտին: Սակայն ի

տարբերություն Բուխարեստի համաժողովի ռուսամետությանը՝ Վիեննայում որոշվեց, որ ՀՀԴ որեւէ «կողմնորոշում պիտի չորդեգրէ այս կամ այն մեծ պետութեան նկատմամբ» եւ պիտի մնա «ընդդիմադիր պոլշեիկեան ամբողջատիրութեան եւ անոր մեթոդներուն»:

Անհետաքրքիր չէ նաեւ ՀՀԴ 10-րդ ընդհանուր ժողովի (Փարիզ, 1924թ. նոյեմբեր-1925թ. հունվար) որոշումը. ընդհանուր ժողովը «խորին ցաւ յայտնելով» կը նշէ Բիւրոյի գործունեութեան թերի կողմերը՝ հաւաքական տեսակէտներ ու կեցուածք չէ հայտնաբերած ան, հայ-թրքական պատերազմը կանխելու համար ամէն ճիգ ի գործ դրած չէ, Մայիսեան ապստամբութեան զսպումէն ետք երկարաձգած է իր պետական իշխանութեան գլուխ մնալը...»:

Ճշմարտությունն այն է, որ Հայաստանում պարտություն կրելուց հետո դաշնակցությունն ազատ ժամանակ ուներ հետ նայելու: Ոչնչացվել էր ժողովրդի 2/3-ը: Ի հարկէ, այդ իրողությունն իրեն զգացնել չտալ, իր հոգեբանությունն ու տրամաբանությունը չթելադրել չէր կարող: Կուսակցության մեջ սկսվեցին տարընթացություններ:

Ընդհանուր առմամբ խոսել դաշնակցության մեկ ընդհանուր գաղափարախոսության եւ քաղաքականության մասին, ինչի վրա այնքան համառորեն ծանրանում է ժամանակակից ՀՀԴ, հնարավոր է միայն մեծ վերապահումներով: ՀՀԴ ծնվեց որպէս ոչ թե ընդհանուր գաղափարախոսություն եւ քաղաքականություն ունեցող կուսակցություն, այլ սկզբում՝ շատ նման բանավիճային ակումբի, ապա գերիշխող դարձավ մտածողության գործունեության որոշակի համակարգ՝ չնայած կուսակցության ներսում շարունակեցին գոյություն ունենալ ամենատարբեր հոսանքներ՝ սկսած ազգայնամուլական կարծրացած հայացքներ կողմերից մինչեւ սոցիալիստական կողմնորոշում ունեցողները: Վերջիններիս առաջնորդը Ռոստոմն էր, որը քաղաքական գործչի տիպար էր, իր գաղափարներին անմնացորդ նվիրված առաջնորդ:

1920թ. հետո ավանդական տարընթացություններին ավելացան նորերը, որոնք ավելի քան գործնական ու ճակատագրական խնդիրների շուրջ էին: Սակայն գլխավոր հիմնահարցերն էին.

Ինչո՞ւ սպանվեց ժողովուրդը: Ինչո՞ւ պարտվեց դաշնակցությունը: Ո՞ր ուղղությամբ գնալ եւ ի՞նչ անել:

Այս ճակատագրորոշ խաչմերուկում կուսակցությունից հեռացան նրա ամենապայծառ դեմքերը (Հ. Քաջազնունի, Նժդեհ, Շահան Նաթալի եւ ուրիշներ), որի հետեւանքով կուսակցության ղեկավարությունն ամբողջությամբ անցավ Ս. Վրացյանի ու նրա համախոհների ձեռքը, եւ սկսվեց պայքար իսկական առաջնորդների ու կուսակցության ղեկին տիրացած բախտախնդիրների միջեւ:

Հ. Քաջազնունին գտնում էր, որ կատարվածը դաշնակցությանը զրկել է գոյության ոչ միայն իրավունքից, այլեւ հնարավորությունից: Նա գրեց. «ՀՀ Դաշնակցությունն այլեւս անելիք չունի» գրքույկը, որը թե խոստովանանք է եւ թե

կտակ: Ղաշնակցական պարագլուխները, մասնավորապես Ս. Վրացյանը, արշավ սկսեցին Հ. Քաջազնունու դեմ: Վրացյանը հրապարակեց նամակ Քաջազնունուն, որը չարության ու անպարկեշտության հավաքածու է: Եվ ահա հրապարակ է իջնում Քաջազնունու «Բաց նամակ Z-ին, Թուրքիա՞, թե՞ Ռուսիա»-ն, որը իրավամբ պետք է համարել հայ քաղաքական հրապարակախոսության, դեռ ավելին՝ հայ քաղաքական գրականության ամենալուսաշող գոհարներից մեկը: Այդ նամակի մասին սփյուռքահայ լավագույն մտավորականներից, ՀՀԴ գործիչներից մեկը՝ Ա. Ծառուկյանը, գրում է. «Այս գրքույկը սակայն ինքն իր մէջ լիարժեք գործ մըն է, որ կարծէք գրուած ըլլայ այսօր, եւ կրնայ դեռ քառասուն տարի ետքն ալ պահել իր այժմեութիւնը, թարմութիւնը, պայծառութիւնը, ինչպէս կըլլան ճշմարտութիւններ պատգամող մատեանները իրենց պարզութեամբ, բիրտղային հստակութեամբ եւ անվիճելի ճշգրտութեամբ»:

Այդ գրքույկը՝ «... հայ ժողովրդին եւ հայրենիքին գոյութիւնը, կեանքը, ապագան պայմանաւորող, հիմնական եւ անսայթաք ուղեգիծը պարզաբանող, լուսաբանող մտածումները, բնական աշխարհագրութեան քարտէզին պէս ցցուն, թուաբանական աղիւսակի մը պէս ճշգրիտ, բացարձակ անխախտ...» կտակ է:

Քաջազնունու նամակը վերաբերում է հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման խնդրին՝ ռուսական, թե՞ թուրքական: Քաջազնունին կողմնորոշումը համարում էր հայ քաղաքական կյանքի առանցքը եւ անհանգստացած էր, որ դաշնակցություն կուսակցությունում Ս. Վրացյանի եւ Ռուբենի ջանքերով առաջին պլան էր մղվում թուրքական կողմնորոշումը: Ընդ որում, ինչպես մեր օրերում, այդ արվում էր իրապաշտության, գործնական քաղաքականության նպատակահարմար ուղղվածության քողի տակ:

«Եթէ հայ ժողովրդի շահը պահանջեց մի օր սեղմել թիրքի ձեռքը,- գրում է Ռուբենը,- պիտի մոռանաս, թէ այդ ձեռքը թաթախուած է քո հոր արիւնի մէջ»:

Իսկ «Հայաստանը միջցամաքային ուղիներուն վրա» գրքում (Բեյրութ, 1948թ.) դեն է նետում նաեւ «թէ» պայմանականությունը, եւ բացեիբաց պաշտպանում Թուրքիայի հետ մերձեցման տեսակետը:

Ղաշնակցությունը նման է պառաված օրիորդի, որը ժամանակին արտաքին հմայք ունեցել է, բայց այն կորցնելուց հետո էլ շարունակում է կարծել, թե ինքն աշխարհում ամենահմայիչն ու ամենագեղեցիկն է եւ զայրանում, իրեն կորցնում է, երբ ասում են, որ դու այլեւս ոչ գեղեցիկ ես եւ ոչ էլ հմայիչ, դու տգեղ պառավ ես՝ մեծամեծ հավակնություններով:

Հայտնի է, որ առաջներում դաշնակցության շարքերում են եղել հայ մտավորականության ստվար զանգվածները: Ժամանակի ընթացքում նրանց ճնշող մեծամասնությունը ամենատարբեր պատճառներով, գլխավորապես հիասթափվելու հետեւանքով հեռացավ ՀՀԴ-ից, բայց վերջինս մինչ օրս էլ նրանցից հանրաճանաչներին համարում է դաշնակցական:

Նախկին դաշնակցականներից մեկը գրում է. «...դաշնակցությունում տարօրինակ խառնաշփոթ է... ով աշխատանք ունի, մարդկանց վերաբերվում է

ինչպես խաղալիքների... իսկ եթե խաղալիք ես, չէիր կարող պաշտպանել իրավունքներդ»:

Ձեռքիս տակ է Նժդեհի «Բանտային գրառումներ» գրքույկը, որը լույս է տեսել Երեւանում 1993թ.: Գրքի սկզբում գետեղված է ոմն Տ.Գ.-ի «Երկու խոսքը», որում դաշնակ նշանավոր գործիչների շարքում նշվում է նաեւ Գեւորգը: Ինչո՞ւ: Գեւորգին հայդուկության բերեցին հնչակյանները: Նա արդեն հայդուկապետ էր, երբ Սասուն խուժեցին դաշնակցականները ու գրեթե բոլոր հայդուկներին անդամատոմսեր բաժանեցին եւ համարեցին դաշնակցական: Որոշ ժամանակ անց տոմս ստացածների մեծ մասը, այդ թվում նաեւ Գեւորգը, այդ անդամատոմսերը շարտեցին, իսկ Ռուբենի Սասուն գնալուց հետո Գեւորգի ու դաշնակցության հարաբերություններն ավելի քան լարվեցին:

Դաշնակցությունից հեռացավ նաեւ Նժդեհը, բայց ահա թե ինչ է գրում Խ.Տ.Գ.-ն. «Նրա (Նժդեհի) ռազմագիտական եւ մտավոր արժանիքներն անուրանալի են: Սակայն մեծ չափով մեղանչած կլինենք իրականությանը, եթե Գարեգին Նժդեհի արժանիքները վերագրենք միայն նրա բնատուր կարողություններին... Փորձում են դաշնակցական հերոսների ուսերից դեն շարտել << դաշնակցության գաղափարական ծիրանին» (էջ 3): Ստացվում է զավեշտ. դաշնակցությունը ձեւավորեց Նժդեհի տաղանդը, հայացքները, որպեսզի վերջինս հիասթափված հեռանար այդ նույն դաշնակցությունից: Դաշնակ քարոզիչների համար նման վերաբերմունքը նորություն չէր: Նույն կերպ էր արտահայտվում Ա. Ահարոնյանը Անդրանիկի մասին, իսկ Ն. Աղբալյանը հանձին Անդրանիկի տեսնում էր երկու Անդրանիկ՝ դաշնակցական ուժեղ Անդրանիկ եւ դաշնակցությունից հեռացած թույլ Անդրանիկ:

Այս խնդրին մեկից ավելի անգամ անդրադարձել է նաեւ Անդրանիկը: Նա գրում է. «Չեմ կրնար հասկանալ, թե կուսակցութիւնները ո՞ր աստիճանի իրավունք ունին սեփականացնելու իր անցեալի հետեւանքները... Ուրախալի կըլլար հարկավ, որ դաշնակցութիւնը ունեցած ըլլար յայտնի եւ անյայտ հերոսներ, որոնց դաստիարակը իրեն պատկանող ինտելեգենցիան եղած ըլլար: Իմ այն բոլոր անզուգական ընկերներս, որոնք չկան այսօր եւ զորս դաշնակցութիւնը կը կարծէ սնուցած ըլլալ իր ծոցին մէջ եւ որոնց անունով այս կուսակցութիւնը ուզած է միշտ հիւսել իր գործունեութեան դափնեպսակը...»

Տասնեակ տարիներ զիս եւ ինձ նման զինուորները սնուցած են իրենց ծոցին մէջ Սասունցին, Մշեցին, Ախլզաթցին ու առհասարակ հայ ժողովուրդը, որուն միայն զինուորներն էինք եւ ոչ թե դաշնակցութեան եւ կամ որեւէ կուսակցութեան:

Հայ ժողովուրդի ծոցը սնած այս հարազատ զինուորները, երբ կը կռուեին մայր երկրի վրայ... դաշնակցութիւնը իր արտասահմանի մամուլին մէջ կուսակցական պայքար կը մղէր՝ շահագործելով կռուող անզուգական ընկերներու անունները: Կարելի չէ հասկանալ ուրեմն, թե մենք կռուողներն եղած ենք դաշնակցութիւնը սնուցողներն ու շփացողները, թե ան զմեզ»:

Խոստովանեք, պարոններ, նման կեցվածքը ախտանշան է, որ մերօրյա դաշնակցությունում առաջացել է անձի, անհատականության, էլ չասած իսկական քաղաքական գործչի սով:

Դաշնակցականները 1921թ. ապրիլին Բուխարեստում խորհրդաժողով են գումարում եւ գտնում, թե դաշնակցական կառավարության ձախողման հիմնական պատճառներից մեկն այն էր, որ կուսակցության համապատասխան մարմինները «չեն կրցած տանել կազմակերպական բաւարար աշխատանք», որ ՀՀԴ Բյուրոն «կանգնած չէ եղած պատմական ծանր վայրկեանի բարձրութեան վրայ», որ անկախություն հռչակելուց հետո «անմիջապէս չէ հրաժարած իշխանութենէն»:

Հետաքրքիր է նաեւ ժողովի հետեւյալ որոշումը. «Երկրէն դուրս կապի մէջ մտնել Սովետական Ռուսաստանի հետ՝ նպատակ ունենալով օգտագործել անոր քաղաքական կշիռը»:

Արդեն նշվել է, որ այս ժողովին ներկա չէին ոչ Վրացյանը եւ ոչ էլ նրա համակիրները, դրության տերը կուսակցության այն թեւն էր, որի կարծիքով դաշնակցությունն արմատական վերակառուցման կարիք ուներ, որ նրա գործունեության մեջ Ռուսաստանի հետ հարաբերությունների զարգացումը պետք է գերակայություն ունենար: Ի կատարումն այդ կողմնորոշման՝ 1921թ. հուլիսի 7-ին դաշնակցության պատվիրակությունը (Ա. Զամայան, Վ. Նավասարդյան, Վ. Փափագյան) Ռիգայում բանակցություններ վարեց բուլշեիկների պատվիրակության (Իոֆֆե, Տեր-Վահանյան, Ս. Տեր-Գաբրիելյան) հետ: Նույնիսկ համաձայնագիր ստորագրվեց, որով ՀՀԴ պարտավորվում էր հայությանը համախմբել Խորհրդային Հայաստանի կառավարության շուրջը, դադարեցնել Լեռնահայաստանի կռիվները, հավատարիմ մնալ Խորհրդային Ռուսաստանի հետ բարեկամությանը:

Իհարկէ, Հայաստանի ռուսամետությունը չի կարող բացասական ազդեցություն չգործել հայ-վրացական եւ հայ-ադրբեջանական հարաբերությունների վրա, չնայած դրան՝ Հայաստանն իրավունք չունի մտնելու Ռուսաստանին թշնամի որեւէ դաշինքի մեջ, մանավանդ Արեւմուտքում, որտեղ «Հայաստանն իսկական դաշնակից չունի»:

«Այն բոլոր ուժերը, որոնք ձգտում է մտցնել Անդրկովկաս Թուրքիան (ինչ անվան տակ էլ լինի) թշնամի են անդրկովկասյան հայության եւ Հայաստանի պետության»:

Քաջագնունին ծաղրում է Վրացյանին, թե նա շարունակում է առաջ քաշել Միացյալ եւ Անկախ Հայաստանի խնդիրը, որը նշանակում է Թուրքիայից հետ վերցնել Կարսը, Արդահանը, ամբողջ Արեւմտյան Հայաստանը, եւ միաժամանակ պնդում է թուրքական կողմնորոշման վրա: «Այդպիսի պահանջներ առաջարկելով է արդյոք, որ դու պիտի գտնես ընդհանուր լեզու թուրքերի հետ խոսելու, նրան... դաշնակցելու համար...»

Եթե Թուրքիան կարողացավ խլել ռուսների ձեռքից Կարսը, ինչո՞ւ պիտի տա քեզ այդ թանկարժեք ամրությունը (դեռ Վանն ու Մուշն էլ վրան ավելացրած):

Որպեսզի պատնե՞շ լինես իր եւ Ռուսաստանի միջեւ... Բայց մի՞թե դու վստահելի սահմանապահ ես թուրքերի համար: Թուրքերի հետ մերձենալու համար պետք է հրաժարվել հողային պահանջներից, իսկ դու համ մերձենալ ես ուզում, համ Միացյալ Անկախ Հայաստան:

Մի՞թե կուրացել ես այն աստիճան, որ չես տեսնում, թե ուր ես գնում, ինչո՞ւ ես կեղծում, քեզ ցուցադրում, թե ուզում ես աջակցել խորհրդային Հայաստանին, մի՞թե երկիրը խռովությունների մշտական սպառնալիքների տակ պահելը նշանակում է նրան աջակցել: Հայաստանի համար թուրքական օրիանթասիոնի խնդիր չկա եւ չի կարող լինել. դա մի քաղաքական գավեշտ է, որի անհեթեթությունը չես տեսնում միայն դու՝ քո այսօրվա կուրության մեջ: Հայաստանի համար կարող է լինել միմիայն եւ պարզապես թուրքերին «անձնատուր լինելու» խնդիր... Հայաստանը կարող է ապրել միմիայն Ռուսաստանից կառչած, ուրիշ քաղաքական հեռանկար չունի նա»:

Հ. Քաջագնունին նաեւ դեմ էր արեւմտյան կողմնորոշմանը՝ գտնելով, որ Արեւմուտքի օգնությունը ռեալ չէ: Նա «Դաշնակցությունն այլեւս անելիք չունի» գրքում գրում է. «Եվրոպական մեծ տերությունները հրաժարվել են մեր հարցից»:

Ռ. Դարբինյանը պատշաճ համարեց ծաղրել Քաջագնունուն. «Ուրեմն քաղաքականության մեջ ամեն ինչ անդարձ է, եւ եթե մերժել եմ այսօր, պետք է մերժեմ նաեւ վաղը, երբ պայմանները կարող են հիմնավորապես փոխվել, եւ հենց եվրոպական պետությունների շահերը կարող են թելադրել նրանց, վերջապես, մեզ համար անել այն, ինչ այնպես գծած չէին, երբեւէ կամ այսօր»:

Հայաստանի խորհրդայնացման հարցն, ինքնին, դաշնակցության կողմից հասկացվում էր որպես «Թուրքիայի հետ հայ բոլշեւիկների կնքած դավաճանական դաշինքի հետեւանք: Ավելի ճիշտ, այն համարում էին Ռուսաստանի եւ Թուրքիայի ու Հայաստանում բնակվող թուրքերի միջեւ գաղտնի դաշինքի արդյունք: Այդ դավադրությունը իբր կազմակերպվել էր այն պատճառով, որ «Հայաստանը գտնվում էր Անտանտի հովանավորության տակ եւ վարում էր նրա քաղաքականությունն Արեւելքում»: Նման կարծիքի էր նաեւ բաշխի իշխանությունը, որին Ստ. Շահումյանն անվանեց «քրեական տիպ քաղաքականության մեջ», նույն մտքին կարելի է հանդիպել նաեւ դաշնակցական պարագլուխ «Վ. Նավասարդյանի «Երկու ամիս բոլշեւիկյան բանտում» գրքուկի 27-րդ էջում:

Հայաստանում խորհրդային կարգերի առաջին երկու-երեք տարիների փորձը այս կարծիքը պաշտպանողների շարքերում պառակտում առաջացրեց. առանձնացավ քաղաքական գործիչների մի խումբ (Հ. Քաջագնունի, Ա. Դազարյան, ուրիշներ), ովքեր աշխատեցին ավելի սթափ նայել Հայաստանի խորհրդայնացմանը:

«Դաշնակցությունն այլեւս անելիք չունի» գրքում Քաջագնունին հարց է առաջադրում. «Կա՞ր արդյոք որեւէ համաձայնություն բոլշեւիկների ու թուրքերի միջեւ»: Ու պատասխանում է. «Մեր շարքերում շատ տարածվում է այդ համոզմունքը: Կարծում եմ, սակայն, որ սխալ է այդ...»

Բուլշեիկների դավադրությունը չէր պարտության պատճառը, ոչ իսկ թուրքերի ուժը»:

Քաջագնունին հիացած չէր, որ Հայաստանում հաստատվել են խորհրդային կարգեր, եւ այդ մի պատճառով. «Արաքսի եւ Սեւանի միջեւ ունենք այսօր մի փոքրիկ Հանրապետություն, անունով անկախ, իսկ իրոք վերահաստատվող ռուսական կայսրության ինքնավար ծայրագավառներից մեկը»: Բացի այդ, ըստ Քաջագնունու՝ «խորհրդային ռեժիմն անհամապատասխան է հայ իրականության պահանջներին»:

Արշակ Ղազարյանն այս հարցում զատվում է Քաջագնունուց: Նա «թանկագին Ա. Ի. Խատիսյանին եւ Ղաշնակցության 10-րդ համագումարին (խորհուրդ էր տալիս), քանի դեռ ուշ չէ, ընդունել, որ բուլշեիկներն իսկական հեղափոխականներ եւ սոցիալիստներ են»:

Նրա կարծիքով «խորհրդային Հայաստանը շարունակությունն է հանրապետական (ղաշնակցական) Հայաստանի, իսկ վերջինս «սաղմն է բուլշեիկյան իրավակարգի». այն, ինչ ղաշնակներն անում են մինատուր չափերով եւ անսխտեմ, նրանք (բուլշեիկները) անում են հսկայական մասշտաբով, ծրագրված ու սխտեմով»:

Հ. Քաջագնունին դրան ավելացնում է՝ «Բուլշեիկները մեր ժառանգներն են, եւ նրանք պետք է շարունակեն ու արդեն շարունակում են մեր գործը»: Եվ ապա. «Հայ բուլշեիկները ղաշնակցականներ են, միակ ղաշնակցականներն այսօր»: Ու նաեւ. «Մեր միակ ապավենն այսօր խորհրդային Ռուսաստանն է»: Նա նորից ու նորից հարցնում է, թե հայերին որն է ավելի ձեռնտու՝ «Ռուսաստանը, թե Թուրքիան, բուլշեիկները, թե թուրք միլիականները»: Եվ պատասխանում է. «Իհարկե, Ռուսաստանը եւ ոչ թե Թուրքիան, իհարկե, բուլշեիկները եւ ոչ թե թուրք միլիականները»: Բուլշեիկները պետք են Հայաստանին, որովհետեւ «նրան պետք է Ռուսաստանը», որը մեզ պետք է «ոչ իբրեւ սոցիալական կամ պետական ռեժիմ (կոմունիզմ եւ դասակարգային դիկտատուրա), այլ իբրեւ քաղաքական ուժ»: Ս. Ղազարյանն ավելացնում է. «Մեր ժողովրդի ազատության բազան Սովետական Հայաստանն է՝ կռթնած ռուսական հզոր բազուկներին: Այլ փրկություն չունի հայ ժողովուրդը, քան նա ընտրել է»: «Հայերը,- շարունակում է նա,-վաղուց ի վեր եւ բաղդական ձգտում են ունեցել դեպի Ռուսաստանը, ինչ Ռուսաստանն էլ լինել նա»:

Հ. Քաջագնունին տարանջատվելով իր կուսակցությունից՝ կատարում է իր բնույթով արտակարգ, գուցե նաեւ տարօրինակ խոստովանություն. «Ես ունեմ այն հաստատ գիտակցությունը, թե այսօր մտածում եմ... ճիշտ այնպես, ինչպես մտածել եմ 1920թ. 18-ին, 14-ին եւ իմ ամբողջ կյանքում... Ես չունեմ նոր պաշտամունք, չեմ կառուցանել նոր կուռքեր, մնում եմ հավատարիմ իմ դավանած հին աստվածներին: Այն, որ «նոր» է թվում, ինձ համար նույն հինն է, հնի շարունակությունն ու զարգացումը: Եկեղեցին չէ, որ ես փոխում եմ այսօր, այլ միայն քահանան ու ժամկոչը, որ եկեղեցու միայն պարզ սպասավորներ են եւ ուրիշ ոչինչ»: Նա դիմելով հայ կոմունիստներին՝ ասում էր, թե «դուք արդեն

քայլում եք միացյալ, թեկուզ խորհրդային, բայց անկախ Հայաստան ստեղծելու ճանապարհով, դե ավելի արագ շարժվեցեք»: Նա երազում էր այնպիսի դաշնակալին միավորման մասին, որ մեր դաշնակից պետությունները մտնեին իրենց ազատ կամքով եւ հավասար իրավունքներով:

Խորհրդային կարգերի ոչ անվերապահ մերժումը Հ. Քաջազնունուն հանգեցրեց եզրակացության՝ «ՀՀ դաշնակցությունը անելիք չունի այլեւս»: Պատմական միսիան ավարտած մեր կուսակցությունն արել է արդեն իր ամբողջ անելիքը ու սպառել է իրեն... Թուրքահայաստան չկա այլեւս... ընդհանուր առմամբ՝ դրսեցի հայերը պետական տարր չեն այսօրվա Հայաստանի համար... Հայաստանի Հանրապետությունը, իբրեւ մի ինքնավար նահանգ, կցված է Խորհրդային Ռուսաստանին, բաժանել մեր պետությունը Ռուսաստանից չենք կարող, եթե նույնիսկ ցանկանանք, եւ չպիտի ցանկանանք, եթե նույնիսկ կարողանանք: Կուսակցությունը պարտված է ու կորցրած իր հեղինակությունը, երկրից դուրս է արված, չի կարող վերադառնալ տուն եւ լինել օրինական օպոզիցիա...

Նա (դաշնակցությունը) վերջ երեւի դնի իր գոյությանը: Պիտի անե այդ նույնիսկ իր սեփական անցյալը, իր անունն ու պատիվը փրկելու համար»:

Շատ ավելի պատմական է Ա. Ղազարյանը «Հ.Յ. Դաշնակցությունն այսօր առավել, քան երբեք, անելիք չունի»: Նա Սփյուռքի գոյությանը վերապահումով է վերաբերվում, «գաղթականության խնդիրը հայ ժողովրդի համար մահու եւ կենաց խնդիր է», որ հատկապես «սովետների օրոք է, որ թուրքահայությունն ու ռուսահայությունը պիտի ի մի խմբվեն ու ձուլվեն «Մայր հայրենիքում»: Նա դաշնակցության գլխավոր խնդիրը համարում է ազգապահպանությունն ու ազգահավաքությունը, այսինքն դաշնակցության գլխավոր անելիքը ոչ թե Հայրենիքում է, այլ Սփյուռքում: Ամբողջ հայությունը պետք է պայքարի «Հզոր խորհրդային Ռուսաստանի ուժով» Խորհրդային Հայաստանին կցել «պատմականորեն եւ իրավապես նրան պատկանող «Թուրքիայի հայկական վիլայեթները»... կես միլիոնից ավելի աղքատացած ու թափառաշրջիկ հայությունը, ինչպես նաեւ հարյուր հազարավոր անտերացած որբեր, որոնք պարզ զոհեր են թուրք բռնապետության, չեն կարող, չեն կարող սովետների կողմից անուշադրության մատնվել մշտապես»:

Վլադիմիր Լենինը նույնպես ՀՀԴ համարում էր մանր տնտեսական կուսակցություն: Նա մի քանի անգամ է այդ խնդրին անդրադարձել: «Անգլո-ֆրանսիական իմպերիալիզմը Բաքվում գերակշռող ուժ ստացավ շնորհիվ իր ահագին մեծամասնությամբ մեր դեմ նրանց կազմը անցած Դաշնակցության՝ հայկական կիսասոցիալիստական կուսակցության...»: Լենինը դաշնակցությանը համարում էր «նարողնիկական ուղղության մանրբուրժուական ազգային կուսակցություն»: Պետական դումայի դաշնակցական պատգամավորներ Սաղաթեյանին եւ Տեր-Ավետիսյանին նա անվանում է «խեսների տեսակետին հարող գյուղացիների ներկայացուցիչներ»:

Դաշնակցությունը մանրբուրժուական կուսակցություն են համարել նաեւ Ա. Անանունին, Ի. Ստալինը, Բ. Իշխանյանը, Ն. Ժորջանյան, նույն ինքը՝ Աշոտ Հովհաննիսյանը:

Այո, զարմանալի կուսակցություն է դաշնակցությունը: Նրանում կողք կողքի գոյատևել են այնպիսի պայծառ անուններ, ինչպիսիք են Ս. Ջավարյանը, Ռոստոմը, Ն. Դումանը, Ա. Մանուկյանը, Նժդեհը, Շահան Նաթալին, Հ. Քաջազունին՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ Ս. Վրացյանը, Ռուբենը, Ռ. Դարբինյանը, Մ. Վարանդյանը, Վ. Նավասարդյանը: Հ. Քաջազունին արդար մարդ էր, համեստ, ինքնաքննադատական: Նա գրում է. «Եթե ցանկանում ենք ընդհանուր առմամբ գնահատել մեր կողմից կատարված ծանր աշխատանքը եւ ձեռքբերումները հանրապետությունն անկախ հռչակելուց հետո, պետք է ասենք, որ քիչ բանով կարող ենք պարծենալ, պարտավոր ենք ասել, որ մեր ժողովրդի բաժին հասած բեռը՝ պետականության կազմավորում եւ պետական կյանքի ղեկավարում, մեր ուժերից շատ վեր էր... Մենք պետական այրեր չէինք»:

Քաջազունին ծաղրանքով դաշնակցական կուսակցության կյանքի երկարացման միայն մի ուղի էր տեսնում՝ առանց միջոցների մեջ խտրականություն դնելու, պայքարել բոլշևիկների դեմ, վերածվել դավադրական խմբի, ինչպիսին այն եղել է «իր գոյության սկզբնական շրջաններում»:

Դաշնակցությունը հետեւեց այդ խորհրդին: Ռ. Դարբինյանը գրեց. «Խորհրդային պետության հանդեպ մեր դիրքորոշումը բացասական է, միայն նրա դեմ պայքարի միջոցների հարցում մտցվել են ժամանակավոր սահմանափակումներ՝ նկատի ունենալով ներկա պայմանները»:

Այսինքն պարտվելուց հետո դաշնակցությունը ժամանակավորապես՝ մինչեւ պատեհ առիթը, դադարեցրեց զինված պայքարը խորհրդային իշխանության դեմ: Բայց մշտապես առաջին պլանին էր պայքարը Ռուսաստանի դեմ: «Ալիքը» անգամ 1963թ. (N 212) էր գրում, որ «Հայ ժողովուրդը եւ ՀՀ Դաշնակցության կուսակցությունը զբաղեցնում են թշնամական դիրքեր Ռուսաստանի հանդեպ»:

Այդ գործընթացից բնականաբար դուրս չմնաց նաեւ Խորհրդային Հայաստանը, որի դեմ պայքարը տարվում էր բացահայտ եւ ահաբեկչական գործողություններով: Պայքարի տրամաբանության մղումով ՀՀԴ արտասահմանում մերձեցավ նաեւ իր նախկին երդվյալ թշնամիների՝ Անդրկովկասի ազգայնամոլական կուսակցությունների, այդ թվում նաեւ մուսավաթի հետ. 1925թ. Փարիզում նրանք ստեղծեցին «Պրոմեթեւս» անունը կրող հակախորհրդային դաշինքը:

Սակայն ոչ իրական ուժերը եւ ոչ էլ նյութական միջոցներն այդ կուսակցություններին հնարավորություն չէին տալիս իրականացնելու իրենց դիտավորությունները, եւ նրանք հարկադրված էին սեփական նախաձեռնությամբ կամ տարբեր երկրների հակախորհրդային դիվերսիոն ծառայությունների առաջարկությամբ դաշինքի մեջ մտնել նրանց հետ: Եղան պահեր, երբ իրենց հեղափոխական համարող այդ կուսակցությունները վերածվեցին օտարների սովորական հանձնակատարների:

Բնականաբար այդ ամենն աննկատ չմնաց, եւ արտասահմանյան հայկական մամուլում սկսեցին հողվածներ երեւալ, անգամ գրքեր հրատարակվել

դաշնակցության գործունեության այդ կողմի վերաբերյալ: Իհարկե, այդ հրապարակումներում բաժին ունեն նաեւ չափազանցությունները, կուսակցական հակակրանքը, բայց որ դաշնակցությունը գնաց նման գործարքների, անվիճելի է:

Չի կարելի բացառել, որ ձեւավորված առճակատման մեղավորը միայն դաշնակցությունը չէր: Ոչ, այդ գործում փոքր դեր չխաղաց նացիոնալիզմի եւ դասակարգային թշնամու դեմ անողոք պայքար մղելու ստալինյան հարկադրանքը: Ցավալին այն է, որ դաշնակցությունը մեծ եռանդով ու ցանկությամբ նետվեց առճակատման հեղեղը, առանց նկատի առնելու դրա քաղաքական, բարոյական եւ ազգային հետեւանքները:

Աստիճանաբար Խորհրդային Հայաստանի դեմ պայքարը, նրան սփյուռքի լայն շրջաններում վարկաբեկելը վերածվեցին այդ կուսկցության նպատակի: Նորից բարբառեց Ս. Վրացյանը՝ բոլշեիկների Հայաստանում «...կյանքն ավելի վատ, անտանելի, ծանր է, քան առաջներում», այսինքն, երբ սայլերով փողոցներից դիակներ էին հավաքում:

Խորհրդային Հայաստանի դեմ քարոզչական արշավում դաշնակցությունն օգտագործում էր նույն եղանակները, ինչ արեւմտյան քարոզչությունն ու դիվերսիոն կենտրոնները՝ ԽՍՀՄ-ի դեմ:

Դաշնակցությունն այդպես էլ չհաշտվեց այն մտքի հետ, որ այլեւս հայ կյանքի առաջատար եւ թելադրող ուժ չէ: Բոլշեիզմի դեմ պայքարում անհաջողության մատնվելով՝ նա իր զայրույթը թափում էր հայ մյուս կուսակցությունների, կազմակերպությունների, սփյուռքահայության վրա:

Ստեղծվեց տարօրինակ իրավիճակ: Սփյուռքում դաշնակցությունը մեծ գործ կատարեց մշակութալուսավորչական բնագավառում, ստեղծեց մեծ թվով հայկական դպրոցներ, հրատարակչություններ, մշակույթի այլեւայլ օջախներ, թերթեր, հանդեսներ եւ այլն: Սակայն նույնիսկ այս գործունեությունում կուսակցական նեղմտությունն առկա էր: Նրա ստեղծած մշակութային հաստատությունների դրները առաջին հերթին կամ ընդհանրապես բաց էին միայն դաշնակցականների ու նրանց հարազատների առջեւ:

Սփյուռքի գրեթե բոլոր գաղութներում դաշնակցությունը պայքարում էր գերիշխող դիրքեր նվաճելու համար եւ այդ գործում կանգ չէր առնում ամենազազրելի միջոցների առջեւ: Ոչ քիչ դեպքերում դաշնակցությանը չխոնարհվող հայը գոհ էր դառնում ՀՀԴ տղաների արծակած գնդակների: Դաշնակցության համար ահաբեկչությունը շարունակեց մնալ քաղաքական, անգամ գաղափարախոսական պայքարի գլխավոր զենքերից: Դաշնակցությունը ոչ թե համոզում էր, ապացուցում, այլ հարկադրում, սպառնում: Նրա համար հասկանալի էր միայն կամ գրեթե միայն բիրտ ուժի լեզուն:

Այդ, իհարկե, չէր կարող սփյուռքահայության շրջանում հակակրանք չառաջացնել ՀՀԴ-ի հանդեպ, ինչը հանգեցրեց նրա մեկուսացմանը: Շատ գաղութներում մյուս կուսակցությունները, կազմակերպությունները, ակումբները

միավորվում էին ՀՀԴ-ի ուսնձգություններին դիմակայելու համար:

Դաշնակցության աղանդավորական, հակախորհրդահայ բնույթը հանգեցրեց նաեւ հայ եկեղեցու պառակտմանը: Նրա ջանքերով, ի հակադրություն էջմիածնի, ստեղծվեց Անթիլիասի կաթողիկոսությունը, որի գոյության իմաստը մինչեւ օրս էլ անորոշ է: Կար ժամանակ, երբ Անթիլիասը եւս ամբողջությամբ ԱՄՆ-ի հետախուզական ծառայությունների տրամադրության տակ էր եւ ամեն ինչ անում էր էջմիածնի ազդեցությունը սփյուռքում թուլացնելու, հայությանը Մայր հայրենիքից կտրելու համար: Նույնիսկ ներկայումս, երբ Հայաստանն անկախ, ինքնիշխան է, դաշնակցությունը Անթիլիասի կաթողիկոսությունը պահում է նորից որպես հակակշիռ էջմիածնին եւ նրա միջոցով Հայաստանի Հանրապետությանը:

Հայ եկեղեցու պառակտումը դաշնակցության սեւ գործերի ցուցակի առաջնամասում է:

Դեմ լինելով ու ուսնահարելով ժողովրդավարության տարրական կանոնները, մարդու իրավունքները, որոնց պաշտպանությունը նա նենգափոխեց ահաբեկչության գործադրմամբ, դաշնակցությունը համաշխարհային աղաղակ բարձրացրեց, թե «Օգնություն՝ բռնաբարում են», բուլշեիկները հոշոտում են հայությանը, իրավագրկում նրան:

Բերենք մի օրինակ ՀՀԴ «Ժողովրդավարության» նմուշներից:

Շինուհայրի գյուղացի Մարգարը դաշնակ էր, իսկ նրա քրոջ որդին՝ Արտեմը՝ կոմունիստ: 1920թ. Մարգարը պահանջում է, որ Արտեմը հեռանա գյուղից եւ նրան հարկադրում է մեկնել Բաքու: Քիչ անց նրան կուսակցական աշխատանքի են ուղարկում Ալեքսանդրապոլ, որտեղ եւ զոհվում է:

Մարգարը պահանջում է Արտեմի ծնողներից հայտնել, թե որտեղ է գտնվում նրանց որդին: Քույրը պատասխանում է, թե չգիտի: «Դու այլեւս իմ քույրը չես, որովհետեւ սատանա ես ծնել», - հետեւում է Մարգարի սպառնալիքը, որն անմիջապես վերածվում է գործողության: Նա քրոջը նետում է թոնրի մեջ, իսկ փեսայից պահանջում է իր մոտ ուղարկել մյուս որդուն՝ Ներսեսին, հետեւում է հարվածների տարափը բուլշեիկ որդիներ ծնելու համար:

Հաջորդ առավոտ հայրը եւ որդին եկեղեցու մոտ հանդիպում են Մարգարին, որը հրամայում է երկուսին էլ նետել Գորիսի բանտը: Երկու օր անց փեսային՝ Մաթեոսին, գնդակահարեցին: Միայն այդ ընտանիքից դաշնակները սպանեցին չորս հոգու:

Նման դեպքերով, ավելի ճիշտ վայրագություններով լի է դաշնակցության տիրապետության շրջանը: Գյուղ չկար, որտեղ մեկից ավելի մարդիկ զոհ գնացած չլինեին դաշնակցության ահաբեկչությանը:

Դաշնակցությունը խորհրդային Հայաստանին բազմաթիվ մեղքերի մեջ էր մեղադրում, որոնցից գլխավորը ազգային հարցի կապակցությամբ ներկայացված

մեղադրանքներն էին: Ազգային հարցը, հայ ազգը դաշնակցության բոստանն են, նրա սեփականությունը: Եվ դա բացարձակ անհիմն. դաշնակցությունը չի եղել և չէ այդ խնդրի կրողը: Նա շատ ավելի այն օգտագործել է իր կուսակցական շահերի, լայն զանգվածների վրա ազդեցություն ունենալու համար, քան այդ հարցի լուծման ուղղությամբ որեւէ քայլ արել:

Հայ ժողովուրդը, Հայկական հարցը ամենախոշոր հոշոտման ու ավերմունքի ենթարկվեցին այն տասնամյակներին, երբ հայ կյանքի ղեկավար ուժը դաշնակցությունն էր, և այդ հոշոտման ու ավերմունքի մեջ դաշնակցության սխալ վարքագիծն ու գործունեությունը ամենեւին էլ երկրորդական դեր չեն խաղացել, նա թույլ տվեց, որ ժողովուրդն ավերի մատնվի, լողա սեփական արյան մեջ և ապա միայն իրեն հռչակի «ազգի պաշտպան»: Առնվազն ցինիզմ են դաշնակցության գործիչների ու մամուլի հետեւյալ բնույթի հայտարարությունները: «Ալիք», 1964թ., N 114. «... կես դար շարունակ (այսինքն դաշնակցությանը իշխանությունից հեռացնելուց հետո) Հայաստանում տեղի են ունեցել և շարունակում են տեղի ունենալ խոշոր իրադարձություններ և ցնցումներ, որոնք վտանգի են ենթարկում հայ ժողովրդի ազգային քաղաքական գոյությունը»: 1965թ., N 156. «Եվ այսօր էլ հայ ժողովուրդը վտանգի առաջ է կանգնած»: Ինչո՞վ, 1964-65թթ. այդ ինչ վտանգ էր սպառնում հայ ժողովրդին, երբ իրականում այդ տարիները դարձան հայ ազգային կյանքի, ազգային մտածողության, հոգեբանության զարթոնքի, մշակույթի, տնտեսության զարգացման ամենահաջողակ ժամանակները:

Ստել գիտեն և ստում են շատ կուսակցություններ: Դաշնակցությունը ստում է առանց «չափը ճանաչելու», ստում է առանց կարմրելու:

Դաշնակցության տեսաբաններն ինչպիսի ծանր կանխագուշակություններ ասես, որ չարեցին Խորհրդային Հայաստանի հայության դժբախտ ապագայի մասին, մինչև որ արեւմուտքի հայտնի ուժերի հետ ձեռք ձեռքի տված տապալեցին խորհրդային կարգերը և հայ ժողովրդին կանգնեցրին իրոք աղետալի վիճակի առաջ:

Հայ իրականության մեջ դաշնակցությունն առնվազն երկու չարաղետ նորածեությունների հիմնադիր է.

1. Նա համառ ջանքերով հաստատեց մի «ճշմարտություն»՝ աշխարհում ամեն ինչ ու բոլորը սխալվում են, բացի կուսակցություններից, որոնց շահերը վերազգային են բացարձակ:

ՀՀԴ ժողովրդից նույնիսկ ներողություն չխնդրեց իր գործած կոպիտ սխալների, արեւմտահայության բնաջնջման թույլատրման, այլեւայլ կոպիտ ձակատագրական նշանակության բացթողումների համար: Ավելի քան 75 տարի անց նույն բանը կատարեց ՀՀԾ՝ ծաղկուն երկիրը ավերեց, թալանեց, և առանց ոչ միայն որեւէ պատասխանատվություն կրելու, այլև «ներողություն» բառը շնջալու, իշխանությունից հեռացավ՝ ընդդիմություն դառնալու և աղքատության ու քաղցի մատնված ժողովրդին ապացուցելու, թե ինքն ինչպիսի երջանկություն է հայության համար:

2. Դաշնակցությունը խոսքով՝ ռուսական, իսկ գործով արեւմտյան կողմնորոշում ուներ: Նույնն էին անում երրորդ հանրապետության ղեկավարները: Ավանդական է դարձել հայկական իշխանությունների վարքագիծը. անասնական վախ Ռուսաստանից, հավաստիացումներ՝ իրենք ռուսների ամենամերձավոր եղբայրներն են՝ միաժամանակ հասկացնելով, թե Հայաստանը գործարար անվտանգության մեծ շահեր ունի ոչ թե Ռուսաստանի, այլ Արեւմուտքի հետ հարաբերություններում:

Սակայն այս խնդրում ՀՀԴ որոշակի առավելություններ ուներ: Արեւմուտքը առաջին հանրապետությանն ինչ-որ էական, խոշոր նշանակություն ունեցող բան առաջարկում էր, որպեսզի նա կտրվի Ռուսաստանից (օրինակ՝ Վիլսոնի պլանն ու Սելըրը՝ մոտ 100 հզ. քառ. կմ տարածք), իսկ երրորդ հանրապետությանը ոչինչ չառաջարկեցին, բացի ողբամատույց ողորմելի ձեռնարկներից, այսպես կոչված՝ «տնտեսական օգնությունից»: Հայ հասարակությունը պարզապես զգվել է օտար ներդրումների վերաբերյալ քարոզչական հեղեղից, երկիրը զրկվել է իր իրական անկախությունից եւ ղեկավարվում է օտար՝ «միջազգային» անունը կրող կազմակերպությունների հրահանգներով ու գործակալների միջոցով: Հայաստանը հեղեղել են սինլքորները, իսկ այդպիսիներն են Արեւմուտքի պաշտոնական ներկայացուցիչներից շատերը՝ թելադրելու, անգամ հրամայելու եւ ժպտալով սպառնալու իրավասություններով: Ո՞վ էր ղեկավարում առաջին, եւ ով՝ երրորդ հանրապետությունները. ոչ թե Երեւանը, այլ Լոնդոնը, Վաշինգտոնը, Փարիզը... Ինչո՞ւ: Մուրում են բոլորը՝ սկսած երկրի ամենաբարձր ղեկավարությունից մինչեւ «նոր հայերը»: Ինչ-որ բան ստանում են, սակայն ոչ այնքան ժողովրդի ծով կարիքները հոգալու, որքան քսակներն ավելի ուռեցնելու համար: Այդ ամբողջ թոհուբոհի մեջ պարկեշտ է համարվում Ռուսաստանին լռության մատնելը՝ չնայած այսօր էլ Հայաստանում ամենախոշոր ներդրողը Ռուսաստանն է: Նրա ձեռքում են էլեկտրաէներգիայի, այլումինի եւ այլ արտադրական հզորություններ, գազամատակարարումը: Ռուսաստանը մնալու է Հայաստանի ապրանքների իրացման գլխավոր ուղին ու շուկան, Ռուսաստանում է աշխատանք գտնում գործազուրկ հայության մեծ մասը: Ռուսաստանն է օգնում Հայաստանին պաշտպանելու իր սահմանները:

Պատմությունը կրկնվում է նույն չարաղետությամբ, երբ Հայաստանի կառավարողները, գայթակղված Արեւմուտքի հնայքներով, նետվում են նրա գիրկը եւ շոյանքներից ննջում այնքան, մինչեւ իրադարձությունների զարգացումները հայությանը կկանգնեցնեն նոր փորձության առաջ:

Բավ է: Վերջացնենք: ՀՀԴ պատմության հարյուրամյա փորձն, իհարկե, կարող է եւ օգտակար լիներ հայկական պետականության կառուցման գործում, եթե դաշնակցության մերօրյա սերունդը փոխի սեփական կուսակցության «ավանդույթները» եւ քննադատաբար մոտենա սեփական պատմությանը, այլապես սպասենք նոր աղետի:

ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Այսպիսով, մենք ավարտեցինք Ստեփան Պողոսյանի «Հայացք անցյալին. հանուն այսօրվա ու վաղվա» գրքի հրապարակումը: Գիրք, որը հետաքրքիր ճակատագիր ունեցավ: Հիշեցնենք, որ հրատարակվելուց հետո գրքի համարյա ամբողջ տպաքանակը ոչնչացվեց՝ «...որի հետ դաշնակցությունը, բնականաբար, որեւէ կապ չունի»: Սակայն 2-3 օրինակ հրաշքով հաջողվեց պահպանել: Որոնցից մեկի պատճենի պատճենը մեզ հաջողվեց ձեռք բերել:

Նշենք, որ գիրքը մեծ արձագանք գտավ ընթերցողների շրջանում: Թերթում գրքի մասերի հրապարակման ընթացքում բազմաթիվ քաղաքացիներ զանգահարել կամ եկել են խմբագրություն եւ խնդրել իրենց օգնել գրքի ձեռքբերման հարցում: Շատ ընթերցողներ խոստովանում են, որ ամբողջությամբ վերաիմաստավորել են իրենց մոտեցումները հայ ժողովրդի պատմության տարբեր էջերի նկատմամբ, որոնցից է նաեւ դաշնակցության գործունեությունը: Կազմակերպություն, որն իր գործունեությամբ սոսկալի դժբախտություններ բերեց մեր ժողովրդի գլխին եւ այժմ էլ շարունակում է իր հակապետական գործունեությունը: Եթե իրեն ազգային համարող մի կազմակերպություն գաղտնի համագումարներ է անում, դա արդեն բավական է նրան նկարագրելու համար:

Վերջում մենք խնդրում ենք մեր ընթերցողներին. Եթե Ղաշնակցության գործունեության վերաբերյալ ունեք նյութեր, փաստեր, որոնք մինչեւ այժմ հայտնի չեն եղել, խնդրում ենք ուղարկել «ԶԻ» խմբագրություն: